

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ (2002–2012)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (2002-2012 թթ.)



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

THE POLICY OF TURKEY
TOWARDS ARMENIA
DURING THE GOVERNING PERIOD
OF THE JUSTICE AND DEVELOPMENT
PARTY
(2002–2012)



YEREVAN • 2020

Պեճակ. թղթ. 1X 00185
c/y 43

« ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

956.0 + 897.925

1105850

ԹՈՒՐԹԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏԱՄԱԲ
ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ
(2002-2012 թթ.)



ԵՐԵՎԱՆ • 2020



ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Թ 988

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի գիտական ծրագրի շրջանակներում

Պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս *Ռուբեն Սաֆրաստյան*

Հեղինակային խումբ՝ *Ռուբեն Սաֆրաստյան, Վահրամ Տեր-Մաթևոսյան, Տաթևիկ Մանուկյան, Անուշ Հովհաննիսյան*

ԹՈՒՐԹԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԴԱ-
Թ 988 ՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱ-
ԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ (2002–2012 թթ.) / Ռ. Սաֆրաստյան, Վ. Տեր-Մաթևոսյան,
Տ. Մանուկյան, Ա. Հովհաննիսյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2020.— 184 էջ:

Աշխատությունում քննարկվում են Թուրքիայում աշխարհաքաղաքական մտքի զարգացման միտումները, Արդարություն և զարգացում կուսակցության արտաքին քաղաքականության ձևավորման առանձնահատկությունները, կառավարման առաջին տասնամյակում Հայաստանի Հանրապետության նկատմամբ իրականացրած քաղաքականության շրջափուլերը: Այդ համապատկերում լուսարանվում են նաև ԱԶԿ «հայկական» քաղաքականության դրսևորումները, ցյուրիխյան հայ-թուրքական արձանագրությունների գործընթացը և արդյունքները:

Նախատեսված է թուրքագետների, քաղաքագետների և հայ-թուրքական հարաբերություններով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-68-771-1

© Հեղինակներ, 2020
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2020

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից7

ԳԼՈՒԽ Ա (ՆԵՐԱԾԱԿԱՆ)

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ
ՀԱՅՑՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ ՈՒ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ (20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋ)
(Ռուբրեն Սաֆրաստյան)9

ԳԼՈՒԽ Բ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐԴՎԱԾՔԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (Վահրամ Տեր-Միսրոսյան)

1. Թուրքիայի արտաքին քաղաքականության մշակման ու իրականացման մեխանիզմները.22
2. Արտաքին քաղաքականության գործընթացում ներգրավված հաստատությունները.32
3. Թուրքիայի արտաքին քաղաքականության գաղափարախոսական և կազմակերպակառուցվածքային առանձնահատկությունները.43
4. Արտաքին գործերի նախարարության և դիվանագետների հետ հանդիպումների նոր աշխատանքը.52
5. «Հումանիտար դիվանագիտության» առանձնահատկությունները.57

ԳԼՈՒԽ Գ

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՍՄԱՐԲ
ԻՇԽԱՆԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ 2002-2007 ԹԹ. (Տաթևիկ Մանուկյան)

1. ԱԶԿ «ժայկական քաղաքականության» ձևավորման սկզբնափուլը. հակասական զարգացումներ.64
2. Նոր միտումներ հայ-թուրքական բանակցային գործընթացում.73
3. Ժողովրդական դիվանագիտության և քաղաքացիական հասարակությունների երկխոսության փորձեր.82
4. Հայոց Ցեղասպանության ժխտողականության վերաբերյալ քննարկումները Թուրքիայի Ազգային մեծ ժողովում.86
5. Հայկական տարուփ նահանջը, Հայոց Ցեղասպանության միջազգայնացման արձագանքները թուրքական հասարակական-քաղաքական խոսույթում.95

ԳԼՈՒԽ Դ

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ (2008-2010 ԹԹ.)

(Անուշ Հովհաննիսյան)

1. «Ձևիալ». Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու փորձ	103
2. «Ճանապարհային քարտեզից» մինչև Ցյուրիխյան արձանագրություններ	117
3. Թուրքիայի «հայկական նախաձեռնության» ծախսողում.	131
4. Ինչո՞ւ տապալվեցին արձանագրությունները. Թուրքիայի նոր արտաքին քաղաքականության մոտեցումների անգործունակությունը՝ հայ-թուրքական կարգավորման համատեքստում	140
Ամփոփում	151
Հավելված	156
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ	168

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Սույն գրքի հեղինակներն իրենց առջև խնդիր են դրել ոչ միայն քննության առնել Հայաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության ընթացքն ու հիմնական ուղղությունները Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) կառավարման առաջին շրջանում, այլ փորձել հասկանալ դրանց հետևում առկա շարժառիթները՝ այդպիսով ավելի հստակ պատկերացում կազմելով այդ քաղաքականության իրական նպատակների մասին: Այդ խնդիրը պահպանում է իր արդիականությունը, քանի որ, ըստ մեզ, հայկական քաղաքագիտական միտքը, մեծ ուշադրության արժանացնելով Թուրքիայի «հայկական» քաղաքականության մանրամասների հետազոտմանը, այնուամենայնիվ, դեռևս համոզիչ պատասխան չի տվել հետևյալ հարցին. ո՞րն է Հայաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության վերջնական ռազմավարական նպատակը: Արդյո՞ք նոր պայմաններում, հաշվի առնելով ժամանակակից աշխարհի իրողությունները, շարունակել այն քաղաքականությունը, որի ձևակերպումը տրվել է քեմալականների կողմից դեռևս 1920 թ. նոյեմբերին կազմված հույժ գաղտնի փաստաթղթերից մեկում, որտեղ նշվում էր Հայաստանը որպես «քաղաքական» ու «փրական» գործոն վերացնելու անհրաժեշտության մասին թե՛ փորձել մշակել մի նոր մոտեցում, որի հիմքում կդրվի Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան պետության գոյության հետ հաշտվելու և նրա հետ բնականոն հարաբերություններ ունենալու սկզբունքը:

Այդ հարցի պատասխանի փնտրտուքը հեշտ գործ չէ. թուրքական քաղաքական վերնախավը դեռևս 19-րդ դարի 70-ական թվականներից, երբ Հայկական հարցը ներառվեց միջազգային դիվանագիտության քննարկումներում, մեծապես հմտացել է Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ իր

վարած քաղաքականության իրական նպատակները քողարկելու ուղղությամբ: 1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո թուրքական դիվանագիտությունը ոչ միայն «կատարելագործեց» իր հմտությունը, այլ փորձեց հանդես գալ առավել համակարգված, ինչի նպատակն էր «ավելի ընկալելի» դառնալ համաշխարհային հանրության համար:

Հեղինակները հուսով են, որ այս աշխատությունը կնպաստի Հայաստանի Հանրապետության նկատմամբ Թուրքիայի քաղաքականության հիմնական միտումների ավելի խորը ընթրնմանը:

Ռուբեն Մաֆրաստյան

ԹՈՒՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵԶՐՈՒՅՑՆԵՐ ՈՒ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ (20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋ)

Աշխարհաքաղաքականությունը Թուրքիայում երիտասարդ գիտություն է: Փաստորեն, այն սկիզբը դրվեց 1958 թ., երբ հրատարակվեց պրոֆ. Սուաթ Բիլգեի հոդվածը, որը զուտ ճանաչողական բնույթ ուներ¹: Հետագայում, անցյալ դարի 60-ական թվականներին, լույս տեսան նաև այլ հոդված և գիրք², սակայն այդ շրջանի հեղինակները չեն ակերպեցին ինքնուրույն մոտեցումներ և ազդեցություն չունեցան թուրքական աշխարհաքաղաքական մտքի ձևավորման գործընթացի վրա:

Թուրքական աշխարհաքաղաքական մտքի ծագումնաբանությունը սկիզբ է առնում ավելի ուշ, երբ սկսում է իր գործունեությունը պաշտոնաթող գեներալ Սուաթ Իլիանը: 1967 թ. «Աշխարհաքաղաքականություն» առարկան առաջին անգամ տեղ գտավ Ցամաքային զորքերի ռազմական ակադեմիայի ուսումնական ծրագրերում և Իլիանը սկսեց այն դասավանդել: Ինչպես ավելի ուշ գրում էր ինքը՝ Ս. Իլիանը, նա, անցնելով դասախոսական աշխատանքի Ակադեմիայում, պատրաստվում էր կարդալ ռազմական պատմությանը և ռազմական աշխարհագրությանը նվիրված դասընթացներ, սակայն դեկավարությունից անսպասելի կարգադրություն ստացավ լրացուցիչ կազմել նաև 60 ժամի համար նախատեսված «Աշխարհաքաղաքականություն» առարկայի դասընթաց: Դա նրան մեծ դժվարությամբ հաջողվեց,

¹ Ali Suat Bilge, Jeopolitik, Siyasal Bilgiler Fakültesi Dergisi, C. XIII, S. 3, 1958, s. 150–174, dergiler.ankara.edu.tr/dergiler/42/378/4016.pdf

² Տե՛ս այդ մասին՝ Bülent Ulaş, Jeopolitik: Türkiye'nin milli güvenliği ve Avrupa Birliği üyelik süreci, İstanbul, 2011, s. 294.

քանի որ Անկարայի գրադարաններում, այդ թվում նաև Ազգային գրադարանում, չափազանց սակավաթիվ էին աշխարհաքաղաքականության հարցերին նվիրված հրատարակությունները³:

Այդ դասընթացը կարդացվեց մինչև 1969 թ.: Երկու տարի անց՝ 1971 թ., Ս. Իլիանը իր դասախոսություններն ամփոփեց առանձին գրքում⁴: Այն հրատարակվեց համեմատաբար մեծ տպաքանակով և մեծ հետաքրքրությամբ ընդունվեց փորձագիտական շրջանակներում⁵: Հետագայում Ս. Իլիանը նշանակվեց բարձր զինվորական պաշտոնների, հիմնականում ռազմական հետախուզության ոլորտում, ստացավ զեներայի կոչում, սակայն չէր դադարում զբաղվել նաև աշխարհաքաղաքական հետազոտություններով՝ հիմնական ուշադրությունը դարձնելով տեսական հարցերի պարզաբանմանը: Այդ ուղղությամբ իր պրպտումների արդյունքները նա առաջին անգամ ի մի բերեց «Աշխարհաքաղաքական զգայունություն» գրքում, որը դարձավ Թուրքիայում առաջին մասնագիտական հետազոտությունը աշխարհաքաղաքականության բնագավառում⁶: Ուշագրավ է, որ այն հրատարակել էր Թուրքական պատմագիտական ընկերությունը (ԹՊԸ), որը ստեղծվել էր ժամանակին Մ. Ք. Աթաթյուրքի նախաձեռնությամբ՝ պատմության բնագավառում պաշտոնական հայեցակարգը ձևակերպելու և տարածելու նպատակով: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ աշխարհաքաղաքականությունը Թուրքիայում սկսեց իր առաջին քայլերը կատարել որպես պաշտոնական գաղափարախոսության բաղկացուցիչ մաս:

Գրքում հիմնականում շարադրված է գոյություն ունեցող արևմտյան աշխարհաքաղաքական տեսությունները՝ առանց դրանց լուրջ վերլուծության ու գնահատականի: Միայն նրա եզրափակիչ բաժնում հեղինակը փորձում է ձևակերպել իր ուրույն տեսական բնույթի մոտեցումները: Նա Թուրքիան բնութագրում է որպես կապող օղակ հարևան երկրների համար, որպես տարածաշրջանի և աշխարհի համար միաժամանակ «և՛ կողպեքի, և՛ բանալիի» դեր ունեցող երկիր (kilit ve anahtar)⁷, ինչն ըստ հեղինակի, կարող է դիտարկվել որպես «աշխարհագրական ուժ»:

³ Suat İlhan, Jeopolitik çalışmalar, <http://www.hanemiz.com/acik-istihbarat/16720-jeopolitik-calismalari.html> (նշված կայքը այլևս չի գործում, հոդվածը պահպանվել է հեղինակի արխիվում):

⁴ Suat İlhan, Jeopolitiktan Taktiğe, İstanbul, Harp Akademileri Yayını, 1971.

⁵ Տե՛ս այդ մասին՝ Suat İlhan, Jeopolitik çalışmalar...

⁶ Suat İlhan, Jeopolitik Duyarlılık, Ankara, Ötüken Neşriyat, 1989.

⁷ Նույն տեղում, էջ 137:

Այդ բնութագրումները՝ «կողպեքի և բանալիի», կարևոր նշանակություն ունեցան թուրքական աշխարհաքաղաքական մտածողության հետագա զարգացման համար: Մի քանի տարի հետո, երբ արդեն վերացել էր Խորհրդային Միությունը, և այն վտանգը, որը վերջինս ներկայացնում էր Թուրքիայի համար, այդ բնութագրումները կերպարանափոխվեց և հիմք հանդիսացան՝ ամերիկյան քաղաքագետներից փոխառած «կենտրոնական տերության» հայեցակարգային բնույթի եզրույթը «տեղայնացնելու» համար: Վերջինը մինչ այսօր կարևոր տեղ է զբաղեցնում թուրքական աշխարհաքաղաքական խոսույթում: Վերը նշված բնութագրումները միտված էին մեկ նպատակի՝ ընդգծելու Թուրքիայի բացառիկ նշանակությունը տարածաշրջանի և, նույնիսկ, աշխարհի համար:

Շարունակելով իր դատողությունները՝ Ս. Իլիանը գրում է նաև «որակյալ անհատի» (vasıflı insan) ի հայտ գալու անհրաժեշտության մասին, ով, համաձայն նրա տեսության, ի գորու է ճիշտ օգտագործել Թուրքիայի վերը նշված «աշխարհագրական ուժը» և այդպիսով դարձնել այն «ազդեցիկ ուժ»: Եզրակացնելով՝ Ս. Իլիանը հանգում է հետևյալ բանաձևին. «աշխարհագրական ուժը», միանալով «որակյալ անհատի» հետ, առաջ է բերում «աշխարհաքաղաքական ուժ»⁸: Եթե փորձենք տեղափոխել Ս. Իլիանի տեսական դատողությունները մեր օրեր, ապա կարող ենք բնութագրել Արդարություն և զարգացում կուսակցության առաջնորդ և երկիրը միանձնյա կառավարել ձգտող նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին որպես «ուժեղ» անհատ, ով, կենտրոնացնելով իր ձեռքում «ազդեցիկ ուժ», փոխակերպում է այն «աշխարհաքաղաքական ուժի»:

Հաշվի առնելով այն իրողությունը, թե ինչ կարևոր աշխարհագրական դիրք է գրավում Թուրքիան, Ս. Իլիանը եզրակացնում է, որ վերը նշված հանգամանքներում աշխարհաքաղաքական գործոնի նույնիսկ աննշան ուժեղացումը անմիջապես իրեն զգացնել կտա Մերձավոր Արևելքում, Խորհրդային Միությունում և Եվրոպայում⁹: Այս եզրակացությունը կարևոր է, քանզի նրա հեղինակը այդպիսով քողարկված տեսքով ձևակերպում է թեզն առ այն, որ Թուրքիան հնարավորություն ունի անհրաժեշտության դեպքում, ուժեղացնելով «աշխարհաքաղաքական փոփոխական գործոնները», ազդել աշխարհի հզորների քաղաքականության վրա: Պատասխական չէ նաև այն իրողությունը, որ Սուլաթ Իլիանն ընդգծում է, թե Թուրքիան հնարավորություն

⁸ Նույն տեղում, էջ 155:

⁹ Նույն տեղում, էջ 142:

ունի դառնալու տարածաշրջանային այնպիսի մի պետություն, որն ազդեցիկ կլինի նաև համաշխարհային քաղաքականության մեջ¹⁰:

Վերևում քննության առնված տեսության հիմնական առանձնահատկություններից է նաև Թուրքիայի վրա կախված վտանգի սուր զգացումը, որը պայմանավորված Խորհրդային Միության գոյությամբ: Այս աշխարհաքաղաքական ընկալումը հատուկ էր ոչ միայն Ս. Իլհանին, այլ նաև նրա սերնդակից շատ բարձրաստիճան սպաներին¹¹: Այս դեպքում, նշանակություն ունեն հինչպես վախը Խորհրդային Միության ռազմական հզորության առջև, այնպես էլ պատմական հիշողությունը՝ ռուս-թուրքական պատերազմների արդյունքում թուրքական բանակի բազմաթիվ պարտությունների: Ուշագրավ է, Ս. Իլհանը մեկ այլ տեղ գրում էր, որ փլուզվող Խորհրդային Միության տեղում առաջացող նոր ուղղափառ Ռուսական կայսրությունը կարող է նույնիսկ ավելի մեծ վտանգ ներկայացնել Թուրքիայի համար¹²:

Ս. Իլհանը շարունակեց իր պրպտումները աշխարհաքաղաքականության բնագավառում նաև հաջորդ տասնամյակում՝ 1990–ական թթ.՝ հրատարակելով բազմաթիվ հոդվածներ ու գրքեր: Այդ աշխատություններում նա փորձում էր մի կողմից հստակեցնել տեսական նշանակություն ունեցող բնութագրումները, մյուս կողմից ընդլայնում էր իր աշխարհաքաղաքական վերլուծությունների շրջանակները՝ նրանց մեջ ներգրավելով նոր ոլորտներ և տալով գաղափարական հիմնավորումներ: 1990 թ. Հաջեթեփե համալսարանի գիտաժողովում նա կրկնեց իր այն միտքը, որ «թուրք լինելը դժվար է»՝ հիմնավորելով դա երկրի բացառիկ աշխարհագրական և աշխարհաքաղաքական դիրքով և նշանակությամբ, որը պարունակում է ինչպես վտանգներ, այնպես էլ հնարավորություններ¹³: Հետագայում, Ս. Իլհանը չիրաժարվեց

¹⁰ Նույն տեղում, էջ 141:

¹¹ St'ü, օրինակ, Թուրքիայի Չինված ուժերի Գլխավոր շտաբի պաշտոնաթող հրամանատար գեներալ Նեջիփ Թորումթայի գիրքը, Necip Torumtay, Değişen Stratejilerin Odağında Türkiye, İstanbul, Ad Yayıncılık, 1996.

¹² Suat İlhan, Türkiye Jeopolitiği ve Jeopolitik Gelişmeler, Tarihi gelişmeler içinde Türkiye'nin sorunları sempozyumu (Dün-Bügün-Yarın) (Bildiriler). Hacettepe Üniversitesi Atatürk İlkeleri ve İnkılâp Tarihi Enstitüsü, Ankara, 8-9 Mart 1990, Ankara, 1992, s. 17-18. Ուշագրավ է, որ այդ գիտաժողովի նյութերը, ինչպես նաև Ս. Իլհանի վերը նշված «Աշխարհաքաղաքական զգայունություն» գիրքը հրատարակվել են Թուրքական պատմագիտական ընկերության կողմից:

¹³ Այդ գեկուցումը հրատարակվեց երկու տարի անց, 1992 թ.: St'ü Suat İlhan, Türkiye jeopolitiği ve jeopolitik gelişmeler, Tarih gelişmeler içinde Türkiye'nin sorunları sem-

այդ թեզից և դրա բազմակողմանի հետազոտմանը նվիրեց իր հերթական գրքերից մեկը, հենց այդպես էլ վերնագրելով այն՝ «Թուրք լինելը դժվար է»¹⁴: Ուշագրավ է վերևում հիշատակված զեկուցման եզրակացությունը. «Թուրքիայի հողերի վրա ապրող թույլ ազգը գոյատևելու հնարավորություն չունի: Մենք պարտավոր ենք լինել ուժեղ»¹⁵: Այս «պարտադրված» ուժեղության մասին ձևակերպումը լայն տարածում գտավ թուրք աշխարհաքաղաքագետների հաջորդ սերնդի աշխատություններում: Այսպես, տարիներ անց Անկարայի Բիլքենթ համալսարանի պրոֆեսոր Փընար Բիլգինը այն ընտրեց որպես իր հոդվածներից մեկի վերնագիր¹⁶:

Ս. Իլհանը իր աշխարհաքաղաքական հետազոտությունները տարածեց նաև պանթուրքիստական տեսությունների ոլորտ: Նա փորձեց այդ տեսությունները հիմնավորել աշխարհաքաղաքական գործիքակազմի օգնությամբ¹⁷: Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու ժողովուրդներով բնակեցված տարածաշրջանը նա բնութագրում էր որպես Ասիայի կենտրոնում գտնվող «խաչմերուկ» (kavşak), որտեղ խաչվում են այդ մայրցամաքի բոլոր ներքին կապերը, և առանց նրա հնարավոր չէ: Ասիայում իրականացնել որևէ արտաքին քաղաքականություն¹⁸: Հենվելով իր այդ պնդման վրա՝ Իլհանը գրում է, որ Կովկասի և Ադրբեջանի նշանակությունը Թուրքիայի համար աշխարհաքաղաքական տեսականկյունից պայմանավորված է այն իրողությամբ, որ դրանք հնարավորություն են տալիս վերջինիս կապ հաստատել վերը նշված «խաչմերուկի», այսինքն՝ Կենտրոնական Ասիայի թյուրքական տարածքների հետ: Այդ նշանակությունը «հայտնվեց ցերեկվա լույսի ներքո» այն ժամանակ, երբ Միջին Ասիայում առաջացան թյուրքալեզու նորանկախ պետություններ, գրում էր Ս. Իլհանը¹⁹:

Սառը պատերազմի տարիներին աշխարհաքաղաքական խնդիրներին նվիրված հոդվածներով հանդես եկան նաև մի քանի այլ հեղինակներ²⁰:

pozyumu (Dün–Bugün–Yarın): Bildiriler, Ankara, 1992, s. 7–18.

¹⁴ St'ü Suat İlhan, Türk Olmak Zordur, İstanbul, 2009.

¹⁵ Նույն տեղում, էջ 18:

¹⁶ Pinar Bilgin, Only Strong States Can Survive in Turkey's Geography: The uses of "geopolitical truths" in Turkey, Political Geography, № 26 (7), 2007, p. 740–756.

¹⁷ St'ü, օրինակ, Suat İlhan, Jeopolitik Gelişmeler ve Türk Dünyasının Jeopolitiği. Türk Kültürünü Araştırma Enstitüsü Yayınları, № 134, Ankara, 1993.

¹⁸ Նույն տեղում, էջ 161:

¹⁹ Նույն տեղում., էջ 158:

²⁰ St'ü Cemaleddin Enginsoy, Türkiye'nin Jeopolitik Önemi ve Süper Güçlerin Türkiye Üzerindeki Çıkar Çatışmaları, Güncel Konular, № 3, 1982, s. 27–38.

Նրանցից առանձնանում է պրոֆեսոր Ջեզմի Սևգիի հոդվածը²¹: Ջ. Սևգին, լինելով մասնագիտությամբ տնտեսական աշխարհագրագետ²², փորձել է իր հոդվածում, ներգրավելով հիմնական արևմտյան աշխարհաքաղաքական տեսությունները, վերլուծել Թուրքիայի աշխարհաքաղաքական նշանակությունը ԱՄՆ–ի ու Խորհրդային Միության համար: Նա նշում է, որ վերջինիս համար Թուրքիան ամենակարևոր երկիրն է ռազմավարական տեսանկյունից, քանի որ միայն սևծովյան նեղուցներով է հնարավոր դուրս գալ Միջերկրական ծով²³: Ուշագրավ է հեղինակի հետևյալ եզրակացությունը. «Թուրքիան աշխարհաքաղաքականության ու աշխարհառազմավարության դիտանկյունից աշխարհի ամենակարևոր երկրներից մեկն է»²⁴: Այն կարևոր է, քանզի վկայում է, որ նույնիսկ երկու հակամարտող բևեռների գոյության տարիներին, երբ Թուրքիայի անվտանգությունը հնարավոր էր ապահովել միայն արևմտյան դաշնակիցների հզորության շնորհիվ, ինչը խիստ սահմանափակում էր միջազգային թատերաբեմում ինքնուրույն գործելու հնարավորությունները, թուրք հեղինակները փորձում էին քաղաքական աշխարհագրության ու աշխարհաքաղաքականության տեսանկյունից հիմնավորել իրենց երկրի բացառիկ տեղն ու դերը աշխարհում:

Սակայն այդ հիմնավորումները համոզիչ չէին, քանի որ չունեին լուրջ տեսական և վերլուծական հենք: Միայն Ս. Իլիանին հաջողվեց ձևակերպել հայեցակարգային մոտեցում և հանդես գալ ուրույն աշխարհաքաղաքական տեսությամբ, որն առաջինն էր Թուրքիայում: Այս հանգամանքը Ս. Իլիանի տեսությունը դարձնում է թուրքական աշխարհաքաղաքական մտքի պատմության կարևոր երևույթներից մեկը²⁵:

Սակայն այդ տեսության կարևորությունը դրանով չի սահմանափակվում: Այն, ըստ էության, դեռևս Սառը պատերազմի տարիներին հիմք էր

²¹ St' u Cezmi Sevgi, Jeopolitik ve Jestratejinin Tarihsel Gelişimi Açısından Türkiye'nin Konumu, Ege Coğrafya Dergisi, № 4, Nisan 1988, s. 214–249.

²² St' u Ջ. Սևգիի մասին՝ Prof. Dr. Cezmi Sevgi, www.cografya.ege.edu.tr/files/cografya/icerik/cezmiSevgi.pdf

²³ Cezmi Sevgi, նշվ. աշխ., էջ 245:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Սուլաթ Իլիանի աշխարհաքաղաքական տեսության բնութագրմանը մենք ժամանակին անդրադարձել էինք առանձին հոդվածով: Տե՛ս Ռ. Սաֆրաստյան, Թուրքիայում աշխարհաքաղաքական մտքի ծագումնաբանության հարցի շուրջ. Սուլաթ Իլիանի «Վտանգի տեսությունը», Հայկական բանակ ռազմագիտական հանդեսի Աշխատանքային տետրեր հավելված, № 3, 2012, էջ 110–115:

ղնում Թուրքիայի աշխարհաքաղաքական գերակայության մասին այնպիսի հայեցակարգերի մոտեցումների համար, որոնք առաջ քաշվեցին Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ Թուրքիայի համար նոր հնարավորություններ բացվեցին առաջացած վակուումը զբաղեցնելու տեսակետից: Վերջիններիս միավորում էր ձգտումը, հենվելով աշխարհաքաղաքական մեկնաբանությունների վրա, ներկայացնել Թուրքիայի «բացառիկ» դերն ու նշանակությունը տարածաշրջանային ու նույնիսկ համաշխարհային գործընթացների համար:

Նշենք, որ Ս. Իլիանի վաստակը Թուրքիայում աշխարհաքաղաքական մտքի ծագումնաբանության մեջ բարձր է գնահատվում ինչպես արտասահմանյան, այնպես էլ թուրք մասնագետների կողմից: Միանգամայն իրավացի է ճանաչված ֆրանսիացի արևելագետ–աշխարհաքաղաքագետ Թանրեդ Չոսսերանը՝ բնութագրելով նրան որպես թուրք աշխարհաքաղաքագիտության վարպետ²⁶: Թուրք աշխարհաքաղաքագետներից Փ. Բիլգինն իր հերթին, հարգանքի տուրք մատուցելով Ս. Իլիանին կատարած աշխատանքին, համարում է նրան «Թուրքիայի ամենագլխավոր աշխարհաքաղաքագետը»²⁷:

1990–ական թվականների սկզբներից՝ Սառը պատերազմի ավարտից հետո, թուրք քաղաքագետների շրջանում սկսեցին տարածվել աշխարհաքաղաքական նոր ընկալումների վրա հիմնված եզրույթներ, որոնք ունեին հայեցակարգային նշանակություն: Նրանցից ամենատարածվածն էր «Եվրասիա» (Avrasya) եզրույթը: Այն շատ արագ կարևոր տեղ զբաղեցրեց Թուրքիայում ընթացող քաղաքական, քաղաքագիտական և աշխարհաքաղաքական քննարկումներում և ստացավ տարբեր ձևակերպումներ, որոնք տեսական նշանակություն ունեին: Առաջացավ թուրքական աշխարհաքաղաքական մտքի մի ուրույն հոսանք, որը ստացավ Եվրասիականություն (Avrasyacılık) անվանումը²⁸:

²⁶ Suat İlhan'ın Türk Olmak Zordur (Alfa, İstanbul, 2009) adlı kitabı hakkında Fransa'da yayımlanan iki makalenin özeti, <http://www.ayk.gov.tr/s9-hakkmzda/c54-bakanlar/korg-suat-ilhan/>

²⁷ Pinar Bilgin, նշվ. աշխ., էջ 741:

²⁸ Եվրասիականության հետ առնչվող խնդիրներին անդրադարձել ենք մեր հին հոդվածներից մեկում. Ruben Safrastyan, Turkey and Eurasia in the Aftermath of the September 11 Tragedy: Some Observations on Geopolitics and Foreign Policy, Caucasus and Central Asia Newsletter: The Caucasus and Central Asia Program at the University of California, Berkeley, Winter, 2001–2, 1, p. 3–8.

Եվրասիականությունն ընկալվում էր որպես հիմնական հայեցակարգ, որն ուրվագծում էր Թուրքիայի աշխարհաքաղաքական ռազմավարությունը, միջազգային հարաբերությունները և ազգային անվտանգությունը Սառը պատերազմի ավարտից հետո: Այն մեծապես քաղաքականացված էր և գիտականորեն անորոշ սահմանված: Օրինակ, Ազգայնական շարժում կուսակցության առաջնորդ Դևլեթ Բահչելին հենվում էր պանթուրքիստական ընկալումների վրա և բնութագրում էր այն որպես Բալկաններից, Կովկասից ու Մերձավոր Արևելքից կազմված եռանկյուն, որի սիրտը Անատոլիան է²⁹: Տարածված էին նաև Եվրասիայի բնորոշման այլ տարբերակներ՝ հիմնված քաղաքական պատկերացումների վրա: Դրանցից առաջինը, հետևելով Արևմուտքի և Արևելքի որոշ երկրներում տարածում գտած տեսություններին, (որոնք գտնում էին, որ «Սառը պատերազմի» տարիներին գոյություն ունեցած «Կասպիտալիստական Արևմուտք — Մոցիալիստական Արևելք» հակամարտությունը նրա ավարտից հետո փոխարինվել է «Հարուստ Հյուսիս — Աղքատ Հարավ» հակամարտությամբ) Եվրասիան բնութագրում էր որպես «Հարավ»՝ ի հակադրումն հարուստ և զարգացած «Հյուսիսի»: Երկրորդ տարբերակի կողմնակիցները Եվրասիայի շրջանակների մեջ ներառնում էին միայն Հարավային Կովկասի և Միջին Ասիայի՝ Խորհրդային Միության փլուզումից հետո առաջացած վեց նորանկախ մուսուլմանական պետությունները, որոնցից միայն մեկը պաշտոնապես թյուրքալեզու չէր:

1990-ականներին Թուրքիայի մի շարք ձախակողմյան հայացքներ ունեցող մտավորականներ ու քաղաքական գործիչներ, ինչպես նաև իսլամամետ որոշ ուժերի ներկայացուցիչներ, ձևակերպեցին Թուրքիայի եվրասիական քաղաքականության մի այնպիսի տարբերակ, որն, ըստ էության, փորձում էր լիարժեք այլընտրանք դառնալ «ավանդորեն» արևմտամետ բնութագրվող բեմալական արտաքին քաղաքական ռազմավարությանը: Այս մոտեցման հիմքում դրված էր «արևմտյան իմպերիալիզմի» դեմ եվրասիական «գլխավոր տերությունների»՝ Թուրքիայի, Իրանի ու Ռուսաստանի համագործակցության գաղափարը: Այս տեսակետն առաջ քաշողները բնադատում էին Թուրքիայի արտաքին քաղաքականությունը՝ Արևմուտքի շահերին ստորադաս լինելու և երկրի բուն շահերը անտեսելու համար: Նրանք հանդես էին գալիս որպես Արևմուտքից անկախ արտաքին քաղաքականու-

²⁹ Տե՛ս, օրինակ, (Devlet Bahçeli), Genel Başkanımız Dr. Devlet Bahçeli'nin MHP 6. Olağan Büyük Kongresinde Yapmış Oldukları Konuşma, 5 Kasım 2000, https://www.mhp.org.tr/mhp_index.php.


058507
108850

թյան կողմնակիցներ: Նրանց թվում էին ինչպես ճախակողմյան, այնպես էլ իսլամամետ մտավորականների և քաղաքական շրջանակների նշանավոր ներկայացուցիչներ: Թուրքիայի սոցիալիստական շարժման վեներան և չափազանց հակասական գործիչ՝ Դոդու Փերինչեքը, ով պաշտպանում էր վերոհիշյալ տեսակետը, իր գրքերից մեկի համար բնորոշ վերնագիր էր ընտրել՝ «Եվրասիայի ընտրությունը. Թուրքիայի համար անկախ արտաքին քաղաքականություն»³⁰: Նրա այդ գիրքը ավելի վաղ գրած հրապարակախոսական հոդվածների ժողովածու էր և չէր պարունակում տեսական ընդհանրացումների արժեք ունեցող ձևակերպումներ: Սակայն հեղինակի ձգտումը եվրասիականությունը մեկնաբանել որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր, այլնորանբային ռազմավարություն, որի նպատակը հակադրվելն է «ավանդական» արևմտամետ քաղաքականությանը, աննկատ չմնաց թուրքական հասարակության որոշ հատվածների կողմից և որոշակի տարածում գտավ ճախակողմյան հայացքներ ունեցող քեմալականների շրջանում: Դ. Փերինչեքի հայացքները փորձում էր զարգացնել նրա որդին՝ Մեհմեթ Փերինչեքը, ով նույնիսկ մենագրություն հեղինակեց այդ թեմայով³¹: Գովերգելով եվրասիականությունը՝ նա իր գրքում նշում էր, թե Թուրքիան կարող է պահպանել իր գոյությունը՝ կիրառելով միայն «Եվրասիայի ռազմավարությունը»³²:

2007 թ. Ռ. Թ. Էրդողանի կառավարությունը հուժկու հարված հասցրեց եվրասիականության հայեցակարգի կողմնակիցներին՝ «Էրզենեկոն» գործողության շրջանակներում ձերբակալելով թուրքական հասարակության տարբեր խմբերի տասնյակ ներկայացուցիչների: Ձերբակալվեց նաև Դոդու Փերինչեքը³³: Սակայն եվրասիականությունը ոչ միայն պահպանեց իր դիրքերը որպես ուրույն միտում աշխարհաքաղաքական խոսույթում, այլ նաև սիրիական ճգնաժամում՝ ռուս-թուրք-իրանական համագործակցության հաստատման հետ մեկտեղ ընդլայնեց իր կողմնակիցների շարքերը:

Թուրքիայի՝ «բնական» աշխարհաքաղաքական պայմաններից բխող դերը ընդգծելու նպատակով՝ 1990-ական թվականների սկզբներին, գիտա-

³⁰ Doğu Perinçek, *Avrasya Seçeneği: Türkiye İçin Bağımsız Dış Politika*, İstanbul, Kaynak Yayınları, 1996.
³¹ Mehmet Perinçek, *Avrasyacılık: Türkiye'deki Teori ve Pratiği*, 2. Basım, İstanbul, Kaynak Yayınları, 2016, Գրքի առաջին հրատարակությունը լույս է տեսել 2006 թ.:
³² Նույն տեղում, էջ 13:
³³ Տե՛ս այդ մասին՝ Emel Akçali, Mehmet Perinçek, *Kemalist Eurasianism: An Emerging Geopolitical Discourse in Turkey*, *Geopolitics*, Vol 14, № 3, 2009, p. 565.



կան և քաղաքական շրջանառության մեջ դրվեց նաև մեկ այլ եզրույթ՝ «կենտրոնական տերություն»: Դա փոխառնված էր ամերիկացի քաղաքագետների՝ դեռևս 1980-ական թվականներին գրված աշխատություններից: Այդ հասկացությունը սկսեց կիրառել 1990-ականների առաջին կեսի Թուրքիայի առաջատար քաղաքագետներից Օրալ Սանդերը: Նա չհասցրեց ավարտուն տեսք հաղորդել իր մոտեցումներին, քանի որ 1995 թ. հեռացավ կյանքից: Նրա՝ նույնիսկ նախնական մեկնաբանությունները Թուրքիայի՝ որպես «կենտրոնական տերության», վկայում էին, որ թուրքական աշխարհաքաղաքական միտքը թևակոխում է կարևոր կերպարանափոխումների փուլ:

Օ. Սանդերն իր հոդվածներից մեկում, անդրադառնալով Թուրքիայի արտաքին քաղաքականության առջև բացվող նոր հնարավորություններին, գրում էր, թե անհրաժեշտ է ի սկզբանե հաշվի առնել այն հանգամանքը, որ նախկինում Թուրքիան եղել է լայնածավալ կայսրություն, ժամանակի հզորագույն տերություններից մեկը, և նրա այդ «ռազմավարական դիրքը» մնում է անփոփոխ նաև այսօրվա պայմաններում. Թուրքիան, դառնալով փոքր «ազգ-պետություն», միաժամանակ պահպանել է իր դերակատարությունը որպես «կենտրոնական տերություն»³⁴: Օ. Սանդերի կարծիքով այդ հանգամանքը պայմանավորված է այն փաստով, որ Թուրքիան իր հսկողության տակ է պահում Բոսֆոր ու Դարդանել նեղուցները³⁵: Այդպիսով, Թուրքիան հնարավորություն է ստանում ոչ միայն գտնվել համամոլորակային զարգացումների ազդեցության ներքո, այլ նաև ազդել դրանց վրա, եզրակացնում էր նա³⁶:

Օ. Սանդերը, ինչպես և Ս. Իլիանը, պատկանում էր թուրք քաղաքագետների և աշխարհաքաղաքագետների այն սերնդին, որոնց մոտ դեռևս սուր էր Սառը պատերազմի տարիներին առաջացած «վտանգի» զգացողությունը: Նրա մոտ այդ զգացողությունը ի հայտ գալիս ավելի քողարկված ձևով, քան թե Սուլաթ Իլիանի մոտ: Նա անդրադառնում է միջազգային հարաբերությունների հետազոտման բնագավառի դասական Հանս Մորգենթաուի «Քաղաքականություն ազգերի միջև» աշխատությանը, երբ աշխարհաքաղաքական դիրքեր գրադեցնող ռազմավարական նշանակությամբ

³⁴ Oral Sander, Turkish Foreign Policy: Forces of Continuity and Change, Turkish Review, Vol. 7, № 34, Winter 1993, p. 46.

³⁵ Նույն տեղում, էջ 45:

³⁶ Նույն տեղում, էջ 45-46:

փոքր երկիրը կարող է ձեռք բերել ավելի մեծ ազդեցություն, քան թույլ կտար իր իրական ներուժը: Մակայն այս դեպքում նա կարող է կանգնել ապակա-
յունացման վտանգի առաջ³⁷: Ընդգծենք, որ 1990–ականների առաջին կեսի
փորձառու քաղաքագետի այս դատողությունները անտեսվեցին Արդարու-
թյուն ու զարգացում կուսակցության ձևավորած կառավարությունների
վարչապետ, իսկ հետագայում՝ նախագահ Ռ. Թ. Էրդողանի կողմից...:

Անցյալ դարի 90–ական թթ. թուրքական աշխարհաքաղաքական մտքի
ուշագրավ երևույթներից է, անտարակույս, Ռամազան Օզեյի կողմից 1994 թ.
առաջ քաշած «Թուրքական կենտրոնական գերիշխանության տեսու-
թյունը»³⁸: Նրա հիմնական դրույթները կարելի է ամփոփել հետևյալ կերպ.
Անատոլիան, այսինքն, Փոքր Ասիան, «աշխարհի միջնաբերդն» է (kale), և
Անատոլիայում իշխող երկիրը՝ Թուրքիան, ըստ թուրք աշխարհաքաղաքա-
գետի, տիրապետելով այդ միջնաբերդին, հնարավորություն ունի իր հսկո-
ղություն տակ առնել «ներքին շրջանակի» մաս կազմող տարածաշրջանները՝
Բալկանները, Մերձավոր Արևելքը և Կովկասը³⁹: «Ներքին շրջանակից»
դուրս գտնվող տարածաշրջանները կազմում են «արտաքին շրջանակը»⁴⁰: Ի
մի բերելով իր այդ դատողությունները՝ Օզեյը, հիմնվելով հայտնի անգլիացի
աշխարհաքաղաքագետ Հ. Մաքինդերի վրա, առաջարկում է հետևյալ բա-
նաձևը. «այն ազգը, որի ձեռքում է գտնվում աշխարհի միջնաբերդը՝ Անատո-
լիան, կառավարում է ներքին շրջանակը՝ Բալկանները և Մերձավոր Արևելքը:
Այն ազգը, որը կառավարում է ներքին շրջանակը, գերիշխում է արտաքին
շրջանակում՝ այսինքն աշխարհում»⁴¹: Այսպիսով, Ռամազան Օզեյը դեռևս
1990–ական թվականներին եկել էր մի «պարզ» եզրակացության. Թուրքիան
կառավարելու է աշխարհը:

Ռ. Օզեյին խորթ չէր նաև պանթուրքիզմը, քանի որ իր գրքի մեկ այլ տե-
ղում նա նշում էր՝ աշխարհի կենտրոնում գտնվում է «Թյուրքական աշ-
խարհը», որը Թուրքիայի հետ համատեղ պետք է իշխի ողջ աշխարհի վրա⁴²:

³⁷ Նույն տեղում, էջ 46:

³⁸ Այդ տեսությունը Ռ. Օզեյը շարադրել էր իր մի շարք հրապարակումներում: Տես, օրինակ, Ramazan Özey, Jeopolitik ve Jeostrategik Açidan Türkiye, İstanbul, 1998, s. 57–59.

³⁹ Տես կցված համապատասխան քարտեզը, որը վերցված է Ռ. Օզեյի աշխատու-
թյուններից:

⁴⁰ Ramazan Özey, Jeopolitik ve Jeostrategik Açidan Türkiye, էջ 58–59:

⁴¹ Նույն տեղում, էջ 59:

⁴² Նույն տեղում, էջ 41:

Ռ. Օզեյը միակը չէր, ով Թուրքիայի աշխարհագրական դիրքը բնութագրում էր որպես «բնական միջնաբերդ», որը գտնվում է Բալկանների, Կովկասի և Մերձավոր Արևելքի կենտրոնում: Այսպիսի դատողություններով հանդես էր գալիս նաև Մուսթաֆա Յըլմազը: Սակայն նա, ի տարբերություն Ռ. Օզեյի, ավելի զուսպ մոտեցում ուներ և խուսափում էր Թուրքիայի՝ աշխարհում գերիշխող դիրքի մասին հետևություններից՝ սահմանափակվելով միայն պնդմամբ, թե «միջնաբերդի» դիրքը Թուրքիային հնարավորություն է տալիս ունենալ իրարից տարբերվող «մի շարք երկրնտրանքային տնտեսական, քաղաքական ու ռազմական» մոտեցումներ⁴³:

1990–ական թթ. աշխարհաքաղաքական բնույթի հրապարակումներով սկսեցին հանդես գալ նաև թուրքական բանակի պաշտոնաթող բարձրաստիճան սպաները: Նրանց մի մասն արդեն սկսում էր «մոռանալ» Հյուսիսից եկող այն վտանգների գոյության մասին, որոնց դեմ դիմակայելը տասնամյակներ շարունակ համարվում էր Թուրքիայի Չինված ուժերի գլխավոր խնդիրը: Ձևավորվում էր նոր ռազմավարական մտածելակերպ, որի հիմքում, ինչպես դիպուկ նշում էր հանգստի կոչված գեներալ-լեյտենանտ Սադի Էրգյուվենչը՝ «Թուրքիան գտնվում է աշխարհի կենտրոնում» թեզն էր⁴⁴:


Այսպիսի պատկեր ուներ թուրքական աշխարհաքաղաքական միտքն իր գոյության առաջին տասնամյակի ընթացքում: Այդ շրջանի նրա հիմնական միտումն էր ներկայացնել Թուրքիան որպես տարածարջանային և, նույնիսկ, համամոլորակային ձևաչափերում ձևավորվող աշխարհաքաղաքական «ուժի կենտրոն»:

1990–ական թթ. ձևակերպված աշխարհաքաղաքական հայեցակարգերը հետագայում համակարգվեցին և ներառնվեցին աշխարհագրագետ և քաղաքական գործիչ Ա. Դավութօղլուի կողմից առաջ քաշված «ռազմավարական խորության» տեսության մեջ՝ այդպիսով սկսելով անմիջականորեն ազդել Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա:

⁴³ Mustafa Yılmaz, Türkiye'nin Jeo-Stratejisi Açısından Günümüz Olaylarının Değerlendirilmesi, Üçüncü 1000'E Girenken Türkiye: Kutlu Doğum Sempozyumu — 1999. Yayına Hazırlayan: Ömer Turan. Ankara, 2000, s. 72.

⁴⁴ Şadi Ergüvenç, Turkey's Strategic Importance in Military Dimension: A Regional Balance Holder, Turkey at the Threshold of the 21st Century: Global Encounters and/vs Regional Alternatives, ed. by Mustafa Aydın, Ankara, 1998, p. 63.

Մույն քարտեզը ներկայացնում է Ռամզան Օգոնի՝
 «Ժուրքերի կենտրոնական գերիշխանության» հայեցակարգը



ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՇԱԿՄԱՆ ՈՒ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ՍԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականության համակողմանի ուսումնասիրության համար հատուկ կարևորություն ունի արտաքին քաղաքականությանն առնչվող որոշումների մշակման, պլանավորման և իրականացման օրենսդրական մեխանիզմների ուսումնասիրությունը: Հանրապետության հռչակումից ի վեր Թուրքիան անցել է զարգացման մի քանի փուլեր և գրեթե յուրաքանչյուր տասնամյակ ունեցել է զարգացման ու առաջընթացի որոշ ինքնատիպություն և տրամաբանություն: 1924, 1961 և 1982 թվականների սահմանադրությունները, նպատակ ունենալով կարգավորել քաղաքական և հասարակական իրավահարաբերությունների համակարգը, չէին շրջանցում արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման մեխանիզմների կարգավորման հարցերը: Յուրաքանչյուր նոր սահմանադրություն առավել որոշակիացրեց և հստակեցրեց արտաքին քաղաքականության պլանավորման և իրականացման ոլորտներում իշխանության տարբեր ճյուղերի պատասխանատվության և վերահսկման մեխանիզմների հարցերը:

1924 թ. սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն օրենսդիր և գործադիր իշխանությունները պատկանում էին Թուրքիայի Ազգային մեծ ժողովին (ԹԱՄԺ) և կենտրոնացած էին նրա լիազորությունների ներքո: Եթե առաջինի դեպքում իշխանությունն իրականացվում էր ուղղակի կերպով,

ապա երկրորդի դեպքում՝ իր կողմից ընտրված նախագահի և կառավարության կողմից⁴⁵: Սահմանադրության 26-րդ հոդվածը կարգավորում էր Ազգային ժողովի այն լիազորությունները, որոնք առնչվում էին միջազգային հռչակագրերի վավերացմանը, այլ պետությունների հետ խաղաղության պայմանագրերի կնքմանը, պատերազմ հայտարարելուն⁴⁶: 36-րդ հոդվածի համաձայն Թուրքիայի նախագահին էր վերապահված արտերկրում Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցիչների նշանակման և օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների ընդունման իրավունքը:

Երկրորդ համաշխարհայինից հետո, երբ Թուրքիա-Արևմուտք հարաբերությունները բավական սերտացան, գործադիր և օրենսդիր իշխանությունների միջև լիազորությունների բաժանարար գծերը շատ հաճախ անտեսվում էին՝ վկայակոչելով ազգային գերակա շահերը: Օրինակ, ինստիտուցիոնալ առումով Թուրքիայի մասնակցությունը Կորեական պատերազմին բավական ուշագրավ էր: Շրջանցելով սահմանադրությունը՝ գործադիրն ինքնուրույն որոշում կայացրեց գորք ուղարկել Կորեական թերակղզի՝ չունենալով Ազգային ժողովի համապատասխան թույլտվությունը: Նախագահ Ջելալ Բայարի, վարչապետ Ադնան Մենդերեսի և արտգործնախարար Ֆուաթ Բյուրուկուլի կողմից ներկայացված մեկնաբանությունների համաձայն, եթե թուրք զինվորականների մասնակցության հարցը քննարկման դրվեր Ազգային ժողովում, հնարավոր էր անպատեհ բարդություններ առաջանային, որոնք կդանդաղեցնեին գորքերի ուղարկման գործընթացը⁴⁷: Քանի որ Թուրքիայի քաղաքական վերնախավում կար հստակ որոշում, որ Կորեական պատերազմին մասնակցության պարագայում ՆԱՏՕ-ին անդամակցության հեռանկարները շատ ավելի իրական կլինեին, ապա իշխանությունները պատրաստ էին գնալ ցանկացած քայլի: Ավելին, բուն որոշումը կայացվեց նախագահի, վարչապետի, արտաքին գործերի և պաշտպանության նախարարների, Գլխավոր շտաբի պետի, ցամաքային, ռազմաօդային և ռազմածովային ուժերի հրամանատարների Յալովայում համատեղ կայացած որոշման արդյունքում⁴⁸: Մի քանի օր անց կառավարության հատուկ

⁴⁵ Թուրքիայի Հանրապետության սահմանադրություն, 1924, հոդված 5-7, առավել մանրամասն՝ Edward Mead Earle, *The New Constitution of Turkey*, Political science quarterly, Vol. 40, № 1, 1925, p. 89.

⁴⁶ Նույն տեղում, էջ 91:

⁴⁷ Feroz Ahmad, *The Turkish experiment in democracy, 1950-1975*, London, Hurst and Compnay, 1977, p. 391.

⁴⁸ Mümtaz Soysal, *Dış politika ve parlamento*, Ankara, 1964, s. 201-202; Türkkiye Ataöv,

նիստում պաշտոնապես որոշվեց հավանություն տալ այդ նախագծին և Թուրքիայի մասնակցությունը Կորեական պատերազմին հաստատվեց կառավարության որոշմամբ:

1961 թ. Սահմանադրությունն էլ ավելի հստակեցրեց արտաքին քաղաքականության ոլորտում նախագահի, օրենսդրի և գործադիրի իրավունքներն ու պարտականությունները⁴⁹: 1961 թ. չափավոր ազատական Սահմանադրությունը էական դեր է կատարել երկրի ներքաղաքական կյանքի ազատականացման ու ապագադափարականացման, մարդու, քաղաքական, տնտեսական և սոցիալական իրավունքների և հիմնական ազատությունների տրամադրման հարցերում, այն միաժամանակ կարևոր դեր է կատարել նաև պետական ինստիտուտների հետագա կայացման առումով: Սահմանադրության մեջ ներգրավվեցին մի քանի հողվածներ, որոնք կարգավորում էին օրենսդիր և գործադիր ոլորտների փոխհարաբերություններն արտաքին քաղաքականության մշակման և իրականացման ոլորտներում: Ի տարբերություն 1924 թ. սահմանադրության՝ 1961 թ. սահմանադրության 5-րդ և 6-րդ հոդվածները հստակորեն առանձնացնում էին օրենսդիր և գործադիր իշխանությունները: Հոդված 6-րդը նշում էր, որ գործադիր իշխանությունը իրականացվելու էր երկրի նախագահի և նախարարների խորհրդի միջոցով՝ գործող օրենսդրության շրջանակներում: Ի տարբերություն 1924 թ. Սահմանադրության 26-րդ հոդվածի, որտեղ հպանցիկ նշված էր միջազգային պայմանագրերի վավերացման համար Ազգային ժողովի ունեցած լիազորության մասին՝ 1961 թ. Սահմանադրության 65-րդ հոդվածը ոչ միայն ընդարձակ կերպով սահմանում էր այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի՝ Ազգային ժողովի կողմից վավերացման ընթացակարգերը, այլ նաև հստակեցնում դրանց հետագա կիրառման սկզբունքները⁵⁰: Սահմանադրության 66-րդ հոդվածը սահմանում է, որ բացառապես Ազգային ժողովին է պատկանում պատերազմի հայտարարման, այլ պետություններում Թուրքիայի զինված ստորաբաժանումների տեղակայման և օտար պետությունների զինված ստորաբաժանումների Թուրքիայում տեղակայման իրավունքը և հավելում, որ նման թույլտվություն տրվում է Ազգային ժողովի և Սենատի⁵¹ համատեղ նիստում:

NATO and Turkey, Ankara, 1970, s. 170.

⁴⁹ Sadik Balkan, Ahmet E. Uysal and Kemal H. Karpat (Trans.), Constitution of the Turkish Republic, Ankara, 1961, p. 48.

⁵⁰ Նույն տեղում, էջ 15:

⁵¹ 1961 թ. սահմանադրությամբ Թուրքիայի խորհրդարանը երկպալատ էր:

Նույն հոդվածը նաև հստակեցնում էր այն բացառությունը, որի դեպքում խորհրդարանի թույլտվությունը հարկավոր չէր: Դա նախևառաջ վերաբերում էր միջազգային պայմանագրերի համաձայն Թուրքիայի ստանձնած պարտավորությունների իրականացմանը, որն առաջին հերթին որպես ՆԱՏՕ-ի անդամ պարտականությունների կատարումն էր:

97-րդ հոդվածը, 1924 թ. Սահմանադրության 36-րդ հոդվածի նմանությամբ, սահմանում էր պետության զլխի՝ նախագահի, լիազորությունները արտերկրում Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցիչների նշանակման և Թուրքիայում այլ պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների ընդունման իրավունքը: Ավելացված էին նաև միջազգային պայմանագրերի և հռչակագրերի կնքման և վավերացման դրույթները:

1982 թ. նոյեմբերյան Սահմանադրությունը, որը Թուրքիայի գործող մայր օրենքն է, էականորեն տարբերվում էր նախորդներից թե՛ ձևի, թե՛ բովանդակության, թե՛ վերահսկողության մեխանիզմների առումներով⁵²: Չինվորականների վերահսկողությամբ գրված Սահմանադրությունը կրում էր զինվորականների կնիքը և արտացոլում էր քեմալական-հանրապետական վերնախավի մոտեցումները պետական կառավարման վերաբերյալ: Արտաքին քաղաքականության կազմակերպման և միջազգային հարաբերություններում Թուրքիայի շահերի ներկայացման առումներով կարևոր էին 1982 թ. Սահմանադրության մի շարք հոդվածներ: 1982 թ. Սահմանադրության 112-րդ հոդվածի համաձայն կառավարությունն է որոշում արտաքին քաղաքական ուղղությունները և կրում պատասխանատվություն դրանց համար, մինչդեռ Արտաքին գործերի նախարարությունն (ԱԳՆ) իրականացնում է այդ որոշումները, ինչպես նաև կատարում առաջարկներ այլընտրանքային քաղաքական ուղղությունների վերաբերյալ⁵³: Նախորդ սահմանադրությունների նման՝ օրենսդիրն վերապահված էր միջազգային պայմանագրերի վավերացման և պատերազմի հայտարարման, Թուրքիայի տարածքում օտարերկրյա Չինված ուժերի (ՉՈՒ) ներկայության և արտերկրում Թուրքիայի ՉՈՒ-ի տեղակայումների վերաբերյալ որոշումների կայացումը և վերահսկումը:

Սահմանադրությունում նշված կարգավորող ոլորտներից բացի էական էին նաև այն օրենսդրական և ենթօրենսդրական կարգավորումները, որոնք միտված էին էլ ավելի հստակեցնելու արտաքին քաղաքականության

⁵² Constitution of the Republic of Turkey, <http://www.unhcr.org/refworld/docid/3ae6b-5be0.html>

⁵³ Նույն տեղում, հոդված 112:

մշակման և իրականացման մեխանիզմները: Հատկապես 1980–2000 թթ. Թուրքիայի արտաքին քաղաքականության պլանավորման և իրականացման գործընթացներում առաջին անգամ նկատվեցին նախորդ տասնամյակներից էականորեն տարբերվող փոփոխություններ:

Այս տարիներին փոխվեցին նաև հիմնական դերակատարները, թեև ոչ միանգամից: 1920–1970–ական թթ. Թուրքիայի արտաքին քաղաքականության պլանավորման և իրականացման գործընթացներում ԱԳՆ–ից գատ առանցքային դերակատարում են ունեցել նաև Թուրքիայի ՉՈՒ–ի Գլխավոր շտաբը (ՉՈՒ ԳՇ), իսկ 1961 թ. հետո՝ Ազգային անվտանգության խորհուրդը (ԱԱԽ): Հարկ է նշել, որ կախված արտաքին քաղաքականության առջև ծառայած խնդիրների բնույթից և ծրագրերի բազմազանությունից շատ հաճախ ԱԳՆ–ի հետ միասին արտաքին քաղաքականության իրագործմանը լծվել են էներգետիկայի, էկոնոմիկայի, առևտրի, կրթության, մշակույթի և այլ նախարարությունները: Այսպիսով, 1980–ականներից սկսված Թուրքիայի արտաքին քաղաքականության նախորդ ավանդական մեթոդները, համակարգերը և դերակատարները դանդաղորեն փոխվում էին՝ հիմք հանդիսանալով հետագա տասնամյակներում տեղի ունեցած փոփոխությունների համար:

Անհատների մակարդակում արտաքին քաղաքականության ոլորտում նախագահները, վարչապետները, արտաքին գործերի նախարարները, ԳՇ–ի պետերը և նրանց տեղակալները առանցքային դեր են կատարել արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների իրականացման առումներով: 1923–1950 թթ. ընկած ժամանակահատվածում նախ Մուսթաֆա Քեմալի, ապա Իսմեթ Ինյոյուի կառավարման ժամանակահատվածներում երկու նախագահներն էլ անձնապես ներգրավված էին արտաքին քաղաքականության հարցերում: Նրանց հեղինակությունը և փորձառությունը էականորեն ազդում էին արտաքին քաղաքականության անչլող որոշումների կայացման վրա: 1950–1960 թթ., երբ իշխում էր Դեմոկրատական կուսակցությունը (ԴԿ), ԱԳՆ–ի դերը էականորեն աճեց: Դրա պատճառները, ըստ Ումութ Ուզերի, երկուսն էին. արտաքին գործերի նախարար Ֆուաթ Քյոփրուլուն չունեի դիվանագիտական փորձառություն, փոխարենը նա գերազանցապես հենվեց ԱԳՆ–ի աշխատակազմի վրա: Այս շրջանում զինվորականությունը երկրորդ պլան էր մղվել՝ զրկված լինելով արտաքին քաղաքականության վրա ներազդեցության լծակներից⁵⁴:

⁵⁴ Umut Uzer, Identity and Turkish foreign policy: The Kemalist influence in Cyprus and

Հատկապես կարևոր էր 1961 թ. սահմանադրության 111-րդ հոդվածի համաձայն ստեղծված և հետագա տարիներին առավել նշանակալից դարձած ԱԱԽ-ի գործունեությունը: ԱԱԽ-ի լիազորությունների մեջ էր մտնում «անվտանգության քաղաքականության և դրա համակարգման վերաբերյալ որոշումների կայացմանն օգնելու նպատակով կառավարությանն անհրաժեշտ հիմնարար առաջարկությունների մասին տեղեկացնելը»⁵⁵: 1971 թ. սեպտեմբերի 20-ին սահմանադրության 111-րդ հոդվածում կատարված փոփոխություններից հետո ԱԱԽ-ի կողմից կառավարությանը խորհրդատվություն տրամադրելը դարձավ պարտադիր⁵⁶: Անվտանգության քաղաքականության ընդհանուր համակարգմանը աջակցելուն զուգահեռ ԱԱԽ-ն մեծ ժամանակ էր տրամադրում արտաքին քաղաքականության մշակման գործընթացին: 1974 թ. ներխուժումը Կիպրոս ցույց տվեց, որ ԱԳՆ-ն, ԱԱԽ-ն և ՉՈՒ ԳԾ-ն սերտ համագործակցել են տարբեր ոլորտներում: Կիպրոսի հյուսիսային հատվածի գավթամաք աննախադեպ ակտիվություն ցուցաբերեց նաև հանրությունը, ՉԼՄ-երը և քաղաքական կուսակցությունները: 1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո ԱԱԽ-ի դերն էլ ավելի աճեց, քանի որ ըստ 1982 թ. Սահմանադրության 118 հոդվածի կառավարությունը պարտավորվում էր երկրի և հասարակության անվտանգության վերաբերյալ ԱԱԽ-ի կողմից փոխանցվող որոշումները դիտարկել առաջնահերթորեն⁵⁷:

1980-ական թթ. քաղաքական դաշտի գլխավոր անձը Թուրգուջ Օզալն էր, ով միանգամայն այլ ձևի ու բովանդակության արտաքին քաղաքականության մշակման և իրականացման ժամանակաշրջանի հիմք դրեց: 1920-1970-ական թթ. ընթացքում Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական դերակատարների միջև գրեթե հիմնականում եղել է միատարրություն և համաձայնեցված գործողություններ, թեև 1980-ական թվականների վերջին, և 1990-ականներին արտաքին և պաշտպանական քաղաքականության հիմնական դերակատարների միջև տարակարծությունները և հարաբերությունների կտրուկ վատթարացումները, միմյանց նկատմամբ

the Caucasus, London. I. B. Tauris, 2010. p. 77.

⁵⁵ Sadık Balkan, Ahmet E. Uysal and Kemal H. Karpat, նշվ. աշխ., էջ 30:

⁵⁶ Ayşegül Kars Kaynar, Making of Military Tutelage in Turkey: the National Security Council in the 1961 and 1982 Constitutions, Turkish Studies, Vol. 19, № 3, 2017, p. 451-481.

⁵⁷ Constitution of the Republic of Turkey. <http://www.unhcr.org/refworld/docid/3ae6b-5be0.html>

վերահսկողության սահմանման դրսևորումները դարձան առավել տարածված: Հետևաբար, փոխվեցին նաև արտաքին քաղաքականության երբեմնի միատարրության և համաձայնեցված գործունեության նախկին մեխանիզմները:

Այս տասնամյակում ավելացան նաև այնպիսի դերակատարներ, որոնք նախկինում կամ չկային կամ ունեին ոչ այնքան առանցքային դերակատարում: Այս առումով կարևոր էին 1990–ականների սկզբներին հիմք դրված նավթային ծրագրերի մեկնարկը, որոնք առաջնային պլան մղեցին Թուրքական վառելիքային կազմակերպությանը (TPAO) և Վառելիքամղային կազմակերպությանը (BOTAS): Այս կազմակերպություններն սկսեցին ակտիվորեն ներգրավվել հատկապես Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի երկրների նկատմամբ 1990–ական թթ. արտաքին քաղաքականության ռազմավարական ուղղությունների մշակման գործերում⁵⁸:

Թուրքիայի ԱԳՆ–ի ներքին կանոնադրության 1173–րդ հոդվածը նշում է, որ արտաքին քաղաքականության համակարգումը դրված է ԱԳՆ–ի վրա, սակայն ինչպես ցույց տվեցին 1980–1990–ական թթ. արտաքին քաղաքականության որոշ ոլորտներ ԱԳՆ–ն անկարող էր համակարգել ըստ անհրաժեշտության: Այսպիսով, ոչ պետական ակտորները, ինչպես օրինակ՝ բիզնես հանրությունը, արհեստակցական միությունները, համալսարանները, ՉԼՄ–ը և հանրային կարծիքը ժամանակ առ ժամանակ էական ազդեցություն են ունենում արտաքին քաղաքականությանն առնչվող որոշումների կայացմանը⁵⁹:

1987 թ. Թ. Օզալն սկսեց առավել ակտիվորեն ներգրավվել արտաքին քաղաքականության մշակման և իրականացման հարցերում: 1989 թ. հետո, երբ նա ընտրվեց նախագահ, արտաքին քաղաքականության հարցերում, ըստ էության, զինվորականությանը մղեց լուսանցք: Ավելին, 1989–1991 թթ. ունենալով Մետութ Յըլմազի աջակցությունը, Օզալն աննախադեպ ակտիվություն հաղորդեց արտաքին քաղաքականության գործընթացներում: Թուրքիան առանցքային դերակատարում ունեցավ Շոցի պատերազմի ընթացքում, որն առաջ բերեց զինվորականության խիստ արձագանքը⁶⁰: Արդյունքում, զերազանցապես արտաքին քաղաքականության հարցերում

⁵⁸ Fatih Tayfur and Korel Göymen, *Decision Making in Turkish Foreign Policy*, Middle Eastern Studies, Vol. 38, № 2, 2002, p. 108.

⁵⁹ Umut Uzer, նշվ. աշխ., էջ 76:

⁶⁰ Erik Zürcher, *Turkey: A Modern history* (4th edition), London. I. B. Tauris. 2017, p. 313–315.

ունեցած տարածայնության պատճառով, ՁՈՒ ԳԾ-ի պետ թորումայը հրաժարական ներկայացրեց, որն աննախադեպ իրադարձություն էր թուրքիայում⁶¹: 1991 թ. հոկտեմբերին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում Մայր հայրենիք կուսակցությունը (ՄՀԿ) երկրորդն էր ստացած քվեների թվով, որի պատճառով անկարող էր միակուսակցական կառավարություն ձևավորել: Ընդդիմադիր Ճձմարիտ ուղի կուսակցության (ՃՈՒԿ) գրանցած ընտրական հաջողության շնորհիվ վարչապետ դարձած Մուլեյման Դեմիրելը բավական սահմանափակեց նախագահ Օզալի միանձնյա կառավարման դրսևորումները: Օզալ-Դեմիրել քաղաքական հակասությունների հետևանքով՝ արտաքին քաղաքականության հարցերում Օզալի լծակները նվազեցին: Դա առավել ցցուն դարձավ 1991–1993 թթ. ընթացքում, երբ Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ թուրքիայի ունեցած դիրքորոշումը տարբերվում էր 1989–1991 թթ. արտաքին քաղաքականության ոլորտում առավել համարձակ նախաձեռնություններից: Օզալ-Դեմիրել հակասություններից օգտվեց նաև զինվորականությունը և հատկապես 1993 թ. ապրիլից հետո, երբ Օզալը հանկարծամահ եղավ, զինվորականները սկսեցին վերգտնել նախկին լծակները և ընդգծված ակտիվություն ցուցաբերել ոչ միայն ներքաղաքական հարցերում, այլ նաև արտաքին քաղաքականության մշակման և իրականացման հարցերում⁶²: Դրա պատճառները մի քանիսն էին, որոնցից առավել կարևոր էին ներքաղաքական անկայուն իրավիճակը, աշխարհիկ-խլամական գաղափարական հոսանքների միջև խորացող հակասությունները, Քրդստանի աշխատավորական կուսակցության դեմ իրականացվող մարտական գործողությունները, ֆինանսատնտեսական ոլորտներում ճգնաժամային դրսևորումները, իրարահաջորդ կռաւիցիոն կառավարությունները, որոնք էապես սահմանափակում էին կառավարության հնարավորությունները արդյունավետ արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում:

1990–ական թթ. թուրքիայում առաջ եկավ նաև մեկ գործոն ևս, որը սկսեց որոշակի ազդեցություն ունենալ արտաքին քաղաքականության որոշ դիրքորոշումների վրա: Էթնիկ ու ազգային լոբբինգային խմբերը (ադրբեջանական, բոսնիական, արխազական, չեչենական և այլն), որոնք նախկինում ակտիվ չէին, սկսեցին տեսանելի կերպով ազդել թուրքիայի արտաքին քա-

⁶¹ Ali L. Karaosmanoğlu, *The Evolution of the National Security Culture and the Military in Turkey*. *Journal of International Affairs*. Vol. 54, № 1, 2000, p. 199–216.

⁶² Stephen Larrabee and Ian O. Lesser, *Turkish Foreign Policy in an Age of Uncertainty*, RAND, 2003, p. 28.

դաքսականության որոշ դրվագների ձևավորման վրա: Աղբրեջանում, Վրաստանում, Ուկրաինայում, Մոլդովայում, Ռումինիայում, Ռուսաստանում, Չինաստանում, Բուլղարիայում, Բոսնիայում և Բալկանյան այլ ուղղություններով էթնիկ լոբբինգային խմբերի ազդեցությունը Թուրքիայի արտաքին քաղաքական դիրքորոշման վրա սկսեց առավել շոշափելի դառնալ այդ երկրների տարածքում սկիզբ առած հակամարտությունների ընթացքում: Իհարկե, էթնիկ հիմքերով գործող լոբբինգային խմբերից ոչ բոլորն ունեցան այնպիսի հաջողություն ինչպիսիք աղբրեջանականն էր⁶³ կամ բոսնիականը: Արցախում պատերազմական գործողությունների հենց սկզբից՝ 1992 թ. հունվար-փետրվար ամիսներին, Թուրքիայում հանրային կարծիքը շատ արագ դարձավ ընդգծված հակահայկական⁶⁴: Այլ խոսքերով, աղբրեջանական էթնիկ լոբբինգային խմբերը, հենվելով թուրքերի հետ ունեցած մշակութային և էթիկ ընդհանրությունների վրա, կարողացան ձևավորել միակողմանի հանրային կարծիք, որն էլ էապես ազդեց իշխանական վերնախավի վրա ընդհանրապես, և Արցախյան հակամարտության նկատմամբ Թուրքիայի պաշտոնական դիրքորոշման ձևավորման հարցում մասնավորապես: 1992 թ. փետրվարին Խոջալուի կրակակետերի վերացման ժամանակ տեղի ունեցած դեպքերը և Աղղամի մատույցներում սպանված թուրք-մեսիսեթների պատմությունը Թուրքիայում տարածվեց գերազանցապես համաձայն աղբրեջանական քարոզամեթենայի ներկայացրած շեշտադրումների⁶⁵: Պաշտոնական Անկարան դատապարտեց նաև 1992 թ. մայիսին Շուշիի և Բերձորի ազատագրումը, սակայն Թուրքիայի քայլերը Հայաստանի հասցեին հնչող սուր քննադատական հայտարարություններից այն կողմ չանցան: 1992 թ. ամռանը ԼՂՀ-ի վրա Աղբրեջանի լայնածավալ հարձակման ժամանակ Թուրքիան հանդես չեկավ ոչ մի դատապարտող հայտարարությամբ: 1993 թ. մարտ-ապրիլի Քարվաճառի գործողությունը դարձավ այն եզրագիծը, որից հետո Թուրքիայի իշխանություններն անկարող եղան սահմանափակվել բացառապես կոշտ քննադատությամբ: Հանրային ճնշման ներքո Թուրքիան վերջնականապես փակեց Հայաստանի հետ սահմանի

⁶³ Նույն տեղում, էջ 35:

⁶⁴ Umur Uzer, նշվ. աշխ., էջ 172-173:

⁶⁵ Վ. Տեր-Մաթևոսյան, Խոջալուի դեպքերը աղբրեջանա-թուրքական հարաբերություններում: Գնահատումներ Հայաստանի ազգային անվտանգության տեսանկյունից, «Աշխատանքային տետրեր» Հայկական բանակի հավելված, հ.2, թ. 10, Երևան, 2009, էջ 103-114:

գործող երկու սահմանակետերը, որոնք գործում էին հատուկ ռեժիմով 1991 թ. ի վեր:

Տարիներ անց նույնպես, երբ 2008–2009 թթ. Շվեյցարիայի միջնորդությամբ փորձ արվեց կարգավորել հայ–թուրքական հարաբերությունները, Թուրքիայի հանրային կարծիքը նախապես լինելով գերազանցապես դրական տրամադրված, հետագայում շեշտակիորեն փոխվեց, երբ աղբրեջանական քաղաքական և արդեն տնտեսական լոբբինգային խմբերը լայնածավալ հարձակում սկսեցին Թուրքիայում: Այլ կերպ, թուրքական ՉԼՄ–երի, քաղաքացիական հասարակության, փորձագիտական հանրության արտաքին քաղաքականության վրա ունեցած ազդեցությանը 1990–ականներին ավելացան էթնիկ ազդեցության խմբերը, որոնք, ինչպես ցույց տվեց աղբրեջանական լոբբինգը, ունեին մի քանի ենթախմբեր (քաղաքական, բիզնես և մշակութային) և կարող էին տարբեր մակարդակներում ազդել արտաքին քաղաքականության ոլորտներում որոշումների կայացման վրա:

1993 թ. ի վեր նախագահներ Ս. Դեմիրելը, Ահմեդ Նեզդեթ Սեզերը և Աբդուլլահ Գյուլն ունեցել են արտաքին քաղաքականության մեջ ներգրավման տարաբնույթ ձևաչափեր: Թե՛ Ս. Դեմիրելը, թե՛ Ա. Գյուլը բավական ակտիվորեն ներգրավված են եղել արտաքին քաղաքականության իրականացման գործում, մինչդեռ Ա. Ն. Սեզերը հիմնականում պասիվ էր արտաքին քաղաքականության հարցերում: Ս. Դեմիրելը, որը երկրի նախագահն էր մինչև 2000 թ. մայիսը, ուներ բավական մեծ քաղաքական փորձ: Դեռ 1960–ական թթ. ակտիվ քաղաքականության մեջ կարևոր հետագիծ թողած Դեմիրելը՝ 7 անգամ եղել է վարչապետ, հետևաբար նա ձգտում էր առավելագույնս միատեղել վարչապետության նախկին փորձը և նախագահի լիազորությունները: Դրան գումարվում էր նաև ներքաղաքական անկայունության ալիքները, որոնք հնարավորություն տվեցին, որպեսզի նախագահը ևս ներգրավվի ակտիվ քաղաքականության մեջ: Սահմանադրական դատարանի նախկին նախագահ Սեզերը, որը նախագահեց մինչև 2007 թ. օգոստոսը, ակտիվ քաղաքականության մեջ նորելուկ էր, չէր տիրապետում արտաքին քաղաքականության այն փորձին, որն ունեին նրան նախորդած երկու նախագահները: Մինչդեռ 2007–2014 թթ. նախագահած Ա. Գյուլը ապրել էր արտերկրում, ուներ արտաքին տնտեսական գործունեության փորձ, նախագահի լիազորությունները ստանձնելուց առաջ հինգ տարի ղեկավարել էր արտաքին քաղաքական գերատեսչությունը: Ավելին, լինելով Բարօրություն կուսակցության (ԲԿ) անդամ, 1996 թ. Գյուլը զբաղեցրել էր Թուրքիայի

խորհրդարանի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

Հանրային կարծիքը ևս, թեև ոչ հաճախ, բավական առանցքային դեր է ունեցել արտաքին քաղաքական որոշ գարգացումների վրա: 2000–ական թթ. համացանցի տարածմանը զուգահեռ հանրային կարծիքը դարձավ առավել կարևոր գործոն արտաքին քաղաքական այս կամ այն հարցի շուրջ պետական քաղաքականության մշակման համար: Թեև իշխանությունները միշտ չէ, որ հաշվի են նստում հանրային կարծիքի հետ, սակայն, որոշ դեպքերում, հատկապես ընտրությունների ժամանակ հասարակության ազդեցությունն առավել տեսանելի էր դառնում:

ԱՐՏԱՔԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարչապետից ու ԱԳՆ–ից բացի, որոնք ավանդաբար պատասխանատու են եղել Թուրքիայի արտաքին քաղաքականության մշակման, պլանավորման և իրականացման համար, վերջին տարիներին կարևոր դերակատարում են ստանձնել նաև մի շարք այլ պետական գերատեսչություններ, կառույցներ, գիտահետազոտական ինստիտուտներ, վերլուծական կենտրոններ (think-tanks)⁶⁶, որոնք գործում են կառավարության հովանու ներքո: Այս կենտրոններից շատերն Եվրոպայի քաղաքական և տնտեսական կենտրոններում և Վաշինգտոնում ունեն ներակայացուցչություններ, որոնք ակտիվ մասնակցություն են ունենում Թուրքիայի վերաբերյալ գիտահետազոտական ուսումնասիրությունների իրականացման վրա⁶⁷: Նրանց և ստորև քննարկվող մի շարք կառույցների միջոցով Թուրքիան իրականացնում է հանրային, մշակութային, հումանիտար, գիտական և թվային դիվանագիտություն, որոնք համատեղ բնորոշվում են որպես «թուրքական փափուկ ուժի» դրսևորում:

Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչությունը տասնամյակներ շարունակ կենտրոնական դեր է կատարել ոչ միայն արտաքին աշխար-

⁶⁶ Stephen Larrabee and Ian O. Lesser, նշվ. աշխ., էջ 32:

⁶⁷ Այդպիսի վերլուծական կենտրոններից են OSRAM (Մերձավոր Արևելքի ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոն), STRATIM (Ռազմավարական հաղորդակցության կենտրոն), EPC (Եվրոպական քաղաքականության կենտրոն), SAM (Ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոն), IPC (Ստամբուլի քաղաքական կենտրոն), SETA (Քաղաքական, տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ), TESEV (Թուրքիայի տնտեսական և սոցիալական ուսումնասիրությունների հիմնադրամ):

հում Թուրքիայի շահերի ներկայացման, այլ նաև՝ ներպետական կյանքում: Տասնամյակներ շարունակ դիվանագիտական կորպուսը թուրք բարձրաստիճան գինվորականների, դատաիրավական համակարգի ներկայացուցիչների հետ միասին համարվել են քեմալականության ողնաշարը: Ավելին, տասնամյակներ շարունակ ԱԳՆ-ը Թուրքիայի քաղաքական և իշխանական համակարգում մշտապես ընկալվել է որպես «ընտրախավային հաստատություն», «ընտրախավ ընտրախավի մեջ», «բյուրոկրատական կատարելության կենտրոն»: ԱԳՆ-ն համարվում էր նաև դժվար հասանելի հաստատություն, քանի որ այն ուներ նաև ամենադժվար ընդունելության քննությունները: Երկար տարիներ Թուրքիայի միայն մեկ բուհի՝ Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի (Siyasal Bilgiler Fakültesi) կամ առավելապես հայտնի որպես Mülkiye) շրջանավարտները կարող էին մասնակցել ԱԳՆ-ի ընդունելության քննություններին և անցնել դիվանագիտական աշխատանքի: Տասնամյակներ շարունակ հատուկ ուշադրություն է հատկացվել նաև դիմորդների ընտանեկան պատմություններին: Ինչպես գինվորականության պարագայում՝ ԱԳՆ-ում ևս պահանջում էին դիմորդների ընտանեկան լուսանկարները ստուգելու նպատակով, թե արդյոք դիմորդների ընտանիքի անդամներն ունեցել են պահպանողական կացութաձև: Համընդհանուր համոզմունքը նաև այն էր, որ դիվանագետը և կրոնամոլությունը անհամատեղելի են: Բյուրոկրատական ապարատի համար այս հանգամանքն ուներ էական նշանակություն, դիվանագետները, դեսպանները համարվում էին բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք գործադրում էին օսմանյան ժամանակահատվածից ժառանգած աշխատանք:

1960–1970-ականներից սկսած Թուրքիայի իշխանությունները սկսեցին առավել մեծ ուշադրություն հատկացնել Թուրքիայի սահմաններից դուրս ապրող հայրենակիցների վրա: Վերջիններս էլ ավելի մեծ չափով սկսեցին հետաքրքրվել Թուրքիայի ներքաղաքական խնդիրներով, իսկ անհրաժեշտության դեպքում առավել մեծ ազդեցություն ունենալ իրենց բնակության երկրների Թուրքիայի վերաբերյալ քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում: Վերջին տարիներին Թուրքիայի համապետական ընտրություններին մասնակցության իրավունք է տրվել նաև Թուրքիայի սահմաններից դուրս ապրող Թուրքիայի քաղաքացիներին: Այս հանգամանքը դարձել է Թուրքիայի և եվրոպական մի շարք երկրների միջև երկկողմ հարաբերությունների վրա բացասական ազդող գործոն:

Թուրքական սիյուռքի հետ տարվող աշխատանքների համակարգման և տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում առավել սերտ համագործակցության նպատակով 2010 թ. Թուրքիայի վարչապետի ինստիտուտին կից ստեղծվեց Արտերկրում ապրող թուրքերի և հարակից համայնքների նախագահությունը (T. C. Başbakanlık Yurtdışı Türkler ve Akraba Topluluklar Başkanlığı): Այս գերատեսչությանն է վերապահված նաև Թուրքիայի ԲՈՒՀ-ում սովորել ցանկացող օտարերկրյա ուսանողներին կրթաթոշակների տրամադրման գործառույթը, որոնք, վերադառնալով իրենց երկրներ, ըստ գերատեսչության համոզման, դառնում են Թուրքիայի «կամավոր դեսպաններն ամբողջ աշխարհում»⁶⁸: Շնորհիվ «Թուրքիա կրթաթոշակներ» (Türkiye Bursları) ծրագրի ավելի քան 12000 ուսանող կրթություն են ստացել Թուրքիայի ԲՈՒՀ-ում և մասնագիտական կրթական հաստատություններում⁶⁹: Արտերկրում բնակություն հաստատատաժ թուրքերից բացի էական նշակություն էր տրվում Իրաքում, Սիրիայում ապրող թուրքմենների հետ աշխատանքներին, որոնք Թուրքիայի իշխանությունների համար դարձել են նաև լծակ այդ երկրների հետ հարաբերությունների մշակման և իրականացման գործընթացներում:

Գյուլենական կրթահամալիրները ևս էական դերակատարում են ունեցել Թուրքիայի արտաքին քաղաքականության «մեղմ ուժի» քաղաքիչի տարածման գործընթացում⁷⁰: Իհարկե, ժամանակ առ ժամանակ Ֆեթուլլահ Գյուլենի և Թուրքիայի իշխանական քաղաքական վերնախավի միջև ծագել են հակասություններ, սակայն, ընդհանուր առմամբ, այդ կրթահամալիրների շրջանավարտները դառնում են լեզվի կրողներ, համարվում են թուրքական արժեքային սկզբունքների ջատագովներ: Այդ կրթահամալիրների շրջանավարտները աշխատանքի շուկայում համարվում են մրցունակ անձինք, որոնք 1990–ական թթ. աստիճանաբար ավելացնում են նաև ներկայացվածությունը քաղաքական համակարգի տարբեր ոլորտներում:

Տասնամյակներ շարունակ արտաքին քաղաքականության իրականացման գործընթացում կիրառված մեխանիզմներին վերջին տարիներին ավելացան նորերը: Այս հանգամանքի շնորհիվ արտաքին քաղաքականության իրականացման գործիքակազմը դարձավ առավել բազմազան: Այդ առումով

⁶⁸ T. C. Başbakanlık Yurtdışı Türkler ve Akraba Topluluklar Başkanlığı, <https://www.ytb.gov.tr/kurumsal/baskanligimiz-2>

⁶⁹ Türkiye Bursları, <https://www.turkiyeburslari.gov.tr/>

⁷⁰ Muslim Citizens of the Globalized World: Contributions of the Gülen Movement, ed. by Robert Hunt & Yüksel Aslandoğan, Somerset, The Light, 2007.

հարկ է առանձնացնել առևտրի գործոնը, որի շնորհիվ որոշ վերլուծաբաններ Թուրքիային սկսեցին անվանել «առևտրային պետություն»⁷¹ և «վաճառական գերիշխանություն»⁷²: Եթե 1975 թ. արտաքին առևտուրը կազմում էր Թուրքիայի ՀՆԱ-ի ընդամենը 9%-ը (6,1 մլրդ ԱՄՆ դոլար), ապա 33 տարի անց՝ 2008 թ. այն ավելացել էր ավելի քան 5 անգամ, հասնելով 42%-ի (333 մլրդ ԱՄՆ դոլար)⁷³: Ի հավելումն առևտրային գործունեության՝ պակաս նշանակալից չեն նաև թուրքական բիզնես կազմակերպությունների գործունեության ընդլայնումը և արտաքին ուղղակի ներդրումների ծավալների շեշտակի աճը: Առաջինի առումով հարկ է նշել, որ 1972-ից 2010 թթ. ընկած ժամանակահատվածում թուրքական 5900 կազմակերպությունների կողմից արտերկրում իրականացրած ծրագրերի ընդհանուր գումարը կազմում է 187 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ արտաքին ուղղակի ներդրումների ծավալը 2001 թ. 890 մլն ԱՄՆ դոլարից 2009 թ. հասել էր 5,3 մլրդ-ի⁷⁴:

Թուրքիայի արտաքին քաղաքականության բազմազանեցմանը նպաստող գործոններից էին նաև դեպի Թուրքիա մարդկանց այցելությունների թվի աճը: Եթե 1991 թ. անմիջական հարևան երկրներից Թուրքիա մուտք էր գործել ընդամենը 2,5 մլն մարդ, ապա 2010 թ. այդ թիվը հասավ մոտ 11 մլն-ի: Դեպի Թուրքիա մարդկանց այցը խթանող գործոններից էր Թուրքիայի կառավարության կողմից մուտքի արտոնագրերի ազատականացման քաղաքականության կիրառումը և ազատ առևտրային գոտիների ստեղծման գործարկումը⁷⁵: Այս քաղաքականության շնորհիվ արտագաղթի բարձր ցուցանիշներ ունեցող երկրից Թուրքիան վերածվեց ներգաղթի երկրի: Արդյունքում, Թուրքիա տեղափոխված մարդկանց մեծ մասը, ներգրավված լինելով զանազան ծառայությունների ոլորտներում, իրենց ծագման երկիր սկսեցին ուղարկել դրամական փոխանցումներ, որոնց ծավալները ևս էապես աճել են վերջին տարիների ընթացքում: Մարդկանց տեղաշարժին նպաստող գործոններից է նաև տուրիզմի ենթակառուցվածքային զարգացումը: Հիշյալ

⁷¹ Kemal Kirişci, *The Transformation of Turkish Foreign Policy: The Rise of the Trading State, New Perspectives on Turkey*. Vol. 40, 2009, p. 29–57.

⁷² Michael Cecire, *The Merchant Hegemon: Georgia's role in Turkey's Caucasus System*. In: K. Kakachia and M. Cecire, eds. *Georgian Foreign Policy: Quest for Sustainable Security*. Tbilisi. Konrad Adenauer Stiftung, 2013, p. 111–124.

⁷³ Kemal Kirişci, *Turkey's Engagement with its Neighborhood: A "Synthetic" and Multi-dimensional Look at Turkey's Foreign Policy Transformation*, *Turkish Studies*, Vol., 13, № 3, 2012, p. 321.

⁷⁴ Նույն տեղում, էջ 322:

⁷⁵ Նույն տեղում, էջ 322–323:

գործոնների համադրմամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ 2014 թ. Թուրքիան վեցերորդն էր աշխարհում ամենաշատ այցելությունների թվով 37,8 մլն այցելու, որը 5,9-ով ավելին էր քան 2013 թ.⁷⁶:

Տնտեսական ազդեցության աճին զուգահեռ Թուրքիայի իշխանությունները առանձնահատուկ կարևորություն են հատկացրել կրթական, կրոնական, մշակութային ու հումանիտար քաղաքականությանը և հասարակական մակարդակում Թուրքիայի վերաբերյալ արտերկրում դրական վերաբերմունքի ձևավորմանը: Տասնյակ երկրներում Թուրքիայի կառավարությունը սկսեց ձևավորել կրոնագաղափարական և մշակութային ազդեցության տարածման լծակներ, որոնց աշխատանքները համակարգում են Թուրքիայի վարչապետին կից մի շարք պետական հաստատություններ՝ «Համագործակցության և համակարգման թուրքական գործակալությունը» (Türkiye İşbirliği ve Kalkınma İdaresi — TİKA), «ՅուՆուս Էմրե Մշակութային կենտրոնները» և Կրոնի գործերի նախագահությունը (Diyanet)⁷⁷:

Մասնավորապես, 1992 թ. հիմնադրված TİKA-ն ծրագրեր է իրականացնում 48 երկրներում գործող 50 գրասենյակների միջոցով: 2002 թ. մինչև 2011 թ. իրականցվող ծրագրերի բյուջեն աճել է 14 անգամ՝ 85 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 1,273 մլրդ-ի: Այն իրականացնում է հումանիտար, կրթական և տեխնիկական-տեղեկատվական աջակցություն մեծ թվով երկրների գերազանցապես իսլամադավան համայնքներում: TİKA-ն իր ներդրումների մեծ մասն ուղղում է գյուղատնտեսական և առողջապահական ենթակառուցվածքների զարգացմանը: 2007 թ. Թուրքիայի իշխանությունները որոշեցին հիմնել «ՅուՆուս Էմրե թուրքական մշակութային կենտրոնները», որոնց նպատակն էր հավասարակշռել, որոշ առումով փոխարինել գյուլենական դպրոցների ազդեցությունը՝ հետևելով գերազանցապես լեզվի, գրականության, Թուրքիայի պատմության, մշակույթի և արվեստի տարածման նպատակ: Այս կենտրոնները ստեղծվել են Գյոթեի ինստիտուտի, Բրիտանական խորհրդի, Սերվանտեսի ինստիտուտի և նմանատիպ այլ հաստատությունների օրինակով⁷⁸: Ներկայումս այն 33 երկրներում ունի գործող

⁷⁶ The world's most visited countries — 2014, <http://www.telegraph.co.uk/travel/travel-news/11027765/The-worlds-most-visited-countries-2014.html?frame=3003408>

⁷⁷ Առավել մանրամասն տե՛ս Kerem Öktem, *Projecting Power: Non-conventional Policy Actors in Turkey's International Relations in Another Empire? A Decade of Turkey's Foreign Policy under the Justice and Development Party*, eds. Kerem Öktem, Ayşe Kadioglu and Mehmet Karsli, Istanbul, Bilgi University Press, 2012, p. 77-108.

⁷⁸ Ayhan Kaya, *Yunus Emre Cultural Centers: The AKP's Neo-Ottomanism and Islamism*,

գրասենյակներ⁷⁹: Երրորդ պետական հաստատության՝ Կրոնի գործերի նախագահության (ԿԳՆ) գործունեությունն արտերկրում ընդգրկում է մի քանի ոլորտներ, որոնք գերազանցապես առնչվում են կրոնական և հոգևոր խնդիրներին: 1970–ականներից ի վեր, ԿԳՆ–ն սպասավորներ էր ուղարկում Եվրոպա, մզկիթներում աշխատելու և կրոնական ծառայություններ մատուցելու համար: 1990–ականներից այդ սպասավորների թե՛ գործառույթային, թե՛ աշխարհագրական լիազորությունների շրջանակն ընդլայնվեց: ԿԳՆ–ն տրամադրում է նաև օգնություն հաջի–ի կազմակերպման, մզկիթներում քարոզիչների՝ իմամների ուսուցման, աստվածաբանների պատրաստման, հետբուհական կրթության նպատակով կրթաթոշակների տրամադրման, իսլամական գրականության տարածման առումներով, ԿԳՆ–ն համակարգում է նաև մզկիթների վերանորոգման, նորերի կառուցման գործում ֆինանսական և խորհրդատվական օժանդակության տրամադրումը⁸⁰: ԿԳՆ–ն արտերկրում համակարգում է նաև եվրոպայում ապրող թուրքական համայնքի գործունեությունը, նրա անդամներին հորդորում զբաղվել թուրքանպաստ գործունեությամբ, ընդլայնել քաղաքական ներկայացվածությունը բնակության երկրներում և այլն:

Հանրային դիվանագիտության վարչապետի գրասենյակը (Başbakanlık Kamu Diplomasisi koordinatörlüğü) և ԱԳՆ–ի տեղեկատվության և հանրային հաղորդակցության վարչությունը սկսեցին առավել մեծածավալ գործունեություն ծավալել 2010 թ. հետո՝ հիմնական շեշտը դնելով արտերկրում Թուրքիայի շուրջ դրական կերպարի ձևավորման վրա: Կրթական, մշակութային և գիտական միջոցառումների անցկացման շնորհիվ այս երկու կառույցներին հաջողվել է մի շարք երկրներում անցկացնել «Թուրքիայի մշակութային տարի» խորագիրը կրող լայնածավալ միջոցառումներ, ցուցահանդեսներ, փառատոներ, տարբեր համալսարաններում բացել Թուրքիայի պատմության և լեզվի ուսումնասիրության ամբիոններ, օտարերկրյա ՉԼՄ–ի հետ տանել տարաբնույթ աշխատանք և այլն⁸¹: Եվրոպայի գործերի նախարարությունն ակտիվորեն ներգրավված է իսլամատյացության դեմ պայքարի, ԵՄ

<http://www.tr.boell.org/web/51-1725.html>

⁷⁹ Yunus Emre Enstitüsü, <http://www.yee.org.tr/>

⁸⁰ Şenol Korkut, *The Diyanet of Turkey and Its Activities in Eurasia after the Cold War*, *Acta Slavica Iaponica*, Tomus 28, 2010, p. 117–139.

⁸¹ Gaye Asli Sancar, *Turkey's Public Diplomacy: Its Actors, Stakeholders and Tools*. *Turkey's Public Diplomacy*, ed. Senem Çevik and Philip Seib, New York, Palgrave Macmillan, 2015, p. 13–42.

անդամ երկրների ՉԼՄ-ի և քաղհասարակության ներկայացուցիչների հետ աշխատանքներում: Տարբեր գովազդային արշավների (“Go Turkey”, “Come See Turkey”, “Home of Troy”, “Home of Two Continents” և այլն) միջոցով Մշակույթի և զբոսաշրջության նախարարությանը հաջողվեց տարբեր երկրներում ներկայացնել Թուրքիայի մշակույթը, ճարտարապետությունը, ավանդույթները, հնագիտական վայրերը, խոհանոցը և այլն⁸²: Վարչապետի գրասենյակին կից գործող մամուլի և տեղեկատվության գլխավոր նախագահությանը ևս վերապահված է կարևոր դերակատարություն: 39 արտասահմանյան գրասենյակների միջոցով այս կառույցն իրականացնում է պետության տեղեկատվական քաղաքականությունը և ապահովում շփումը ՉԼՄ-ի հետ⁸³:

Թուրքիայի արտաքին քաղաքականության իրականացման գործում վերջին տարիներին ոչ պակաս կարևոր դերակատարում են ստանձնել ոչկառավարական կազմակերպությունները, որոնք սերտորեն համագործակցում են պետական հաստատությունների հետ և գործում միևնույն քաղաքականության ծիրում: Վերջիններիս գործունեության ոլորտներն ընդգրկում են այնպիսի խնդիրներ ինչպիսիք են Թուրքիայի առևտրատնտեսական և բիզնես շահերի խթանումը և երկկողմ ու բազմակողմ հարաբերությունների զարգացումը, թուրքերեն լեզվի և թուրքական մշակույթի խթանումը, մի շարք երկրներում ժողովրդավարության և բարեփոխումների օրակարգի մշակումը, հումանիտար աջակցությունը, կանանց իրավունքների պաշտպանությունը և այլն: Այս կազմակերպությունների գործունեության ֆինանսական, տնտեսական և խորհրդատվական հիմնական շահառուները Մերձավոր Արևելքի, Աֆրիկայի, Բալկանների, Հեռավոր Արևելքի տարածաշրջանների իսլամադավան համայնքներն են: Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Թուրքիայից դուրս ակտիվ գործունեություն ծավալած ոչ-կառավարական կազմակերպություններից մի քանիսին՝ ըստ գործունեության ոլորտների (աղյուսակի հղումները տե՛ս էջ 40-ում):

⁸² Նույն տեղում, էջ 19-21:

⁸³ Նույն տեղում, էջ 22-23:

Գործունեության ոլորտը	Կազմակերպության անվանումը	Գործունեության վերաբերյալ մանրամասներ
Բիզնես և առևտրատնտեսական կապեր	Անկախ արդյունաբերողների և գործարարների ընկերակցություն (MUSIAD — Müstakil Sanayici ve İşadamları Derneği) ⁸⁴ (հիմն. 1990 թ.)	Ներկայացուցչական գրասենյակներ ունի 32 երկրներում: Հաստատված է Գերմանիայում գործող ցանցը, որը ներկայացուցիչներ ունի 10 քաղաքում:
	Թուրքիայի արտաքին տնտեսական հարաբերությունների խորհուրդ (DEİK — Dış Ekonomik İlişkiler Kurulu) ⁸⁵ (հիմն. 1986 թ.)	Ներկայացուցչություններ ունի 121 երկրում, որոնք գործում են «բիզնես խորհուրդ» անվան ներքո:
	Թուրքիայի արտահանողների համաժողով (TIM — Dış İhracatçılar Meclisi) ⁸⁶ (հիմն. 1993 թ.)	Միավորում է արտահանմանը միտված թուրքական 52000 կազմակերպությունների՝ համաձայն 26 ոլորտների: Նպատակն է խթանել համակարգման ծավալները՝ 2023 թ. հասցնելով 500 մլրդ ԱՄՆ դոլարի (2010 թ. 135 մլրդ ԱՄՆ դոլարից):
	Թուրքական առևտրային պալատների և բորսաների միություն (TOBB — Türkiye Odalar ve Borsalar Birliği) ⁸⁷ (հիմն. 1950 թ.)	Նպատակն է խթանել մասնավոր հատվածի գործունեությունը: Գրասենյակներ ունի մոտ 20 առաջատար միջազգային և ազգային առևտրային կազմակերպություններում:
	Թուրքական արդյունաբերողների և գործարարների ընկերակցություն (TUSIAD — Türkiye Sanayiciler ve İşadamları derneği) ⁸⁸ (հիմն. 1971 թ.)	Միավորում է արդյունաբերության և ծառայությունների ոլորտի 3500 կազմակերպությունների: Ներկայացուցչական գրասենյակներ ունի Բրյուսելում, Վաշինգտոնում, Բեռլինում, Փարիզում և Պեկինում, ինչպես նաև անդամակցում է մի շարք միջազգային առևտրատնտեսական կազմակերպությունների:

Հումանիտար աջակցություն	Մարդկանց իրավունքների, ազատությունների և հումանիտար աջակցության հիմնադրամ (IHH — İnsan Hak ve Hürriyetleri ve İnsani Yardım Vakfi) (հիմնվ. 1992 թ.)	Գրասենյակներ ունի աշխարհի 135 երկրներում: Ծառայությունների մատուցում կրթության, սոցիալական ապահովության և առողջապահության ոլորտներում: Դպրոցների, հիվանդանոցների մզկիթների կառուցում և վերակառուցում, տարբեր երկրներում ապրող մուսուլմանների վերաբերյալ զեկույցների պատրաստում:
	Կապույտ կիսալուսնի աջակցության և զարգացման հիմնադրամ (Uluslararası Mavi Hilal İnsani Yardım ve Kalkınma Vakfi) (հիմն. 1999 թ.)	Համայնքային զարգացման, բնակարանաշինական և առողջապահական ծրագրեր է իրականացնում 11 երկրներում:
Կրթական	Մոր և մանկան կրթական հիմնադրամ (AÇEV — Anne Çocuk Eğitim Vakfi) ⁸⁹ (հիմն. 1993 թ.)	Կրթական ու վերապատրաստման դասընթացներ է իրականացնում Եվրոպայի և Մերձավոր Արևելքի 12 երկրների կարիքավոր ընտանիքների երեխաների և կանանց համար:
Կանանց հիմնախնդիրներ	Կանայք հանուն կանանց մարդկային իրավունքների (Kadının insan hakları) ⁹⁰ (հիմն. 1993 թ.)	Կանանց իրավունքների պաշտպանության իրականացում իսլամադավան պետություններում:

Հարկ է առանձին վերլուծել հատկապես գործարարների և առևտրային կազմակերպությունների հետ Թուրքիայի ԱԳՆ-ի արդյունավետ համագործակցությունը: Իհարկե, 1980-ականներին ևս Թ. Օզալը սերտորեն համա-

⁸⁴ Müstakil Sanayici ve İşadamları Derneği, <http://www.musiad.org.tr/tr-tr>

⁸⁵ Dış Ekonomik İlişkiler Kurulu, <http://www.deik.org.tr/>

⁸⁶ Dış İhracatçılar Meclisi, <http://www.tim.org.tr/tr/default.asp>

⁸⁷ Türkiye Odalar ve Borsalar Birliği, <http://www.tobb.org.tr/Sayfalar/AnaSayfa.php>

⁸⁸ Türkiye Sanayiciler ve İşadamları derneği, <http://www.tusiad.org.tr/>

⁸⁹ Anne Çocuk Eğitim Vakfi, <http://www.acev.org/>

⁹⁰ Kadının insan hakları, <http://www.wvhr.org/>

գործակցում էր գործարարների հետ արտաքին քաղաքականության իրականացման համար, սակայն Ռեջեփ Թայիփ Էրդողանի օրոք թե՛ ձևը, թե՛ բովանդակությունը էական փոփոխությունների են ենթարկվել: Եթե 1980–ականներին Թուրքիայի համար արտաքին առևտուրը երկիրը բացելու, արտահանելու և գումար վաստակելու նպատակ էր հետապնդում⁹¹, ապա 2000–ական թթ. այդ ամենին գումարվեց նաև նոր շուկաներում տնտեսական երկարաժամկետ ներկայացվածության ապահովումը, որն անհնար էր իրականացնել առանց մշակութային և քաղաքական լծակների օգտագործման: Ավելին, ներկայացնելով արտահանման ծավալները, ավելի ըմբռնելի է դառնում արտահանման շուկաներում երկարաժամկետ ներկայացվածությունն ապահովելու Թուրքիայի իշխանությունների ձգտումը: 2012 թվականին 2002 թ. համեմատ արտահանման ծավալները աճել են ավելի քան 400 տոկոսով՝ 36 միլիարդ դոլարից հասնելով 150 միլիարդի: Թուրքիայի Կենտրոնական բանկի ռեզերվները ևս նույն ժամանակահատվածում շեշտակի աճ են գրանցել՝ 27,5 մլրդ դոլարից հասնելով 121 մլրդ–ի: Միջազգային արժույթային ֆոնդին Թուրքիայի երբեմնի 23,5 մլրդ դոլար պարտքից մնացել է ընդամենը 860 միլիոն, որը մոտ ժամանակներում ամբողջությամբ կմարվի: Թուրքիան մտադիր է նաև ավելացնել իր կողմից հատկացվող վարկային փոխառությունները՝ այն հասցնելով 5 մլրդ դոլարի⁹²:

Այսպիսով, Էրդողանի և Ահմեթ Դավութօղլուի համար գործարար համայնքի ներգրավումը արտաքին քաղաքականության իրականացման նպատակով դարձավ անշրջելի գործընթաց: Գործարար համայնքի հետ համագործակցության խորացման և անելիքների համադրման նպատակով Դավութօղլուն վերակախիվացրեց 1986 թ. հիմնադրված Արտաքին տնտեսական հարաբերությունների խորհրդի և 1993 թ. հիմնադրված՝ Թուրք արտահանողների խորհրդի գործունեությունը, նոր սկզբունքներով սկսեցին գործել 1990 թ. հիմնադրված Անկախ արդյունաբերողների և գործարարների միությունը (Müstakil Sanayici ve İşadamları Derneği — MÜSIAD) և Թուրքիայի արդյունաբերողների և գործարարների միությունը (Türk Sanayicileri ve İş İnsanları Derneği — TÜSIAD): Կենտրոնական Թուրքիայում նոր արդյունաբերական կենտրոնների ի հայտ գալը ստեղծեց նաև նոր գործարար միություններ, որոնցից առավել հայտնի էր Թուրք արդյունաբերողների և գոր-

⁹¹ Altay Atlı, *Businessmen and Turkey's Foreign Policy*, Policy Brief Series, International Policy and Leadership Institute, 2011, p. 3.

⁹² PM Erdoğan Praises Economy's Ten Years, *Hürriyet Daily News*, 31.12.2012.

ծարարների համադաշնությունը (Türkiye İşadamları ve Sanayiciler Konfederasyonu — TUSKON):

«Փափուկ ուժի» միջոցով իրականացվող արտաքին քաղաքականության գործընթացում վերջին տարիներին կարևոր դեր է կատարում նաև հանրային մշակույթը: Որոշ ուսումնասիրողների կարծիքով Թուրքիայում նկարահանված և աշխարհի մոտ 100 երկրում ցուցադրված հեռուստասերիալները ոչ պակաս կարևոր ազդեցություն են թողել Թուրքիայի ազդեցության տարածման գործում⁹³: Այդ ոլորտում կատարված աշխատանքի և պետական աջակցության շնորհիվ Թուրքիան դարձել է հեռուստասերիալներ արտահանող երկրորդ երկիրը՝ զիջելով միայն ԱՄՆ-ին: Միայն 2012 թ. հեռուստասերիալների արտահանումից ստացված եկամուտը կազմել էր 200 մլն ԱՄՆ դոլար, որը 2004 թ. կազմում էր ընդամենը 10000 ԱՄՆ դոլար⁹⁴: Հատկապես, Gümüş (մերձավոր Արևելքում «Noor», իսկ Բուլղարիայում «Perla»), «Օտարագզի փեսան» (Yabancı Damat), «Հազար ու մի գիշեր» (Binbir Gece), «Ezel», «Menekşe ile Halil», «Fatmagül», «Բախտ» (Kismet), «Կյանքը շարունակվում է» (Haya Devam Ediyor), «Հրաշալի դարը» (Muhteşem yüzyıl) հեռուստասերիալները Մարտկոյից մինչև Մալազիա ապահովել են մեծ հեռուստապարան, որոշ դեպքերում հասնելով մինչև 200 մլն հեռուստադիտողի: Ուսումնասիրողների կարծիքով, որոշ հեռուստասերիալներ հեղափոխական դերակատարում են ունեցել արաբական աշխարհում ընտանեկան և մարդկային հարաբերությունների վրա, ինչպես նաև կանանց իրավունքների վերաիմաստավորման առումով՝ դրանով հանդերձ խթանելով Թուրքիայի, թուրքական մշակույթի և թուրքական նմուշաձևի վերաբերյալ դրական ընկալման ձևավորմանը⁹⁵:

Թուրքական մշակույթի, լեզվի և պաշտոնական տեղեկատվության տարածման գործում կարևոր նշանակություն ունի նաև Թուրքական ռադիո և հեռուստաընկերությունը (TRT): TRT-ն իր հաղորդումները հեռարձակում է 15 հեռուստատեսային և 18 ռադիոալիքներով: TRT-ի ինտերնետային կայքը տեղեկությունը տարածում է 35 լեզուներով և բարբառներով: Թուր-

⁹³ Kerem Öktem, նշվ. աշխ., էջ 98–101:

⁹⁴ Turkey World's Second Highest TV Series Exporter after US, <http://www.hurriyetdailynews.com/turkey-worlds-second-highest-tv-series-exporter-after-us.aspx?pageID=238&nID=73478&NewsCatID=345>

⁹⁵ Kismet: How Soap Operas Changed the World, <http://www.aljazeera.com/programmes/witness/2013/11/kismet-how-soap-operas-changed-world-20131117152457476872.html>

քայի Ձայնը (Voice of Turkey), որը հեռարձակվում է TRT Radio-ի կողմից, տարածում է իր հաղորդումները 29 լեզուներով: Լիներով պետական կառույց՝ TRT-ի լուրերը ներկայացնում են պաշտոնական տեսակետը և միշտ չէ, որ ներդրված հսկայական միջոցները ապահովում են ցանկալի արդյունքներ⁹⁶: Անադոլու քրատվական գործակալությունը (Anadolu Ajansı) ևս կարևոր դեր ունի Թուրքիայի վերաբերյալ նպաստավոր տեղեկատվական միջավայրի ստեղծման առումով: Այն ունի բավական լայն ցանց և ծածկույթ՝ գրասենյակներ 31 երկրում և լուրերը տարածում է 14 լեզուներով⁹⁷:

ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱՐՏԱԹԻՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2002 թ. նոյեմբերյան ընտրություններում հաղթեց ԱԶԿ, որը հիմնադրվել էր ընդամենը 14 ամիս առաջ: Կուսակցությանը հաջողվեց ստանալ քվեների 34 տոկոսը, որն աննախադեպ ցուցանիշ էր նախորդ տասնամյակի ընթացքում իրար հաջորդած կոալիցիոն կառավարությունների համատեքստում: Նոր իշխանության առաջնային նպատակներից մեկը դարձավ եվրոպական և արևմտյան գործընկերին վստահեցնել, որ Թուրքիայի արտաքին քաղաքանության մեջ էական շրջադարձեր չեն սպասվում, ավելին, Թուրքիան շարունակելու է մնալ Եվրամիության անդամակցության հավատարիմ պետություն և շարունակելու է իր ստանձնած պարտականությունների իրականացումը: Վարչապետի պարտականությունը ստանձնեց Ա. Գյուլը, մինչև Էրդողանը, կուսակցության իրական առաջնորդը, կստանձներ կառավարության ղեկը 5 ամիս անց: Գյուլի ղեկավարած կառավարությունում արտաքին գործերի նախարարի պաշտոնը վստահված էր Յաշար Յաքըշին: Էրդողանի վրա դրված արգելքը վերացնելուց հետո 2003 թ. ապրիլին նա դարձավ վարչապետ, իսկ Ա. Գյուլը նշանակվեց արտգործնախարար և փոխվարչապետ: Ա. Գյուլը պաշտոնավարեց մինչև 2007 թ. օգոստոս ամիսը, երբ Թուրքիայի օրենսդրի կողմից ընտրվեց նախագահ: Արտգործնախարարի պաշտոնում Գյուլին փոխարինեց նրա կողմից հովանավորվող, մասնագիտությամբ տնտեսագետ Ալի Բաբաջանը: Վերջինս շարունակեց պաշտոնավարել մինչև 2009 թ. մայիսի 1-ը: 2009 թ. ապրիլյան ընտրություններն օգտագործելով որ-

⁹⁶ Gaye Aslı Sancar, նշվ. աշխ., էջ 24–25:

⁹⁷ Նույն տեղում, էջ 26–27:

պես պատրվակ՝ Թուրքիայի վարչապետը պաշտոնանկ արեց Ա. Բարաջահին և արտգործնախարար նշանակեց Ա. Դավութօղլուին;

Հարկ է նշել, որ 2007 թ. ի վեր, ԱԶԿ-ի և քեմալականների միջև հակասությունները դարձան առավել ակնհայտ և Էրդողանը դանդաղորեն սկսեց իրականացնել մի շարք քայլեր, նպատակ ունենալով սահմանափակել զինվորականների և դատական իշխանության ներկայացուցիչների, քեմալական արժեհամակարգի ավանդական մեկնաբանությանը հավատարիմ պահպանողական շրջանակների լիազորությունները և օրենսդրական իրավունքները: Այդ գործընթացի համար պահանջվեց առնվազն 7-8 տարի և միայն 2010 թ. սեպտեմբերի 12-ին սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի արդյունքում հնարավոր եղավ էականորեն նվազեցնել նշված դերակատարների կողմից ԱԶԿ-ի դեմ քայլերի ձեռնարկման հնարավորությունը: Իհարկե, կար նաև արտաքին լծակների գործոնը, ԵՄ-ի առջև ստանցած պարտավորությունների հարցը և միայն ԱԶԿ-ի գործոնով չէ, որ պայմանավորվեց քեմալականության դիրքերի սասանման գործընթացը: Այն սկսվել էր դեռ 1999 թ., երբ Թուրքիային շնորհվեց ԵՄ-ի թեկնածու երկրի կարգավիճակ: 1999-2002 թթ. Բյուլենթ Էջևիրթի կոալիցիոն կառավարությանն արդեն հաջողվել էր մի քանի օրենսդրական փոփոխություններ իրականացնել, որոնց շնորհիվ սկսվել էր մի գործընթաց, որը բերելու էր նաև քաղաքական դաշտում զինվորականության դերակատարման նվազեցնելու պահանջը⁹⁸: 2002-2010 թթ. ընթացքում, գործադրելով տարբեր մարտավարական հնարներ ԱԶԿ-ն, կարողացավ էապես սահմանափակել զինվորականության լիազորությունները: Հատկապես կարևոր էին Էրգենեքոնի ցանցի հայտնաբերումը և համանուն դատավարական գործընթացի մեկնարկը, Balyoz չհաջողված ռազմական միջամտության հետ կապված աղմկահարույց բացահայտումների փաստը և այլն: Այս քայլերի արդյունքում քեմալականությունը և դրա ավանդական հանրային ընկալման բնույթը շոշափելի փոփոխության ենթարկվեց:

Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական միտումները գնահատելիս կարող ենք նշել, որ ԱԶԿ-ին հաջողվեց առանձին երկրների ու տարածաշրջանային գործընթացների նկատմամբ հանդես գալ նոր ռազմավարական մոտեցումներով: 2000-ական թթ. Թուրքիան որոշեց չմնալ հանդիսատեսի դերում և տարածաշրջանում ուժերի վերադասավորումներում

⁹⁸ Առավել մանրամասն տե՛ս Վ. Տեր-Մաթևոսյան, Թուրքիայի քաղաքական համակարգում բարեփոխումների հիմնական առանձնահատկությունները և զարգացման միտումները, Արևելագիտության հարցեր. հ. 7, Երևան, 2012, էջ 187-203:

ունենալ սեփական դերն ու նշանակությունը: Հետևաբար, Թուրքիայի արտաքին քաղաքականությունը ԱԶԿ-ի կառավարման տարիներին կարելի է դիտարկել, որպես առավելապես նոր մեթոդների կիրառմամբ նախկինում սահմանափակ հաջողություններ արձանագրած տարածաշրջաններում և միջազգային հարթակներում Թուրքիայի ազգային և պետական շահերի նորովի դիրքավորման հետևողական քաղաքականություն:

Ընդունված է կարծել, որ Արդարություն և զարգացում կուսակցության կողմից Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմքում դրված էր միայն «Ռազմավարական խորության» դոկտրինը, որն ենթադրում էր մասնակցություն տարածաշրջանային հակամարտությունների լուծմանը և տարածաշրջանում Թուրքիայի վարկի բարձրացում: Անշուշտ այն կարևորագույն հայեցակարգային և գաղափարախոսական մշակում էր, սակայն 2000-ական թթ. մասին խոսելիս հարկ է քննարկել նաև 1997–2002 թթ. Թուրքիայի արտաքին գործերի նախարար Իսմայիլ Չենի կողմից իրականացված մի շարք նոր ուղղությունները: Ի. Չենը, լինելով Բ. Էջևիթի Չախ ժողովրդավարական կուսակցության (ՉԺԿ) անդամ, Դավութօղլուի հետ միասին դիտվում են որպես հավասարաչափ կարևոր հետագիծ ունեցած արտգործնախարարներից ու տեսաբաններից մեկը: Սոցիալ դեմոկրատական գաղափարախոսության հետևորդ Չենը արտաքին քաղաքական նախաձեռնություններում ևս փորձում էր մեկտեղել հասարակության զարգացման սոցիալ-դեմոկրատական մոդելները և 1990-ականներին բնորոշ միջազգային հարաբերությունների առանձնահատկությունները: Նրա «Թուրքիան նոր դարաշրջանում» աշխատությունը⁹⁹, որտեղ ամփոփված են նրա ելույթները, հարցազրույցները, մեկնաբանությունները և հիշողությունները մեծապես օգնում են հասկանալ նրա պատկերացումները միջազգային հարաբերությունների վերաբերյալ: Այս գրքում Չենն առաջ է քաշում Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր տեսլական՝ միևնույն ժամանակ քննադատելով Թուրքիայի նախորդ տասնամյակներում իրականացված դասական արտաքին քաղաքականությունը և դիվանագիտությունը: Նրա կարծիքով Թուրքիայի արտաքին քաղաքականությունը հանրապետության շրջանում աղճատվել էր մշակութային արմատներից և պատմական անցյալից: Այն պետք է փոխարինվի նոր գիտակցմամբ, որի հիմքում պետք է լինի այն գաղափարի գիտակցումը, որ Թուրքիայի սպազա միջազգային կարգավիճակը պետք է հենվի Օսմանյան ժամանակահատվածից ժառանգված հարուստ ինքնության և

⁹⁹ Ismail Cem, Turkey in the New Century, Mersin, Rustem, 2001.

պատմական ձեռքբերումների վրա¹⁰⁰: Համաձայն Ջեմի՝ Սառը պատերազմի ավարտը, գլոբալիզացիոն նոր երևույթները և տեխնոլոգիաների դարաշրջանը արտաքին քաղաքականության համար նոր հնարավորություններ են բացում: Ըստ նրա, այդ հնարավորությունն առկա է նաև Թուրքիայի համար, որպեսզի վերջինիս արտաքին քաղաքականությունը լինի առավել ինքնավստահ¹⁰¹: Նա քննադատում է թուրք քաղաքական գործիչներին, արտաքին քաղաքականության պատասխանատուներին աշխարհը, Թուրքիայի հարևան պետություններին սև ու սպիտակ ակնոցներով նայելու համար: Ջեմը մերժում է բարեկամ ընդդեմ թշնամու իրարամերժ ընկալումը և առաջարկում խնդիրների լուծման առավել ճկուն բանաձև: Ըստ նրա, արտաքին քաղաքականությունը «պետության շահերի մաթեմատիկական հավասարումն է», հետևաբար, պետությունը պետք է ստեղծի հարմար միջավայր ճկուն և ակտիվ արտաքին քաղաքականություն իրականացնելու համար¹⁰²: Ջեմի գրքի վերաբերյալ գրած գրախոսականում Ջան Դուռնդարն առանձնացնում է նաև Ջեմի առաջ քաշած հետևյալ դրույթը, որ 21-րդ դարում Թուրքիան պետք է անպայման վերածվի «աշխարհի պետության», քանի որ Թուրքիան իսլամական աշխարհում եվրոպական չափանիշներ արձանագրած պետություն է և մերձավորարևելյան երկրներին պետք է ներկայացվի որպես նմուշաձև, այն կոչելով «թուրքական նմուշաձև»¹⁰³:

Ջեմի համար Թուրքիան թե՛ արևելյան, թե՛ արևմտյան, թե՛ ասիական, թե՛ եվրոպական, թե՛ մահմեդական և թե՛ աշխարհիկ պետություն էր, հետևաբար, այդ հանգամանքը կարելի էր խելամտորեն օգտագործել Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ նոր ինքնության ձևավորման ու ազգային շահերի ճիշտ դիրքավորման համար¹⁰⁴: Այս ընկալումների մեկտեղմամբ ու արտաքին քաղաքականության մեջ նոր շեշտադրումների ներբերմամբ Ջեմին հաջողվեց էականորեն փոխել Թուրքիայի վերաբերյալ առկա ընկալումը Եվրոպայում և Մերձավոր Արևելքում: Նրա օրոք Թուրքիային շնորհվեց ԵՄ-ի անդամության թեկնածու երկրի կարգավիճակ, դրական միտումներ նկատվեցին Հունաստանի, Կիպրոսի, Գերմանիայի և Թուրքիայի

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 3:

¹⁰¹ Նույն տեղում, էջ 5:

¹⁰² Նույն տեղում, էջ 13:

¹⁰³ Can Dündar, Ben Böyle Veda Etmeliyim, İstanbul, Türkiye İş Bankası, 2008, s. 202-204.

¹⁰⁴ Ozan Örmeci, Ismail Cem's Foreign Policy, SDU Faculty of Arts and Sciences, Journal of Sociel Social, № 23, May 2011, p. 245.

աշխարհագրական մյուս հարևանների հետ ավանդաբար լարված հարաբերություններում:

Չեմի կողմից որդեգրած քաղաքական ռեալիզմի մի շարք տարրեր նոր բովանդակությամբ, նոր քաղաքական իրողությունների ներքո շարունակություն գտան նաև նրա պաշտոնավարումից հետո: Ուշագրավ է, որ նույն թվականին Ստամբուլում լույս տեսավ մեկ այլ աշխատություն, որն առավել տեսական էր, սակայն այն ստացավ առավել մեծ ճանաչում: Այս գրքի հեղինակը Ա. Դավութօղլուն էր, իսկ գիրքը կոչվում էր «Ռազմավարական խորություն»¹⁰⁵: Դժվար է ասել, թե այս երկու աշխատանքների հեղինակները ինչպիսի փոխազդեցություն են ունեցել, կամ ունեցել են արդյո՞ք, սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ գրքի հրատարակման ժամանակ Չեմը գործող արտգործնախարար էր, իսկ Դավութօղլուն համալսարանի պրոֆեսոր, ապա կարող ենք եզրակացնել, որ 1990–ականների վերջին և 2000–ականների սկզբներին Թուրքիայում ձևավորվել են ընդհանուր գիտակցում, որ Սառը պատերազմի ընթացքում իրականացված արտաքին քաղաքականությունը չի կարող կիրառվել նոր դարաշրջանում: Ավելին, արտաքին քաղաքական նախաձեռնությունները պետք է ունենան ոչ միայն նոր ձև, այլ նաև գաղափարախոսական նոր ու գրավիչ բովանդակություն: Հետևաբար, Չեմի կողմից առաջարկված արտաքին քաղաքական կազմակերպագաղափարախոսական բանաձևերը էական ազդեցություն են ունեցել ԱԶԿ–ի արտաքին քաղաքականության վրա: Չեմի առաջարկած որոշ դրույթներ ԱԶԿ–ի օրոք ստացան հետագա զարգացում, որոշները ստացան տեսանելի կիրառում, որոշ ուղղություններում եղան իրական ձեռքբերումներ, որոշ ուղղություններում ձեռքբերումները սահմանափակ կամ ժամանակավոր էին: Ստորև ներկայացվում են մի շարք ուղղություններով ԱԶԿ–ի ժամանակաշրջանում մշակված ուղղությունների և պրակտիկ քաղաքական կիրառությունների որոշ առանձնահատկություններ:

Որոշակիորեն վերանայվեց երկար տարիներ շրջանառվող այն տեսությունը, ըստ որի՝ Թուրքիան կամ կամուրջ էր Արևելքի ու Արեւմուտքի միջև, կամ ճակատային երկիր՝ «Սառը պատերազմի» ժամանակ, կամ սովորական մի պետություն՝ իսլամադավան աշխարհի և Արևմուտքի միջև: Կամուրջ–պետության տեսությունը, ըստ նրա, ենթադրում էր կրավորականություն, ոչ թե հնարավորություն է տալիս հանդես գալու իր նախաձեռնություններով:

¹⁰⁵ Ahmet Davutoğlu, Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslarası Konumu, İstanbul, Küre Yayınları, İlk Baskı, 2001.

Այն նախատեսում էր անցակետի դեր գաղափարները, արժեքները և հաստատությունները մի կողմից մյուսը փոխադրելու համար¹⁰⁶:

Դրա փոխարեն հաստատվեց Թուրքիայի՝ որպես կենտրոնական, օպտիմալ կամ առանձնահատուկ պետության տեսությունը: Միջազգային հարաբերությունների պրոֆեսոր, դեսպան, Թուրքիայի վարչապետի ու արագորժնախարարի ավագ խորհրդական Ա. Դավութօղլուի բնութագրմամբ՝ Թուրքիան հանդես է գալիս մի քանի տարածաշրջանային ինքնություններով, որոնք հնարավոր չէ ներկայացնել որպես մեկ ինքնություն: «Իր ազդեցության ոլորտներով Թուրքիան միաժամանակ մերձավորարևելյան, բալկանյան, կովկասյան, միջերկրածովյան, Պարսից ծոցի, կենտրոնասիական, կասպյան, սևծովյան երկիր է¹⁰⁷, ինչի շնորհիվ Թուրքիան կարողանում է տարաշարժներ կատարել միաժամանակ մի քանի տարածաշրջաններում»¹⁰⁸: Համաձայն Դավութօղլուի՝ արտաքին քաղաքականության գաղափարական հենքը պետք է լինեն պատմական աշխարհագրական խորության թեզերը, որոնցով ապահովվելու է վերոհիշյալ ռազմավարական խորության իրականացումը: Հիմնվերով այդ երկու «խորությունների վրա»՝ Թուրքիան իր անմիջական տարածաշրջանում «ունի պատասխանատվություն և միաժամանակ որոշ իրավունքներ: Այս ամենի հետևանքով Թուրքիան միջազգային հարաբերություններում վերածվում է կենտրոնական պետության, բացառված է նրա՝ ծայրամասային պետություն լինելու հավանականությունը, նա Բալկանների, Մերձավոր Արևելքի ու Կովկասի էպիկենտրոնն է»¹⁰⁹:

ԱՉԿ-ի արտաքին քաղաքականությունը հիմնված է 5 փոխկապակցված սկզբունքների վրա. ժողովրդավարացում՝ առանց անվտանգության կայունության խաթարման, լավ հարաբերություններ («զրո խնդիրներ») հարևանների հետ, գերակտիվ, բազմակողմ և փոխլրացնող քաղաքականություն, նոր դիվանագիտական ոճ (ինքնավստահության), ստատիկ դիվանագիտությունից անցում դինամիկականի¹¹⁰: Հաշվի առնելով համախառնական

¹⁰⁶ Turkey's International Role (Interview with Ahmet Davutoğlu), "Utpost-utrikespolitiska studentforeningens webbtidning", <http://www.utlinkoping.org/utpost.php?article=38&page=0>

¹⁰⁷ Ahmet Davutoğlu, Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, Insight Turkey, Vol. 10, №1, 2008, p. 77.

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 78:

¹⁰⁹ Turkey's International Role (Interview with Ahmet Davutoğlu), "Utpost-utrikespolitiska studentforeningens webbtidning", <http://www.utlinkoping.org/utpost.php?article=38&page=0>

¹¹⁰ Ahmet Davutoğlu, Türkiye Merkez ülke olmalı. Radikal, 25.02.2004.

ուժերի հետ համերաշխության կարևորությունը, ինչպես նաև Օսմանյան կայսրության նախկին տարածքներում ազդեցության գոտիների ընդլայնման կարևորությունը Դավութօղլուի արտաքին քաղաքական հայեցակարգը և գաղափարները նաև ստացել են պանիսլամական և նեոօսմանական բնութագրիչները¹¹¹:

2007–2011 թթ. ընթացքում Թուրքիան հեռագնա ու բազմավեկտոր քաղաքականություն իրականացնելու համար առաջնորդվում էր արտաքին քաղաքականության նշված սկզբունքներով: Երկիրն ակտիվորեն ներգրավված էր մերձավորարևելյան հակամարտությունների լուծման գործում (Իսրայել–Սիրիա, Իսրայել–Պաղեստին), շահագրգռված էր ԱՄՆ–ի և ԵՄ–ի կողմից մերժված Մուդանի և Համասի մեկուսացումը վերացնելու մեջ՝ փորձելով հարթել ամերիկյան դիվանագիտական անհաջողություններից առաջացած աշխարհաքաղաքական անջրպետը: Թեև Թուրքիայի մերձավորարևելյան միջնորդական առաքելությունները մինչ այդ տպավորիչ հաջողություններ էին ունեցել, սակայն տարբեր նախաձեռնությունների շնորհիվ Թուրքիան կարողացավ ձեռք բերել Սիրիայի վստահությունը ու տալ ամերիկյան պատժամիջոցներից ազատ շնչելու հնարավորություն:

Այդուհանդերձ, Թուրքիայի արտաքին քաղաքական վերնախավը, հատկապես՝ ԱԳՆ ընտրանին, փակ շրջաններում, հարցականի տակ էր դնում ԱԶԿ–ի հավակնոտ արտաքին քաղաքական ուղեգիծը՝ այն համարելով բոլոր ճակատներում պարզունակ ու անհեռատեսական: Այս հանգամանքի հաշվառմամբ էր, որ ԱԶԿ–ի ղեկավարությունը ժամանակ առ ժամանակ տեղի էր տալիս բյուրոկրատական ապարատի կողմից հնչող քննադատություններին և որոշ դեպքերում անգամ սահմանափակում կամ մեղմացնում արտաքին քաղաքական որոշ նախաձեռնություններ:

Մինչև 2009 թ. վարչապետ Էրդողանի, և արտաքին գործերի նախարարներ Գյուլի և Բաբաջանի արտաքին հարաբերություններով զբաղվող թիմերը բաղկացած էին բավական երիտասարդ ու դինամիկ մտածողությամբ անդամներից, որոնց գործունեության արդյունավետությունը կուսակցության ղեկավարության կողմից բարձր էր գնահատվում: Դրանց թվում են Մուրաթ Քընըրլըօղլուն, Ջունեյթ Չափսուն, Էգեմեն Բադըշը, Օմեր Չելիքը, Շարան Դաշը, Ռեհա Դոնեմեջը, Իբրահիմ Քալընը, Մևլութ Չավուշօղլուն, Իբրահիմ Քալընը, որոնք հիմնականում 38–50 տարեկան էին և հա-

¹¹¹ Ա. Իսրայելյան, Թուրքիայի արտաքին քաղաքականության առանձնահատկություններն Արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տասնամյակում (2002–2012 թթ.), Երևան, ՎՄՎ–Պրինտ, 2016. էջ 30–54:

մարվում են Էրդողանի վստահելի թիմակիցները¹¹²: Դավութօղլուն ուներ առանձին կարևորություն արտաքին քաղաքական գաղափարախոսական կողմնորոշիչների մշակման և նախարարին կամ վարչապետին ներկայացման հարցերում: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ վերոհիշյալ խորհրդականների մեծ մասն ստացավ առաջխաղացում և բարձր պաշտոններ են զբաղեցնում օրենսդիր և գործադիր մարմիններում¹¹³:

Թուրքիայի արտաքին քաղականությունը ուսումնասիրողները պնդում են, որ նրանք, ովքեր ցանկանում են հասկանալ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, առաջին հերթին պետք է գործ ունենան Դավութօղլուի հետ: Թե՛ Էրդողանը, թե՛ Գյուլը Դավութօղլուին անվանում են «ուսուցիչ» (հոջա), իսկ Թուրքիայում ԱՄՆ նախկին դեսպան Մարկ Հարիսը, նրան մի առիթով անվանել էր «Թուրքիայի Քիսինջեր»: Խորհրդականներին Թուրքիայում երկար տարիներ նման ուշադրություն չէր դարձվել, և այս հանգամանքը թուրքական քաղաքականության մշակման մեթոդաբանության վերանայման վկայությունն է: Դավութօղլուի քաղաքագիտական, տեսական և փորձագիտական ռեսուրսին գումարվում է արտաքին քաղաքական ոլորտում Էրդողանի, Գյուլի, Բաբաջանի երկարամյա գործունեության հաջողված փորձը: Հարկ է ավելացնել նաև Գյուլին, որին փորձառության և տպավորիչ դիվանագիտական կարողությունների համար արտերկրում անվանում են նաև «Թուրքիայի արտաքին քաղաքականության նախագահ»:

Այս տեսանկյունից 2008 թ. «Կովկասյան պլատֆորմի» նախաձեռնությունը նպատակահարմար էր դիտել որպես Դավութօղլուի դոկտրինի բաղադրիչ, որի հիմքում անկայուն տարածաշրջանային գոտիներում ներկայացված լինելու և դրա շնորհիվ սեփական շահերը հետապնդելու նրա ծրագիրն է: Վրաստանում տեղի ունեցած օգոստոսյան դեպքերից հետո Թուրքիայի համար պատեհ առիթ էր՝ հիշեցնելու իր «ռազմավարական խորության» «կենտրոնական պետություն» լինելու մասին: Օգոստոսյան պատերազմի առնչությամբ սոսկ խաղաղության և զինադադարի հաստատման փորձով հանդես գալու տարբերակը համարելով նվազ ազդեցիկ՝ Թուրքիան որոշեց գործնականորեն ապահովել իր շահերի ներկայությունը ժամ ի ժամ փոփոխ-

¹¹² Başbakan'ın adamları! ..., Milliyet, 08.02.2007.

¹¹³ ԱԶԿ-ի կառավարման առաջին շրջանի արտաքին քաղաքականության մասին առավել մանրամասն տե՛ս Վ. Տեր-Մաթևոսյան, Թուրքիան Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության իրականացման համատեքստում, Ռազմավարական Անվտանգային հետազոտություններ, հ.1, Երևան, 2014, էջ 592–621:

վող տարածաշրջանում: Ընդունված է համարել, որ Էրդողանը «պլատֆորմի մասին առաջին հայտարարությունն արել է 2008 թ. օգոստոսի 13–ին Մոսկվայում, սակայն իրականում օգոստոսի 10–ին հեղինակավոր «Սաբախ» օրաթերթում տպագրվել է մի վերլուծական հոդված, որը Թուրքիայի ներքին արձագանքը ճշտելու փորձնական քայլ էր: Հարկ է նշել, որ օգոստոսի 6–ից Թուրքիայի վարչապետը հանդիպումներ էր ունենում նորանշանակ ու պաշտոնաթող զինվորականների հետ, և հավանական է, որ Կովկասյան միջնորդական նախաձեռնության դրույթներն ընդհանուր առմամբ համաձայնեցված էին ՁՈՒ–ի հետ: Այդ Կովկասյան նախաձեռնությունը, մինչև Պլատֆորմ կոչվելը, անվանվում էր դաշինք, միություն, պայմանագիր, համաձայնություն, պակտ, հռչակագիր և միայն Թուրքիայի ղեկավարների ու նրանց բանազնացների Կովկասյան այցելություններից հետո առավել ընդունելի դարձավ ներկայումս շրջանափող տարբերակը: Այսինքն՝ անորոշությունը սկիզբ էր առնում անվանումից և ավարտվում բովանդակություն չունենալու մասին խոսակցություններով:

Չնայած Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմին տրվող հոռետեսական զնահատականներին՝ թուրքական կողմը հետևողական կերպով առաջ էր տանում այդ գաղափարը: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ տվյալ նախաձեռնությունը, ոչ թե շուտափույթ արձագանքման քայլ էր, այլ տեղավորվում է Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր ուրվագծերի մեջ, ապա դա Կովկասում ներկայացվածություն ապահովելու հնարավոր փորձ էր՝ միտված Կովկասից դուրս չմնալուն, քանի որ դա կդիտվեր որպես ԱԶԿ–ի արտաքին քաղաքականության աշխարհաքաղաքական և հայեցակարգային բացթողում: Ուստի հավանական է, որ մոտ ապագայում Թուրքիան ավելի մեծ ջանքեր կգործադրի այդ նախագծի հետագա հաջողության համար: Դա ավելի հավանական է թվում նաև մերձավորարևելյան քաղաքականության ասպարեզում Էրդողանի կառավարության ոչ այնքան տպավորիչ ձեռքբերումների համապատկերում: Տվյալ փուլում հակասություններ են նկատվում Թուրքիայի արտաքին քաղաքականության ոլորտում որոշում կայացնողների ավանդական և ԱԶԿ–ի թևերի միջև: Եթե նախկինում հակասություններն արտահայտվում էին գերազանցապես, Համասի առաջնորդի և Սուդանի առաջնորդի Թուրքիա կատարած այցերի քննադատությամբ, ԵՄ–ից հետգհետև հեռացման անընդունելի քաղաքականությամբ, Իսրայելի նկատմամբ Էրդողանի կառավարության անընդունելի դիրքորոշումներով, ապա վերջին շրջանում ավանդական կողմնորոշում ունեցող դիվանագետները նշում էին, որ ԱԶԿ–ի բազմավեկտոր ու նա-

խաձեռնողական արտաքին քաղաքականությունն արկածախնդրություն էր, անիրական էր ու պարզունակ և կարող էր վնասել Թուրքիայի արտաքին շահերին:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՈՋԸ

Քենալականության կերպավորումը միայն զինվորականության դիրքերի թուլացմամբ հնարավոր չէր իրականացնել, ուստի, ԱԶԿ-ի համար էական էր արտաքին քաղաքականության ակտիվությանը և դիվանագետների սերնդավորությանը զուգահեռ ձգտել փոխել դիվանագետների հետ աշխատանքի սկզբունքները և մեթոդները: Հետևաբար, վերջին տարիներին բազմաթիվ առիթներով խրախուսվող թուրքական ակտիվ արտաքին քաղաքականության ձեռքբերումների պատճառներից մեկը Անկարա-դիվանագիտական ներկայացուցչություններ կապի խորացումն է և համակարգումը: Դիվանագիտական կորպուսի և դեսպանների կողմից այս հանդիպումների վերաբերյալ հնչող գնահատականները տարբեր են: Ոմանք բարձր են գնահատում նման հանդիպումները, քանի որ խորհրդակցությունների ընթացքում շահագրգիռ ինստիտուտների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի են ունենում քննարկումներ, հստակեցվում են խնդիրները և ընդհանուր անելիքները, մյուսների կարծիքով նման հանդիպումները կարևոր են քանի դեռ Դավութօղլուն չի սկսում իր խիստ ակադեմիական դասախոսությունները և տեսական խնդիրների քննարկումը¹¹⁴: Թուրքական ազդեցիկ լրատվամիջոցների սյունակագիրները ևս քննադատում են նման ձևաչափով անցնող քննարկումները՝ Դավութօղլուին մեղադրելով այն բանում, որ համաժողովից համաժողով նա ավելացնում է հոետորաբանական շեշտադրումները և դեսպանների հետ հանդիպումները վերածում «մեկ դերասանի թատրոնի», միակողմանիորեն պարտադրում սեփական հայացքները, հավակնոտ կերպով խոսում Թուրքիայի արտաքին քաղաքականության հզորության և առասպելական էության, համաշխարհային գործընթացների ձևավորման գործում և «պատմության արարման» ընթացքում Թուրքիայի առանցքային դերի մասին և այլն՝ մնալով անտարբեր քննադատությունների

¹¹⁴ Հարցազրույց Անկարայի TOBB համալսարանի պրոֆեսոր Բ. Փեռլիվանյուրքի հետ, Անկարա, 25.11.2012 թ.:

և տարաբնույթ հարցերի նկատմամբ¹¹⁵: Նույն սկզբունքով են աշխատում նաև մյուս գերատեսչությունների ղեկավարները, որոնք երկրորդելով Թուրքիայի վարչապետին և ԱԳ նախարարին, ոչ միայն գովաբանում են արտաքին քաղաքականության նվաճումները, այլ նաև օգտագործում են առիթը՝ քննադատելու այն երկրներին ու կառույցները, որոնք անցած տարվա ընթացքում քննադատել են Թուրքիային:

Համաժողովների հետ կապված կարևոր է ևս երկու հանգամանք. ա) բացառությամբ առաջին համաժողովի, մյուսներն ունեցել են երկու փուլ, առաջին հանդիպումը տեղի է ունենում մայրաքաղաքում, իսկ երկրորդ փուլը՝ քաղաքներից մեկում; բ) բացառությամբ առաջին համաժողովի, մյուսներին ներկա են գտնվել ինքնավարությունների ղեկավարներ, վարչապետներ և արտգործնախարարներ այլ երկրներից:

2008 թ. հունիսի 15–18-ը Ա. Բաբաջանի նախաձեռնությամբ Անկարայում առաջին անգամ կազմակերպվեց թուրք դիվանագետների համաժողով, որի խորագիրը հետևյալն էր՝ «Թուրքիայի արտաքին քաղաքականությունը. կողմնորոշումները և առաջնահերթությունները»: Միջազգային հարաբերությունների ուսումնասիրությունների ասոցիացիայի նախագահ Բուրաք Յալըմի կարծիքով առաջին համաժողովը մնաց սովերում, քանի որ 2008 թ. Թուրքիայի արտաքին հարաբերություններն այնքան էլ հանրահայտ չէին¹¹⁶:

Դեսպանների համաժողով 2009 թ. տեղի չունեցավ, փոխարենը միայն 2010 թ. հունվարի 4–8-ը հնարավոր եղավ Անկարայում, ապա Մարդինում կազմակերպել 2-րդ համաժողովը: Մեկ տարի ընդմիջում տալու պատճառների մասին հայտարարություն չի արվել, հետևաբար, բուն պատճառներն անհայտ են: 2009 թ. մայիսի 1-ին Ա. Դավութօղլուի արտգործնախարար նշանակվելուց հետո սա նրա առաջին համաժողովն էր: Երկրորդ հանդիպման խորագիրը հետևյալն էր՝ «Ժողովրդավարություն, անվտանգություն և կայունություն. արտաքին քաղաքականության տեսլականը 2010 թ.»¹¹⁷: Համաժողովին ներկա էին Բրազիլիայի, Գերմանիայի, Ճապոնիայի արտգործնախարարները, Կիպրոսի թուրքական հատվածի նախագահ Մեհմեթ Ալի

¹¹⁵ Barçın Yinanç, Turkey Needs Active Ambassadors to Pacify PM and FM, Hürriyet Daily News, 08.01.2013.

¹¹⁶ Burak Yalim, 4. Büyükelçiler Konferansı: “Türk Dış Politikasında ‘Durmak ve Anlamak’”, 2011, <http://www.tuicakademi.org/index.php/yazarlar/1/34-burak-yalim/2554-4-buyukelciler-konferansi-turk-dis-politikasinda-durmak-ve-anlamak>

¹¹⁷ No: 244, 30 Aralık 2009, İkinci Büyükelçiler Konferansı Hk., http://www.mfa.gov.tr/no_244_30-aralik-2009_ikinci-buyukelciler-konferansi-hk_tr.mfa

Թալաթը, Պաղեստինի պետության ղեկավար Մադմուդ Աբասը: Հիմնական ելույթում Դավութօղլուն նշեց, որ երկար ժամանակ Թուրքիան ակտիվորեն չի մասնակցել տարածաշրջանային գործընթացներին, սակայն Թուրքիայի աշխարհագրական դիրքը պարտադրում է ակտիվ մասնակցություն ԵՄ-ի և համաշխարհային գործերին: Նրա խոսքերով «Թուրքիան ունակ է առավել ակտիվ արտաքին քաղաքականություն վարել, քանի որ դրա համար կան պատմական հիմքեր և ժամանակին միայն 5-6 պետություն կարող էին Թուրքիայի հետ մրցել ակտիվ արտաքին քաղաքականության առումով»¹¹⁸: Նրա խոսքերով տարածաշրջանային ճգնաժամերը պետք չէ անտեսել, այլ պետք է անհրաժեշտ ջանքեր ներդնել դրանց լուծման հնարավորությունների ուղղությամբ¹¹⁹: Համաժողովի ընթացքում քննարկվեցին Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգային մի քանի խնդիրներ ըստ տարածաշրջանների, նշվեց նաև 2010 թ. 26 նոր դիվանագիտական առաքելությունների բացման մասին: Այս հանդիպումը կարևոր էր նրանով, որ Դավութօղլուն առաջին անգամ հանդես գալով ԱԳ նախարարի պաշտոնում, ներկայացրեց արտաքին հարաբերությունների զարգացման իր տեսլականը ոչ միայն 2010 թ. այլ նաև մինչև 2023 թ. ընկած ժամանակահատվածի համար:

2011 թ. հունվարի առաջին տասնօրյակում տեղի ունեցած երրորդ համաժողովի խորագիրը հետևյալն էր՝ «Տեսլական դիվանագիտություն. Համաշխարհային և տարածաշրջանային կարգը Թուրքիայի դիտանկյունից»: Այս համաժողովին ներկա էին Հունաստանի վարչապետ Գեորգի Պապանդրեուն, ինչպես նաև՝ Աֆղանստանի և Պակիստանի արտգործնախարարները: Վերջիններս ելույթով հանդես եկան Անկարայում, իսկ Պապանդրեուն՝ Էրզրումում¹²⁰: Համաժողովի վերաբերյալ ԱԳՆ-ի տարածած հաղորդագրության մեջ նշվում էր, որ երրորդ համաժողովի նպատակն էր ճշգրտել երկրորդ համաժողովի ընթացքում բարձրացված խնդիրների լուծման հարցում արձանագրված առաջընթացը, քննարկել արտաքին քաղաքականության օրակարգում և տարբեր տարածաշրջաններում առաջացած նոր խնդիրները և առաջարկել լուծումներ: Հաղորդագրությունում նաև նշվում էր, որ դեսպանների հետ նման հանդիպումները դարձել են ԱԳՆ-ի

¹¹⁸ Turkish diplomat says Turkey Needs a New Powerful Vision in Foreign Policy, Today's Zaman, 04.01.2010.

¹¹⁹ Muğe Özbağlı, 2. Büyükelçiler Konferansı Ankara'da başladı, <http://www.abvizyonu.com/basindan/2buyukelciler-konferansi-ankarada-basladi.html>

¹²⁰ (Dip) Third Conference of Ambassadors Begins, [http://www.thefreelibrary.com/\(DIP\)+THIRD+CONFERENCE+OF+AMBASSADORS+BEGINS.-a0245701735](http://www.thefreelibrary.com/(DIP)+THIRD+CONFERENCE+OF+AMBASSADORS+BEGINS.-a0245701735)

ինստիտուցիոնալ մշակույթի մաս¹²¹: Համաժողովի ընթացքում եղավ մեկ ընդհանուր նիստ՝ «Ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, օրենքի գերակայություն» խորագրով և մի քանի այլ նիստեր «Մեր ԵՄ անդամակցության գործընթացի հինգերորդ տարվա հաշվեկշիռը, Բանակցություններ և բարեփոխումների գործընթացը», «Տնտեսական և առևտրային հարաբերություններ», «Մշակույթ և հանրային դիվանագիտություն» և «Արտերկրում ապրող թուրքերը և հյուպատոսական ծառայություններ» խորագրերով: Նիստերի խորագրերը հուշում են, որ առանձին ոլորտներում քննարկվել են հստակ խնդիրներ, դրվել նպատակներ: Դավաթօղյուն իր ելույթում նշեց, որ թուրք դիվանագետները պետք է գործեն հրշեջների նման և անմիջապես շտապեն այն վայրերը, որտեղ Թուրքիայի շահերը վտանգված են, սակայն թուրք դիվանագետները պետք է լինեն նաև պլանավորողներ¹²²: Նման ձևաչափով անցկացվող հանդիպումները նաև լավ հնարավորություն են, որպեսզի առանձին ոլորտների և ուղղությունների պատասխանատուները կատարեն բավական ինքնավստահ, քննադատական և ոչ միանշանակ հայտարարություններ: Օրինակ, ԵՄ գործերի նախարար և գլխավոր բանակցող Էզեմեն Բաղըշը հայտարարեց, որ Թուրքիան այժմ ի վիճակի է բացել ԵՄ-ի հետ բանակցությունների ևս 16 փաթեթ՝ ի հավելումն արդեն բացված 13-ի և կարճաժամկետ և միջնաժամկետ առումներով փակել 12-ը: Նա հատուկ ուշադրություն հատկացրեց էներգետիկային վերաբերող փաթեթին՝ նշելով, որ էներգետիկ ոլորտում ամենաշատ խնդիր ունեցող ԵՄ անդամ երկրի կողմից այս փաթեթի վրա արգելանք դնելը տրագիկոմեդիա է հիշեցնում: Թեև նա չհստակեցրեց երկրի անվանումը, սակայն հասկանալի էր, որ խոսքը գնում էր Կիպրոսի մասին: Նա նաև շնորհակալություն հայտնեց դեսպաններին Թուրքիայի նկատմամբ անարդարությունների հետևանքները նվազագույնի հասցնելու և Թուրքիայի ճշմարտացիությունը բոլորին հասանելի դարձնելու համար¹²³:

Չորրորդ հանդիպումը, որը տեղի ունեցավ 2011 թ. դեկտեմբերի 23–30-ը, ուներ հետևյալ խորագիրը՝ «Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական առանցքները. Ժողովրդավարական արժեքները և ազգային շահերը»: Հանդիպմանը ներկա էին Սերբիայի, Շվեյցարիայի և Ուկրաինայի

¹²¹ Üçüncü Büyükelçiler Konferansı Sonuç Bildirisi, <http://www.mfa.gov.tr/ucuncu-buyukelciler-konferansi-sonuc-bildirisi.tr.mfa>

¹²² Third Ambassador's Conference in Ankara, <http://www.ankarascene.com/haber/third-ambassadors-conference-in-ankara-469.html>

¹²³ Egemen Bağış, 3. Büyükelçiler Konferansı, <http://egemenbagis.com/tr/1818>

արտգործնախարարները, միջոցառման երկրորդ փուլն անցկացվեց Էդիրնեում: Այս հանդիպման ընթացքում Դավութօղլուն առաջ մղեց դեռ երրորդ համաժողովի ընթացքում առաջ քաշված «խելացի ազգ» դրույթը՝ այն ներակայացնելով որպես «խելացի մարդ»–«խելացի ազգ»–«խելացի դեսպան» եռամիասնության մաս: Նա նաև պնդեց, որ դեսպանները պետք է լինեն քաջատեղյակ պատմության, տնտեսագիտության, ձեռնարկատիրության վերաբերյալ այնպիսի խորությամբ ինչպես գիտնականները և պետք է գործեն զգուշությամբ՝ ենթադրելով, որ նրանց ուսերին նստած են աղավիհներ¹²⁴:

Նա նաև նշեց, որ թեև Սառը պատերազմի ավարտի ժամանակ Թուրքիան հաղթող կողմում էր, սակայն քաղաքական կամքի բացակայության և կառավարման համակարգի խոցելիության պատճառով 1991–2001 թթ. ընկած ժամանակահատվածը դարձավ կորսված տասնամյակ Թուրքիայի համար, իսկ համընդհանուր քաղաքականության համար՝ այն պետք է համարել «աշխարհաքաղաքական երկրաշարժի» տասնամյակ: Դավութօղլուն նաև նշեց, որ հարկավոր է անել ամեն ինչ, որպեսզի կորսված տասնամյակի բացասական հետևանքները վերացնելու համար դիվանագետներն անեն հնարավորինը: Այդ նպատակով նա դեսպաններին խորհուրդ տվեց ստեղծել 25–րդ ժամը, եթե օրվա ընթացքում չի հաջողվել անել պլանավորածը և չքնելը պետք է արգելված չլինի բարձրաստիճան դիվանագետների համար: Նա նաև ընդունեց, որ թեև Թուրքիայի ԱԳՆ–ն բավական ակտիվ է, սակայն մյուս երկրների համեմատությամբ ունի բավական սահմանափակ աշխատակազմ: Նա նաև հավելեց, որ 2001–2011 թթ. ընկած ժամանակահատվածը պետք է համարել վերականգնման, իսկ մինչև 2023 թ. հարկ է աշխատել ամրապնդման կարգախոսի ներքո¹²⁵:

Դավութօղլուի ելույթի առավել ուշագրավ հատվածներից էր հայկական և հրեական համայնքների վերաբերյալ նրա կատարած դիտարկումները: Նրա դիտարկմամբ՝ Թուրքիան լքած յուրաքանչյուր հայ և հրեա թուրքական Սփյուռքի մաս է կազմում, հետևաբար հարկավոր է կապ հաստատել տարբեր երկրներում ապրող Թուրքիայի նախկին քաղաքացի համարվող հայերի և հույների հետ և նրանց ներկայացնել համատեղ մշակույթը և հազարամյա պատմությունը՝ ի նկատի ունենալով «միասնական պատմություն տարա-

¹²⁴ Burak Yalim, 4. Büyükelçiler Konferansı: “Türk Dış Politikasında ‘Durmak ve Anlamak’”, 2011, <http://www.tuicakademi.org/index.php/yazarlar/34-burak-yalim/2554-4-buyukelciler-konferansi-turk-dis-politikasinda-durmak-ve-anlamak>

¹²⁵ Նույն տեղում:

ծաշրջանի համար, միասնական քաղաքացիություն Անատոլիայում»¹²⁶ կարգախոսը: Նա դեսպաններին կոչ արեց արդյունավետ աշխատանք տանել այդ ուղղությամբ և ամուր կապեր հաստատել դիվանագիտական առաքելության երկրի ժողովրդի հետ: Այս հայտարարությունը կարևոր է այն առումով, որ առաջին անգամ Թուրքիայի արտգործնախարարը նման հայտարարություն էր կատարում հայերի մասին:

Արտերկրում դիվանագիտական ծառայություն իրականացնող դեսպանների և բարձրաստիճան դիվանագետների հետ նախ Բաբաջանի, ապա Դավութօղլուի հանդիպումները կարևոր միջոցառում են արտաքին քաղաքական գերատեսչության կազմակերպվածության մակարդակը բարձրացնելու առումով: Վերջին վեց տարիների ընթացքում անցկացված հինգ համաժողովների ընթացքում ձևավորվել է որոշակի աշխատատեղ և սկզբունքներ, որոնք էական նշանակություն ունեն ոչ միայն ԱԳՆ-ի և դիվանագիտական առաքելությունների միջև աշխատանքի արդյունավետության բարձրացման և աշխատատեղի, մոտեցումների, հայացքների մոտարկման առումներով, այլ նաև այդ համաժողովներին օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցության առումով:

«ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԴԻՎԱԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ» ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2013 թ. հունվարին Անկարա և Իզմիր (Չմյուռնիա) քաղաքներում տեղի ունեցավ դիվանագիտական կորպուսի հետ հինգերորդ ամենամյա հանդիպումը: Հինգերորդ համաժողովի խորագիրը տարբերվում էր նախորդներից, քանի որ առաջին անգամ միջոցառումն անցնում էր գործնական խորագրի ներքո: Հանդիպմանը ներկա էին նաև Սինգապուրի, Շվեդիայի և Բրազիլիայի արտաքին գործերի նախարարները¹²⁷: Օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությունը միջոցառմանը որոշակիորեն նպաստեց խորագրի շուրջ տարաբնույթ գործնական քննարկումների անցկացմանը: Առավել ուշագրավ էր Շվեդիայի և Բրազիլիայի արտգործնախարարների մասնակցությունը համաժողովին, ավելին Բրազիլիայի արտգործնախարարն երկրորդ անգամ էր մասնակցում թուրք դեսպանների հետ հանդիպմանը: Թուրքիայի արտաքին քաղաքականության իրագործման ընթացքում

¹²⁶ Նույն տեղում:

¹²⁷ Beşinci Büyükelçiler Konferansı, <http://www.mfa.gov.tr/besinci-buyukelciler-konferansi.tr.mfa>

Բրազիլիան և առավելապես Շվեդիան էական աջակցություն են ցուցաբերել: Բավական է հետևել Թուրքիայի վերաբերյալ քվեարկությունների վիճակագրությանը, կամ ԵՄ-ի անդամակցության գործընթացում Շվեդիայի անվերապահ աջակցության դրսևորումներին: Շվեդ դիվանագետները ևս, ավարտելով դիվանագիտական առաքելությունը Թուրքիայում, շտապում են ընդգծված դրական լույսի ներքո մեմուարներ գրել Թուրքիայի իշխանությունների և թուրք ժողովրդի մասին¹²⁸:

Այս համաժողովին Շվեդիայի և Բրազիլիայի գլխավոր դիվանագետների մասնակցությունը պայմանավորված էր նաև մեկ այլ համաժամանրով: 2012 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի շրջանակներում Թուրքիան Բրազիլիայի և Շվեդիայի հետ միասին հանդես եկան «երեք մայրցամաքներից երեք միջին տերություն» նախաձեռնությամբ: Այդ նախաձեռնության մասին քիչ մանրամասներ են հայտնի, սակայն այդ երկու դիվանագետների մասնակցությունը վկայում է այն բանի մասին, որ Թուրքիան մտադիր է առավել խորացնել այդ երկրների հետ հարաբերությունները: Թուրքիայի երկկողմ և բազմակողմ հարաբերությունները Բրազիլիայի և Շվեդիայի հետ վերջին շրջանում աչքի են ընկել տարաբնույթ համագործակցությամբ: Ավելին, երեք երկրների միջև համագործակցության հեռանկարները խորացնելու նպատակով երեք արտգործնախարարները՝ Կարլ Բիլդը, Անտոնիո Պատրիտտան և Ա. Դավլոթօղլուն 2013 թ. հունվարի 5-ին Իզմիրում հայտարարեցին «Խաղաղության կառուցման եռակողմ համերաշխություն» կոչվող նոր խորհրդակցական կառույցի ստեղծման մասին: Ըստ Դավլոթօղլուի՝ այդ նախաձեռնության անգլերեն տարբերակը «Trilateral Solidarity for Building Peace» հատուկ այնպես է ընտրված, որպեսզի ընդգծվեր մասնակից երկրների անգլերեն անվանումների առաջին տառերը¹²⁹: Համաձայն համատեղ հայտարարության՝ կողմերը պարտավորվեցին համատեղ պայքարել միջազգային հանրությանը հուզող մի շարք մարտահրավերների դեմ (Արաբական վերածնունդ, Պաղեստինյան հարց, ահաբեկչություն, աղքատություն, կլիմայի փոփոխություն, ինտերնետ ազատություն և միջուկային զենքի չտարածում)¹³⁰: Հայտարարությունում նաև նշվում էր, որ երեք երկրներն էլ իրենց հզորությունը կառուցում են հենվելով ժողովրդավարության,

¹²⁸ Ann Dismorr, *Turkey Decoded*, London, San-Francisco: Saqi, 2008; Henrik Liljegren, *From Tallin to Turkey: As a Swede and Diplomat*, Merkez Kitapçılık, İstanbul, 2006.

¹²⁹ Türkiye-Brezilya-İsvç Arasında Ortak İstisare Mekanizması Oluşturuldu, <http://www.haberler.com/turkiye-brezilya-ısvç-arasında-ortak-ıstisare-4225092-haber/>

¹³⁰ Trilateral Solidarity for Building Peace, <http://www.regeringen.se/sb/d/15727>

հգոր տնտեսության, աշխարհագրական դիրքի, տարածաշրջանային ներգրավման, համաշխարհային գործընթացներում մասնակցության և այլ ընդհանուր արժեքների վրա: Այդ նպատակին հասնելու համար կողմերը որոշեցին կազմակերպել կանոնավոր խորհրդակցություններ՝ կարծիքների փոխանակման և ջանքերի համատեղման նպատակով¹³¹: Հենվելով հայտարարության առաջնային և երկրորդային ուղերձների վրա՝ կարող ենք կատարել մի քանի եզրահանգումներ: Նախ, Թուրքիան ձգտում է նորանոր դաշինքներ ձևավորել, որոնք նրան կօգնեն առավել հաջողված առաջ մղել միջազգային հարաբերությունների այն օրակարգային հարցերը, որոնցում հարկավոր են դաշնակիցներ: Դատելով վերոհիշյալ մարտահրավերների թվարկումից՝ Թուրքիան առավելապես շահագրգռված է իր անմիջական հարևանությամբ առկա խնդիրների կապակցությամբ ձեռք բերել Շվեդիայի և Բրազիլիայի աջակցությունը, ինչպես նաև ընդլայնել իր տնտեսական ներկայացվածությունը Սկանդինավիայում և Հարավային Ամերիկայում: Այս երկու երկրները միջազգային հարաբերություններում ունեն էական դերակատարում, հետևաբար, այդ երկու երկրների հետ հարաբերությունների խորացմամբ Թուրքիայի իշխանությունները ձգտում են շեշտել համաշխարհային դերակատարության վերաբերյալ առկա հավակնությունները: Ընդ որում, նախկինում թե՛ Բրազիլիայի, թե՛ Շվեդիայի հետ արձանագրվել են համագործակցության մի շարք քաղաքական ծրագրեր: Հասկանալիորեն՝ Շվեդիան և Բրազիլիան նույնպես ունեն սեփական օրակարգը և Թուրքիայի միջոցով ձգտում են Մերձավոր Արևելքում ձեռք բերել ազդեցության լծակներ, ներգրավել թուրքական ներդրումներ և համախմբվելով ընդհանուր օրակարգի ներքո՝ ձգտում են առաջ մղել ընդհանուր հարցեր: Այս առումով Էզեմեն Բադըշի ելույթում տեղ գտած որոշ դրույթներ միտված էին առավել ընդգծելու Թուրքիայի դերակատարումը Մերձավոր Արևելքում: Նա նշեց, որ Մերձավոր Արևելքում տեղի ունեցած փոխակերպումներում Թուրքիայի ունեցած կարևոր դերակատարման հետևանքով Արևմուտքում էականորեն փոխվել է Թուրքիայի վերաբերյալ ընկալումը: «Այսօր, երբ ինչ-որ պաշտոնյա այցելում է տարածաշրջան իր երկրի քաղաքականությունը մշակելու համար, նա լսում է մեր կարծիքը, խորհրդակցում մեզ հետ»¹³²:

Վերջին տարիներին միջազգային ուսումնասիրություններում Բրազիլիան և Թուրքիան հաճախ են նշվում որպես տնտեսական ակտիվության

¹³¹ Նույն տեղում:

¹³² 5. Büyükelçiler Konferansı, <http://egemenbagis.com/tr/6256>

շնորհիվ ակտիվ արտաքին քաղաքականություն իրականացնող երկրներ, որոնք համապատասխան տարածաշրջաններում կարևոր դերակատար լինելուց զատ դարձել են առավել ընդգրկուն միջազգային օրակարգի խաղացողներ: Բրազիլիայի տնտեսությունը, որը 6-րդն է աշխարհում, նախատեսվում է 10 տարի անց դարձնել 4-րդը կամ 5-րդը, նմանապես Թուրքիան նույնպես ձգտում է 10 տարի անց բարելավվել տնտեսական զարգացման ցուցանիշները՝ 16-ից հասնելով 10-րդ ցուցանիշին:

Վերջին համաժողովի ընթացքում Թուրքիայի արտգործնախարար Դավութօղլուն հրապարակեց արտաքին քաղաքականության հայեցակարգային նոր թեզերը՝ «հումանիտար դիվանագիտություն» խորագրի ներքո: Փորձագիտական հանրության մոտ հնչեցին կարծիքներ, որ երկար տարիներ չարչրկված, տարաբնույթ զնահատականների արժանացած «ռազմավարական խորություն» հայեցակարգը իրեն սպառել է և անհրաժեշտություն կա սեղանին դնել նոր փաստաթուղթ: Անշուշտ, նոր ռազմավարության մասին խոսելու համար դեռ հիմքեր չկան, սակայն, ակնհայտ է, որ Թուրքիայի իշխանությունները քաջ գիտակցում են, որ անհրաժեշտություն է առաջացել որոշ խմբագրման ենթարկել գործող արտաքին քաղաքականությունը:

2002–2009 թթ. ընթացքում, երբ Դավութօղլուն հետևաբեմից էր մասնակցում արտաքին քաղաքականության մշակման և իրագործմանը, Թուրքիայում կար ընդհանուր համոզմունք, որ Թուրքիայի տարածաշրջանային և արտատարածաշրջանային քաղաքականությունը աննախադեպ հաջողության է հասել: 2009 թ. մայիսին արտգործնախարար նշանակվելուց հետո ևս 2–3 տարի Դավութօղլուն շարունակում էր իր քաղաքականությունը կառուցել՝ հենվելով իր տեսական հիմնավորումների, փիլիսոփայական ձևակերպումների, նախկին համոզմունքների և մոտեցումների վրա: Իսրայելի, Սիրիայի, Հայաստանի հետ հարաբերություններում նոր զարգացումների լույսի ներքո՝ Դավութօղլուն շարունակում է մերժել արտաքին քաղաքականության հայեցակարգային դրույթների վերանայման մոտեցումները: Հետևաբար, «հումանիտար դիվանագիտության» մասին առաջին ակնարկը բավական էր տարաբնույթ մեկնաբանությունների համար: Փորձագիտական հանրությունը շտապեց պնդել, որ Թուրքիայի իշխանությունները սկիզբ են դրել արտաքին քաղաքականության կուրսի նոր փոփոխության:

Իրականում, դիվանագետների հետ վերջին հանդիպման ժամանակ Դավութօղլուի ելույթը և ընդհանուր շեշտադրումները վկայում են այն մա-

սին, որ եթե վաղ է արտաքին քաղաքականության նոր հայեցակարգի մասին խոսելը, ապա կարող ենք պնդել, որ Թուրքիայի դիվանագիտության հիմնական գաղափարական մոտեցումներում տեղի է ունենում շեշտադրումների փոփոխություն և առաջնահերթությունների որոշակի վերադասավորում:

«Հումանիտար դիվանագիտության» (insani diplomasi) մասին Դավութօղլուի ելույթում և ընդհանուր քննարկումներում գերակշռում էին մի քանի ընդհանուր շեշտադրումներ, որոնք նպատակ են հետապնդում դիվանագետների համար առավել ընկալելի դարձնել նոր մոտեցման էությունը: «Դիվանագիտության հետ միասին մարդասիրական քաղաքիչները ևս պետք է իրագործվեն» նշեց Դավութօղլուն՝ գերազանցապես հղում կատարելով ԱՖրիկայում Թուրքիայի արձանագրված դիվանագիտական ձեռքբերումների մարդասիրական քաղաքիչին¹³³:

Առաջին խնդիրը, որը նշվեց որպես «հումանիտար դիվանագիտության» ենթահայեցակարգ, վերաբերում էր արտերկրում ապրող Թուրքիայի քաղաքացիներին և ազգությամբ թուրքերին մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը: Այս դրույթը մի քանի նպատակներ է հետապնդում, որոնցից ամենասկզբունքայինն այն էր, որ Թուրքիան մտադիր է ընդլայնել իր ներկայացվածությունն արտերկրում: Թուրքիայի սահմաններից դուրս գործում են 172 դիվանագիտական ներկայացուցչություններ, որը 9-րդ ցուցանիշն է աշխարհում: Թուրքիան մտադիր է գալիք տարիների ընթացքում այդ թիվն էականորեն ավելացնել և դառնալ 5-րդը: ԱԳՆ-ն մտադիր է նաև շարունակել Թուրքիա մուտքի արտոնագրի ազատականացման քաղաքականությունը, նպատակ ունենալով Թուրքիան առավել հասանելի դարձնել ներդրումների, զբոսաշրջության, առևտրի և մի շարք այլ առումներով: Թուրքիան ցանկանում է այս քայլի շնորհիվ էականորեն ընդլայնել իր ներկայացվածության աշխարհագրությունը: Համաժողովի ընթացքում ելույթ ունեցավ նաև փոխվարչապետ Բեքիր Բոզդաղը՝ նշելով, որ թուրք դիվանագետները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն նաև արտերկրում ապրող նոր սերնդի թուրքերի մոտ մայրենի լեզվի պահպանության խնդիրներին¹³⁴:

Անցած տասնամյակի ընթացքում Թուրքիայի իշխանությունները հետևողականորեն ավելացնում էին Թուրքիայի ներկայացվածությունը

¹³³ Ankara to Focus on 'Human' Diplomacy, Hürriyet Daily News, 01.01.2013.

¹³⁴ Bekir Bozdağ, Turks Living Abroad Have Equal Participation Problem, <http://www.habermonitor.com/en/haber/detay/bekir-bozdagturks-living-abroad-equal-partic/76175/>

տարաբնույթ միջազգային հեղինակավոր կազմակերպություններում: Գատեղի էր ունենում թե՛ լիիրավ անդամի, թե՛ դիտորդի կարգավիճակ ձեռք բերելու շնորհիվ: Հաջորդ նպատակը երկրագնդի տարբեր հատվածներում առկա ճգնաժամային գոտիներում առավել ակտիվ ներգրավվածությունն է: 2002 թ. ի վեր Թուրքիան ձգտել է էականորեն բարձրաձայնել Աֆրիկայի, Մերձավոր Արևելքի և Ասիայի տարբեր երկրներում ապրող իսլամադավան փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խնդիրը: Այդ գործընթացում կարևոր դեր էր վերապահված TİKA-ին: Վերջին տարիների ընթացքում շուրջ 30 երկրներում բացվել են TİKA-ի գրասենյակներ և նրա կողմից տրվող նյութական օժանդակության չափերը վերջին տասնամյակում անել են 27 անգամ՝ 2011 թ. հասնելով 2,1 մլրդ ԱՄՆ դոլարի¹³⁵: Վերջին տարիների ընթացքում Թուրքիան հատկապես զգայուն էր Պաղեստինի, Սուդանի, Աֆղանստանի, Մյանմարի և մի շարք այլ երկրներում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմների, բնակության նկատմամբ իրականացվող ճնշումների, սոցիալական զրկանքների, բռնաճնշումների վերաբերյալ հարցերում: Այս առումով Բաղըշը հայտարարեց, որ Սիրիայում, Աֆղանստանում, Սոմալիում և Եգիպտոսում այսօր կան միլիոնավոր մարդիկ, որոնք իրականում քաջատեղյակ են թե Թուրքիան ինչ դեր է կատարում նրանց համար¹³⁶: Համախառնական համերաշխության մոտեցումից զատ՝ Թուրքիան մտադրություն ունի նաև խորացնել ներկայացվածությունը Ճգնաժամային այլ գոտիներում: Նման փորձ Թուրքիան ձեռք էր բերել Հարավ Օսական, իսրայելա-լիբանանյան պատերազմների և Գազայի հատվածում Իսրայելի հրետակոծությունների ժամանակ: Երրորդ նպատակն էր հումանիտար խնդիրներին առնչվող հարցերում բարձրացնել ՄԱԿ-ի ներգրավման ինտենսիվությունը: Նոր մոտեցման մեջ կան հստակ ուղղություններ, որոնք չնկատել չենք կարող: Առաջին հերթին իսլամական համերաշխության սկզբունքի վերհանումն է, այնուհետև թուրքական դեմոկրատիայի և աշխարհիկ մոդելի արտահանման հերթական փուլն է:

Դավութօղլուի օրոք նոր նշանակություն տրվեց Թուրքիայում գործող հասարակական կազմակերպությունների, բիզնեսմենների, սոցիալական խմբերի, մտավորականների, վերլուծական կենտրոնների և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների հետ ԱԳՆ-ի համագործակցության խորացմանը: Այս քաղաքականությունը տարբերվում էր նա-

¹³⁵ Şaban Kardaş, Turkey's Development Assistance Policy: How to Make Sense of the New Guyon the Block, The German Marshall Fund of the US, 04.02.2013, p. 1-2:

¹³⁶ 5. Büyükelçiler Konferansı, <http://egemenbagis.com/tr/6256>

խորդ ժամանակահատվածից այն առումով, որ տասնամյակներ շարունակ միջազգային հարաբերությունները և արտաքին գործերը ընկալվել և ներկայացվել են բացառապես դիվանագետների ոլորտի անելիք¹³⁷: Ավելին, արտերկրում նույնպես Թուրքիան ձգտում է խորացնել համագործակցությունը՝ հենվելով այլ երկրներում ազդեցիկ հասարակական կազմակերպությունների և գիտավերլուծական կենտրոնների վրա:

¹³⁷ Bülent Aras, The Davutoğlu Era in Turkish Foreign Policy, https://www.researchgate.net/publication/271927115_The_Davutoglu_Era_in_Turkish_Foreign_Policy

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ
ԻՇԽԱՆԱԿԱՐՄԱՆ ԱՌԱՏԻՆ ՓՈՒԼՈՒՄ
2002-2007 թթ.

ԱԶԿ «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԶԵՎԱԿՈՐՄԱՆ
ՍԿԶԲՆԱՓՈՒԼԸ. ՀԿԿԱՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

2002 թ. նոյեմբերի 3-ին Թուրքիայի Հանրապետությունում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններն ավարտվեցին ԱԶԿ-ի հաղթանակով, որը ստացավ խորհրդարանում տեղերի բացարձակ մեծամասնությունը: ԹԱՄԺ-ում ներկայություն ունենալու 10 տոկոսանոց ընտրաշեմը գործող կուսակցություններից կարողացավ հաղթահարել միայն Հանրապետական ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) և ինը անկախ պատգամավոր¹³⁸: Ձևավորվեց երկկուսակցական խորհրդարան, ինչն աննախադեպ երևույթ էր երկրում 1949 թ. հետո: Աննախադեպ էր նաև ԱԶԿ-ի միանձնյա իշխանություն ձևավորելու իրողությունը, քանի որ 1987 թ. ի վեր Թուրքիայում միակուսակցական կառավարություն չէր ձևավորվել: Հատկանշական է, որ ողջ նախընտրական քարոզարշավը կուսակցությունն անցկացրեց «Թուրքիայի Եվրամիության անդամակցության», «երկրում չքավորության և գործազրկության վերացման», «տնտեսական ճգնաժամի հաղթահարման» ընդհանրական կարգախոսներով՝ չունենալով հստակ ծրագիր¹³⁹: Երկրում առկա ներքաղաքական խառնաշփոթի, տնտեսական ճգնաժամի, Եվրամիության

¹³⁸ <http://www.akparti.org.tr/site/secimler/2002-geneel-secim>

¹³⁹ Nazif Ekzen, AKP iktisat politikaları: 2002-2006, http://www.bagimsizsosyalbilimciler.org/Yazilar_Uye/EkzenNov06.pdf

հետ անարդյունավետ ընթացող բանակցությունների, ինչպես նաև բազմաթիվ ներքին և արտաքին քաղաքական խնդիրների հետ մեկտեղ՝ ԱԶԿ–ն իր նախորդներից որպես ժառանգություն ստացավ նորանկախ Հայաստանի Հանրապետության հետ հարաբերությունների անլուծելի հանգույցը:

Թուրքիայի քաղաքական դիրքորոշումը Հայաստանի Հանրապետության նկատմամբ անկախության հռչակումից ի վեր պայմանավորվեց արցախյան հակամարտությունում Ադրբեջանի նկատմամբ բացահայտ կողմնակալությամբ և օժանդակությամբ: Այս քաղաքականության հետևանքով Անկարան ակամա դարձավ Բաքվի «քաղաքական պատանդը», երբ ցանկացած քայլ՝ ուղղված հայ-թուրքական երկխոսության հաստատմանը հանգեցնում էր Ադրբեջանի նյարդային ջղաձգումներին, որի հետ Անկարան ստիպված է հաշվի նստել¹⁴⁰: Հայկական ուժերի մարտական յուրաքանչյուր հաջողություն կտրուկ արձագանք էր ստանում Թուրքիայի իշխանական վերնախավի և Գլխավոր սպայակույտի կողմից պարբերաբար հնչող հրահրիչ և նախահարձակ հայտարարություններում: Քարվաճառի շրջանի ազատագրման գործողությունների արդյունքում (1993 թ. մարտի 27 — ապրիլի 2), Թուրքիայի կառավարությունը ապրիլի 3–ին¹⁴¹ որոշում կայացրեց փակել Ալիջան–Մարգարա թուրք–հայկական սահմանային անցակետը՝ շրջափակելով Հայաստանի Հանրապետությունը: Այդուհետ Անկարան Երևանի հետ յուրաքանչյուր բանակցության ժամանակ ուղակիորեն շահարկում էր և այսօր էլ դեռ շարունակում է շահարկել սահմանի վերաբացման խնդիրը՝ որպես Երևանից քաղաքական զիջումներ կորզելու ազդեցիկ միջոց՝ փորձելով Հայաստանի նկատմամբ իրականացնել «ճնշման», «հարկադրման» քաղաքականություն¹⁴²: Անկախ այն իրողությունից, թե ինչ ուժ է եղել Թուրքիայի իշխանական դեկին, Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր, բացի անմիջական ռազմական միջամտությունից, այն մշտապես իրականացրել է ընդգծված հակահայկական քաղաքականություն և փորձել հայ-թուրքական հարաբերություններում հանդես գալ ուժեղ կողմի դիրքերից, օգտագործել ճնշման հնարավոր բոլոր միջոցները՝ տնտեսական շրջա-

¹⁴⁰ Հ. Դեմոյանի ելույթը, Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ: Խորհրդարանական լուսմներ, 19–20 դեկտեմբերի, 2007 թ., Երևան, 2011, էջ 119:

¹⁴¹ Fatih Özbay, Türkiye–Ermenistan ilişkileri, <http://www.bilgesam.org/tr/images/stories/rapor/Turkiye-ermenistan%20iliskileri.pdf>

¹⁴² Ռ. Սաֆրաստյան, Հայ-թուրքական սահմանի նշանակությունը, Հայաստան–Թուրքիա. բաց խոսակցություն, Երևան, 2005, էջ 63:

փակում, տարբեր միջազգային կառույցներում հակահայկական ակտիվ քարոզչություն, բանակցային գործընթացի տապալում, Ադրբեջանին հատկացվող ռազմական, ֆինանսական և տնտեսական համապարփակ աջակցություն: Այս գործողությունները միտված էին ստիպելու Հայաստանի իշխանություններին համաձայնել Թուրքիայի կողմից հարաբերությունների կարգավորման համար առաջ քաշվող նախապայմաններին՝

- հրաժարում Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացից
- Թուրքիայի տարածքային ամբողջականության ճանաչում
- Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորում՝ հօգուտ Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման

Անդրադառնալով Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրին, պետք է նշել, որ Հայաստանն այն ներառել է իր արտաքին քաղաքականության օրակարգում, բայց երբեք Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման նախապայման չի դարձրել՝ փաստելով, որ միայն առանց նախապայմանների է հնարավոր հաստատել բնականոն հարաբերություններ, ստեղծել անհրաժեշտ հիմքեր՝ հետադուր առկա խնդիրները քննարկելու և լուծումներ գտնելու համար: Ինչ վերաբերում է Թուրքիայի տարածքային ամբողջականության և սահմանների ճանաչման խնդրին, այդ տարիների ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը ներկայացնում էր հայկական կողմի դիրքորոշումը. «Այս դեպքում դեռևս ուժի մեջ են Կարսի և Մոսկվայի պայմանագրերը: Մենք դրանք ժառանգել ենք խորհրդային ժամանակաշրջանից: Մեր օրենսդրությունն այդ հարցերում շատ հստակ է: Եթե Խորհրդային Միությունից ժառանգված պայմանագրերը չեն հերքվել և կամ չեն փոխարինվել նորով, ապա դրանք դեռևս մնում են ուժի մեջ: Եթե դրանք ուժի մեջ չեն, ապա միայն այն պատճառով, որ Թուրքիան կոպտորեն խախտել է այդ պայմանագրերի դրույթները: Այս դեպքում լավագույն մոտեցումը կլինի ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը: Միջազգային ընդունված պրակտիկա է, երբ ցանկացած դիվանագիտական հարաբերությունների հիմքում դրված է երկու երկրների միջև փոխադարձ հարգանքի, ինքնիշխանության հարգման, սահմանների ճանաչման և ներքին գործերին չմիջամտելու դրույթների վրա հիմնված հուշագիր»¹⁴³:

¹⁴³ Վ. Օսկանյանի ելույթը, Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ: Խորհրդարանական լուսմներ, 19-20 դեկտեմբերի, 2007 թ., էջ 18:

Հայ-թուրքական իրավապայմանագրային հարաբերությունների, հայ-թուրքա-

Սակայն Թուրքիայի և՛ իշխանությունների մոտ, և՛ հասակակական ընկալումներում Հայաստանի և հայերի նկատմամբ ագրեսիվ, նախահարձակ, լարված և գերզգայուն վերաբերմունքը շարունակում էր մնալ գերակա՝ պայմանավորված թուրքական հոգեկերտվածքում մինչև այսօր էլ չհաղթահարված «Սևրի սինդրոմով»¹⁴⁴:

Լեռնային Ղարաբաղի նախապայմանը հայ-թուրքական հարաբերությունների բանակցային գործընթացում գծագրվեց ավելի ուշ՝ երբ հայկական ուժերը ազատագրեցին Արցախն ու նրա շուրջ անվտանգության գոտի սպառնվեցին: Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը պայմանավորելով հայ-ադրբեջանական հակամարտության միակողմանի համապարփակ աջակցությամբ՝ Թուրքիան փաստորեն դարձավ հակամարտության պաշտոնապես չհայտարարված կողմ և մեկ անգամ ևս փաստեց, որ Հայաստանի դիվանագիտական և միջպետական հարաբերությունների հաստատումը չի տեղավորվում իր նեոսամանիստական ռազմավարական ծրագրերում:

Մինչև 2002 թ., երբ ԱԶԿ-ն եկավ իշխանության, երկու երկրների նախագահները և արտաքին գերատեսչությունների ղեկավարները միջազգային տարբեր կառույցների զագաթաժողովների շրջանակներում հանդիպել են միմյանց հետ, փորձել քննարկել հայ-թուրքական հարաբերությունների հաստատման հնարավորություններն ու ուղիները:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո, ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելի միջև առաջին հանդիպումը կայացել է 1995 թ. հոկտեմբերի 23-ին Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի հիսունամյակին նվիրված հորեյանական հավաքի շրջանակներում: Թուրքիայի նախագահի դիրքորոշումը հետևյալն էր, որպեսզի Թուրքիան քննարկի Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հնարավորությունը, հայկական կողմը պարտավոր է Ադրբեջանին վերադարձնել Լեռնային Ղարաբաղը և հարակից տարածքները, իսկ նորանկախ Հայաստանը պետք է կասեցնի աշխարհասփյուռ հայության ջանքերով նոր թափ առած Ցեղասպանության միջազգային ճանաչ-

կան սահմանի, ինչպես նաև Կարսի և Մոսկվայի պայմանագրերի վավերականության մասին մանրամասն տես՝ Ա. Պապյանի ելույթը, Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ: Խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի, 2007 թ., էջ 43-53:

¹⁴⁴ Մանրամասն տես՝ Լ. Հովսեփյան, Թուրքիայի վախերը, Սևրի սինդրոմ, Երևան, 2012:

ման գործընթացը: Տեր-Պետրոսյանը բնականաբար մերժել էր թուրքական անհիմն պահանջները¹⁴⁵: Այսպիսով հստակեցվեց Հայաստանի Հանրապետության հետ միջպետական հարաբերությունների հաստատման Թուրքիայի անզիջում դիրքորոշումը, որը հետայդու դարձավ հայ-թուրքական յուրաքանչյուր բանակցության կամ նախաձեռնության սկզբունք:

Այնհայտ է, որ Լ. Տեր-Պետրոսյանի նախագահության տարիներին նորանկախ Հայաստանի՝ Թուրքիայի նկատմամբ արտաքին քաղաքականության հայեցակարգը բավականին զուսպ էր, և Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը դրված չէր Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում: Այդուհանդերձ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահն ի հակադրություն թուրքական կողմի՝ ամրագրեց Թուրքիայի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերությունների և քաղաքական երկխոսության հաստատման ՀՀ դիրքորոշումը: Շարունակելով առանց նախապայմանների երկկողմ հարաբերությունների հաստատմանը միտված քաղաքականությունը՝ Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանն առավել հետևողական դիրքորոշում որդեգրեց՝ Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը դարձնելով Հայաստանի արտաքին քաղաքականության անկյունաքար: Գնահատելով ՀՀ դիրքորոշման փոփոխությունը՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռ. Սաֆրաստյանը նշում է. «այն, ինչ կատարվեց 1998–2000 թթ. կապված Թուրքիայի նկատմամբ դիրքորոշումների կոշտացման առումով, տրամաբանական էր, քանի որ մենք ոչինչ չէինք ստացել զիջումների դիմաց»¹⁴⁶:

Հետագայում տարբեր միջազգային կառույցների համաժողովների շրջանակներում Թուրքիայի նախագահ Դեմիրելը հանդիպել է նաև Հայաստանի երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանին. առաջին անգամ 1998 թ. հունիսի 5–ին Յալթայում՝ Մեծուկյան տնտեսական համագործակցության գագաթաժողովի ընթացքում, հետո նաև՝ 1999 թ. նոյեմբերին Ստամբուլում, ԵԱՀԿ գագաթաժողովի ժամանակ¹⁴⁷: Հանդիպումներն ընթացել են անար-

¹⁴⁵ Վ. Օսկանյան, Անտեսված դասեր, ապրիլի 2, 2012, <http://www.mediamax.am/am/column/12231/>

¹⁴⁶ ԵԿՆ հարցազրույց ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռ. Սաֆրաստյանի հետ, 17.06.2008, http://www.esi-web.org/pdf/esi_picture_story_-_turkish_armenian_relations_am_-_august_2009.pdf

¹⁴⁷ ՀՀ ԱԳՆ Սահմանակից երկրների վարչության Թուրքիայի բաժնի ընթացիկ արխիվ:

դյունք՝ նախորդների սկզբունքով և տրամաբանությամբ. Հայաստանը պետք է ճանաչեր Կարսի 1921 թ. պայմանագրով ձևավորված հայ-թուրքական սահմանը, հրաժարվեր Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացից և միակողմանի զիջումների գնար Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում:

Տարաբնույթ ձևաչափերով բանակցություններ երկու երկրների արտաքին գործերի նախարարների մակարդակով առավել հաճախ են ընթացել, և ինչպես փաստում է ՀՀ նախկին արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանը. «այդ հանդիպումներում ևս նշույլ անգամ չկար, որ Թուրքիան ցանկություն ունի Հայաստանի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատել կամ բացել սահմանը. թուրքերն այդ ամենը կապում էին միայն ու միայն Ղարաբաղի հարցի հետ»¹⁴⁸:

Մինչև 2002 թ. խորհրդարանական ընտրություններում տարած հաղթանակը՝ ԱԶԿ ղեկավարներն իրենց նախընտրական ելույթներում և հանդիպումներում հիմնականում չեն ուրվագծել Հայաստանի Հանրապետության նկատմամբ իրենց դիրքորոշումը՝ վարելով ինչպես արդեն նշվեց ներքին և արտաքին քաղաքական հիմնախնդիրների «պոպուլիստական» քարոզարշավ: Հայաստանի նկատմամբ քաղաքական դիրքորոշումը բացակայում էր նաև ԱԶԿ-ի 2002 թ. ծրագրային դրույթներում, որտեղ հստակ ներկայացված էին արտաքին քաղաքականության հայեցակարգի սկզբունքները¹⁴⁹: Նախընտրական քարոզարշավում բացառություն էր թերևս կուսակցության առաջնորդներից տնտեսագետ Ա. Բաբաջանի հայտարարությունը, որով հետագայում դարձավ Թուրքիայի արտաքին գործոց նախարար. «Փշխանության գալուց հետո ԱԶԿ-ն պետք է փորձի Հայաստանի հետ հարաբերությունների հիմքում դնել ոչ թե քաղաքական, այլ տնտեսական խնդիրները, տնտեսական հետաքրքրությունները»¹⁵⁰: Նմանատիպ հայտարարություններ կուսակցության ազդեցիկ ղեկավարների կողմից հնչեցին նաև իշխանության գալուց հետո՝ առաջին ամիսներին, որոնք սակայն, հիմնականում Եվրամիության հետ ակնկալվող բանակցություններից առաջ քաղաքական նախաձեռնություն էր և այդպես էլ մնաց անիրականանալի, քանի որ իշխանությունն ամրապնդելուց հետո ԱԶԿ գաղափարախոսները վերաիմաստա-

¹⁴⁸ Վ. Օսկանյան, Անտեսված դասեր, <http://www.mediamax.am/am/column/12231/>

¹⁴⁹ http://www.akparti.org.tr/site/akparti/parti-programi#bolum_

¹⁵⁰ Ռ. Մաֆրատյանի ելույթը, Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ: Խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի, 2007 թ., էջ 64:

վորեցին, վերագնահատեցին տարածաշրջանում իրենց աշխարհառազմավարական հնարավորություններն ու հավակնությունները:

Հայաստանի հետ սահմանի բացման հնարավորության մասին 2002 թ. դեկտեմբերի 27-ին կայացած մամուլ ասուլիսի ժամանակ ակնարկեց նաև Թուրքիայի ԱԶԿ նորանշանակ արտգործնախարար Յ. Յաքըլը. «Մենք մեր հարաբերությունները կգարգացնենք Ռուսաստանի, Իրանի և Հայաստանի հետ: Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելիս մենք հաշվի կառնենք Ադրբեջանի անհանգստությունները, սակայն, եթե մեր տնտեսական շահերը պահանջեն Հայաստանի հետ հարաբերությունների հաստատում, մենք դա կանենք»¹⁵¹:

Այս հայտարարությունը եզակի երևույթ է թուրք բարձրաստիճան պաշտոնյաների մշտապես հակահայ ագրեսիվ քաղաքական հայտարարություններում, եզակի նաև այն առումով, որ առաջին և, թերևս վերջին անգամ, տնտեսական հետաքրքրությունների գործոնը թուրքական քաղաքական վերնախավի մոտ վեր է դասվում «մեկ ժողովուրդ, երկու երկիր» պանթյուրքիստական կարգախոսից:

Թուրքիայի նոր իշխանությունների՝ Հայաստանի նկատմամբ որդեգրած քաղաքականության հակահայկական բնույթը դրսևորվեց արդեն ընտրություններից օրեր անց, երբ վարչապետի հավանական թեկնածուն համարվող ԱԶԿ փոխնախագահ Ա. Գյուլին¹⁵² ադրբեջանական «Ձերկալո» թերթին տված հարցազրույցում առաջին անգամ անդրադարձավ հայ-թուրքական հարաբերություններին և ներկայացրեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում իր կուսակցության մոտեցումները՝ Անկարա-Բաքու հարաբերությունների մակարդակը գնահատելով ոչ բավարար. «Թուրք-ադրբեջանական կապերը մեզ համար առաջնային են, շուրջ 1 մլն ադրբեջանցի փախստականներ ապրում են վրաններում: Կարծում եմ, Ադրբեջանի և Թուրքիայի ջանքերով կհասնենք այդ հակամարտության կարգավորմանն ու ադրբեջանական հողերի ազատագրմանը»: Գյուլը հավելեց նաև, որ «ակտիվացման կարիք ունեն թուրք-ադրբեջանական ռազմա-

¹⁵¹ https://www.esiweb.org/index.php?lang=cn&id=281&story_ID=27&slide_ID=1#_ftn68

¹⁵² Զանի որ ԱԶԿ նախագահ Էրդողանի նկատմամբ Թուրքիայի Սահմանադրական դատարանը իրավական սահմանափակումներ էր կիրառել և արգելել մասնակցել խորհրդարանական ընտրություններին, ապա վերջինս գրկված էր վարչապետի պաշտոնը ստանձնելու հնարավորությունից:

կան կապերը»¹⁵³: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևին Լեռային Ղարաբաղի հակամարտությունը հոգուտ Ադրբեջանի «տարածքային ամբողջականության» լուծելու հավաստիացուներ տվեց նաև ԱԶԿ նախագահ Ռ. Թ. Էրդողանը, ով սկզբնական շրջանում առավել զուսպ էր հայ-թուրքական հարաբերություններում առկա հիմնախնդիրների վերաբերյալ իր հայտարարություններում¹⁵⁴: Եվրահանձնաժողովի նախագահ Ռ. Պրոդիի Անկարա կատարած այցի ժամանակ կազմակերպված մամուլի ասուլիսին Էրդողանը, անդրադառնալով Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորմանը, հայտարարեց. «Նախ և առաջ մենք պետք է պատասխանենք այն հարցին, թե եղել է արդյոք ցեղասպանություն, թե՞ ոչ: Այս խնդիրը հնարավոր չէ լուծել առանց հարցի պատասխանը գտնելու»¹⁵⁵: Հիրավի, առաջին անգամ էր, որ Թուրքիայի բարձրաստիճան քաղաքական տիրույթում հնչեցված այս հայտարարությունը աներկբա և միանշանակ չէր ժխտում Հայոց Ցեղասպանության իրողությունը: Սակայն նման հայտարարությամբ հանդես գալը պայմանավորված էր և՛ ներքաղաքական դաշտում նորահայտ կուսակցության հաստատվելու անհրաժեշտությամբ, որտեղ դեռևս Էրդողանը Թուրքիայի բազմաշերտ հասարակության, այդ թվում նաև հայ համայնքի վստահությունն ու աջակցությունը ստանալու խնդիր ուներ, և՛ թե Կոպենհագենում դեկտեմբերի 12-ին կայանալիք Եվրամիությանն անդամակցության բանակցություններին դրական ազդանշաններ հաղորդելու ակնկալիքով:

Կարելի է նշել, որ այդ փուլում Էրդողանի զգուշավոր քաղաքականությունն արդարացվեց. Թուրքիայի Եվրամիությանն անդամակցելու գործընթացի եվրոպական քարոզարշավին միացավ նաև Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանը՝ նոյեմբերի վերջին եվրոպական մի շարք մայրաքաղաքներ՝ Կոպենհագեն, Փարիզ, Բրյուսել, Լոնդոն, Բեռլին, Հռոմ և Վատիկան կատարած իր այցելություններով: Թուրքական ՉԼՄ-ները լուրջ ուշադրություն դարձրեցին այդ այցելություններին, պատրիարքի հանդիպումները նույնիսկ առաջնային լուր դարձան թուրքական կենտրոնական լրատվամիջոցների համար: Հանդիպումներին արձագանքեցին նաև Ստամբուլի հայկական «Մարմարա», «Ժամանակ» և «Ակօս» թերթերը, ինչպես նաև հայաստանյան և սփյուռքահայ մամուլը: Թուրքական մամուլի վկայությամբ պատ-

¹⁵³ Գյուլը խոստանում է ազատագրել ադրբեջանական հողերը, ԱԶԳ, № 202, 06.11.2002 թ.:

¹⁵⁴ Aliyev, Erdoğan ve Baykal'ı tebrik etti, Zaman, 06.11.2002.

¹⁵⁵ Erdoğan-Prodi görüşmesi, https://www.ab.gov.tr/_23361.html

րիարքն այցելությունները կատարել էր Թուրքիայի արտգործնախարարության համաձայնությամբ, և նրա գործունեությունը եղել է թուրքական դեսպանատների անմիջական վերահսկողության տակ¹⁵⁶: Հարկ է նշել, որ Մեսրոպ Բ պատրիարքի եվրոպական այցելություններն արժանացան տարբեր իրարամերժ գնահատականների. թուրքական մամուլը և փորձագետները դրանք չափազանց կարևոր գնահատեցին՝ փաստելով, որ Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության դեպքում ազգային փոքրամասնությունների սահմանադրական իրավունքներն էականորեն կընդլայնվեն, իսկ պատրիարքն առաջնորդվում է առաջին հերթին հայ համայնքի շահերով: Հայկական կողմից արձագանքներն այլ բնույթ ունեին. «ԵՄ-Թուրքիա հարաբերությունները քաղաքական խնդիր են, և դրանց կարգավորմանը նպաստելը քաղաքական գործունեություն է ենթադրում: Հետևաբար դա պետք է լինի քաղաքական գործիչների առաջադրանքը, այլ ոչ թե պատրիարքի»¹⁵⁷:

Ընդհանրապես ԱԶԿ-ի «հայկական քաղաքականության» ձևավորումը սկզբնական շրջանում իրարամերժ և հակասական տարրեր էր պարունակում: Տնտեսական հետաքրքրությունների, տնտեսական շահի գերակայությամբ հարաբերությունների կարգավորման վերաբերյալ կուսակցության վերնախավի ի սկզբանեն արված հայտարարությունները, որոնք կարող էին բարենպաստ հիմք դառնալ հայ-թուրքական հարաբերությունների իրական բարելավման համար, այդպես էլ չկենսագործվեցին, քանզի Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման նախաձեռնությունները ԱԶԿ գաղափարախոսների համար ընդամենը անհրաժեշտ պահերին բարձրացնելու քաղաքական շղարշ էին, իմիտացիոն քայլեր, որոնք միտված էին Թուրքիային գերծ պահելու միջազգային տարաբնույթ կառույցների շահարկումներից և ճնշումներից, տպավորություն ստեղծելու, թե Թուրքիան կատարում է Եվրամիության առջև իր ստանձնած պարտավորությունները՝ կարգավորել հարաբերությունները հարևանների հետ, բարելավել ժողովրդավար պետության իր վարկանիշը: Ի հավելումն, Հայոց Ցեղասպանության միջազգայնացման դեմ պայքարի գործընթացի վերահսկողությունը և Հայաստանի հետ երկկողմ միջպետական հարաբերությունների կարգավորման խնդիրը ներառվեցին Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի հայեցակարգում, քանզի Հայաստանի

¹⁵⁶ Türkiye ‘tarih’ için AB’ye dört koldan bastırıyor, Zaman, 27.11.2002, Mutafyan, kulis yapıyor, <http://haber.mynet.com/mutafyan-kulis-yapiyor-9410-dunya/>

¹⁵⁷ Հ. Չաքրյան, Եվրամիությանը Թուրքիայի անդամակցությանը փորձում է նպաստել Պոլսոց հայոց պատրիարքը, Ազգ, 30.11.2002 թ.:

Հանրապետության և հայերի նկատմամբ իրակացավող թուրքական քաղաքականությունը առավել բազմաշերտ խորքային դրսևորում ունի՝ փոխկապակցված տարածաշրջանում Թուրքիայի աշխարհաքաղաքական, ռազմավարական առաջնահերթություններով և պանթուրքիստական գաղափարախոսությամբ ու նկրտումներով:

ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ՀԱՅ-ԹՈՒՐԹԱԿԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Հայաստանի և Թուրքիայի արտգործնախարաների՝ տարբեր միջազգային կառույցների և համաժողովների ձևաչափերում բանակցելու ձևավորված ավանդույթը չխախտվեց նաև ԱԶԿ-ի իշխանավարման առաջին տարիներին. հերթական հանդիպումը տեղի ունեցավ 2003 թ. հունիսի 3-ին Մադրիդում ՆԱՏՕ-ի Համագործակցության խորհրդի նախարարական նիստի ժամանակ: Հատկանշական է, որ հանդիպումից օրեր առաջ Թուրքիայի նորանշանակ արտգործնախարար Ա. Գյուլը հանդես եկավ հայտարարությամբ՝ այս անգամ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում առաջնայնություն տալով մեկ այլ նախապայմանի. «Եթե Հայաստանը ճանաչի Թուրքիայի տարածքային ամբողջականությունը և հրաժարվի թուրքական տարածքների նկատմամբ հավակնություններից, ապա մենք պատրաստ ենք բարեկամանալ Երևանի հետ: ... Մեր հարևաններից մենք խնդիրներ ունենք միայն Հայաստանի հետ, սակայն մենք պատրաստ ենք բարեկամական հարաբերություններ հաստատել»¹⁵⁸: Մադրիդյան հանդիպման ժամանակ արտգործնախար Գյուլը շարունակեց զարգացնել հայ-թուրքական հարաբերությունների բարելավման վերաբերյալ իր նոր՝ Ադրբեջանից անկախ մոտեցումները. «Թուրքիան ցանկանում է բնականոն հարաբերություններ հաստատել բոլոր հարևանների հետ: Հայ-թուրքական հարաբերությունները պետք չէ կապել Ադրբեջանի հետ. հայերն ու թուրքերը, միասին լուծելով երկկողմ խնդիրները, կարող են դրական ազդեցություն ունենալ դարաբաղյան խնդրի լուծման վրա»¹⁵⁹:

Այս հանդիպումը թուրքական հասարակական քաղաքական տիրույթում որակվեց «մեկ քայլ առաջ բանակցային գործընթացում»: Ակնարկվում էր, որ ըստ նախարար Գյուլի՝ «երկկողմ հարաբերությունների հաստատումը և սահմանի վերաբացումը կարող է դրական անդրադառնալ սահմա-

¹⁵⁸ Թուրքիան պատրաստ է հաշտվել Հայաստանի հետ, Արմինֆո, 21.05.2003:

¹⁵⁹ Վ. Օսկանյան, Անտեսված դասեր, <http://www.mediamax.am/am/column/12231/>

նամերձ շրջանների տնտեսական զարգացման վրա, սակայն սա անհրաժեշտ է նախևառաջ Հայաստանի տնտեսությանը»¹⁶⁰: Միևնույն ժամանակ թուրքական դիսկուրսում լայնորեն քննարկվում էին անհրաժեշտ սկզբունքային նախապայմանները՝ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և սահմանը բացելու համար.

- հրաժարվել պատմական թշնամանքից և Յեղասպանության մեղադրանքներից՝ այդ հարցի քննարկումը թողնելով պատմաբաններին
- հրաժարվել Հայկական սփյուռքում Թուրքիայի նկատմամբ շրջանառվող պահանջատիրությունից
- հայկական ուժերը դուրս բերել Լեռնային Ղարաբաղի տարածքից
- Ադրբեջանի և Նախիջևանի միջև անվտանգության միջանցք ստեղծել:

Այդուհանդերձ արձանագրելով, որ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Գյուլի հայտարարությունը նոր դրական միտում էր հայ-թուրքական բանակցային գործընթացում, ակնհայտ էր հակասությունը այդ հայտարարությունների և հասարակական-քաղաքական միջավայրում շրջանառվող տեսակետների ու կարծիքների միջև: Թերևս նախարարի աննախադեպ մեղմ հայտարարությունները կարելի է պայմանավորել ԱՄՆ-ի պետքարտուղար Ք. Փաուելի հետ սպասվելիք բանակցություններում երկու երկրների հարաբերություններում առկա որոշակի լարվածության մեղմացման, ինչպես նաև ԵՄ-ին լիիրավորեն անդամակցելուն միտված քննարկումներում դրական տեղաշարժ արձանագրելու ակնկալիքով:

Երկու երկրների արտգործնախարարների հաջորդ հանդիպումը կայացավ ամիսներ անց՝ սեպտեմբերի 25-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստի ընթացքում. այն, սակայն, Օսկանյանի բնորոշմամբ «մի քայլ հետ էր նախորդից»: Այս հանդիպմանը թուրք դիվանագետը հերթական անգամ շեշտադրել էր, որ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը աներկբայորեն պայմանավորված է Արցախի հիմնախնդրով. «Թուրքիան չի ծրագրում միջնորդական դեր խաղալ դարաբաղյան հարցի լուծման գործում, սակայն Անկարան պատրաստ է անելու ամեն հնարավորը, որպեսզի այդ հիմնախնդրի շուրջ հայ-ադրբեջանական բանակցությունները հնարավորին չափ շուտ վերսկսվեն ու հաջողությամբ տեղի ունենան: Հայաստանը պետք է աշխատի լուծել իր տարածքային վեճերը հարևան Ադրբեջանի հետ. դա կօգնի լուծել խնդիրները նաև Թուրքիայի հետ»¹⁶¹:

¹⁶⁰ Uğur Ergan, Ankara-Erivan ticaret sinyali, <http://arama.hurriyet.com.tr/arsivnews.aspx?id=151470>

¹⁶¹ Gül tells Armenia to solve its problems with Azerbaijan, <http://www.todayszaman.com>

Տարիներ անց Մեդիամաքս գործակալությունը տպագրեց Օսկանյանի հուշ-էսսեն, որտեղ վերջինս հետաքրքիր մանրամասներ էր պատմում իր և Թուրքիայի արտգործնախարարի հանդիպումներից, ընդգծելով, որ ըստ թուրք դիվանագետի՝ «Ղարաբաղի հարցն անպայման պետք է լինի բանակցությունների օրակարգում»: Օսկանյանն անդրադառնում է իրենց միջև ձեռք բերված պայմանավորվածությանը՝ «հաջորդ հանդիպմանը ներկայանալ ցուցակներով, որտեղ երկու կողմերը կներկայացնեն իրենց կողմից ձեռնարկվելիք քայլերը և դրանցում առկա ընդհանրություններով՝ կփորձեն առաջ շարժվել բանակցային գործընթացում»¹⁶²:

Թուրքական և՛ լրատվամիջոցներում, և՛ քաղաքական տարբեր հարթություններում այս հանդիպումը ևս լայնորեն լուսաբանվեց ու քննարկվեց՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Օսկանյան-Գյուլ հանդիպմանը հաջորդեց Թուրքիայի արտգործնախարարի և ԱՄՆ պետքարտուղար Բ. Փաուելի հանդիպումը, որի ընթացքում, ի թիվս ԱՄՆ-ի կողմից Թուրքիային տրամադրվելիք վարկի և Իրաք ռազմական ներխուժման հարցերի, անդրադարձ եղավ նաև Թուրքիա-Հայաստան հարաբերություններին: ԱՄՆ պետքարտուղարն իր շահագրգռվածությունն էր հայտնել հայ-թուրքական հարաբերությունների բարելավման և սահմանի բացման հնարավորությամբ¹⁶³: Այդ շրջափուլում ԱՄՆ-ը փորձում էր հնարավոր բոլոր լծակների օգտագործմամբ վերահսկել տարածաշրջանային քաղաքական զարգացումները և միջնորդ դառնալ Թուրքիա-Հայաստան հարաբերությունների կայացման գործընթացում:

Երրորդ հանդիպումը Հայաստանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարների միջև տեղի ունեցավ 2003 թ. դեկտեմբերի 5-ին Բյուրսելում, Եվրաստանյան գործընկերության խորհրդի (ԵԱԳԽ) արտաքին գործերի նախարարների տարեկան նիստի ժամանակ: Հանդիպման վերաբերյալ պաշտոնական հաղորդագրությունը հակիրճ էր և առանց մանրամասների. «Հանդիպման օրակարգում ընդգրկված էին երկկողմ հարաբերությունների, տարածաշրջանային իրավիճակի և Լեռնային Ղարաբաղի կարգավորման ներկա ընթացքի հետ կապված հարցեր: Այս նյութերի շուրջ շահագրգիռ

com/newsDetail_getNewsById.action;jsessionid=04020A03986970E125F48979AD-03554B?newsId=115027

¹⁶² Վ. Օսկանյան, Անտեսված դասեր, <http://www.mediamax.am/am/column/12231/>

¹⁶³ Kasim Akdoğan, Ermenistan sınırı zorluyor, <http://www.avim.org.tr/eskimakaletekli.php?makaleid=197>, Araz Aslanlı, Türkiye-Ermenistan sınırları açılmalı mı?, <https://www.turkishnews.com/tr/content/2009/04/12/14018/>

քննարկումներից և մտքերի փոխանակումներից հետո կողմերը՝ նշելով նման հանդիպումների կարևորությունը, պայմանավորվել են առաջիկայում շարունակել ուղիղ երկխոսությունը»¹⁶⁴:

Արդեն հիշատակված էստեում ներկայացնելով մանրամասներ իրենց այս հանդիպումից՝ Օսկանյանն անդրադառնում էր բանակցությանն իր կողմից ներկայացված ցուցակի կետերին և դրանց քննարկմանը՝ նշելով. «Գյուլն ասաց, որ առնվազն մի քանի կետերի իրականացման հարցում ինքը որևէ խնդիր չի տեսնում»¹⁶⁵: Այս հանդիպումից հետո թուրքական լրատվամիջոցներում առավել լայն քննարկման արժանացավ Հայաստանի գլխավոր դիվանագետի՝ արդեն Երևանում արված հայտարարությունն այն մասին, թե ամիսներ անց հնարավոր կլինի տեսնել հայ-թուրքական սահմանի բացման հարցում առաջին արդյունքները¹⁶⁶:

Թուրքիայի հասարակական-քաղաքական քննույթում արտգործնախարարների ձեռքբերումների վերաբերյալ արձագանքները, բնականաբար, կանխատեսելի էին. հայ-թուրքական սահմանը չի կարող բացվել, քանի դեռ պաշտոնական Երևանը չի գնացել հստակ զիջումների և չի կատարել թուրքական կողմի նախապայմանները: ԱԶԿ-ի՝ Հայաստանի նկատմամբ որդեգրած «հարաբերությունների բարելավման» քաղաքականությունը և մասնավորապես արտգործնախարար Գյուլի՝ բանակցությունների ընթացքում «հանդուրժողականությունը» բավականին խիստ քննադատության արժանացան ընդդիմադիր քաղաքական ուժերի ղեկավարների կողմից¹⁶⁷:

¹⁶⁴ Օսկանյան-Գյուլ հանդիպում Բրյուսելում, Ազգ, 06.12.2003:

¹⁶⁵ Հայկական կողմն Անկարային առաջարկում էր հայ-թուրքական սահմանը բացել նախ հայ և թուրք դիվանագետների համար: Ռապես երկրորդ քայլ՝ առաջարկվում էր ընդգրկել ոչ հայկական և ոչ թուրքական անձնագրեր կրող օտարերկրացիներին: Ցուցակի հաջորդ կետերով առաջարկում էինք բացել սահմանը արդեն Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիների համար, սակայն սահմանափակ տարածքներում, օրինակ՝ հայերը կարող են այցելել Անի, թուրքերը՝ Գյումրի: Հաջորդը՝ սահմանը բացել արդեն բեռնատար մեքենաների համար, նաև գործարկել Կարս-Գյումրի երկաթգիծը՝ նույնիսկ այն պայմանով, որ սկզբնական շրջանում Հայաստանը դրանից չօգտվի, այլ իրականացվի միայն Թուրքիա-Վրաստան ապրանքաշրջանառությունը, որի համար Հայաստանը անգամ տարանցման գումար չի գանձի, Վ. Օսկանյան, Անտեսված դասեր, <http://www.mediamax.am/am/column/12231/>

¹⁶⁶ Uğur Ergan, Ermenistan sınır kapısı açılabilir, <http://hurarsiv.hurriyet.com.tr/goster/ShowNew.aspx?id=188159>

¹⁶⁷ Ömer Engin Lütem, Türkiye-Ermenistan ilişkileri, <http://www.eraren.org/index.php?Page=Dergilerik&IcerikNo=22>

Հայաստանի նկատմամբ իրականացվող քաղաքականությունը և ադրբեջանական գործոնի առերևույթ թուլացումը հայ-թուրքական երկխոսություններում անհագատություն առաջացրեց նաև Բաքվի իշխանությունների մոտ: Թուրքիայի արտգործնախարարը շտապեց կարգավորել երկկողմ հարաբերություններում առաջացած «անճշտությունները», մեղմել ադրբեջանական կողմի անհանգստությունները՝ 2004 թ. հունվարին ժամանելով Բաքու: Ադրբեջանի արտգործնախարար Վիլայաթ Գուլիևի հետ համատեղ մամլո ասուլիսի ժամանակ Ա. Գյուլը փաստեց թուրքական պաշտոնական տեսակետը. «հայ-ադրբեջանական հակամարտությունը պետք է լուծվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքով»¹⁶⁸:

Ի համալրումն արտգործնախարարի այցելության՝ 2004 թ. ապրիլին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Թուրքիա պաշտոնական այց կատարեց՝ նպատակ ունենալով հստակեցնել թուրք-ադրբեջանական հարաբերություններում առկա խնդիրները և ստանալ ԱԶԿ-ի ղեկավարության հավաստիացումը՝ անվերապահորեն հրաժարվել սահմանի բացման վերաբերյալ քննարկումներից: Ջերմ և արդյունավետ հանդիպումից հետո արտգործնախարար Գյուլը հայտարարեց «հայ-թուրքական սահմանի բացումը բացառվում է, քանի դեռ Հայաստանը չի ազատել ադրբեջանական հողերը»¹⁶⁹: Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների կարգավորման հնարավորությունը շրջադարձ կատարեց դեպի «շրջանա յուր»:

Հերթական հանդիպումը Հայաստանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարների միջև կայացավ Ստամբուլում՝ ՆԱՏՕ-ի զագաթածողովի ընթացքում՝ 2004 թ. հունիսի 28-ին¹⁷⁰: Այս հանդիպումը թերևս կարելի է առանցքային համարել հայ-թուրքական բանակցային գործընթացում. այստեղ վերջնականապես հստակեցվեց ԱԶԿ-ի առաջնորդների՝ Հայաստանի նկատմամբ իրական դիրքորոշումը՝ բացառել յուրաքանչյուր հնարավորություն դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և սահմանը վերաբացելու՝ քանի դեռ Հայաստանի Հանրապետությունը չի գնացել հստակ պահանջված զիջումների:

¹⁶⁸ Abdullah Gül, Türkiye-Azerbeycan: Bir Millet, İki Devlet, Bakü Devlet, Üniversitesi'nde Yapılan Konuşma, Yeni Yüzyılda Türk Dış Politikasının Ufukları, T. C. Dış İşleri Bakanlığı yayını, 2007, s. 60-67.

¹⁶⁹ Նույն տեղում:

¹⁷⁰ Ստամբուլում կայացել է Օսկանյան — Գյուլ հերթական հանդիպումը, <http://www.azatutyun.am/content/article/1574038.html>

Ստամբուլում կայացած արտաքին գործերի նախարարների երկկողմ հանդիպումը Գյուլը վերածեց եռակողմի, երբ Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովին հրավիրեց բանակցությունների սեղանի շուրջ¹⁷¹: Սա հստակ ուղերձ էր ադրբեջանական գործոնի առաջնահերթության մասին: Ուշագրավ է, որ Հայաստանի նախկին արտգործնախարար Օսկանյանի վկայությամբ, այս հանդիպման ժամանակ Գյուլը պաշտոնապես հայտարարեց. «Թուրքիան Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունների առումով ոչինչ չի անի այնքան ժամանակ, քանի դեռ Լեռնային Ղարաբաղի հարցում չկա շոշափելի առաջընթաց»¹⁷²:

Միևնույն բովանդակությամբ հայտարարությամբ հանդես եկավ նաև Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանը. «Թուրքիան ամեն կերպ ձգտում է կյանքի կոչել հարևանների հետ խնդիր չունեցող երկիր դառնալու նպատակը: Ցավոք, մեզ չի հաջողվում զարգացնել հարաբերությունները Հայաստանի հետ: Դրա պատճառը նրանք (հայերը) են: Համառորեն չեն ճանաչում Թուրքիայի սահմանները: Նույնը վերաբերում է նաև Ադրբեջանին, որի հետ նմանատիպ խնդիրներ ունեն: Նրանք Ադրբեջանում օկուպանտի կարգավիճակում են: Կովազան երկիր են ներկայացնում: Հայաստանի վարչակարգը որդեգրել է կոշտ դիրքորոշում: Մենք հաշտության կողմնակից ենք: Հայաստանի հետ դժվարությունների հաղթահարման առումով խնդիրներ չունենք: Հայաստանը ձգտում է օրակարգում պահել Ցեղասպանության հարցը: Նման բան անհնար է, որ Թուրքիան ընդունի: Պատմական խնդիրներով թող զբաղվեն պատմաբանները: Նոր աշխարհը քենի և ատելության վրա չենք կառուցելու»¹⁷³:

Ակնհայտ է, որ ԱԶԿ-ի առաջնորդները լրջորեն մտահոգված էին Հայաստանի Հանրապետության քաղաքականությամբ՝ միջազգայնացնել Հայոց Ցեղասպանության ճանաչման խնդիրը՝ ներգրավելով աշխարհասփյուռ հայության ներուժը: Ընդհանրապես Մփյուռքի հայկական կառույցների գործունեությունը մշտապես գտնվել է թուրքական իշխանությունների ուշադրության կենտրոնում և լարվածության մեջ պահել նրանց՝ ստիպելով հսկայական նյութական ռեսուրսներ վատնել հակահայկական լուրբինգի համար: Ցեղասպանության ինստուներոդր տարելիցին ընդառաջ միջազգային ճանաչման գործընթացում Հայաստանի արտաքին գերատես-

¹⁷¹ Muharrem Sarikaya, Zirvenin getirdikleri, Sabah, 18.07.2004

¹⁷² Վ. Օսկանյան, Ամտեսված դասեր, <http://www.mediamax.am/am/column/12231/>

¹⁷³ Հ. Չաբրյան, Թուրքական թերթերն արձագանքում են Օսկանյան-Գյուլ-Մամեդյարով հանդիպմանը, Ազգ, №120, 30.06.2004.

չության և սփյուռքահայ կառույցների գործունեությունը էական արդյունքեր ունեցավ⁷⁴:

Ստամբուլի գազաթաժողովից հետո ակներև դարձավ, որ բանակցային գործընթացը հարաբերությունների կարգավորման ուղղակի իմիտացիա էր և ԱԶԿ ղեկավարն ու իր թիմակիցները չեն պատրաստվում հրաժարվել Հայաստանի Հանրապետության նկատմամբ որդեգրած «ճնշման» և «հարկադրման» քաղաքականությունից: Որպես իր քաղաքականության բաղկացուցիչ՝ Անկարան փորձեց ցույց տալ արտաքին աշխարհին, որ Հայաստանը, չգնալով քաղաքական զիջումների, շարունակելով հետամուտ լինել Յեղասպանության միջազգային ճանաչմանը ու «չհեռանալով աղբբեջանական հողերից», «խոչընդոտում» է հարաբերությունների կարգավորման գործընթացը, ինչն առաջին հերթին վնասում է հենց Հայաստանին, քանի որ դեռևս շարունակում է մնալ շրջափակման մեջ:

Ստամբուլի գազաթաժողովից հետո հայ-թուրքական բանակցային գործընթացում աղբբեջանական գործոնը դարձավ առաջնային:

Հերթական անգամ արտգործնախարարները կրկին հանդիպեցին Նյու-Յորքում, 2004 թ. սեպտեմբերին, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 59-րդ նստաշրջանի ժամանակ: Թուրք դիվանագետն անդրադառնալով այս հանդիպմանը, նշեց, որ այն ավելի շատ տեղեկատվական բնույթ է կրել, քանի որ իր խնդրանքով Օսկանյանը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության նախագահ Ռ. Քոչարյանի և Աղբբեջանի նախագահ Ի. Ալիևի միջև կայացած հանդիպման մանրամասները⁷⁵: Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը նույնպես չմանրամասնեց այս հանդիպումը՝ այն որակելով որպես «հերթական» բանակցային գործընթացում:

Երկու երկրների նախարարների նյույորքյան հանդիպումից հետո սակայն արդեն ձևավորված պարբերական բանակցությունների ավանդույթը խախտվեց. գլխավոր դիվանագետները հանդիպեցին միայն երեք տարի անց՝ 2007 թ. հունիսին Ստամբուլում, Սևծովյան տնտեսական համագործակցության 15-րդ հորեյանական գազաթաժողովի շրջանակներում: Տևական

⁷⁴ Հայոց Յեղասպանությունը ճանաչած պետությունները, նրանց կողմից ընդունված որոշումները, օրենքները, հռչակագրերը տե՛ս Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ: Խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի 2007 թ., էջ 452-557:

⁷⁵ Mustafa Serdar Palabryık, Yıldız Devenci Bozkuş, Türkiye ve Azerbaycan'ın Ermenistan ile sorunları, Türkiye-Ermenistan ilişkileri (1918-2008), http://www.avim.org.tr/bilgibankasi/tr/index5_1_1.htm

այս դադարը թերևս բնական կարելի է համարել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանակցային գործընթացն արդեն սպառվել էր՝ այդպես էլ որևէ դրական տեղաշարժ չարձանագրելով, և 2005 թ. երկու երկրների դեկավարների միջև ուղերձների փոխանակումը մեկ անգամ ևս հստակեցրել էր կողմերից յուրաքանչյուրի սկզբունքային դիրքորոշումը դիվանագիտական հարաբերությունների հաստատման վերաբերյալ:

Նախարարների այս հանդիպումը Ստամբուլում էականորեն չտարբերվեց նախորդներից. Օսկանյանն ընդգծեց առանց նախապայմանների քաղաքական երկխոսության Հայաստանի պատրաստակամությունը, Գյուլն անդրադարձավ Ցեղասպանության իրողությունն ուսումնասիրող հայ և թուրք պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու թուրքական կողմի առաջարկին և Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում Հայաստանից սպասվող զիջումների ակնկալիքներին¹⁷⁶:

Բանակցային այս փուլը ևս ավարտվեց անարդյունք, քանի որ Հայաստանի համար թուրքական նախապայմաններն անընդունելի էին, իսկ Թուրքիան չէր ցանկանում բանակցել՝ քանի դեռ Հայաստանը չի ընդունել դրանք: 2007 թ. հոկտեմբերի 2-ին Նյու-Յորքում ՄԱԿ գլխավոր ասամբլեայի նստաշրջանի ժամանակ կայացավ արտգործնախարար Օսկանյանի վերջին երկկողմ հանդիպումը Թուրքիայի գլխավոր դիվանագետի հետ: Այդ պաշտոնը Ա. Գյուլի նախագահ ընտրվելուց հետո զբաղեցնում էր Ա. Բաբաջանը: Այս անգամ քննարկման հիմնական թեմա դարձան ԱՄՆ Կոնգրեսին ներկայացված Հայոց Ցեղասպանության ճանաչման մասին 106-րդ բանաձևը, ինչպես նաև այլ երկրների խորհրդարաններում Ցեղասպանությունը դատապարտող օրինագծերը և որոշումները: Թուրքիայի նորանշանակ նախարարը մտահոգություն հայտնեց ծավալվող գործընթացների վերաբերյալ և նշեց, որ «Զի կարելի խորհրդարաններում կատարվող քվեարկությամբ պատմության վերաբերյալ վճիռներ կայացնել»¹⁷⁷:

2007 թ. հունիսի 22-ին Թուրքիայի խորհրդարանական ընտրություններում տարած հաղթանակից հետո ԱԶԿ քաղաքական վերնախավը շարունակեց Հայաստանի նկատմամբ որդեգրած քաղաքականան ուղեգիծը՝ հայթուրքական հարաբերություններում ստեղծված անելանելի վիճակի համար մեղադրելով բացառապես Հայաստանի իշխանություններին: Նոյեմբերին Բաբու կատարած իր այցելության ժամանակ Թուրքիայի նոր նախագահ

¹⁷⁶ İstanbul'da Karabağ gerginliği, Hürriyet, 25.06.2007.

¹⁷⁷ Օսկանյան-Բաբաջան հանդիպումը Նյու Յորքում, Ազգ №180, 04.10.2007.

Գյուլը Ադրբեջանի խորհրդարանում հայտարարեց. «Թուրքիան ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը 1991 թ. դեկտեմբերի 16-ին: Չնայած Հայաստանը սևծովյա ափամերձ երկիր չէ, այնուամենայնիվ Թուրքիան նրան հրավիրեց ՄՕՏՀ-ին անդամակցելու: Կարծում եմ՝ Թուրքիան պատասխանատու չէ ներկա իրավիճակի համար: Ժամանակն է, որ ամբողջ աշխարհը տեսնի, որ այս իրավիճակի պատճառը Թուրքիայի հանդեպ Հայաստանի թշնամական դիրքորոշումը և Ադրբեջանի տարածքների շարունակվող բռնազավթումն է: Քանի դեռ Հայաստանը 1915 թ. դեպքերին այլ երկրների պառլամենտներում պիտակավորումներ տալու (որպես ցեղասպանություն) քաղաքականություն է վարում, պետք չէ հարաբերությունների կարգավորման մեջ որևէ առաջընթաց ակնկալել: Ներկայում Վրաստանի և Ադրբեջանի ժողովուրդները մեծ օգուտներ են քաղում տարածաշրջանային ծրագրերից: Տարածաշրջանային ծրագրերում կարող են ներգրավվել միայն այն երկրները, որոնք այլ երկրների տարածքային ամբողջականությանը վերաբերում են հարգանքով և ցանկանում խաղաղ համագոյակցություն: Հայաստանը և նրա ժողովուրդը պետք է հասկանան դա»¹⁷⁸:

Թուրքիայի նախագահի այս ելույթը վեր հանեց ակնհայտ այն իրողությունը, որ ԱԶԿ-ն ի դեմս իր ղեկավարների՝ դեռևս իշխանավարման առաջին փուլում (2002–2007 թթ.) ամրագրեց Հայաստանի Հանրապետության նկատմամբ որդեգրած «ճնշման և հարկադրման» քաղաքականությունը և, հետզհետե Վրաստանին ընդգրկելով իր աշխարհաքաղաքական ռազմավարության ուղեծրում, փորձեց մեկուսացնել Հայաստանին տարածաշրջանային տնտեսական ծրագրերից, առավել խորացնելով շրջափակումը: Հետևելով բանակցային գործընթացի զարգացման դինամիկային՝ նկատելի է դառնում, որ Թուրքիայի իշխանությունները դրանք օգտագործում էին որպես լծակ՝ Հայաստանից քաղաքական զիջումներ կորզելու համար և բնավ մտադիր չէին բնականոն դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար քաղաքակիրթ երկխոսություն ծավալել:

Ակնհայտ է մեկ իրողություն ևս. կարելի է ասել, որ Թուրքիան ԱԶԿ իշխանավարման առաջին փուլում ձախողեց «հայկական քաղաքակությունը»: Չնայած ընդգծված հակահայկական դիրքորոշմանը, մշտական քաղաքական և տնտեսական ճնշումներին, Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն կարողացավ դիմակայել աշխարհաքաղաքական նոր մարտահրավերներ-

¹⁷⁸ А. Гюль, Пока Армения инициирует в парламентах других стран вопрос 1915 года, ей не стоит ожидать улучшения отношений с Турцией, <http://news.day.az/politics/97103.html>

րին, այլև սատարեց Լեռնային Ղարաբաղին՝ պետականության կայացման գործընթացում:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՎԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԵՐ

Ռազմավարական կարևոր նշանակությամբ այս տարածաշրջանում փակ սահմանների առկայությունը անհանգստացնում է և՛ Միացյալ Նահանգներին, և՛ եվրոպական երկրներին, քանզի որոշակիորեն սահմանափակում է ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական հավակնությունները, հակասում զլորալիզացիայի գաղափարախոսությանը, ինչպես նաև արգելք հանդիսանում տնտեսական ռեսուրսների ազատ տեղաշարժի համար:

Երբ ակնհայտ դարձավ, որ հայ-թուրքական քաղաքական երկխոսությունը մտել է փակուղի, միջազգային տարբեր կառույցներ ձեռնամուխ եղան երկու երկրների հասարակության տարբեր խավերի միջև՝ մշակութային, գործարար, ուսանողական, լրագրողական երկխոսությունների իրականացման փորձերին, քանի որ քաղաքացիական հասարակությունների միջև երկխոսությունը՝ «Ժողովրդական դիվանագիտությունը» կարող է նշանակալից ազդեցություն ունենալ միջպետական հարաբերությունների և համագործակցության հաստատման ճանապարհին: «Ժողովրդական դիվանագիտության» գործողությունները համատեքստ են ստեղծում քաղաքացիական հասարակության համար՝ սեփական ընկալումները որոշում կայացնողներին հաղորդելու և հասարակական կարծիք ստեղծելու նպատակով փոխըմբռնումը զարգացնելու գործում¹⁷⁹: Քաղաքացիական հասարակությունների միջև երկխոսությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման կարևոր բաղադրիչներից մեկն է, քանի որ պատմական հիշողությունը բավականին խոր ազդեցություն ունի երկու ժողովուրդների վրա, և վերաբերմունքը միմյանց նկատմամբ շարունակում է մնալ գերզգայուն, հաճախ՝ ընդգծված թշնամական: Հասարակական երկխոսության առաջին փորձն իրականացրին գործարարները, երբ 1997 թ. հիմնեցին Թուրք-հայկական գործարարության զարգացման խորհուրդը (TABDC)¹⁸⁰՝ ապացուցելով, որ հայ-թուրքական հարաբերությունների կանոնավորման հիմքը կարող է լի-

¹⁷⁹ Դ. Ֆիլիպս, Բարձրաձայնելով անցյալը: Ժողովրդական դիվանագիտությունը և հայ-թուրքական հաշտեցումը, Երևան, 2010, էջ 12:

¹⁸⁰ Հայաստան-Թուրքիա. բաց խոսակցություն, Երևան, 2005, էջ 110-111:

նել տնտեսական հետաքրքրությունը և համագործակցության հնարավորությունը: Թուրք և հայ գործարարները ձեռնարկեցին փոխադարձ այցելություններ, գործարար համաժողովներ, համատեղ մամուլ ասուլիսներ, կազմակերպեցին հանդիպումներ սահմանային բնակավայրերի գործարարների հետ, որը փորձ էր՝ ուսումնասիրել հասարակության վերաբերմունքը սահմանների վերաբացման հարցին:

ԱՄՆ պետքարտուղարության անմիջական նախաձեռնությամբ 2001 թ. հուլիսի 9-ին Ժնևում ստեղծվեց Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը (TARC), որը նպատակ ուներ «տաղանդավոր և տարբեր հայացքների տեր մարդկանց» աջակցությամբ խթանել թուրքերի և հայերի միջև փոխըմբռնման և համագործակցության զարգացմանը, քննարկել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հնարավորությունները և բարելավման ուղղությունները¹⁸¹: Հանձնաժողովը ոչ պաշտոնական նախաձեռնություն էր, որը համակարգում էր ԱՄՆ Պետդեպարտամենտի խորհրդական Դևիդ Ֆիլիպսը¹⁸²: Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի ստեղծումը և գործունեությունը թերևս միտված էր հակակշռելու Եվրոպայում ծավալվող Հայոց Ցեղասպանության ճանաչման գործընթացին. Անկարան հարաբերությունների կարգավորման երկխոսության պատրաստակամություն հայտնելով՝ այդ գործընթացը կասեցնելու հնարավորություն էր ստանում:

Հայաստանում ոչ միանշանակ գնահատականի արժանացած Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի կարևոր ձեռքբերում թերևս, կարելի է համարել 2002 թ. հուլիսին վերջինիս հանձնարարությամբ Նյու Յորքի

¹⁸¹ Հ. Չարբյան, Ստեղծվել է իրեն «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողով» կոչող խումբ, Ազգ, 11.07.2001:

¹⁸² Հայաստանն այս հանձնաժողովում ներկայացնում էին ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար (1996–1998 թթ.) Ալեքսանդր Արզումանյանը, Միրիայի Հանրապետությունում ՀՀ նախկին դեսպան (1992–1998 թթ.), Դավիթ Հովհաննիսյանը Ռուսաստանի Դաշնության նախկին նախագահ Բորիս Ելցինի՝ արտաքին քաղաքականության հարցերով խորհրդական Անդրանիկ Միրանյանը և Ամերիկայի հայկական համագումարի տնօրենների խորհրդի նախագահ Վան Գրիգորյանը: Հանձնաժողովի թուրք անդամներն էին՝ ՄԱԿ-ի Ժնևի գրասենյակում ԹՀ նախկին դեսպան Գյուլնուզ Աքթանը (1991–1995 թթ.), Բողազիչի համալսարանի ռեկտոր (1992–2000 թթ.) Ուսթյուն Էրզուղերը, գեներալ լեյտենանտ Շադի Էրզյուվենչը, Թուրքական տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամի (TESEV) նախկին տնօրեն, Մեծ Բրիտանիայում 1995–2000 թթ. ԹՀ դեսպան Օզդեմ Սանբերքը, ԹՀ արտաքին գործերի նախկին նախարար (1980–1983 թթ.) Իլթեր Թյուրքմենը և Վիրջինիայի համալսարանի պրոֆեսոր Վամիկ Վուրանը:

Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ԱԱՄԿ) կատարած վերլուծությունը՝ Հայոց Ցեղասպանության նկատմամբ ՄԱԿ-ի Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման վերաբերյալ կոնվենցիայի կիրառելիության իրավական հիմքերի վերաբերյալ: Թերևս Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը փորձեց «հաշտեցնել» կողմերին, եզրակացնելով, որ «այդ իրադարձությունների որոշ իրակացնողներ իմացել են, որ իրենց գործողությունների հետևանքը լինելու է Արևելյան Անատոլիայի հայերի ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացումը, կամ գործել են այդ նպատակին հասնելու դիտավորությամբ, ուստի ունեցել են ցեղասպանությանը բնորոշ մտադրություն: Ցեղասպանություն եզրույթը կարող է կիրառվել մինչև կոնվենցիայի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած դեպքերի նկատմամբ (1948 թ. դեկտեմբերի 9)»¹⁸³: Սակայն միևնույն ժամանակ ի բավարարումն թուրքական պահանջների ԱԱՄԿ արձանագրեց, որ «միջազգային իրավունքով չի թույլատրվում պայմանագրերի հետադարձ կիրառումը: Կոնվենցիայով տվյալ իրադարձություններից բխող ոչ մի իրավական, ֆինանսական կամ տարածքային պահանջ չի կարող հաջողության հավակնություններ ունենալ»¹⁸⁴: Այսպիսով ԱԱՄԿ փորձեց բալանսավորել Հայոց Ցեղասպանության վերաբերյալ մոտեցումները:

2004 թ. հանձնաժողովն ավարտեց իր աշխատանքը¹⁸⁵ Թուրքիայի ու Հայաստանի կառավարությունների համար մշակելով հարաբերությունների կարգավորման վերաբերյալ ծրագրերի փաթեթ, որի բովանդակությունը սակայն չբացահայտվեց:

ԱԶԿ իշխանությունները ևս քաղաքացիական երկխոսության փորձ նախաձեռնեցին, երբ 2005 թ. հունիսին Թուրքիայի վարչապետի խորհրդական, Ազգային մեծ ժողովի պատգամավոր Թուրիան Չյոմեզը այցելեց Երևան: Հայաստանում նա հանդիպումներ ունեցավ ԵՊՀ ուսանողների, ՀՀ արտգործնախարարության ներկայացուցիչների, ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի, Երևանի քաղաքապետի և ՀՅԴ Բյուրոյի Հայ Դատի և քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանի հետ: Ամփոփելով իր այցելությունը՝ թուրք պատգամավորը արձանագրեց, որ «1915 թվականի դեպքերը մեզ (թուրքերին — Տ. Մ.) էլ են շատ վշտացնում», որ «սխալ է թուրք-հայկական հարաբերությունները երրորդ երկրով պայմա-

¹⁸³ Դ. Ֆիլիպս, նշվ. աշխ. էջ 16:

¹⁸⁴ Նույն տեղում:

¹⁸⁵ Emil Danielyan, Turkish-Armenian panel says its mission is complete, www.eurasianet.org/departments/insight/articles/pp041804.shtml

նավորելը» և «Հայաստան–Թուրքիա հարաբերությունների համար ոչ թե երկրների միջև սահմանները պետք է բացել կամ փակել, այլ հասարակության մտածողության մեջ փոփոխություններ կատարել»¹⁸⁶:

Թուրք քաղաքական գործչի հանդիպումները Երևանում և այս հայտարարությունները լայնորեն լուսաբանվեցին թուրքական մամուլում, սակայն որոշակի շեշտադրմամբ՝ փաստորեն հնարավոր է «հայաստանցիների» հետ հասարակական երկխոսություն ծավալել, եթե չլինի «ծայրահեղական սփյուռքի» ազդեցությունը¹⁸⁷:

Թուրքական Հանրապետության սկզբնավորման օրվանից պետական քաղաքականության մակարդակի է բարձրացվել թուրքերի և Թուրքիայի պատմության ուսումնասիրությունը՝ թիրախ ընտրելով հիմնականում քաղաքական իրաբախման թեմաների պահանջներին ծառայելը... Ժամանակակից Թուրքիան ստեղծել է Հայոց Ցեղասպանության ժխտման օրենսդրական և ինստիտուցիոնալ կառույցներ՝ ակտիվ դիվանագիտական պայքար ծավալելով ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի դեմ: Հայոց Ցեղասպանության ժխտմանն ուղղված հանրապետական Թուրքիայի ջանքերը միանշանակորեն կարող են որակվել որպես համակարգված քաղաքականություն. առկա է գաղափարախոսական հիմքը, օրենսդրական դաշտը, պաշտոնական մշտապես քարոզվող դրոյթների և միտումնավոր նենգափոխված պատմության տեսքով (policy), կան պետության կողմից առաջադրված հստակ նպատակներ (politics), ինչպես նաև ժխտմանը միտված քաղաքական, դիվանագիտական և գիտական հաստատությունների ցանց, որն անմիջականորեն իրականացնում է պետականորեն ծրագրված քայլերը (polity)»:

Ընդհանուր առմամբ Թ. Չյոմեզի հայաստանյան այցը կարելի է կլիներ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը միտված դրական ուղերձ որակել, եթե այդքան ակնառու չլինեի ենթատեքստը. այս այցը հետևեց Թուրքիայի վարչապետ Էրդողանի և Հայաստանի նախագահ Բնշաբյանի միջև նամակների փոխանակմանը, և Անկարան հոկտեմբերին կայանալիք ԵՄ լիիրավ անդամակցության բանակցություններից առաջ կրկին փորձեց ցույց տալ Արևմուտքին, թե իր կողմից արվում է ամեն հնարավորը՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում:

¹⁸⁶ Mehmet Ali Birand, Çömez'in Ermeni deneyimi çok farklı, <http://arama.hurriyet.com.tr/arsivnews.aspx?id=327354>,

¹⁸⁷ Fatih Uğur, Ermeniler de diasporadan şikâyetçi, http://www.zaman.com.tr/dunya_ermeniler-de-diasporadan-sikayetci_182201.html

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԵՇ ԺՈՂՈՎՈՒՄ

Թուրքիայի իշխանությունների՝ Հայոց Յեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի կասեցման մարտավարության կարևորագույն բաղկացուցիչը ժխտողականությունն է: Թուրքիան պարբերաբար օգտագործում է միջազգային տարբեր հարթակները և՛ Հայոց Յեղասպանության հերքման, և՛ հակահայ քարոզչություն իրականացնելու համար: Մեծ Եղեռնի 90-րդ հիշատակման տարելիցի հայկական միջոցառումներին հակազդելու համար թուրքական իշխանությունները համակարգեցին իրենց մարտավարական ողջ գործիքկազմը և՛ երկրի ներսում, և՛ միջազգային ասպարեզում՝ ձևավորելով օրենսդրական նախաձեռնություններ և ինստիտուցիոնալ կառույցներ՝ ժխտողական քաղաքականության արշավի համար՝ գործարկելով ինչպես հին, փորձված, այնպես էլ նոր մեթոդներ:

Եվրոպական երկրների դրական արձագանքը նպաստեց Յեղասպանության ճանաչման գործընթացի ծավալմանը, երբ ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի նախաձեռնությամբ Հայոց Յեղասպանության միջազգային ճանաչումը, որպես ռազմավարական հիմնախնդիր, դրվեց Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգում: 2000 թ. նոյեմբերի 7-ի Ֆրանսիայի Սենատի օրինագիծը և այնուհետև նոյեմբերի 15-ի Եվրախորհրդարանի՝ Թուրքիայի անդամակցության առաջընթացի վերաբերյալ բանաձևը առաջ բերեցին Թուրքիայի կոշտ հակազդեցությունը: Ակնհայտ էր, որ մի շարք պետությունների և միջազգային կառույցների կողմից ընդունված Հայոց Յեղասպանության ճանաչման և դատապարտման բանաձևերը սպառնում էին թուրքական պետության «հեղինակությանը», ուստի ԱԶԿ-ի իշխանավարման առաջին շրջափուլում Թուրքիայի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը դարձավ պայքարը Հայոց Յեղասպանության միջազգային ճանաչման դեմ:

Հայոց Յեղասպանության ժխտողականության գաղափարական հիմքը մշակվում է հիմնականում Թուրքական պատմական ընկերության (ԹՊԸ) կողմից հրատարակվող բազմաթիվ «գիտական» աշխատություններում, շրջանառվում և քննարկվում և՛ ներթուրքական, և՛ միջազգային տարբեր դիսկուրսներում: ԹՊԸ պարբերաբար աշխատանքներ է իրականացնում

տարբեր երկրների արխիվներում և, կատարելով «համապատասխան ընտրություն», հրատարակում փաստաթղթերի ժողովածուներ, որտեղ «հիմնավորվում և ապացուցվում է հայերի կողմից թուրքերի ցեղասպանության իրողությունը»: Այդ աշխատությունները թարգմանվում են տարբեր լեզուներով ու առաքվում համապատասխան արևմտյան կառույցներին¹⁸⁸:

2005 թ. մարտի 1-ից ՀժԿ-ը Թուրքիայի համար օրակարգային խնդիր դարձած «Հայկական հարցին լուծում գտնելու համար» խորհրդարանում քննարկումներ նախաձեռնեց: ՀժԿ նախագահ Բայբալը հայտարարեց, որ «1915 թ. դեպքերի 90-րդ տարելիցին ԱՄՆ և Եվրոպայի հայկական խմբավորումները նոր թափ են հաղորդել Թուրքիայի՝ Օսմանյան շրջանում հայերի ցեղասպանության ճանաչման քարոզարշավին: Թուրքիան արդեն հոգնել է այդ խնդրից: Հավատացած ենք, որ այս գործընթացը կարելի է ուղղել հակառակ ուղղությամբ»¹⁸⁹: ՀժԿ նախաձեռնությամբ սկսված «Հայկական հարցի և Հայոց Ցեղասպանության պնդումների շուրջ» քննարկումներն ընթացան տարբեր ձևաչափերով և ընդհատումներով տևեցին շուրջ երկու ամիս: Պետք է նշել, որ դրանք դեռևս ամբողջովին զաղտնագերծված չեն, ելութները ներկայացված են միայն հատվածաբար, սակայն այսքան իսկ թույլ է տալիս բավարար պատկերացում կազմել բուն գործընթացի վերաբերյալ:

ԹԱՄԺ-ի քննարկումները սկսեց ՀժԿ պատգամավոր Շյուքրյու Էլեքդաղը, ով որոշ ժամանակ պաշտոնավարել է որպես ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան. «Հայաստանի հետ հարաբերություններում որևէ դրական տեղաշարժ ակնկալել պետք չէ, քանի դեռ Երևանը պատրաստ չէ պատմաբանների երկխոսությանը, իսկ հայ պատմաբանները «չեն ցանկանում մաքրել իրենց պատմությունը»: Նա նաև Հայոց Ցեղասպանության ճանաչման դեմ թուրքական քաղաքականությունը ակտիվացնելու կոչ արեց: Ըստ Էլեքդաղի՝ «հայկական պնդումները հիմնված չեն լուրջ փաստաթղթերի վրա»: Նա առաջարկեց հայ և թուրք պատմաբանների խումբ ստեղծել, որը կուսումնասիրի ոչ միայն Թուրքիայի և Հայաստանի, այլև ԱՄՆ, Անգլիայի, Ռուսաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի արխիվները: Նախկին դիվանագետը թուրքական արխիվներում իր կատարած ուսումնասիրությունների արդյունքում «համոզվել է», որ պատմական իրողությունը այլ է. հայերն են վարագություններ կատարել թուրքերի նկատմամբ: ՀժԿ պատգամավորը «հույս հայտնեց» որ իր կուսակցության նախաձեռնությունը կընդլայնի ԱԶԿ

¹⁸⁸ Ermeni arařtırmaları, <http://www.ttk.gov.tr/index.php?Page=Sayfa&No=90>

¹⁸⁹ Murat Yetkin, “Soykırım” için atak, <http://www.radikal.com.tr/yazarlar/murat-yetkin/soykirim-icin-atak-739454>

գործունեության դաշտը և հնարավորություն կրնձեռի հայ-թուրքական հարաբերությունները դուրս բերել «ցեղասպանություն» բառի ստվերից¹⁹⁰:

ԹԱՄԺ-ում Հայկական հարցի շուրջ քննարկումը շարունակեց ԹՊԸ նախագահ Յ. Հալաչոյուն: Թուրքական խորհրդարանի ԵՄ ինտեգրման և արտաքին հարաբերությունների հանձնաժողովների անդամների հետ հանդիպման ժամանակ, որին ներկա էին նաև խորհրդարանի նախագահ Բ. Արընչն ու փոխնախագահ Ի. Ալիթեքինը, Հալաչոյուն հայտարարեց, թե «ուսումնասիրելով 50 հազար պատմական փաստաթուղթ՝ որևէ տեղ չեն հանդիպել հայերի նկատմամբ ցեղասպանություն իրականացնելու վկայության»: Մանրամասն տվյալներ ներկայացնելով ԹՊԸ կողմից հրատարակված վերջին «Հայեր. քարտ և գաղթ» աշխատությունից՝ Հալաչոյուն ևս պատգամավորներից պահանջեց Ցեղասպանության իրողությունը ուսումնասիրող հանձնախումբ նախաձեռնել՝ հավելելով, որ «Օսմանյան կայսրությունում տեղի ունեցածը ծանր գաղթ էր և ոչ ցեղասպանություն»¹⁹¹:

Հայոց Ցեղասպանության շուրջ հաջորդ քննարկումը թուրքական խորհրդարանում կայացավ Թուրքիայի վարչապետ Էրդողանի և ՀԺԿ նախագահ Բայբալի միջև մարտի 8-ին: Հանդիպումից հետո լրագողներին տրված ասուլիսի ժամանակ ԱԶԿ ղեկավարը մանրամասնեց իր դիրքորոշումը. «Հայերը համոզված չեն ցեղասպանության վերաբերյալ իրենց պնդումներում: Եթե վստահ լինեին, կբացեին արխիվները, ինչպես մենք... Խեղաթյուրված անցյալի, արյան և ատելության հիման վրա հնարավոր չէ ապագա կառուցել»: Էրդողանը մեկ անգամ ևս շեշտեց պատմաբանների հանձնախումբ ստեղծելու անհրաժեշտությունը, որը կհամակարգի և ՅՈՒՆԵՍԿՈ-ի հաստատմանը կներկացնի արխիվների վրա հիմնված ուսումնասիրությունների արդյունքները: ԱԶԿ առաջնորդը վստահություն հայտնեց, որ «Ցեղասպանության միջազգային ճանաչման քարոզարշավը ապարդյուն կլինի, քանի որ հայերի պնդումներն անհիմն են»: Նա միևնույն ժամանակ հավաստիացեց, որ իր կառավարությունն անելու է ամեն հնարավորը այդ քարոզարշավը կասեցնելու համար՝ հայտարարելով՝ «այսօր օրակարգում առավել կարևոր խնդիր չկա»¹⁹²:

¹⁹⁰ Նույն տեղում:

¹⁹¹ Ermeni soykırımı iddiaları bir kez daha belgelerle yalanlandı, http://www.tbmm.gov.tr/develop/owa/haber_portal.aciklama?p1=18646

¹⁹² Başbakan Erdoğan ermeni soykırımı iddiaları konusund CHP ile ortakbir tavir benimsediklerini bildirdi, http://www.tbmm.gov.tr/develop/owa/haber_portal.aciklama?p1=19064

Էրդողանը տեղեկացրեց նաև, որ ՀԺԿ նախագահի հետ քննարկել են «այսպես կոչված Հայոց Ցեղասպանության անհիմն պնդումների» դեմ պայքարի գործողությունների նախագիծ, որն ԱԳՆ-ում լրամշակվելուց հետո կներկայացվի հանրությանը:

ՀԺԿ առաջնորդ Բայբալը, նշելով, որ վարչապետի հետ որևիցե այլ հարց չեն քննարկել, կարևորեց Հայոց Ցեղասպանության պնդումների դեմ պայքարում իշխանությունների և իր կուսակցության համատեղ ու միասնական գործունեությունը՝ հայտարարելով. «Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը միայն քաղաքական դրդապատճառներ ունի, այն բացառապես հայկական լոբիստական կազմակերպությունների աշխատանքի արդյունք է՝ զուրկ որևէ գիտական հիմնավորումից»: Բայբալը ևս անդրադարձավ հայկական արխիվներին. «Բացե՛ք արխիվները, տեսնենք՝ ինչ կա: Մենք ցանկանում ենք այս հարցի իսկության ճշմարտությունը ցույց տալ ամբողջ աշխարհին»¹⁹³:

Փաստորեն Հայկական հարցը անվերապահորեն միավորեց քաղաքական անհաշտ ախոյաններին. ՀԺԿ միակ ընդդիմադիր ուժն էր, որ չէր ընդունում և մշտապես կոշտ քննադատության էր ենթարկում վարչապետ Էրդողանի կառավարության և՛ արտաքին քաղաքականությունը, ընդ որում բոլոր ուղղություններում, և՛ ներքաղաքական սոցիալ-տնտեսական բոլոր նախագծերը, մասնավորապես քրդական նախաձեռնությունները:

ԹԱՄԺ-ում Հայոց Ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի ուղիների շուրջ քննարկումները շարունակեց հատուկ հրավիրված ամերիկացի պատմաբան Չասթին Մաքքարթին, ով հայտնի է իր հակահայկական դիրքորոշմամբ և Հայոց Ցեղասպանության ժխտման իր տեսություններով: Քննարկումը, որին ներկա էին նաև Արտաքին գործերի նախարար Ա. Գյուլը, փոխվարչապետ Մ. Ալի Շահինը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, բացեց խորհրդարանի նախագահ Բ. Արընչը, ով պարզաբանեց «Հայկական հարցի ճշմարտությունը»՝ հայտարարելով. «Թուրքիան իր պատմության որևէ շրջանում ցեղասպանություն չի իրականացրել»¹⁹⁴: Արինչը շեշտադրեց Հայկական սիյուռքի գործունեության դեմ պայքարի անհրաժեշտությունը՝ ներկայացնելով որոշ երկրների խորհրդարաններում և միջազգային կառույցներում իրենց արձանագրած հաջողությունները:

¹⁹³ Նույն տեղում:

¹⁹⁴ Justin McCarthy, “Ermeni sorununun gerçeği” ni anlattı, http://www.tbmm.gov.tr/develop/owa/haber_portal.aciklama?p1=20182

Այս քննարկմանը հերթական անգամ ելույթ ունեցավ նաև ՀԺԿ առաջնորդը: Չնայած նրա ելույթը, ինչպես և խորհրդարանի նախագահինը, ներկայացված է հատվածաբար, այնուամենայնիվ այստեղ բավականին կոշտ շեշտադրումներ կան. «Եթե Հայաստանը ցանկանում է Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ ձևավորել և զարգացնել համագործակցությունը, ապա պետք է ընդունի մեր առաջարկը ընդհանուր պատմությունը վերազնահատելու վերաբերյալ»¹⁹⁵:

Պետք է նշել, որ իր նախաձեռնությամբ կազմակերպված խորհրդարանական այս քննարկումներում ՀԺԿ առաջնորդը և պատգամավորները բավականին ակտիվ մասնակցություն են ունեցել և հանդես եկել ակնհայտ հակահայ, նույնիսկ թշնամական ելույթներով և ճառերով: Ինչ վերաբերում է Ջ. Մաքքաբթիի ելույթին, ապա «պատմության ռաիվիայի»՝ «Հայկական հարցի իսկության» վերաբերյալ մեկնությունները դեռևս զաղտագերծված չէին:

Քննարկումների հաջորդ փուլը թուրքական խորհրդարանի ԵՄ ինտեգրման և Արտաքին հարաբերությունների հանձնաժողովների անդամների և «ծագումով հայ» գրող-լրագրողների¹⁹⁶ ու Հայկական հարցի փորձագետ, նախկին դեսպանների միջև էր: Այս հանդիպման մանրամասները հայտնի չեն, բացառությամբ ԵՄ ինտեգրման հանձնաժողովի նախագահ Ա. Ռ. Ալաբոյունի ելույթից, ով ակնարկել է, թե հայ լրագրողները, որոնք «սիրված են Թուրքիայում, ունեն անկախ քաղաքական հայացքներ, խոսքի ազատություն և ներքաշված չեն ցեղասպանության քարոզարշավում», կարող են կարևոր դերակատարում ունենալ «հայ-թուրքական քաղաքակիրթ երկխոսության ծավալման գործընթացում»¹⁹⁷:

Հայագգի լրագրողներին հրավիրելով խորհրդարանական քննարկումներին՝ ԱԶԿ ղեկավարությունը փորձեց հերթական անգամ տարանջատել, տարբերակել հայությանը՝ իր համար «ընդունելի և թիրախային» հատվածների:

¹⁹⁵ Նույն տեղում:

¹⁹⁶ Հանդիպմանը մասնակցում էին թուրքական “Zaman” թերթի լրագրող Էթյեն Մահուսյանը, «Ակօս» թերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինըր և գրող Աևոն Դաբադյանը: Ներկա էր նաև արդեն լուծարված Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի անդամ Գյունյուզ Աբթյանը:

¹⁹⁷ Uyum komisyonu başkanvekili Alaboyun: “90 yıllık Ermeni sorununun çözümine 15–20 yıllık bir süreçte ulaşılabilir”, http://www.tbmm.gov.tr/develop/owa/haber_portal.aciklama?p1=21043

Այս միտումը ընդգծվեց նաև Արտաքին գործերի նախարար Ա. Գյուլի ելույթում, որը, թերևս, այս խորհրդարանական լուսմների հանգուցալուծումն էր: Գյուլն իր ելույթը սկսեց՝ «պարզաբանելով», թե «հայ ասելով՝ բոլորովին նկատի չունի իր երկրի ծագումով հայ քաղաքացիներին, ովքեր ութ դար շարունակ իրենց ներդրումն են ունեցել ընդհանուր արվեստի, գիտության, առևտրի և այլ բնագավառների զարգացման գործում»: Թուրքիայի գլխավոր դիվանգետը պատմական ակնարկ կատարեց՝ ներկայացնելով, թե 11-րդ դարից մինչև 19-րդ դարի վերջերը ինչպիսի սիրով և փոխադարձ վստահությամբ և խաղաղությամբ են ապրել երկու ժողովուրդները: Նա անդրադարձավ Օսմանյան կայսության շրջանում հայերի սոցիալ-քաղաքական «հատուկ» կարգավիճակին, հայ ազգային կուսակցությունների, կոմիտեների գործունեությանը և Առաջին աշխարհարմարտից առաջ տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումներին: Նա նաև ընդգծեց, թե ինչպիսի ճգնաժամում էր հայտնվել կայսրությունը Ռուսաստանի զավթողական պատերազմների և Արևմտյան տերությունների քաղաքական խաղերի հետևանքով: Հայ կամավորական զորագնդերը Ռուսական կայսրության Արևելյան Անատոլիա ներխուժման ժամանակ, Գյուլի ներկայացմամբ, այդ «պատրվակով» անպաշտպան կանանց ու երեխաների իսկական սպանդ են իրականացրել, որը հետագայում արդեն ֆրանսիացիների աջակցությամբ տևել է մինչև 1921 թ.: Հայերի կողմից կազմակերպված կոտորածներին որոշ վայրերում թուրք ազգաբնակչությունը փորձել է դիմակայել, ինչն արդեն վեր է ամփել զինված բախումների՝ երկուստեք զգալի մարդկային կորուստներ պատճառելով: Հայոց պատրիարքարանին, պատգամավորներին և այլ հայ առաջնորդներին ուղղված օսմանյան կառավարության հորդորները՝ կանխել հայերի կողմից մուսուլմանների ջարդերը, մնացել են անարդյունք, և 1915 թ. ապրիլի 24-ին կառավարությունը «հարկադրված» փակել է Հայկական խորհուրդները և ձերբակալել 235 անդամների՝ հակապետական գործունեության մեղաանդրանքով: «Ահա այս օրն է ամեն տարի նշվում հայերի կողմից որպես այսպես կոչված ցեղասպանության տարեկիցի օր. ապրիլի 24-ը, այսինքն՝ Հայկական խորհուրդների փակման և դրանց անդամների՝ այդ ժամանակների ահաբեկիչների ձերբակալման օրը»¹⁹⁸:

Շարունակելով պատմության խեղաթուրմամբ հագեցած իր ելույթը՝ նախարարը հիշատակեց 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի «Ցեղասպանու-

¹⁹⁸ Abdullah Gül, Ermeni iddiaları konusunda TBMM’de Genel görüşme açılmasına ilişkin önerenin görüşülmesi vesilesiyle yapılan konuşma, 16.04.2005, Yeni Yüzyılda Türk dış politikasının ufukları, s. 629–640.

թյուն հանցագործության կանխման և պատժման կոնվենցիան»՝ հայտարարելով, որ 1915 թ. իրադարձությունները բացարձակապես չեն համապատասխանում այս դրույթներին:

Այնուհետև Գյուլն անդրադարձավ «հայ ահաբեկչական» խմբավորումների, մասնավորապես ԱՍԱԼԱ-ի գործողություններին, որոնք միտված էին «այսպես կոչված Հայոց Յեղասպանության» վրա միջազգային հանրության ուշադրությունը գրավելուն:

Խորհրդարանում Գյուլի ելույթի թիրախը, թերևս, հայկական սփյուռքն էր՝ իր հասարակական, քաղաքական, մշակութային և գիտական կառույցների գործունեությամբ, որոնք էապես ազդում են միջազգային հասարակական կարծիքի ձևավորման վրա և վտանգում Թուրքիայի հեղինակությունը: Այդ շրջանում տարբեր երկրների խորհրդարանների և այլ միջազգային կառույցների կողմից Հայոց Յեղասպանության ճանաչման վերաբերյալ ընդունված բանաձևերը և որոշումները նախարարը սփյուռքահայ կազմակերպությունների հետևողական լոբիստական աշխատանքի արդյունք համարեց:

Թուրք դիվանագետն ընդգծեց այն «բարյացական» վերաբերմունքը, որ Թուրքիան ցուցաբերել է Հայաստանի նկատմամբ՝ անկախացումից ի վեր, նույնիսկ «եղբայր Ադրբեջանի տարածքների 20 տոկոսը զավթելուց հետո էլ, Սև ծովի ցամաքային սահման չունենալու պայմաններում հրավիրելով ՄՃՏՀ և Ստամբուլում Հայաստանի ներկայացուցչություն բացելով»:

Հայ-թուրքական հարաբերություններին կարգավորման գործընթացի ձախողման ողջ պատասխանատվությունը բարդելով Հայաստանի Հանրապետության և սփյուռքահայ կառույցների վրա, քանի որ «չեն հարգում հարևանների տարածքային ամբողջականությունը և չեն հրաժարվում «այսպես կոչված Յեղասպանության» անհիմն պնդումներից»՝ նախարար Գյուլը ներկայացրեց Թուրքիայի «բարի կամքի դրսևորման» վերջին փորձը՝ վարչապետ Էրդողանի նամակը ՀՀ նախագահին՝ պատմությունը վերագնահատելու և վերաիմաստավորելու առաջարկով¹⁹⁹:

¹⁹⁹ ԱԶԿ առաջնորդի նամակը նախագահ Քոչարյանին, ի թիվս Հայկական հարցի դեմ պայքարի այլ գործողությունների, ծրագրվել էր, փաստորեն, այս խորհրդարանական քննարկումների շրջանակներում՝ Էրդողան-Բայբալ հանդիպման ժամանակ: Ուշագրավ է սակայն, որ այն ՀՀ նախագահին հասնելուց առաջ արդեն լայնորեն քննարկվում էր Թուրքիայի քաղաքական վերնախավում և զանգվածային լրատվամիջոցներում:

Խորհրդարանական այս քննարկումները գնահատելով չափազանց կարևոր և ժամանակին՝ Գյուլը հայտարարեց, որ «Թուրքիան պատրաստ է դիմակայել մարտահրավերներին, քանի որ չի ամաչում իր պատմության ոչ մի շրջանից և վճռական է պայքարել մինչև վերջ»²⁰⁰:

Թուրքիայի նախկին գլխավոր դիվանագետի՝ Հայոց Ցեղասպանության և սեփական պատմության նման մեկնությունը մեկ անգամ ևս հաստատում է, որ ԱԶԿ քաղաքական վերնախավը Հայաստանի հետ հարաբերությունների ձևավորման որևէ իրատեսական քայլ չէր ձեռնարկելու, քանի դեռ Հայաստանի Հանրապետությունը և սփյուռքահայ կառույցները չեն հրաժարվել «այսպես կոչված ցեղասպանության անհիմն պնդումներից և միջազգային ճանաչման գործընթացից»:

Այս խորհրդարանական քննարկումների արդյունքում Հայոց Ցեղասպանության հերքման քարոզարշավում Անկարայի մշտական «գեներից» դարձավ երկու երկրների պատմաբանների համատեղ հանձնախմբի ստեղծման առաջարկությունը, որը պետք է ուսումնասիրի Հայոց Ցեղասպանության եղելության պատմական իրողությունը: Այսպիսի հանձնախմբի ստեղծումը հնարավորություն կտար Թուրքիային գոնե միառժամանակ կասեցնել Հայոց Ցեղասպանության ճանաչման գործընթացը: Հայկական կողմի համար երկխոսության այսպիսի ձևաչափը բոլորովին անընդունելի է, քանզի նշանակում է քննարկել և կասկածի տակ դնել Ցեղասպանության իրողությունը:

Պատմաբանների հանձնախմբի ստեղծման առաջարկ կար նաև Հայոց Մեծ Եղեռնի 90-րդ տարելիցին ընդառաջ՝ Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի՝ «Հ նախագահ Ռ. Զոչարյանին ուղղված նամակում, որում նա առաջարկում է «պատմաբաններից և այլ փորձագետներից կազմված մի խումբ ստեղծել, որը 1915 թ. դեպքերն ու զարգացումները կուսումնասիրի ոչ միայն Հայաստանի և Թուրքիայի, այլև երրորդ երկրների արխիվներում և ուսումնասիրությունների արդյունքների մասին կտեղեկացնի միջազգային հանրությանը»²⁰¹:

«Հ նախագահի դիրքորոշումը պատասխան նամակում հստակ է. «երկկողմ հարաբերությունների զարգացման պատասխանատվությունը կրում են կառավարությունները, և մենք իրավասու չենք այն պատվիրակել

²⁰⁰ Abdullah Gül, Ermeni iddiaları konusunda TBMM’de Genel görüşme...

²⁰¹ Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ: Խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի, 2007 թ., էջ 414:

պատմաբաններին»²⁰²: Հայոց Յեղասպանությունը անվիճարկելի իրողություն է՝ քանիցս գիտականորեն ապացուցված, և խնդիրն արդեն գտնվում է քաղաքական հարթության վրա:

Ուշագրավ է այն փաստը, որ Թուրքիայի վարչապետը նամակը հղեց ապրիլին՝ Հայոց Յեղասպանության 90-րդ տարելիցի հիշատակության նախօրեին: Այս մարտավարությունը՝ փորձել ընթացիկ իրավիճակներից ստանալ առավելագույնը, նպատակ էր հետապնդում շեղել միջազգային հանրության ուշադրությունը Յեղասպանության 90-րդ տարելիցի միջոցառումներից և ցույց տալ, որ թուրքական կողմն առաջինն է քայլ անում հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Դա Անկարային որոշակիորեն հաջողվեց, ինչի մասին վկայում էին եվրոպացի մի շարք քաղաքական գործիչների, մասնավորապես՝ Գերմանիայի կանցլեր Գերհարդ Շրյոդերի ու Եվրախորհրդի գլխավոր քարտուղար Թերի Դևիսի, դրական գնահատականները²⁰³:

Հայաստանի Հանրապետության նախկին արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանը Թուրքիայի վարչապետ Էրդողանի նամակը «քարոզչական խաղ» որակեց՝ հայտարարելով. «Թուրքիայից դուրս Յեղասպանության ճանաչման խնդիրը ոչ ոք պատմական հարթությունում չի դիտարկում: Պատմաբանների և ցեղասպանագետների համար սա փակված խնդիր է»²⁰⁴:

Հայոց Յեղասպանության հիշատակման 90-րդ տարելիցին ընդառաջ Թուրքիայի իշխանությունները և քաղաքական ու գիտական վերնախավը նախաձեռնեցին և հետևողականորեն իրականացրեցին Հայոց Յեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման դեմ պայքարին ուղղված քարոզչական, դիվանագիտական, քաղաքական, գիտահասարակական բազմաշերտ աշխատանքներ, որոնք այնուամենայնիվ մարտահրավերներ են և՛ Հայաստանի Հանրապետության, և՛ Սփյուռքի համապատասխան կառույցներին՝ դիմանագիտական, լոբիստական, գիտահետազոտական, միջազգային-իրավական, քանզի որոշ կերպավիճակներով, բայց հիմնականում նույն նպատակաուղղվածությամբ թուրքական ժխտողական քարոզչամեթոդներն են շարունակում է գործել առ այսօր:

²⁰² Նույն տեղում, էջ 415:

²⁰³ Schroder, Almanya'nın konumunu değiştirdi, <http://www.mehmetalibirand.com.tr/yazidetay.asp?id=3418>

²⁰⁴ Վ. Օսկանյանի ելույթը, Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ: Խորհրդարանական լուսններ, 19-20 դեկտեմբերի, 2007 թ., էջ 20:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱԲՈՒԻ ՆԱՀԱՆՏԸ.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՅՄԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Թուրքիայի Հանրապետության Եվրամիության լիիրավ անդամակցության բանակցային գործընթացի համատեքստում թուրք-եվրոպական ակտիվացող բանակցություններում Հայաստանի հետաքրքրությունները շոշափում են Թուրքիայի կողմից Մեծ Եղեռնի ճանաչման և փոխհատուցման, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման, մասնավորապես սահմանի վերաբացման խնդիրները: Այստեղ չի կարելի անտեսել նաև Թուրքիայի կողմից պոլսահայ համայնքի, որպես ազգային փոքրամասնություն, սահմադրական իրավունքների խնդիրը: ԵՄ-Թուրքիա հարաբերությունները Հայաստանի համար ունեն կարևոր նշանակություն, քանի որ եվրաինտեգրումը հայտարարված է նաև մեր երկրի արտաքին քաղաքականության հիմնական ռազմավարական նպատակներից մեկը: Բացի այդ, որոշ վերուձաբաններ ակնկալում են, որ Թուրքիայի հետ բանակցությունների ընթացքում ԵՄ-ը ճնշում կգործադրի վերջինիս վրա՝ պահանջելով, որ նա հրաժարվի Հայաստանի նկատմամբ իրականացվող «հարկադրման» քաղաքականությունից, բացի իր սահմանը Հայաստանի հետ ու ճանաչի Հայոց Ցեղասպանությունը²⁰⁵:

Թուրքիայում Հայոց Ցեղասպանության հարցը վերջին տարիներին հասարակական լայն հնչեղություն էր ստացել, որ մասամբ եվրոպական երկրներում ծավալվող Ցեղասպանության միջազգային ճանաչման արձագանքների հետևանք էր: ԱԶԿ իշխանությունները փորձում էին ՉԼՄ-ների միջոցով վերահսկել հանրային կարծիքը և հասարակության մեջ ամրապնդել ժխտման քաղաքականությունը: Սակայն այս գործընթացը կարծես թե հակառակ ազդեցություն ունեցավ. «հայկական տաբու» նահանջեց, և թուրքական մամուլի էջերում հայկական հարցի վերաբերյալ պարտադիր անդրադարձի և քննարկումների ավանդույթ ձևավորվեց:

Թեև հայկական տաբուի որոշակի հետընթացի առաջին դրսևորումները հայտնի պատմաբան-սոցիոլոգ Թ. Աբչամը թուրք հասարակության

²⁰⁵ Ռ. Մաֆրաստյան, Եվրամիություն, Թուրքիա և Հայաստան. պատմական աղերսներ և իրական շահեր, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=552&sphrase_id=26049

մեջ նկատում է դեռևս 2000 թվականներին²⁰⁶, այնուամենայնիվ այդ քննարկումները ակտիվացան հիմնականում 2005 թ. Հայոց Ցեղասպանության 90-րդ տարելիցի նախօրեին և հասարակական մեծ արձագանք ստացան:

Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի անդամ Գյուլնուզ Աբթանը «Հայկական հարցի վերաբերյալ որոշ դրույթներ» վերնագրով «Ռադիկալ» թերթում լույս տեսած հոդվածում քննարկեց և իր աջակցությունը հայտնեց Հայոց Ցեղասպանության ժխտման թուրքական իշխանությունների և ընդդիմության համատեղ գործողություններին: Աբթանը ևս շեշտադրեց, որ Ցեղասպանության խնդիրը պիտի լուծվի պատմաբանների երկխոսության մակարդակով, և Երևանին կոչ է անում չբաղվել Թուրքիայի միջազգային հեղինակության վարկաբեկմամբ: Նա նշում է, որ միջազգային կազմակերպություններում չէ, որ պետք է քննարկվի հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը: «Հայերը պետք է հասկանան, որ չեն կարող ԱՄՆ-ին կամ ԵՄ-ին ստիպել մեզ վրա ճնշում գործադրել, որպեսզի ընդունենք Ցեղասպանության վերաբերյալ պնդումները»²⁰⁷:

Այդ ժամանակահատվածում թուրքական քաղաքական վերնախավի և զանգվածային լրատվամիջոցների հակահայկական քարոզարշավի գերխնդիրներից մեկը պայքարն էր «Կապույտ գիրք» վերտառությամբ Հայոց Ցեղասպանության վերաբերյալ բրիտանական դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուի դեմ, որը Առաջին համաշխարհայինի տարիներին կազմվել է լորդ Բրայսի և պատմաբան Ա. Թոյնբիի կողմից: Այն ներկայացնում է թուրքական իշխանությունների հայաջինջ քաղաքականությունը: ԹԱՄԺ-ում ընթացած քննարկումներում ևս բազմաթիվ անդրադարձներ եղան այս աշխատությանը, որոնք ամփոփվեցին վարչապետ Էրդողանի, ՀԺԿ նախագահ Բայբալի, ԹԱՄԺ նախագահ Արինչի և պատգամավորների ստորագրությամբ բրիտանական Լորդերի պալատ հղված ուղերձում, որտեղ պահանջվում էր անվավեր ճանաչել «Կապույտ գրքում» զետեղված պատմական փաստաթղթերը²⁰⁸:

Ակնհայտ է սակայն, որ այս դեպքում ևս հակաքարոզությունը հակառակ արդյունք ունեցավ. «Կապույտ գիրքը» մեծ հետաքրքրություն առաջացրեց թուրք հասարակության մեջ:

²⁰⁶ Taner Akçam, *Ermeni Tabusu Aralanırken*, İstanbul, Su yayınları, 2000, s. 8–9.

²⁰⁷ Gündüz Aktan, *Ermeni meselesi*, bazı noktalar, <http://www.radikal.com.tr/haber.php?haberno=146259>

²⁰⁸ TBMM'nin ermeni propagandasına karşı atağı devam ediyor, http://www.meclishaber.gov.tr/develop/owa/haber_portal.aciklama?p1=23542

Հայ-թուրքական հարաբերությունների նկատմամբ բոլորովին այլ դիրքորոշում ունի հայտնի քաղաքական վերլուծաբան Մ. Ալի Բիրանդը. «Հայերի ցեղասպանության ճանաչման ուղղությամբ ներկայացվող նյութերը միանշանակ ընդունվում են արևմտյան հասարակության կողմից: Այդ իրողությունը ինքներս մեզանից թաքցնում ենք: Հայերն արդեն 75 տարի է՝ աշխատում են այդ ուղղությամբ. այն դեպքում, երբ մեր կողմից որևէ ձայն չի լսվում, նրանք գրքեր են գրում, հազարավոր փաստաթղթեր տպագրում, համալսարաններում ամբիոններ հիմնում, միջազգային հանրությանը սպիայում հավատալ: ...Իսկ մենք միայն դիտում ենք: Բավարարվում ենք ինքներս մեր համար քարոզչություն անելով, մտածում՝ խնդիրն ուսումնասիրել, որպեսզի կարողանանք ենթադրյալ մեղադրանքներից մեզ պաշտպանել և վերջապես միջազգային հանրությանը իրականությունը ցույց տալ: Բայց ամբողջությամբ հակառակը դուրս եկավ: Եղածը եղել է, և մեր գնացքը գնացել: Այսօր բոլորովին նոր իրողության առաջ ենք կանգնած, և պետք է լուրջ գործողություններ իրականացնել՝ վտանգը հնարարավորինս նվազեցնելու համար: Հակառակ դեպքում երեկ տեղահանություն որակվող դեպքերը վաղը ցեղասպանություն կանվանվեն... Մեզանում արդեն այդ բանավեճն սկսված է... Հետաքրքիր մի իրողություն է. մեր կարծիքով հայկական կողմը Ցեղասպանության միջազգայացման քարոզարշավում զիջում է թուրքական քարոզչական ապարատին, սակայն թուրքական մամուլում օրըստօրե ավելանում են սեփական իշխանություններին պատիվության և անգործության մեջ մեղադրող հրապարակումները»²⁰⁹:

Ֆրանսիայի խորհրդարանի խոսնակ Ժան Լուի Դեբրեի 2005 թ. փետրվարին Թուրքիա կատարած այցի ընթացքում ևս Հայոց Ցեղասպանության միջազգայնացման գործընթացը լայնորեն քննարկվեց թուրքական լրատվամիջոցներում. վարչապետ Էրդողանը ֆրանսիացի դիվանագետին ներկայացրեց իր կառավարության դիրքորոշումը. «պատմությունն անհրաժեշտ է թողնել պատմաբաններին: Թուրքիան բացել է իր արխիվները, մինչդեռ Հայաստանը՝ ոչ: Եթե արխիվները բացվեն, կտեսնեք, որ իրականությունը հայկական պնդումներից տարբերվում է»: Իբրև լուծում՝ ֆրանսիացի պաշտոնյան առաջարկել է, որ «Հայոց Ցեղասպանության հարցն ուսումնասիրի անկախ հանձնաժողովը»²¹⁰:

²⁰⁹ Mehmet Ali Birand, Böyle giderse kaybederiz, http://ermeniyalanlari.blogspot.com/2009/09/yayinlanmis-bilgi-ve-belgeler-gore_21.html

²¹⁰ Fransa meclis Başkanı Debre'nin Türkiye ziyareti, <https://www.ab.gov.tr/p.php?e=39343>

Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակներում հայկական տարուի նահանջի վկայություն էր «Ռադիկալ» թերթում մարտի 4-ին լույս տեսած հոդվածը: Թերթը նշում է, որ երկու օր առաջ կայացած Թուրքիայի անվտանգության նիստում հնարավոր են Թուրքիայի արտաքին քաղաքական հայեցակարգի արմատական փոփոխություններ, այդ թվում՝ հայ-թուրքական հարաբերությունների և Հայոց Ցեղասպանության ճանաչման վերաբերյալ: Սակայն, անվտանգության խորհրդի նիստից հետո Թուրքիայի վարչապետը հայտարարեց, որ որևէ փոփոխություն չի լինելու. Թուրքիան ուղղակի փորձելու է հարմարվել աշխարհաքաղաքական փոփոխվող իրողություններին: Ուշագրավ է, որ հրապարակումն անդառնում է ժամանակին Թուրքիայի նախկին նախագահ Թ. Օզալի մտադրությանը՝ «ճանաչել Հայոց Ցեղասպանությունը և մեկընդմիջտ փակել այդ հարցը»: Թուրքիայի նախկին նախագահի այդ մտադրությունը կանխել է ԱՄՆ-ում Անկարայի դեսպան Քանդեմիրը, ով ուղղակի խնդրել է Թուրքիայի նախագահին հապշտապ որոշումներ չընդունել»²¹:

Արտգործնախարար Ա. Գյուլն իր կուսակցության գրասենյակում կուսակիցների հետ քննարկեց վարչապետ Էրդողանի և ՀԺԿ նախագահ Բայբալի հանդիպման մանրամասները՝ Հայոց Ցեղասպանության խնդրի առնչությամբ: Այս հանդիպումը ևս բազմաթիվ քննարկումների առիթ դարձավ թուրքական մամուլում: «Անադոլու» գործակալության փոխանցմամբ՝ Գյուլն իր կուսակիցներին հիշեցրեց, որ հայ և թուրք ժողովուրդները շուրջ 8 դար բնակվել են կողք կողքի՝ այդ ժամանակահատվածում փոխադարձաբար նպաստելով միմյանց մշակույթի և գիտության զարգացմանը. «Հայերեն լեզուն և կրոնը պահպանվել ու զարգացել են: Մեր հայ քաղաքացիները, որոնք առարկայորեն են նայում այս խնդրին, նաև բազմաթիվ պատմաբաններ տեսնում են այս փաստերը: Սակայն հակառակ դրան, Թուրքիայի դեմ առկա է թշնամանք», — ասել է Գյուլը: Նրա կարծիքով, այդ թշնամանքը գալիս է հայկական սփյուռքից՝ Միացյալ Նահանգներից ու Եվրոպայից: «Այդ վայրերում հայերն ապրում են բարեկեցիկ կյանքով, սակայն լինելով փոքրամասնություն, ցանկանում են պահպանել իրենց ազգային ինքնագիտակցությունն ու քաղաքական կշիռը: Նրանց պետք են նման հարցեր՝ քաղաքական շահարկումների համար: Նրանք մեղավոր են, քանի որ որ չեն գնում Հայաստան՝ օգնելու իրենց եղբայրներին», ավելացրել է Գյուլը:

²¹ Mehmet Ali Kızıllı, Ermeniler–İrak–Kıbrıs, <http://www.radikal.com.tr/radikal.asp?a-type=haberyazdir&articleid=739817>

Թուրքիայի արտգործնախարարն անդրադարձել է նաև Հայոց Ցեղասպանությունը ճանաչած երկրներին: «Նրանք գրպարտում են Թուրքիային: Մենք կոչ ենք անում այդ երկրներին ու խորհրդարաններին՝ եթե նման պիտակավորումներ եք անում, ապա կամ հաշիվ պետք է տաք դրանց համար կամ ապացուցեք այդ պիտակավորումները»:

Վերջում բացատրելով, որ ցեղասպանություն նշանակում է էթնիկական կամ կրոնական մի խմբավորման անդամների սպանություն, նրան ամբողջապես կամ մասնակիորեն վերացնելու դիտավորությամբ, Գյուլը հռետորական հարց է տվել. «Այդ դեպքում ինչո՞ւ հայկական եկեղեցիները դեռևս գոյություն ունեն Թուրքիայում, ինչո՞ւ հայ քաղաքացիներ կան այս երկրում»²¹²:

Թուրքական մամուլը 2005 թ. ապրիլյան իր հրապարակումների ուշադրության կենտրոնում էր պահում նաև Գերմանիայի պառլամենտում Հայոց Ցեղասպանության ճանաչման վերաբերյալ քննարկումները, «ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպան Էվանսի Հայոց Ցեղասպանությունը ճանաչող հայտարարությունը, ինչպես նաև որոշ թուրք մտավորականների՝ Հայոց Ցեղասպանության իրողությունն ընդունող հայտարարությունները: Միացյալ Նահանգների հայ համայնքի ապրիլի 24-ին նախորդող ակտիվությունը ևս գտնվում էր թուրքական լրատվամիջոցների տեսադաշտում. «ԱՄՆ Հայ դատի գրասենյակը սաստկացնում է ճնշումը Բուշի վարչակարգի վրա, որպեսզի վերջինս ապրիլի 24-ին հայ ժողովրդին ուղղված ուղերձում 1915 թ. դեպքերը որակի որպես Ցեղասպանություն»:

Անդրադառնալով Գերմանիայի խորհրդարանում ընդդիմադիր քրիստոնեա-դեմոկրատների կողմից նախաձեռնած Հայոց Ցեղասպանության ճանաչման վերաբերյալ քննարկումներին՝ թուրքական լրատվամիջոցները ընդգծում էին, որ ի պատասխան հայկական քարոզչության անընդհատ աճող տեմպերին՝ Թուրքիայի արտաքին գերատեսչությունը շարունակում է ոչինչ չանել և ընդամենը «առաջարկում պատմաբաններից կազմված խմբերի քննարկումներ վարել»: Նշվում էր, որ Թուրքիայում Գերմանիայի դեսպան Ու. Ռոթթարտ Բորնը կանչվել է Թուրքիայի արտաքին գործերի նախարարություն, իսկ Բեռլինում Թուրքիայի դեսպանը նամակ է հղել Գերմանիայի արտաքին քաղաքական գերատեսչություն՝ պահանջելով խոչընդոտել բանաձևի ընդունումը²¹³:

²¹² Abdullah Gül, Ermeni iddialarını ispat edin, http://ermeniyalanlari.blogspot.com/2009/09/yayinlanmis-bilgi-ve-belgelere-gore_21.html

²¹³ Uğur Ergan, Almanya'ya çifte soykırım uyarısı, <http://hurriyet.com.tr/arsivnews.aspx?id=300832>

Ըստ թուրքական աղբյուրների՝ գերմանացի քրիստոնեա-դեմոկրատների նման շահագրգռվածությունը Յեղասպանության ճանաչմամբ պայմանավորված է առաջին հերթին Թուրքիայի՝ ԵՄ լիիրավ անդամակցության վերաբերյալ գերմանացի ընդդիմադիրների մերժողական դիրքորոշմամբ, և հնարավոր խորհրդարանական քննարկումները հարվածի տակ են դնում գերմանաթուրքական ռազմավարական համագործակցությունը:

Եվրոպայի թուրք ժողովրդավարների միության Բյուրնում տեղի ունեցած համագումարի ընթացքում ընդիմադիր ԹԴՄ/ԲՄՄ դաշինքի անդամ, պատգամավոր Վոլֆգանգ Բոսբախը Թուրքիայի վարչապետի արտաքին քաղաքականության գծով խորհրդական Ջյունեյդ Չափսուին ակնարկել էր, որ Մեծ Եղեռնի թուրքական ժխտումը հավասարազոր է Գերմանիայի կողմից հրեական հոլոքոստի ուրացմանը, ինչին ի պատասխան թուրք պաշտոնյան հայտարարել է, որ «եթե նախնիները ցեղասպանություն գործած լինեին, ապա Արևելյան Եվրոպայում որևէ քրիստոնյա չէր մնա: Այս հարցը ոչ թե Սփյուռքի, այլ ուղղակիորեն Հայաստանի հետ ենք լուծելու»²¹⁴:

Հավելենք միայն, որ թուրքական իշխանությունների հակաքարոզչական քաղաքականությունը մասնակի հաջողություն արձանագրեց. 2005 թ. հունիսի 15-ին Բունդեսթագը, առանց կրկնակի քննարկման, միաձայն ընդունեց «1915 թվականի ապրիլի 24-ի կոտորածի 90-ամյակի կապակցությամբ հայերի հիշատակման օրվա» բանաձևը: Փաստաթղթում, սակայն, Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունները չեն որակվում «Յեղասպանություն» տերմինով, սակայն կա մեկ պարբերություն, որտեղ նշված է, որ «շատ խորհրդարաններ, միջազգային կազմակերպություններ և անկախ պատմաբաններ տեղի ունեցածը անվանում են Հայոց Յեղասպանություն»²¹⁵:

Գրող-հրապարակախոս, միակ թուրք Նոբելյան մրցանակակիր Օրհան Փամուկի՝ շվեյցարական «Das magazin» ամսագրին տրված հարցազրույցի ժամանակ արված հայտարարությունը, թե «թուրքերը 1915 թ. 1 միլիոն հայ և 30 հազար քուրդ են կոտորել»²¹⁶, հասարակական խառնաշփոթ առաջացրեց և երկփեղկեց թուրք մտավորականությանը՝ Փամուկի համախոհների և

²¹⁴ Tuncay Yıldırım, “Soykırım” sorununu diaspora ile çözemeyiz, <http://hurriyet.com.tr/arsivnews.aspx?id=300831>

²¹⁵ Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ: Խորհրդարանական լուծումներ, 19–20 դեկտեմբերի, 2007 թ., էջ 479:

²¹⁶ Orhan Kemal Cengiz, Ermeni tabusu Türkiye’de nasıl yıkıldı?, <http://www.al-monitor.com/pulse/tr/contents/articles/opinion/2013/04/armenian-genocide-taboo-turkey-anniversary.html>

քաղաքական հակառակորդների: Համախոհների թվում էր Սաբանջի համալսարանի պրոֆեսոր Հալի Բերքթայը, ով ևս հայտնվեց պիտակավորումների թիրախում:

ԱՁԿ 16 պատգամավորներ դատապարտեցին երկու մտավորականների հայտարարությունները՝ վերջիններիս կոչ անելով չպաշտպանել «Հայոց Ցեղասպանության հայկական պնդումները»²¹⁷:

Պրոֆեսոր Հալի Բերքթայը ակնհայտորեն մեկուսացվեց գիտական շրջանակներից և Հայկական հարցի վերաբերյալ անցկացվող գիտաժողովներից: Թուրքական ավանդական պատմագրությունը չհանդուրժեց այլախոհության ոյուզն-ինչ դրսևորում իր շարքերում, ով իր աշխատություններում ի ցույց էր դնում պաշտոնական պատմագրության բացերը:

Ցեղասպանության 90-րդ տարելիցին ընդառաջ՝ թուրքական Flash TV-ն 5 ժամ շարունակ հաղորդում հեռարձակեց Հայոց Ցեղասպանության վերաբերյալ: Բանավիճային հաղորդմանը մասնակցում էին թուրքական պաշտոնաթող սպաներ, դիվանագետներ և լրագրողներ, որոնք փորձում էին «անվիճելի փաստարկներով» ժխտել Հայոց Ցեղասպանության փաստը: Վերջին պահին հաղորդմանը մասնակցելուց հրաժարվել էր Թուրքիո հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մուլթաֆյանը: Նրա փոխարեն հեռուստատեսություն էր ներկայացել հոգևորական Գրիգոր Աղաբալօղլուն, ով համարձակություն էր ունեցել ուղիղ եթերում հայտարարելու. «Պարոնայք, ցեղասպանությունը ճշմարտություն է, ուզեք՝ թե ոչ: Ես գիտեմ, որ այս հաղորդումից հետո իմ կյանքը սպառնալիքի տակ է լինելու, սակայն հայերն այս երկրում Մուլթ հոգու զորությամբ չէ, որ անհետացան»: Հաղորդման մասնակիցներից ոմանք, հաղորդավարներից պահանջել են լռեցնել հայ հոգևոր հովվին՝ այլապես սպառնալով լքել դահլիճը:

Հետաքրքրական էր՝ այդ հոգևորականն արտահայտում էր իր հայացքները, թե այդ հայտարարությունը կարելի է նաև որպես պատրիարքարանի դիրքորոշման որոշակի փոփոխություն դիտարկել... Ժամանակը ցույց տվեց, որ՝ ոչ...

Հետևելով այն բազմաթիվ հրապարակումներին ու քննարկումներին, որոնք Հայոց Մեծ Եղեռնի 90-րդ տարելիցից առաջ աննախադաս չափերի էին հասել, կարելի է թուրք հասարակական-քաղաքական մտքում առկա մոտեցումներն այս կերպ դասակարգել.

²¹⁷ Türker Alkan, Aydınların huyudur bu, <http://www.radikal.com.tr/haber.php?haber-no=146177>

- ոչինչ չի եղել. հայերն ու թուրքերը հարյուրամյակներ շարունակ ապրել են կողք կողքի՝ հաշտ և համերաշխ
- եղել է ճիշտ հակառակը, այսինքն՝ ջարդեր իրականացրել են հայերը
- եղել են ազգամիջյան տեղային ընդհարումներ, երկուստեք կազմակերպված կոտորածներ, սակայն հարևան բոլոր ժողովուրդներն էլ իրենց պատմության ընթացքում նման խնդիրներ ունեցել են
- այս սերունդը 1915 թ. կամ երեխա էր, կամ դեռ չէր էլ ծնվել, ուրեմն պատասխանատու չէ անցյալի մեղքերի համար
- եղել են ինչ-որ գործողություններ, որոնք կարելի է որակել որպես հանցանք և ոչ երբեք ցեղասպանություն, իսկ Թուրքիան դրանք իրականացրել է «ճարահատյալ»՝ պատերազմական պայմաններում:

**ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏԱՍՄԲ (2008–2010 թթ.)**

«Ձևակ».

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՓՈՐՁ**

Թուրքիայի՝ 2008–2010 թթ. Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման փորձը որոշ թուրք վերլուծաբանների կողմից գնահատվում է որպես ԱԶԿ–ի պատմական նշանակություն ունեցող նախագիծ²¹⁸:

Շուրջ երկու տարի այդ գործընթացն առաջնային էր տարածաշրջանային առաջատարի հավակնություններ ունեցող Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության համալիրում: ԱԶԿ–ի «հայկական նախաձեռնությունը» նաև Թուրքիայի նախկին արտգործնախարար, հետագայում՝ վարչապետ Ա. Դավութօղլուի հռչակած «գրո խնդիր հարևանների հետ» արտաքին նոր քաղաքականության սկզբունքի յուրատեսակ «փորձաքար» հանդիսացավ:

Թուրքիան, 1991 թ. դեկտեմբերի 16–ին ճանաչելով Հայաստանի Հանրապետության անկախությունն ի թիվս այլ նորանկախ հանրապետությունների, որոնց հետ նա դիվանագիտական հարաբերություններ հաստատեց, Հայաստանի դեպքում բացառություն արեց՝ երկկողմ հարաբերությունների կարգավորման համար առաջ քաշելով մի շարք նախապայմաններ: Անկարան Երևանից պահանջում էր.

²¹⁸ А. Горгулу, Турция и Южный Кавказ в 2010 г., КАВКАЗ–2010, Ежегодник Института Кавказа (ред. А. Искандарян), Ереван, Институт Кавказа, 2012, с. 140.

- Հայաստանը ճանաչի ժամանակակից Թուրքիայի սահմանները, այսինքն՝ ճանաչի Կարսի 1921 թ. հոկտեմբերի 13-ին ստորագրված պայմանագիրը, որով գծվել են առկա հայ-թուրքական սահմանները,
- Հայաստանը հրաժարվի Հայոց Ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացին հետամուտ լինելուց:

1993 թ., երբ հայկական ուժերն ազատագրեցին Քարվաճառը, Թուրքիան փակեց Հայաստանի հետ իր սահմանը և ավելացրեց ևս մեկ նախապայման՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը կապելով դարաբաղյան հարցի հետ և դրանով իսկ հակամարտության մեջ արդեն ակնհայտորեն բռնելով Ադրբեջանի կողմը: Ինչպես նշում է Ռ. Սաֆրաստյանը, Հայաստանին ուղղված երեք նախապայմանները, որոնց կատարմամբ էր Թուրքիան պայմանավորում դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և հայ-թուրքական սահմանի բացումը, պաշտոնական Անկարայի «բացահայտ ճնշման» կամ «հարկադրման քաղաքականության» արտահայտումն էին²¹⁹:

2002 թ. Թուրքիայում ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո որոշակի դրական միտում նկատվեց ՀՀ-ի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության մեջ: Ռ. Սաֆրաստյանի դիտարկմամբ, մինչ այդ Թուրքիայում քաղաքական կշիռ ունեցող որևէ կուսակցության ծրագրերում Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու հարցը տեղ չի գտել: Սակայն, երբ 2002 թ. Թուրքիայում նախընտրական պայքար էր ընթանում, ԱԶԿ-ի առաջատար որոշ դեմքեր, մասնավորապես Աբդուլլահ Գյուլն ու Ալի Բաբաջանը հայտարարություններ արեցին առ այն, որ Թուրքիայի համար այսուհետև ինչպես ամբողջ տարածաշրջանի, այնպես էլ Հայաստանի հետ հարաբերություններում կարևոր են դառնում տնտեսական խնդիրները²²⁰:

Վետազա տարիներին՝ հատկապես 2007 թ. ողջ ընթացքում Թուրքիան փորձեց իրագործել Հարավային Կովկասը պառակտելու քաղաքականությունը: Դրա նպատակը մի դաշինքի ստեղծումն էր, որը սկզբում կլիներ տնտեսական, հետագայում փորձելով այն վերածել ռազմաքաղաքականի: Ծրագիրը պետք է ներառեր Վրաստանը և Ադրբեջանը, որոնք պետք է լինեն Թուրքիայի կրտսեր դաշնակիցները և բացառում էր Հայաստանի մասնակցությունը: Ինչպես նկատում է Ռ. Սաֆրաստյանը, դա աննախադեպ

²¹⁹ Ռ. Սաֆրաստյան, Հարավային Կովկասում Թուրքիայի նոր նախաձեռնության մասին, http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=739

²²⁰ Ռ. Սաֆրաստյան, Հայ-թուրքական սահմանի նշանակությունը, Հայաստան-Թուրքիա. բաց խոսակցություն, էջ 64:

երևույթ էր Հարավային Կովկասում և, ըստ էության, այն ժամանակվա վարչապետի խորհրդական, պրոֆ. Ահմեթ Դավութջյուրի՝ Թուրքիային անմիջականորեն հարող տարածաշրջաններում, առաջին հերթին, իհարկե, Հարավային Կովկասում «ռազմավարական խորք» ստեղծելու հայեցակարգի իրականացումն էր²²¹:

2006 թ. շահագործման հանձնված Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը և 2007 թ. Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղն ամուր հիմքերի վրա դրեցին Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան եռակողմ հարաբերությունները²²²:

2007 թ. սկսվեց Բաքու-Թբիլիսի-Ախալքալաք երկաթգծի շինարարությունը, որը հանդիսանում է ԱՉԿ-ի իշխանության տարիներին իրականացվող Հայաստանը շրջանցող տարածաշրջանային երրորդ նախագիծը²²³:

2008 թ. սակայն, տարածաշրջանային հարաբերությունների կտրուկ փոխակերպումների արդյունքում դարձավ հայ-թուրքական հարաբերությունների նոր փուլի սկզբնավորման տարին:

Թուրք-հայկական հարաբերություններում «ձնհալը» սկսվեց 2008 թ. Հայաստանում նախագահական ընտրություններից հետո: Թուրքիայի նա-

²²¹ Ռ. Սաֆրաստյան, Թուրքիայի և հայ-թուրքական հարաբերությունների շուրջ, http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=507, Ա. Դավութջյուրի աշխարհաքաղաքական տեսությունը շարադրված է նրա՝ Ahmet Davutoğlu, Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu, İstanbul, Küre Yayınları, 2003, գրքում: Կովկասի մասին իր գրքում նա գրում է. «Տարածաշրջանային առումով՝ առավել լայնածավալ արտաքին քաղաքականության հորիզոններ գնալու նպատակով պետք է մոտակա ցամաքային ավազանի հետ սահմանային հարևանների հետ կապերն ամրապնդող հարաբերությունները կարգավորել... Սահմաններից այն կողմ կնքված դաշինքներն արժեքավոր են... պետք է քայլեր անել փոխկախվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ... շեշտը դնել հասարակությունների միջև տնտեսական ու մշակութային տարրի ուժեղացման վրա», տե՛ս Ahmet Davutoğlu, Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu, İstanbul, Küre Yayınları, 13. Baskı, 2003, s. 117–118.

²²² Güney Kafkasya Ülkeleri İle İlişkiler, http://www.mfa.gov.tr/turkiye_nin-guney-kafkasya-ulkeleriyle-iliskileri.tr.mfa.

²²³ Անցած տասը տարիներին Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի իշխանությունները տնտեսական և էներգետիկ մի շարք այլ համատեղ նախագծերին զուգահեռ կառուցեցին շուրջ 105 կիլոմետր նոր երկաթուղի Թուրքիայի և Վրաստանի տարածքում, ինչպես նաև արդիականացրեցին արդեն իսկ գոյություն ունեցող գծերը. խոսքը թե՛ երկաթգծի՝ Բաքու-Թբիլիսի, թե՛ հայաբնակ Ջավախքով անցնող Ախալքալաք-Մարաբդա հատվածների մասին է: 2017 թ. հոկտեմբերի 30-ին երկաթուղին հանձնվեց շահագործման, տե՛ս «Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին հանձնվեց շահագործման», <https://www.azatutyun.am/a/28824025.html>

խագահ Արդուլահ Գյուլն առաջիններից մեկն էր, որ շնորհավորեց Սերժ Սարգսյանին նախագահական ընտրություններում հաղթանակ տանելու համար: Սերժ Սարգսյանին ուղղված շնորհավորական ուղերձում ասվում էր. «Ես հույս ունեմ, որ ձեր նոր պաշտոնը հնարավորություն կընձեռի հայ և թուրք ժողովուրդների միջև հարաբերությունները կարգավորելու համար»²²⁴:

Այնուհետև ապրիլի 21-ին արտգործնախարար Ալի Բաբաջանը նամակ է ուղարկում Երևան՝ նշելով, որ Թուրքիան ցանկանում է կարգավորել կապերը երկու երկրների միջև: Ապրիլի 27-ին էլ նամակներ են փոխանակում Հայաստանի և Թուրքիայի վարչապետերը: Վարչապետ Էրդողանը հույս էր հայտնում, որ Տիգրան Սարգսյանի նշանակմամբ հայ-թուրքական հարաբերությունները «նոր փուլ կթևակոխեն, որը կնպաստի տարածաշրջանի խաղաղությանը, կայունությանը և բարեկեցությանը»: Հայաստանի ղեկավարներն իրենց պատասխան նամակներում նշում էին, որ Հայաստանը պատրաստ է Թուրքիայի հետ երկխոսության սկզբին՝ հարաբերությունները կարգավորելու համար, եթե Անկարան բանակցությունների համար նախապայմաններ չսահմանի²²⁵:

Պաշտոնական Անկարայի այդ աննախադեպ «ջերմացումը» հստակ պատճառներ ուներ: Թուրք փորձագետ և «Եվրոպական կայունության նախաձեռնություն» (ESI) կազմակերպության կովկասյան հարցերով համակարգող Նիզյար Գյոքսելի խոստովանությամբ Անկարան որոշակի ակնկալիքներ ուներ՝ Հայաստանում նախագահի փոփոխման հետ կապված: Նրա խոսքերով, նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանի անձը՝ ի տարբերություն իր նախորդի, Թուրքիայում «բացասական լիցքեր» («negative charge») չուներ: Հայաստանի նախորդ նախագահ Ռոբերտ Զոչարյանը ծագումով Ղարաբաղից էր և նաև հայտնի էր իր կարծր դիրքորոշմամբ Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում: Իսկ Ս. Սարգսյանը, որը թեև նույնպես կապված էր Ղարաբաղյան շարժման հետ, թուրքական կողմի կարծիքով, դեռևս իր վարչապետության շրջանում հայ-թուրքական գործընթացներում ավելի ակտիվ քայլերի կողմնակից էր: Բացի դրանից, ավելացնում է Նիզյար Գյոքսելը, Անկարայում հույս ուներին, որ հայաստանյան հետընտրական զարգացումների հետևանքով ստեղծված ներքաղաքական

²²⁴ Պատկերավոր պատմություն, Հայաստան-Թուրքիա: Մեծ բանավեճը, օգոստոս 2009, էջ 43-44, www.esiweb.org

²²⁵ Նույն տեղում, էջ 44:

ճգնաժամը նորընտիր նախագահին առավել «ճկուն» կդարձնի արտաքին քաղաքականության հարցերում²²⁶:

Երկրորդ հանգամանքը՝ տարվա վերջում կայանալիք ԱՄՆ-ի նախագահական ընտրություններն էին: Թուրք դիվանագետները մտավախություն ունեին, որ ընտրվելու առավել հավանականություն ունեցող թեկնածու Բարաք Օբաման «անպայման կիրականացնի իր նախընտրական խոստումները և 1915 թ. Օսմանյան կայսրության տիրապետության ներքո հայերի զանգվածային ջարդերը կճանաչի որպես ցեղասպանություն»²²⁷:

Նախագահ Ս. Սարգսյանը հունիսի 25-ին Մոսկվայում, հանդիպելով Ռուսաստանի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, հայտարարում է առաջիկայում հայ-թուրքական հարաբերությունները խթանելու ուղղությամբ նոր քայլեր ձեռնարկելու մասին, ինչպես նաև հայտնում մտադրությունը՝ հրավիրելու Թուրքիայի նախագահ Ա. Գյուլին Երևան՝ դիտելու Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլի ազգային հավաքականների հանդիպումը²²⁸: Սկսվում է հետազայում լրագրողների կողմից «Ֆուտբոլային դիվանագիտություն»²²⁹ կոչված գործընթացը: Ուղիղ մեկ ամիս անց՝ հուլիսի 24-ին, տեղի է ունենում պաշտոնական հրավերը: 2008 թ. հուլիսի 9-ին «Ուոլ Սթրիթ Ջորնլը» ամսագրին տված հարցազրույցում նախագահ Ս. Սարգսյանն ստում է. «Ժամանակն է թարմ փորձ անել այս փակուղին վերացնելու համար, մի իրավիճակ, որը ոչ ոքի չի օգնում և վնասում է շատերին... առաջարկում եմ նոր սկիզբ, Թուրքիայի կառավարության և Ժողովրդի հետ երկխոսության նոր փուլ՝ նպատակ ունենալով բարելավել հարաբերությունները և բացել մեր ընդհանուր սահմանը»²³⁰:

Փորձագետներ Ֆիոնա Հիլը, Քեմալ Զիրիչչին և Էնդրյու Մոֆֆերը Ս. Սարգսյանի վարչակազմի «նախաձեռնողականությունը» գնահատում են որպես հավասարակշռող գործողություն Արևմուտքի (ներառյալ Թուրքիայի) և Ռուսաստանի միջև, բնութագրելով այն «փոխլրացման» (“comple-

²²⁶ Diba Nigar Göksel, *The Rubik's Cube of Turkey-Armenia Relations*, UNISCI Discussion Papers, № 23 (May/Mayo 2010), p. 197-198.

²²⁷ Դ. Շտրաուս (Delphine Strauss), Հայաստանի և Թուրքիայի փորձական բանակցությունները, «Ֆայեննշլ Թայմս», 25 նոյեմբեր, 2008 թ., <http://artmamul.ararat-center.org/?p=118>

²²⁸ <http://www.president.am/events/news/eng/?search=imposed&id=89>

²²⁹ Tarek Hohberg, *When Diplomats Score: The role of Football in the Turkish-Armenian Rapprochement*, https://ge.boell.org/sites/default/files/downloads/Role_of_Football-Hohberg.pdf

²³⁰ Serzh Sarkisian, “We Are Ready to Talk to Turkey”, *The Wall Street Journal*, 07.07.2008.

mentarity”) ռազմավարություն: Նրանք նաև ուշադրություն են դարձնում Ս. Սարգսյանի անձնական շարժառիթներին՝ խնդրահարույց ընտրություններից հետո բարելավել իր խաթարված միջազգային վարկը: Սակայն, ինչպես նշում են նրանք, այդ «քաղաքական լարախաղացության» ռիսկերն ակնհայտ դարձան, երբ հայ-թուրքական արձանագրությունները ձախողվեցին 2010-ի գարնանը²³¹:

Ուշագրավ է, որ որոշ թուրք վերլուծաբաններ «ֆուտբոլային դիվանագիտությունը» վերագրում են ԱԶԿ-ի նոր քաղաքականության նախաձեռնողականությանը, նշելով, որ կուսակցության քաղաքականության կերտողները (policy makers) իրենց ակտիվ դիվանագիտության մեջ օգտագործում են բոլոր հնարավոր մեթոդները, այդ թվում՝ անձնական, մշակութային և նույնիսկ սպորտային դիվանագիտությունը, որը կիրառվեց Հայաստանի հետ մերձեցման գործընթացում²³²:

Այն, որ Ս. Սարգսյանի հրավերը հնչել էր Մոսկվայում, հայ վերլուծաբաններ Ա. Իսկանդարյանն ու Ս. Մինասյանը պատահական չեն համարում՝ այդ փաստը խորհրդանշում էր հայ-թուրքական գործընթացի նկատմամբ Ռուսաստանի վերաբերմունքի որոշակի փոփոխություն, ինչն արտահայտեց նաև ՌԴ արտգործնախարար Ս. Լավրովը՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտության մասին խոսելով 2008 թ. հունիսին Թուրքիա կատարած իր այցի ընթացքում²³³:

Ինչպես վկայում են Միջազգային ճգնաժամային խմբի վերլուծաբանները, Թուրքիայի քաղաքական վերնախավը վերջնական կարծիք չուներ Հայաստանի նախագահի հրավերն ընդունել-չընդունելու վերաբերյալ: Նրանք իրենց զեկույցում նշում են, որ այցի միանշանակ կողմնակիցը հենց սկզբից եղել է նախագահ Գյուլը²³⁴: Վերջերս նոր մանրամասներ ի հայտ եկան թուրքական քաղաքական վերնախավում առկա այդ տարաձայնությունների վերաբերյալ: Ստամբուլի հայկական «Ակօս» թերթի փոխանց-

²³¹ Fiona Hill, Kemal Kirişci, & Andrew Moffatt, Armenia and Turkey: from normalization to reconciliation, in Turkish Policy Quarterly 2015, Vol.13, № 4, Winter, p.134.

²³² Kanat Kiliç, AK Party's Foreign Policy: Is Turkey Turning Away from the West? <http://www.readperiodicals.com/201001/1988411681.html#ixzz2QxDwkzNo>

²³³ А. Искандарян, С. Минасян, Прагматичность политики сквозь реалии исторических ограничений: анализируя армяно-турецкий процесс, Аналитические доклады Института Кавказа, №1, январь 2010, с. 10.

²³⁴ Turkey and Armenia: opening minds, opening borders, International Crisis Group, Europe Report, №199, 14.04.2009.

մամբ՝ Թուրքիայի 11-րդ նախագահ Ա. Գյուլի զլխավոր խորհրդական Ահմեթ Սևերը, ով 12 տարի (տարբեր պաշտոններում) զբաղեցրել է նրա զլխավոր խորհրդականի պաշտոնը, հեղինակել է «Աբդուլլահ Գյուլի հետ 12 տարի» խորագրով գիրքը²³⁵, որում անդրադարձել է նաև «Ֆուտբոլային դիվանագիտության» շրջանակներում 2008 թվականին տեղի ունեցած Գյուլի երևանյան այցին:

Ահմեթ Սևերը CNN Türk հեռուստաալիքի «Ամեն քան» հաղորդման ժամանակ հայտարարել է, որ Աբդուլլահ Գյուլը Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով 2008 թվականին մեկնել է Երևան, ուր և ներկա է գտնվել «Հայաստան-Թուրքիա» ֆուտբոլային հանդիպմանը: Սևերի խոսքերով՝ Գյուլի երևանյան այցին դեմ են արտահայտվել Թուրքիայի ԱԳՆ-ը, տվյալ ժամանակվա վարչապետ Ռեջեփ Էրդողանն ու զինված ուժերի զլխավոր շտաբի պետ Իլքեր Բաշքուլը:

Նրանք կարծել են, որ Գյուլի երևանյան այցը վնաս կհասցնի Ադրբեջանի հետ հարաբերություններին, սակայն Գյուլը հայտարարել է, որ գնալու է Երևան. «Չնայած միայնակ մնալուն՝ Գյուլը մեկնեց Երևան, և դա ճանապարհի հարթեց (հայ-թուրքական) արձանագրությունների առջև»: Սևերի կարծիքով, Թուրքիայի համար ամենակարևոր հարցերը քրդական, հայկական ու կիպրոսյան հարցերն են, որոնք լուծում են պահանջում²³⁶:

2008 թ. հուլիսի 23-ին Կարս-Ախալքալաք երկաթուղու²³⁷ շինարարության թուրքական հատվածի հիմնարկերին մասնակցելու համար Կարս ժամանած Աբդուլլահ Գյուլն այցելեց նաև Հայոց Բագրատունյաց մայրաքաղաքը, դառնալով Անի այցելած Թուրքիայի առաջին նախագահը: Թղթակիցների խմբում ներկա գտնվող հայ լրագրող Թաթուլ Հակոբյանը հետաքրքիր մանրամասներ է հայտնում այդ այցելության մասին, որոնք լույս են սփռում Գյուլի իրական տրամադրվածությունների վրա: «Անին մեզ համար շատ կարևոր վայր է, որովհետև թուրքերը Անատոլիա են եկել այս կողմերով ...»: «Ես շնորհակալություն եմ հայտնել նախագահ Սարգսյանին հրավերի համար: Մենք դեռևս որոշում չենք ընդունել: Կան որոշ խնդիրներ, որոնք պետք է վերացվեն: Մենք ուզում ենք այս տարածաշրջանը տեսնել կայուն և խաղաղ: Բոլոր երկրները կարող են միանալ տարածաշրջանային նախագծե-

²³⁵ Ahmet Sever, Abdullah Gül ile 12 Yıl. Yaşadım, gördüm, yazdım, İstanbul, 2015.

²³⁶ Gül, Dışişleri, Genelkurmay ve Erdoğan'a rağmen Yerevan'a gitti, <http://www.agos.com.tr/tr/yazi/11898/gul-disisleri-genelkurmay-ve-erdogan-a-ragmen-yerevan-a-gitti>

²³⁷ Caucasus Closer To Launching Iron Silk Road, Daily Georgian Times, 25.07.2008.

րին, բայց պետք է հարգեն այլոց տարածաշրջանային ամբողջականությունը», — ասել էր Գյուլը²³⁸:

Թուրքական մամուլը ընդգծված կարևորությամբ անդրադարձավ ամռանը Անկարայում գումարված՝ թուրք դեսպանների ու դիվանագետների չարսօրյա հավաք-խորհրդակցությանը, որին «ուղեղի փոթորկում» (brainstorming) որակումը տվեցին: Թուրք դիվանագետների հավաքի օրակարգի գլխավոր կետեր հռչակվեցին երեք առաջնահերթություն՝ ա) Հայաստանի հետ բնականոն հարաբերությունների հաստատում, բ) Կիպրոսի վերամիավորմանն ուղղված բանակցությունների ակտիվացում, գ) Իրաքի իշխանությունների հետ փոխըմբռնման ամրապնդում Հյուսիսային Իրաքի ու քրդական հարցի շուրջ: Թուրք դիվանագետներն արձանագրում էին, որ Միացյալ Նահանգները դիվանագիտական ճնշում են բանեցնում Թուրքիայի նախագահի վրա, որպեսզի Աբդուլլահ Գյուլն ընդունի Հայաստանի նախագահի՝ Երևան այցելելու և Հայաստան-Թուրքիա ֆուտբոլի հավաքականների խաղը միասին դիտելու հրավերը: Գյուլն իր հերթին «մտահոգաբար» նկատել էր, որ Հայաստանը շատ է տուժում սահմանի փակումից²³⁹, ապա նշել, որ Թուրքիան կարող է ընդառաջել ֆուտբոլային հրավերին, եթե Հայաստանը զիջումի իր պատրաստակամության շոշափելի ապացույցներ տա²⁴⁰:

Սակայն ակնհայտ է, որ հայ-թուրքական բանակցային գործընթացի արագացման իրական խթան հանդիսացավ 2008 թ. օգոստոսյան հնգօրյա պատերազմը²⁴¹:

Հարևան Վրաստանում պատերազմը և դրա հեռանկարները Հարավային Կովկասում թուրքական, ռուսական և արևմտյան շահերի վրա հանգեցրին Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման կարևորության և անհրաժեշտության հասունացմանը: Մեկ ամիս անց Ալի Բաբաջանը

²³⁸ Թ. Հակոբյան, Հայացք Արարատից: Հայերը և թուրքերը: Պատերազմ, սառը պատերազմ, դիվանագիտություն, Երևան, 2012, էջ 410-412:

²³⁹ "Armenia misses the trans-Caucasus train", Turkish Daily News, 25.07.2008.

²⁴⁰ Թուրքիան պատրաստվում է դիվանագիտական նոր գրոհի, <http://notoprotocols.net/?p=784>

²⁴¹ Caucasus Conflict Gave Rise to Turk-Armenian Rapprochement, Turkish Daily News, 05.09.2008. Mitat Çelikpala, The new battle zone for global hegemony: the Caucasus, Turkish Daily News, 22.10.2008. Պատերազմի ընթացքի մասին տե՛ս С. Минасян, «Пятидневная война» августа 2008 г.: Военно-политический анализ, Кавказ-2008, Ереван, 2010, с. 106-153.

կասի, որ Վրաստանում պատերազմը «ցույց տվեց, որ մենք պետք է նոր մոտեցում ցուցաբերենք Կովկասում հակամարտությունների կարգավորմանը», ներառյալ Հայաստանի պարագայում²⁴²:

Ինչպես նշում են վերլուծաբանները, Վրաստանում Ռուսաստանի միջամտությունը հանկարծ մատնանշեց Թուրքիայի տարածաշրջանային քաղաքական և տնտեսական շահերի խոցելիությունը: Պատերազմը Թուրքիայի տարածաշրջանային շահերին առնչվող մի շարք խնդիրներ հստակեցրեց՝ Ռուսաստանն ի վիճակի է ուժ գործադրել Կովկասում: Վրաստանը, հատկապես Սաակաշվիլիի բախտախնդրությունը հաշվի առնելով, ենթակա էր ապակայունացման և ռուսական ներխուժման՝ ամենայն հավանականությամբ կասկածի տակ դնելով ներկայիս և ապագա խողովակաշարերի պաշտպանության իր ունակությունը: Մեկնաբանները սկսեցին անհանգստանալ Նաբուկոյի կամ տրանս-կասպիական խողովակաշարերի ծրագրերի մասին՝ Վրաստանի դեպքերը մեծացրեցին նախնախնի և գազային ճանապարհների խոցելիության ըմբռնումը²⁴³:

Ամնիջապես պատերազմական գործողություններին հետևած 2008 թ. օգոստոսի 12-ին Մոսկվա կատարած այցի ընթացքում Թուրքիայի վարչապետ Էրդողանը առաջարկեց Կովկասյան միություն՝ Կովկասյան կայունության և համագործակցության պլատֆորմ ստեղծել, որը «կուժեղացներ տարածաշրջանի երկրների միջև տնտեսական կապերը և կնպաստեր խնդիրների խաղաղ կարգավորմանը»²⁴⁴:

Հարկ է ուշադրություն հրավիրել այն հանգամանքին, որ Կովկասը միավորելու գաղափարը նոր չէր թուրքական դիվանագիտության համար: Դեռևս 2000 թ. հունվարին Վրաստան կատարած այցի ընթացքում Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը հանդես եկավ «Հարավային Կովկասի կայունության պակտի» ստեղծման առաջարկով, որը, սակայն հետագա ընթացք չունեցավ²⁴⁵: Այս անգամ իրադրությունն այլ էր. Թուրքիան ստացել էր դրա-

²⁴² “Turkey Ready to Discuss Diplomatic Ties with Armenia”, Hürriyet Daily News, 06.09.2008.

²⁴³ И. В. Охрименко, Турция и кризис на Кавказе. Некоторые политические и экономические аспекты, <http://www.iimes.ru/rus/stat/2008/19-10-08a.htm>

²⁴⁴ Deniz Devrim and Evelina Schulz, The Caucasus: Which Role for Turkey in the European Neighborhood, Insight Turkey, Vol. 11, No. 3, 2009, p. 181. Թուրքիայի այդ նախաձեռնության մասին տե՛ս Ռ. Սաֆրաստյան, Հարավային Կովկասում Թուրքիայի նոր նախաձեռնության մասին, http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=739

²⁴⁵ Demirel suggests Caucasus Stability Pact, Hürriyet Daily News, 16.01.2000.

կան արձագանք պլատֆորմի բոլոր հավանական մասնակիցներից (Ադրբեյջան, Հայաստան, Վրաստան + Ռուսաստան ու Թուրքիա), բացի Վրաստանից: Վերջինս հրաժարվում էր մասնակցել Ռուսաստանի հետ համատեղ որևիցե նախաձեռնության, քանի դեռ իր տարածքում գտնվում էին ռուսական զորքեր: Ուշագրավ էր այն հանգամանքը, որ Ադրբեյջանը Հայաստանի մասնակցության վերաբերյալ նմանատիպ առարկություններով պաշտոնապես հանդես չէկավ, ինչը, հավանաբար, Թուրքիայի ուժեղ ճնշման արդյունք էր²⁴⁶: Սակայն ակնհայտ էր, որ «Պլատֆորմի» պոտենցիալ անդամ-երկրների միջև ամկա հակամարտությունները (Հայաստան-Ադրբեյջան, Վրաստան-Ռուսաստան), ինչպես նաև խոշոր դերակատարներ ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Իրանի չընդգրկման փաստը զրկում էին այդ նախաձեռնությունը կենսունակությունից: Չնայած պաշտոնական Մոսկվայի առերևույթ դրական արձագանքների, այնուամենայնիվ հստակ չէր, թե Ռուսաստանը, որ ռուս-վրացական պատերազմի հետևանքով մեծացրել էր իր ազդեցությունը տարածաշրջանում, կցանկանա այն կիսել Թուրքիայի հետ: Թուրքիան, իր հերթին, այդ ձևաչափում հնարավորություն կստանար ակտիվ դերակատարում ունենալ Կովկասում, Մոսկվայի հետ մշտական կոնտակտի մեջ գտնվելով՝ թույլ չտալ, որ Ռուսաստանը միակողմանի որոշումներ ընդունի այդ տարածաշրջանում²⁴⁷:

Այսպիսով կարելի է նշել, որ նախաձեռնելով «Կովկասյան կայունության և անվտանգության պլատֆորմը», Թուրքիան նպատակ էր հետապնդում մեծացնել սեփական ազդեցությունը տարածաշրջանում: Անկարայի այդ փորձի մեջ Ռուսաստանի դերի գիտակցումը և տարածաշրջանում ազդեցությունը նրա հետ «կիսելու» առաջարկը նորույթ էր ԱԶԿ-ի քաղաքականության մեջ: Այդ նախաձեռնության մեջ կարևոր մաս էր կազմում նաև Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը, առանց որի «Պլատֆորմի» իրականացումն անհնար կլիներ: Թեև հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ Հայաստանի նախագահ Ս. Սարգսյանի կողմից հնչեցրած նախաձեռնությունը ցուցաբերվել էր նախքան ռուս-վրացական պատերազմն ու տարածաշրջանում նոր իրողությունների ի հայտ գալը, սակայն դրանք ակնհայտորեն նպաստավոր պայմաններ

²⁴⁶ Kavkasya İşbirliğine Aliyev Desteği, Radikal, 20.08.2008.

²⁴⁷ Ա. Հովհաննիսյան, Թուրքիա. ազնիվ միջնորդություն թե՞ քաղաքական սակարկություն, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. VI, Երևան, 2009, էջ 35:

ստեղծեցին Հայաստանի ու Թուրքիայի միջև կարգավորման գործընթացի մեկնարկի համար²⁴⁸:

Աբդուլլահ Գյուլն ընդունեց Երևանում ֆուտբոլի Աշխարհի առաջնության ընտրական խաղը դիտելու Սերժ Սարգսյանի հրավերը և 2008 թ. սեպտեմբերի 6-ին Թուրքիայի նախագահը պատմության մեջ առաջին անգամ այցելեց Հայաստան²⁴⁹:

Աբդուլլահ Գյուլի այցը Հայաստան միանշանակ ընդունելության չարժանացավ Թուրքիայում: Հիմնական ընդդիմադիր ուժերը՝ Հանրապետական-Ժողովրդական կուսակցությունը (CHP) և Ազգայնական շարժում կուսակցությունը (MHP) հանդես եկան խիստ քննադատությամբ, իսկ իշխող ԱԶԿ-ի ղեկավար Էրդողանն այցը գնահատեց որպես կառուցողական²⁵⁰:

Իշխող կուսակցության ներկայացուցիչների ելույթները Գյուլի այցին հաջորդած ժամանակահատվածում թույլ են տալիս բացահայտել ԱԶԿ-ի մոտեցումները հայ-թուրքական բանակցություններում Թուրքիայի համար կարևոր նշանակություն ունեցող երկու խնդիրներին՝ Ղարաբաղյան հիմնահարցին և Հայոց Ցեղասպանության հարցին:

Երևանյան այցից անմիջապես հետո նախագահ Գյուլն ուղևորվեց Ադրբեջան և հայտարարեց, որ հնարավորություններ են երևան եկել ԼՂ երկարատև հակամարտության կարգավորման համար: Բաքու կատարած ուղևորության ընթացքում նա լրագրողներին ասում է. «Ես Երևանում տեսա, որ հայերը պատրաստակամ են գործերը դուրս բերել ադրբեջանական տարածքից»: Բաքվում նախագահ Իլհամ Ալիևի հետ հանդիպումից հետո նա

²⁴⁸ Впервые за последние годы Турция заинтересована в нормализации отношений с Арменией, <http://www.armnews.com/10/1/2008>

²⁴⁹ Գյուլի այցի մասին տե՛ս Waiting for President Gul in Yerevan..., 05.09.2008, http://www.analyst-network.com/article.php?art_id=2403, President Gul's Visit to Yerevan: Considerations After, http://www.analyst-network.com/article.php?art_id=2424, Նախագահ Գյուլի երևանյան այցի օրերին թուրքական Timeturk.com էլեկտրոնային կայքում ուշագրավ հոդված տեղադրվեց առ այն, որ Թուրքիայից Հայաստան այցելած առաջին նախագահը եղել է Իսմինթ Ինյոնյուն: Խորհրդային Հայաստանի պաշտոնական հրավերով 1935 թ. հուլիսի 17-ին նա՝ Թուրքիայի արտգործնախարար Թևֆիկ Ոյուշթյու Արասի ուղեկցությամբ Իզմիրից ժամանել էր ներկայիս Շիրակի մարզ՝ Ախուրյան գետի ջրամբարներից մեկի աշխատանքները դիտարկելու նպատակով և մի քանի ժամ անցկացրել խորհրդահայ պաշտոնյաների հետ: St'u Ermenistan'ı ilk İsmet İnönü ziyaret etti, <http://www.tumgazeteler.com/haberler/ozdemir>

²⁵⁰ Ibrahim Kalin, From History to Realpolitik in Armenian-Turkish Relations, Today's Zaman, 11.09.2008.

նշում է. «Ադրբեջանում ես տեսա նույն ազնիվ և անկեղծ ցանկությունը կարգավորման մասով և հարգանքը հակառակորդի նկատմամբ, որը ես նկատել էի ավելի վաղ Հայաստանում: Նշանակալի հնարավորություն կա երկարատև հակամարտությունը կարգավորելու համար»: Նա ասում է. «Մենք համաձայն ենք, որ պետք է ջանքեր գործադրենք խնդիրը կարգավորելու համար... Եթե այս հնարավորությունը բաց թողնվի, ո՞վ գիտի, թե երբ նման հնարավորություն կծագի: Բոլորն էլ տեղյակ են, որ կարգավորումը կհանգեցնի համապարփակ համագործակցության, որից բոլորը օգուտ կստանան»²⁵¹:

2008 թ. սեպտեմբերի 26-ին Թուրքիայի, Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարները եռակողմ հանդիպում անցկացրին Նյու Յորքում: Մինչև հանդիպումը Հայաստանի և Ադրբեջանի դիվանագետները հանդիպեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը քննարկելու համար: Ըստ հաղորդագրությունների, թուրք և ադրբեջանցի պաշտոնյաները «ըջորեն քննարկեցին» Նաբուկո ծրագրում Հայաստանի մասնակցության հարցը որպես «Ղարաբաղյան խաղաղության համապարփակ պակտի մաս»: Թեև հանդիպման ընթացքում ադրբեջանական կողմը հայտարարեց, որ չի «համագործակցի Հայաստանի հետ նախքան Հայաստանի կողմից օկուպացված տարածքների վերադարձը, Ադրբեջանի սուվերեն իրավունքների վերականգնումը այդ տարածքների նկատմամբ և Հարավային Կովկասում խաղաղության հաստատումը», Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանը հավաստիացրեց, որ Հայաստանի և Թուրքիայի միջև ընթացող բանակցությունները անպայման կնպաստեն նաև Ղարաբաղյան հարցի շուտափույթ լուծմանը²⁵²:

Թուրք վերլուծաբան Միթաթ Չելիքբիպլան նշում է, որ ինքը՝ Գյուլը, կարծես համոզված էր դրանում: Սեպտեմբերի 10-ին Բաքու կատարած այցի ընթացքում այդ առիթով նա ասել էր, որ «կասկած չկա, որ ադրբեջանական օկուպացված տարածքների ազատագրումը կխթանի շատ արդյունավետ տնտեսական համագործակցություն տարածաշրջանում: Խողովակաշարերը և ճանապարհային հաղորդակցությունը ամբողջ կովկասյան տա-

²⁵¹ Պատկերավոր պատմություն, Հայաստան-Թուրքիա: Մեծ բանավեճը, օգոստոս 2009, էջ 49, www.esiweb.org

²⁵² Shahin Abbasov, "Azerbaijan: potential pipeline deal could help settle Nagorno-Karabakh issue", 30.09.2008, <http://www.eurasianet.org/departments/insight/article/ea-v093008a.shtml>

րածաշրջանը կներառեն»²⁵³: Նույն տարվա հոկտեմբերին Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևն առաջարկեց նորովի դեր Ռուսաստանի համար՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև միջնորդության հարցում: Իսկ 2008 թ. նոյեմբերի 2-ին մերձմտևկովյան Մայնդորֆում Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպման արդյունքում ստորագրված հռչակագիրը՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ թուրքական կողմի «ակնկալիքներին» կարծես լրացուցիչ հույսեր էր տալիս²⁵⁴: Հարկ է նշել, որ ողջ այս ժամանակահատվածում Ռուսաստանն ակտիվորեն աջակցում էր հայ-թուրքական բանակցային գործընթացին, քանի որ անհրաժեշտ էր համարում ռուս-վրացական պատերազմից հետո ստեղծված իրավիճակում՝ իր ռազմավարական գործընկեր Հայաստանի համար, որտեղ նաև ռուսական ռազմակայան է տեղադրված, այլընտրանքային ճանապարհային ուղիներ ապահովել: Ու թեև տարածաշրջանային խնդիրների շուրջ թուրքական կողմի հետ բանակցելիս պաշտոնական Մոսկվան ընդգծում էր, որ հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը երկու առանձին գործընթացներ են, այնուամենայնիվ փորձում էր տպավորություն ստեղծել, որ ռուսական աջակցությամբ ընթացող Ղարաբաղյան հարցի շուրջ Հայաստան-Ադրբեջան հանդիպումներում որոշակի առաջընթաց կա: Այսպես, օրինակ, ռուսական թերթերից մեկին տված հարցազրույցի ժամանակ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը հայտարարել էր՝ երբ մոտ ապագայում Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը փաստ կդառնա, Թուրքիան «կօգնի Հայաստանին նորմալ կապ հաստատել արտաքին աշխարհի հետ, բնականաբար, Անկարայի և Երևանի միջև. պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ հաստատելու միջոցով: Չլուծված երկու-երեք հարց է մնացել, մասնավորապես՝ Լաչինի միջանցքի հարցը»²⁵⁵:

Բնականաբար, այս տիպի հայտարարություններն ԱԶԿ-ի ղեկավարությունը, որը ներգրավված էր հայ-թուրքական կարգավորման գործընթացում, օգտագործում էր թե՛ ներքին ընդդիմության քննադատություններին

²⁵³ М. Челикпала, Турция и Южный Кавказ в 2009г., Кавказ-2009, Ереван, 2011, с. 181.

²⁵⁴ Armenia, Azerbaijan Sign Joint Declaration Over Nagorno-Karabakh, 02.11.2008, http://www.rferl.org/content/Kremlin_Hosts_Peace_Talks_Over_NagornoKarabakh/1337420.html

²⁵⁵ Л. Казарян, Выйти из западной геополитической ловушки, <http://www.fondsk.ru/news/2008/10/19/9078-9078.html>

պատասխանելու և թե՛ «եղբայրական» Ադրբեջանից հնչող դժգոհությունն ու անհանգստությունը «փարատելու» համար:

Ամփոփելով նշենք, որ Ահմեթ Դավութօղլուն, ով ժամանակին հանդիսանում էր ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության «ճարտարապետը», իր «Ռազմավարական խորք» աշխատությունում Մերձավոր Արևելքի ու Բալկանների հետ միասին Կովկասը դիտարկում է որպես Թուրքիայի մերձակա ցամաքային ավազան: Սակայն, ըստ նրա, Թուրքիան չի կարողացել Կովկասն ընդունել իբրև մեկ ամբողջական տարածաշրջան, այլ ընկալել է այն միայն հայ-ադրբեջանական հակամարտության տեսանկյունից: Միևնույն ժամանակ նա նշում է, որ Ադրբեջանը հանդիսանում է Կովկասում Թուրքիայի ամենակարևոր ռազմավարական դաշնակիցը, առանց որի Թուրքիան տարածաշրջանում իր դերը մեծացնելու, նաև դեպի Կասպից ծովի ավազան ծավալվելու հնարավորություն չի ունենա: Հետևաբար, Ադրբեջանի հողային կորուստը Դարաբաղյան պատերազմում Դավութօղլուն համարում է հետսառըպատերազմյան փուլում նաև Թուրքիայի մեծագույն կորուստը²⁵⁶: Նման մոտեցումը նոր չէր. Հարավային Կովկասի նորանկախ պետությունների հետ հարաբերությունները Թուրքիան դիտարկել է Կարսի պայմանագրով հաստատված համակարգի տեսանկյունից, և Թուրքիայի քաղաքական վերնախավում սկսած 1993 թ. գոյություն ունի այն մտավախությունը, որ ՀՀ-ը, լուծելով ԼՂ հարցը, հանդես կգա Նախիջևանի, ապա և Կարսի, Իգդիրի, Արդահանի նկատմամբ պահանջատիրությամբ: Չգտելով կանխել նման զարգացումը՝ Թուրքիան որդեգրել է Հայաստանին առաջին փուլում՝ ԼՂ-ում կասեցնելու քաղաքականությունը: Ինչպես նշում է թուրք վերլուծաբան Այբարս Գյորգյուլյուն, Թուրքիայում այս հարցում թե՛ քաղաքական դաշտում, թե՛ հասարակությունում առկա է համակարծրություն (կոնսենսուս)²⁵⁷: Այս տեսանկյունից ուշագրավ է, որ թուրքական հասարակական-քաղաքական մտածողության մեջ գոյություն ունեցող «Սևրի սինդրոմը» ԽՍՀՄ փլուզումից և «Մառը պատերազմի» ավարտից հետո աշխարհաքաղաքական տարբեր զարգացումների պայմաններում կրել է նոր բովանդակային ազդեցություններ: Այսպես, «1990-ական թթ. Թուրքիան իրեն ընկալում էր որպես մի երկիր, որը շրջապատված է թշնամաբար տրամադրված երկրներով, որոնց նպատակն ամեն զնով Թուրքիայի տարածքային մաս-

²⁵⁶ Ahmet Davutoğlu, *Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu*, s. 127–128.

²⁵⁷ Aybars Görgülü, Alexander Iskandaryan, Sergey Minasyan, *Türkiye–Ermenistan Diyalog Serisi: Yakınlaşma Sürecini İncelemek*, TESEV Yayınları, İstanbul, 2010, s.11.

նատմանը հասնելն է: Թուրքական ռազմաքաղաքական իշխանությունների շրջանում արմատավորվեց այն ընկալումը, որ թե՛ Արևմուտքի երկրները, թե՛ Թուրքիայի անմիջական հարևանները քայլեր են ձեռնարկում այդ երկրի տարածքային մասնատման ուղղությամբ»²⁵⁸: Թուրքիայի հատկապես ռազմական, ինչպես նաև որոշ քաղաքական շրջանակների կողմից հասարակությանը մշտապես հիշեցվող այդ վախերը նպատակ ունեին թշնամու հավաքական կերպարի ձևավորման միջոցով հասարակությանը ուղղորդել քաղաքական արդիական գործընթացներում: Մասնավորապես. «Հայաստանի և հատկապես հայկական Սփյուռքի նկատմամբ Թուրքիայի քաղաքական շրջանակներում առկա է տագնապի երևույթը, ինչը հենց տեղավորվում է «Սևրի սինդրոմի մեջ»²⁵⁹:

Առաջ անցնելով նշենք, որ եթե ԱԶԿ-ի նախորդ կուսակցական ծրագրում²⁶⁰ Կովկասյան տարածաշրջանի վերաբերյալ բաժնում բաց էր թողնված Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու հարցը, ապա նոր՝ «Նշանակետ 2023» ծրագրում կուսակցությունն ավելի հանգամանալի է ներկայացնում տարածաշրջանի վերաբերյալ իր տեսլականը: Մասնավորապես, Թուրքիան Կովկասում առանձնահատուկ դեր է վերապահում Ադրբեջանին, նշելով որ շարունակելու է իր ջանքերը՝ Լեռնային Ղարաբաղի «գրավմանը» վերջ դնելու ուղղությամբ: Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը ԱԶԿ-ն հստակ կապում է Ղարաբաղի հարցը լուծելու և «Ցեղասպանության անհիմն պնդումներին» վերջ դնելու հետ²⁶¹:

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԲԱՐՏԵԶԻՑ» ՄԻՆՉԵՎ ՑՅՈՒՐԻԻՆՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դեռևս 2008 թ. դեկտեմբերին Թուրքիայի խորհրդարանը պահանջեց երրորդ երկրների խորհրդարաններից Թուրքիայի և Հայաստանի միջև ընթացող մերձեցումը չխաթարել 1915 թ. դեպքերը որպես «ցեղասպանություն» ճանաչելու փորձերով: Խորհրդարանի խոսնակ Քյոքսալ Թոփթանը հայտարարեց. «քաղաքական գործիչները և խորհրդարանները չեն կարող դատել պատմությունը»²⁶²:

²⁵⁸ Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 76:

²⁵⁹ Նույն տեղում:

²⁶⁰ AK Parti Programı, <http://www.akparti.org.tr/site/akparti/parti-programi#bolum6>

²⁶¹ «Hedef 2023» siyasi vizyonu, www.akparti.org.tr/beyanname2011

²⁶² Պատկերավոր պատմություն, Հայաստան-Թուրքիա: Մեծ բանավեճը, օգոստոս

Հայ-թուրքական հարաբերությունները պայմանավորող կարևորագույն գործոնը հանդիսանում է պատմությունը: Նախկին արտգործնախարար Ա. Արզումանյանը «Հայկական ժամանակ» օրաթերթին տված հարցազրույցում թվարկում է երկու երկրների միջև պաշտոնական հարաբերություններ հաստատելու թուրքական նախապայմանները. «Կիշատակել Հայոց Ցեղասպանությունը, պաշտոնապես հրաժարվել պահանջատիրությունից, կասեցնել սփյուռքահայության հակաթուրքական գործունեությունը»²⁶³:

Հայտնի է, որ Հայոց Ցեղասպանության ժխտողականությունը Թուրքիայում իրականացվում է պետական մակարդակով: Այն հանդես է գալիս որպես Թուրքիայի պաշտոնական քաղաքականություն: Հայոց Ցեղասպանության ժխտման հարցում Թուրքիայում ձևավորվել է պատմական իրողությունների նենգավիճման օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտ, որի միջոցով ակտիվ պայքար է ծավալվում Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ: Շատ փորձագետներ Թուրքիայի՝ Հայոց Ցեղասպանության ժխտումը անվանում են բյուրոկրատացված, ինստիտուցիոնալ ուրացում²⁶⁴:

Հարկ է նշել, որ 2000 թվականի աշնանը Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի նիստում որոշում ընդունվեց այն մասին, որ Հայոց Ցեղասպանության հետ կապված խնդիրը այսուհետ համարվում է ազգային անվտանգության խնդիր: Ի կատարումն Ազգային անվտանգության խորհրդի որոշումների՝ 2001 թ. մայիսին ստեղծվեց հատուկ մարմին, որի վրա դրվեց Հայոց Ցեղասպանության ճանաչման գործընթացի դեմ մղվող պայքարը ղեկավարելու և համակարգելու խնդիրը: Այն անվանվեց «Ցեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումների դեմ պայքարը համակարգող խորհուրդ»: Վերջինիս կազմի մեջ ներգրավվեցին տարբեր պետական գերատեսչությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ²⁶⁵: Այդ խորհրդի (ՑԻ

2009, էջ 53, www.esiweb.org

²⁶³ «Հայկական ժամանակ», 18.07.2002 թ.: Այս հարցի շուրջ մանրամասն տե՛ս Ա. Անանյան, Հայոց Ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերություններում, Երևան, 2006:

²⁶⁴ Ա. Հովհաննիսյան, Ցեղասպանության ժխտումը և էթիկան, (թուրքական ազգային պետության կազմավորման որոշ հարցերի լույսի ներքո), Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. IV, Երևան, 2006, էջ 128:

²⁶⁵ Ռ. Սաֆրաստյան, Հնարավոր չէ՝ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև..., Երևան, 2003, էջ 41:

— Ա. Հ.) նիստերը տեղի են ունենում եռամսյակը մեկ: Այն գործում է ցայսօր: ՅԽ առաջին նիստը, ի թիվս այլ աշխատանքային խմբերի, որոշեց ստեղծել իրավական հարցերի ուսումնասիրման աշխատանքային խումբ, որի վրա դրվեց ցեղասպանության հետ առնչվող իրավական, այդ թվում նաև միջազգային-իրավական, խնդիրների մանրակրկիտ հետազոտման պարտականությունը: Այդ խմբի գործունեությունը դեկավարվում էր Արդարադատության նախարարության ներկայացուցչի կողմից: Տարիներ շարունակ ՅԽ ստեղծած աշխատանքային խմբերի գործունեությունը հիմնականում ընթանում էր փակ դռների հետևում, ինչի պատճառով հնարավոր չէր պարզել, թե իրավական բնույթի ինչ խնդիրներ էին գտնվում նրա քննարկումների կենտրոնում: Սակայն 2006 թ. նոյեմբերին այն ժամանակվա Արտաքին գործերի նախարար և փոխվարչապետ Ա. Գյուլը, որն ի պաշտոնե գլխավորում էր ՅԽ-ն, հանդես եկավ հայտարարություններով, որոնք փաստեցին, որ տարիների ընթացքում «մանրակրկիտ» աշխատանք է տարվել «Հայոց Ցեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումների հարցը» միջազգային ատյաններ տեղափոխելու հնարավորությունների ուսումնասիրման ուղղությամբ: Թուրքագետ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռ. Սաֆրաստյանն այդ մասին գրում է. «Ելույթ ունենալով խորհրդարանում՝ նա նշեց, որ այդ աշխատանքների մեջ ներգրավված են պաշտոնաթող դիվանագետներ, ինչպես նաև թուրք և օտարազգի վստահելի իրավագետներ: Նշվեց նաև, որ Թուրքիայի կողմից այդ նոր մոտեցման որդեգրումը դրականորեն են գնահատում նաև մի շարք պետություններ:

Ա. Գյուլի հայտարարությունը գոհունակությամբ ընդունվեց մի շարք քաղաքական ուժերի և առանձին գործիչների կողմից: Երկրի հիմնական ընդդիմադիր Հանրապետական-Ժողովրդական կուսակցությունը նույնիսկ պնդեց, որ այդ գաղափարի իրական հեղինակը ինքն է: Իսկ պաշտոնաթող դիվանագետ Գյունդյուզ Աքթանը, որը Թուրքիայում համարվում է Հայոց Ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի «միջազգային-իրավական» ուղղության «հոգևոր հայրը», Գյուլի հայտարարությունը բնութագրեց որպես «չափազանց քաջ»:

Հարցը քննության առնվեց ՅԽ հերթական նիստի ընթացքում, որը տեղի ունեցավ 2006 թ. դեկտեմբերի 26-ին Ա. Գյուլի նախագահությամբ: Զննարկվեց երեք տարբերակ.

- ա) դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ Ֆրանսիայի խորհրդարանի Հայոց Ցեղասպանության մասին հայտնի որոշումը բողոքարկելու նպատակով,

բ) դիմել Հաագայի Արդարադատության միջազգային դատարան,

գ) դիմել Հաագայի Միջազգային իրավարար մշտական դատարան:

Քննարկման արդյունքների մասին հաղորդագրություններն իրարամերձ էին: Վերլուծությունը ցույց է տալիս, որ նախապատվությունը տրվել է վերջին տարբերակին, այսինքն՝ որոշվել է դիմել Հաագայի Միջազգային իրավարար մշտական դատարան: Սակայն այդ որոշումն ունեցել է նախնական բնույթ, քանի որ համարվել է, որ ռիսկերը շատ են և արդյունքը՝ անկանխատեսելի: Այդ պատճառով, նախքան վերջնական որոշում ընդունելը, նախընտրելի է համարվել դիմել թուրք և օտարազգի իրավագետների խորհրդատվությանը: Այդ մասնագիտական քննության արդյունքները պահվում են գաղտնի»²⁶⁶:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հայոց Ցեղասպանության հարցում ԱՉԿ-ն որդեգրել էր թուրքական ավանդական ժխտման քաղաքականությունը և, չիրաժարվելով ուրացման ռազմավարական նպատակներից, մարտավարական նորանոր միջոցներ էր փնտրում այդ քաղաքականությունն իրականացնելու համար: Նմանատիպ նոր մոտեցում կարելի է համարել «պատմաբանների հանձնաժողով» ստեղծելու առաջարկը:

2004 թ. դեկտեմբեր ամսին, «Zaman» օրաթերթին հարցազրույց տալով, Թուրքական պատմագիտական ընկերության նախկին նախագահ Յուսուֆ Հալա-չօղլուն հայտարարեց, որ պաշտպանվելու փոխարեն ժամանակն է անցնել հարձակման: Ըստ նրա՝ հանրապետության նախագահ Էրդողանը պետք է հանդես գա «հայկական պնդումները» ուսումնասիրող գիտնականներից կազմված հանձնաժողով ստեղծելու առաջարկությամբ: Հալաչօղլուն նշում էր նաև, որ եթե Թուրքիան դիմի այդ քայլին, ապա հայերը կվախենան²⁶⁷:

Փաստորեն, Թուրքիան ջանում էր Հայոց Ցեղասպանության խնդիրը քաղաքականից տանել պատմական հարթություն, որն, ըստ էության, ցեղասպանության փաստը դնում էր կասկածի տակ:

Հատկանշական է, որ նախքան հայկական կողմին հասնելը Էրդողանի նամակն արդեն հայտնվել էր թուրքական մամուլում ու տարածվել ԱՄՆ-ի Կոնգրեսում: Հայոց Ցեղասպանության գոհերի հիշատակման օրվանից մի քանի օր առաջ «տեղեկատվական արտահոսք» ապահովելով Թուրքիան

²⁶⁶ Ռ. Սաֆրաստյան, Թուրքիայի պայքարը Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ (ներկա փուլի նոր միտումներ), http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=491

²⁶⁷ Tarih Kurumu başkanı: soykırımı Ermeniler yaptı, Zaman, 23.12.2004.

փորձում էր միջազգային հանրությանը ցույց տալ, որ պատրաստ է քննարկել այդ հիմնախնդիրը հայկական կողմի հետ: Պաշտոնական Անկարան լավ էր հասկանում, որ եթե նույնիսկ իր այս նախաձեռնությունները հայկական կողմից մերժվեին, միևնույն է միջազգային հանրության ուշադրությունը շեղվելու էր Հայոց Ցեղասպանության ճանաչման նախաձեռնություններից: Նման քայլն ուղղված էր Ցեղասպանությունը դատապարտող բանաձևերին խոչընդոտելուն և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար շահագրգիռ կողմի «իմիջ» ստեղծելուն: Այն, որ Թուրքիան այս հարցում Հայաստանի հետ ազնիվ երկխոսություն չէր ցանկանում, այլ Ցեղասպանության վերաբերյալ բանաձևերը չեզոքացնելու համար դա շահարկում էր, պարզ երևում էր թուրք պաշտոնյաների հայտարարություններից: Այսպես, օրինակ, անմիջապես Գյուլի երևանյան այցից հետո թուրքական NTV հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանն ասել էր, որ եթե թուրքերը հաջողեն արագ լուծել հայերի հետ խնդիրները, ապա կարիք չի լինի երրորդ երկրների պառլամենտների միջամտությանը և այս հարցի (ցեղասպանության) քննարկմանը: «Մենք կարող ենք նրանց ասել, դուք ձեր գործին նայեք, մենք մեր հարցերը կարգավորում ենք»²⁶⁸:

Հայ որոշ վերլուծաբանների բնորոշմամբ՝ Թուրքիան «հայերի, ինչպես նաև հույների և ասորիների նկատմամբ ցեղասպանություն կատարելու և իր հանցանքները չընդունելու պատճառով միջազգային հանրությունում մասամբ «որոնման մեջ գտնվող հանցագործի» կարգավիճակ է ձեռք բերել: Այդ իրողությունը մշտապես օգտագործվել է Թուրքիայի դեմ ... ակնհայտ է, որ հարաբերությունների հաստատումը ՀՀ-ի հետ նպաստելու է Թուրքիայի «իմիջի» բարելավմանը: Դա մասամբ կնպաստի նաև թուրքերի՝ ԵՄ-ին անդամագրվելու գործընթացին, չնայած այդ խնդրի լուծումը, հաշվի առնելով եվրոպական առաջատար երկրների ներկայիս տրամադրությունները, այսօր միտում ունի փոխադրվելու զուտ տեսական հարթություն»²⁶⁹:

2008 թ. մարտ ամսվա վերջում Թուրքիայում անցկացված ՏԻՄ ընտրությունները կրկին հաղթանակ բերեցին իշխող ԱԶԿ կուսակցությանը: Գնահատելով անցած ընտրությունները՝ կուսակցության նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը նշեց, որ Թուրքիան յուրահատուկ ուղերձ հղեց առ այն,

²⁶⁸ Ա. Հովհաննիսյան, Թուրքիա. ազնիվ միջնորդություն թե՛ քաղաքական սակարկություն, էջ 353–354:

²⁶⁹ Գ. Տեր-Հարությունյան, ՀՀ-Թուրքիա հարաբերությունների համատեքստը, http://www.noravank.am%2Farm%2Farticles%2Fdetail.php%3FELEMENT_ID%3D433#

որ ԱԶԿ-ին առաջվա պես վստահում են: Կառավարությունը վերադարձավ իր նախանշած օրակարգին՝ այդ թվում նաև միջազգային հարաբերությունների ոլորտում: Թուրքիայում պատրաստվում էին ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Բարաք Օբամայի այցին: Ապրիլի 24-ի մոտենալուն ընդառաջ Ալի Բաբաջանը հորդորում էր «երրորդ կողմին» (տվյալ դեպքում ԱՄՆ-ի նախագահին, որը բազմիցս հայտարարել էր, որ իր երկիրը շահագրգռված է հայ-թուրքական հարաբերությունների բարելավմամբ, մյուս կողմից էլ խոստացել էր ապրիլյան ուղերձում 1915 թ. իրադարձությունները որակել որպես ցեղասպանություն) չխառնվել, քանի որ ցանկացած անզգույշ քայլ իբր կարող է վնասել գործընթացին²⁷⁰:

Արձանագրենք, որ թուրքական մամուլում Օբամայի այցից առաջ չէին բացառում նրա ուղերձում «ցեղասպանություն» բառի օգտագործումը²⁷¹: Թուրք պատմաբան Թաներ Աքչամը, մարտի 19-ին ելույթ ունենալով Քլարք համալսարանում, նշել էր, որ ամեն տարի ամերիկացիները ականտես են լինում մի քաղաքական դրամայի կամ տխուր կատակերգության, երբ բոլորը գիտեն, թե ինչ է մտածում նախագահը և Կոնգրեսը: Սակայն թուրքերի ճնշման տակ նրանք ստիպված են ստել տարվա մեջ զեղծ մեկ օր, թաքցնելով այն, ինչին հավատում են տարվա մնացած 364 օրերին²⁷²:

Թուրքիայում նախագահ Գյուլի հետ տված համատեղ ասուլիսում Օբաման կարողացավ դիվանագիտական հնարք գործածելով արձանագրել, որ թեև ինքը չի հրաժարվել իր կարծիքից ցեղասպանության վերաբերյալ, այնուամենայնիվ խուսափեց այդ եզրը օգտագործելուց: Միաժամանակ Օբաման կոչ արեց երկու կողմերին առողջ և սթափ մոտեցում ցուցաբերել պատմության խրթին հարցերի վերաբերյալ²⁷³:

ԱՄՆ-ի նախագահ Օբամայի հետ համատեղ ասուլիսում Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը հայ-թուրքական հարաբերությունների և Հայոց Ցեղասպանության հետ կապված արձանագրեց հետևյալը՝

²⁷⁰ Պատկերավոր պատմություն, Հայաստան-Թուրքիա: Մեծ բանավեճը, օգոստոս 2009, էջ 53, www.esiweb.org

²⁷¹ Barrack Obama Visit provides condition for opening Turkey-Armenia border: Turkish Center for int'l Relations and Strategic Analysis Director, www.turkishweekly.net

²⁷² Akçam: Obama should recognize Genocide and Liberate Turks and Armenians, www.hairenik.com/weekly

²⁷³ Remarks by President Obama to the Turkish Parliament, 06.04.2009, http://www.whitehouse.gov/the_press_office/remarks-by-president-obama-to-the-turkish-parliament

- ա) 1915 թ. իրադարձություններից տուժել են երկու կողմն էլ, որի համար նա ցավ է ապրում,
- բ) այդ ողբերգությունը տեղի է ունեցել դրսի ուժերի միջամտությամբ, որոնց դրդմանը արձագանքեցին «մեր որոշ քաղաքացիներ»,
- գ) Հայկական Սփյուռքը օգտագործում է 1915 թ. դեպքերը ինքնահաստատվելու համար,
- դ) պատմությունը չի կարող դառնալ քաղաքական գործիչների և խորհրդարանների դիտարկման առարկա,
- ե) այդ հարցով պետք է զբաղվեն պատմաբանները և Թուրքիան պատրաստ է ընդունել ցանկացած պատմական հանձնաժողովի անկողմնակալ եզրահանգումը²⁷⁴:

Պետք է նշել, որ այն բանից հետո, երբ այդ օրերին արտասահմանյան մամուլում լուրեր էին տարածվում հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման վերաբերյալ և նույնիսկ կոնկրետ ժամկետներ նշվում, Ադրբեջանը ակտիվ ջանքեր էր գործադրում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը Արցախյան հարցի լուծման հետ կապելու ուղղությամբ: Ադրբեջանը նույնիսկ դիմեց բացահայտ շանտաժի՝ սպառնալով դադարեցնել գազի մատակարարումը Թուրքիա: Վրաստանում գտնվող Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը հայտարարեց, որ իրենք պատրաստ են Վրաստանի հետ պայմանագիր կնքել՝ ուղղորդելով ադրբեջանական գազը դեպի Ուկրաինա: «Հայկական օկուպացիայի պայմաններում սահմանի բացումը հակասում է Ադրբեջանի շահերին», — ասել էր նա:

Ադրբեջանի նախագահ Իլիհամ Ալիևի Ստամբուլի «Քաղաքակրթությունների երկխոսություն» գազաթաժողովին չմասնակցելը նույնպես այդ շանտաժի մարտավարության մի մասն էր: Ադրբեջանական գործոնին կանդորդառնանք առանձին: Նշենք, սակայն, որ միաժամանակ Լոնդոնում գտնվող վարչապետ Էրդոդանը հայտարարել էր, որ Թուրքիան չի դադարեցնի Հայաստանի շրջափակումը, քանի դեռ հայերը շարունակում են պնդել 1915 թ. ցեղասպանության փաստը և գրաված պահել Ադրբեջանի տարածքը: «Մենք չենք կարող մենակ թողնել մեր ադրբեջանցի եղբայրներին», — ասել էր նա: Նրա դիրքորոշումը, որին արձագանքեցին Անկարայում մյուս նախարարները և հաստատությունները հաջորդ օրերի ընթացքում, ազդարարում էր փոփոխություն քաղաքական հռետորության մեջ²⁷⁵:

²⁷⁴ Ա. Հովհաննիսյան, Թուրքիա. ազնիվ միջնորդություն թե՛ քաղաքական սակարկություն, էջ 353–355:

²⁷⁵ Başbakan Erdoğan Bakü’de, Sabah, 13.05.2009; Prime Minister Erdogan Puts Baku’s

Բազում դիվանագիտական խուսանավումներից հետո, ապրիլի 22-ի լույս 23-ի գիշերը աշխարհի բազմաթիվ լրատվամիջոցներով տարածվեց Շվեյցարիայի միջնորդությամբ ստորագրված հայ-թուրքական համատեղ հայտարարությունը, որով կողմերը պատրաստակամություն էին հայտնում կարգավորել երկկողմանի հարաբերությունները առանց որևէ նախապայմանի²⁷⁶: Աշխարհի շատ երկրներ, ԵՄ-ը և ԱՄՆ-ը ողջունեցին և իրենց աջակցությունը հայտնեցին այս գործընթացին: ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման իր ապրիլի 24-ի ուղերձում չօգտագործեց «ցեղասպանություն» եզրը, փոխարինելով այն «Մեծ եղեռն» արտահայտությամբ²⁷⁷:

Սույն հայտարարությունը միանշանակ չընդունվեց թե՛ Թուրքիայում, թե՛ Հայաստանում: Ապրիլի 27-ին տեղի ունեցած Թուրքիայի ԱԸԽ նիստում վերահաստատվեց, որ Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչմանը խոչընդոտելու ջանքերը մնում են երկրի քաղաքականության օրակարգում: Միևնույն ժամանակ Թուրքիայի քաղաքական և զինվորական բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց հայտարարություններում շարունակում էին պնդել, որ Հայաստանի հետ սահմանը չի բացվի, մինչև հայկական զորքերը դուրս չբերվեն «ադրբեջանական գրավյալ տարածքներից»: Ապրիլի 25-ին տեղի ունեցավ նաև ՀՀ Անվտանգության խորհրդի նիստը, որի ընթացքում ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը հավաստիացրել էր, որ շարունակելու է առանց նախապայմանների և ողջամիտ ժամկետում կարգավորել հայ-թուրքական հարաբերությունները, որ թույլ չի տա շաղկապել հայ-թուրքական հաշտեցման այդ գործընթացը ԼՂՀ հիմնախնդրի կարգավորման հետ, որ ցեղասպանության խնդիրը որևէ կերպ կասկածի տակ չի դրվելու: Պաշտոնական Երևանը հավաստիացրեց նաև, որ բանակցությունների բովանդակությունը չի համապատասխանում թուրքական «Մարահ» թերթում հրապարակված այն տեղեկատվությանը, ըստ որի «ճանապարհային քարտեզ» փաստաթղթի հիմքում ընկած են 5 կետեր՝ Կարսի պայմանագրի ճանաչումը, սահմանի և դիվանագիտական ներկայացուցչությունների բա-

Armenia Concerns Rest, Today's Zaman, 14.05.2009.

²⁷⁶ Joint Statement of the Ministers of Foreign Affairs of the Republic of Turkey, the Republic of Armenia and the Swiss Federal Department of Foreign Affairs, 22.04.2009, http://www.mfa.gov.tr/no_56_22_april_2009/press-release-regarding-the-turkish-armenian-relations.en.mfa

²⁷⁷ Statement of President Barack Obama on Armenian Remembrance Day, 24.04.2009, http://www.whitehouse.gov/the_press_office/statement-of-president-barack-obama-on-armenian-remembrance-day

ցումը, պատմաբանների հանձնաժողովի ստեղծումը և «ճանապարհային քարտեզի» վավերացումը երկու երկրների խորհրդարանների կողմից²⁷⁸:

Արձանագրենք նաև, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները իրենց համատեղ ասուլիսում (Երևան, ապրիլի 27) նշեցին, որ հայ-թուրքական հարաբերությունները և ԼՂ հակամարտության կարգավորումը առանձին գործընթացներ են, որոնք սակայն ընթանալու են զուգահեռ²⁷⁹:

Ամփոփելով նշենք, որ «Ճանապարհային քարտեզ»-ի հետ կապված որևէ պաշտոնական փաստաթուղթ, բացառությամբ համատեղ հայտարարության, այդպես էլ չգաղտնագերծվեց, ուստի այն տարաբնույթ և հակասական մեկնաբանությունների արժանացավ երկու երկրներում էլ²⁸⁰: Իսկ հաստատանյան «Դաշնակցություն» կուսակցությունն ի նշան բողոքի՝ դուրս եկավ իշխող կոալիցիայից:

«Ճանապարհային քարտեզի» կնքումից շատ չանցած կարևոր փոփոխություն տեղի ունեցավ Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչությունում: Մայիսի 1-ին ԱԳ նոր նախարար նշանակվեց Ա. Դավութօղլուն, ով մինչ այդ Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդոգանի արտաքին հարցերով խորհրդականն էր: Դավութօղլուի նշանակումը կարևոր նշանակություն ունեցավ, քանի որ նա էր հանդիսանում Թուրքիայի արտաքին քաղաքականության «գրո խնդիր հարևանների հետ» նոր վեկտորի հեղինակներից մեկը:

Օգոստոսի 31-ի երեկոյան հայտարարվեց, որ Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիան նախաստորագրում են ՀՀ և Թուրքիայի միջև «Դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» և «Երկկողմ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները: Այս քայլը խթան հանդիսացավ տեղական և միջազգային ձևաչափերով հասարակական քննարկումների էլ ավելի ակտիվացման և Հայաստանի ու Սփյուռքի քաղաքական, հասարակական ուժերի կողմից կարգավորման փաստաթղթերում ձևակերպումների դեմ ընդվզման ցույցերի նախաձեռն-

²⁷⁸ «Թուրքիան առաջին հերթին խաբելու է ինքն իրեն», հարցազրույց ՀՀ արտգործնախարար Է. Նալբանդյանի հետ, «168 ժամ», ապրիլի 28-29, 2009:

²⁷⁹ Ասուլիս՝ ողջամիտ հույսերի մասին, «168 ժամ», ապրիլի 28-29, 2009:

²⁸⁰ «Ճանապարհային քարտեզում» տեղ գտած որոշ կետերի, մասնավորապես պատմաբանների հանձնաժողովի վերաբերյալ փակ քննարկումների մանրամասնություններ են ներկայացված դիվանագետ, ՀՀ արտաքին գործերի նախարարի խորհրդական Ռուբեն Շուգարյանի ատենախոսությունում՝ Rouben Shougarian, *Dissertation Contemporary History and Methodology of International Mediation of Armenian-Turkish Relations*, p. 84-85, http://etd.asj-oa.am/4440/1/First_Dtraft_Dissertation_Final_Formatted.pdf

ման համար²⁸¹: Միաժամանակ Թուրքիայի ազգայնական հատվածը և ադրբեջանական կողմը ևս ուժգնացրեցին արձանագրությունների դեմ ուղղված հռետորաբանությունը: Թուրքագետ, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի Թյուրքագիտության ամբիոնի ղեկավար Ա. Սաֆարյանի խոսքերով, ընդդիմադիր Ժողովրդահանրապետական կուսակցության ղեկավար Դենիզ Բայբալը և Ազգայնական շարժում կուսակցության առաջնորդ Դևլեթ Բահչելին, հետևողականորեն դատապարտում են Թուրքիայի իշխանություններին՝ ընդգծելով, որ վերոհիշյալ արձանագրությունները չեն բխում Թուրքիայի ազգային շահերից, որ փաստաթղթերում բացակայում է «Ղարաբաղի հարցը», ինչն էլ, ինքնըստինքյան, անհնար պետք է դարձնի երկխոսությունը Հայաստանի և Թուրքիայի միջև: Դենիզ Բայբալը նույնիսկ կարծիք է հայտնել, որ արձանագրությունների ստորագրումը լրջորեն վտանգում է Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունները, և թուրք-ադրբեջանական եղբայրական կապերը չպետք է դառնան «թուրքական կառավարության սխալի գոիր»: Նա նաև ասել է. «Ցույց տվեք ինձ մի այնպիսի երկիր, որի եղբայրները գտնվում են պատերազմի մեջ, նրանց սպանում են, իսկ նրանք սեղմում են իրենց եղբայրների թշնամիների ձեռքը»: Թուրք քաղաքական վերնախավի, գիտական ու լրագրողական ընտրանու ներկայացուցիչների զգալի մասը, պարզապես, չի կարող չկրել Հայաստանին նախապայմաններ առաջադրող նախկին հայտարարությունների ու հրապարակումների «բեռը»: Բնականաբար, այդ լրագրողներն ու վերլուծաբաններն այսօր նույնպես հայտարարում են, որ Թուրքիայի ներկայիս ղեկավարները և իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությունն «արտաքին ուժերի ճնշման տակ» նահանջ են գրանցել Հայաստանի նկատմամբ ճնշումներ կիրառելու քաղաքականությունից՝ «հայկական ազրեսիայի դեմ միայնակ թողնելով եղբայրական Ադրբեջանին»²⁸²:

Վերջապես, ԱԳ նախարարների բանակցությունների արդյունքում 2009 թ. հոկտեմբերի 10-ին Շվեյցարիայի միջնորդությամբ Յյուրիխում

²⁸¹ Թ. Յակոբեան, Թուրքական «Սապահ»-ը և հայկական պնդումները, «Ազդակ», 12.10.2009:

²⁸² Ալ. Սաֆարյան, Ի՞նչ մտահոգություններ ունի թուրքական հասարակական կարծիքը, <http://www.armar.am/?p=21743>, Այս թեմայով առավել մանրամասն՝ Դ. Սաֆարյան, Գ. Մելիքյան, Վ. Ոսկանյան, Ալ. Սաֆարյան, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում (խմբ. Ռ. Սաֆրաստյան), ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2017:

ստորագրվեցին Դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և Հարաբերությունները զարգացնելու մասին երկու արձանագրություն²⁸³:

Արձանագրությունները նախատեսում էին դիվանագիտական հարաբերությունների հաստատում. վավերացումից հետո՝ երկու ամսվա ընթացքում սահմանների բացում, միջկառավարական հանձնաժողովի ստեղծում 7 համապատասխան ենթահանձնաժողովների հետ միասին²⁸⁴:

Ըստ էության թուրքական կողմը բանակցություններում ուներ երեք խնդիր.

- պաշտոնապես ամրագրել 1921 թ. Կարսի պայմանագրով նշված սահմանները (այս հարցում փորձելով համագործակցել Ռուսաստանի հետ);
- չեզոքացնել Հայոց Ցեղասպանության ճանաչման գործընթացը (փորձելով հակադրել Հայաստանը և Սփյուռքը, ինչպես նաև փոխադրելով հարցի քննարկումը քաղաքական ոլորտից այլ՝ պատմական հարթություն);
- պայմանավորել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը հայ-ադրբեջանական բանակցությունների խթանմամբ (օգտագործելով ռուս-ամերիկյան մրցակցությունը՝ աշխատելով մշտապես ներգրավված լինել բանակցությունների մեջ ուղղակի կամ անուղղակի ձևաչափով):

Ղարաբաղի հարցում հայկական կողմն ի սպառ բացառեց Թուրքիայի հավակնությունները: Մյուս երկու խնդիրներում Թուրքիան հասավ փոխզիջումային որոշման. Կարսի պայմանագրի փոխարեն կողմերն ուղղակի հայտնում էին սահմանի փոխադարձ ճանաչման մասին, իսկ պատմաբանների հանձնաժողովի փոխարեն ստեղծվում էր «պատմական հարթությամբ զբաղվող ենթահանձնաժողով երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված երկխոսության իրականացման նպատակով», որի աշխատածնը ու օրակարգը հաստատվելու էր նախարարների մակարդակով²⁸⁵:

²⁸³ Հայաստանի ԱԳՆ-ի պաշտոնական կայքը, Երկկողմ հարաբերություններ, Թուրքիա, <http://www.mfa.am/hy/country-by-country/tr>

²⁸⁴ Հայաստանի ԱԳՆ-ի պաշտոնական կայք, Արձանագրություններ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին, http://www.mfa.am/u_files/20091013_protocol1.pdf.

²⁸⁵ Նույն տեղում:

Այսպիսով, թուրքական կողմը ներքին ու արտաքին լսարանի համար ստացավ անհրաժեշտ միջոցը՝ Հայոց Յեղասպանության ճանաչման դեմ պայքարելու համար, իսկ հայկական կողմը բավարարվեց նրանով, որ ենթահանձնաժողովի օրակարգը սահմանված չէ, հետևաբար Յեղասպանության խնդիրը չի կարող դրվել քննարկման:

Արարողությանը ներկա էին ԱՄՆ, ԵՄ, ՌԴ և Շվեյցարիայի արտաքին գերատեսչությունների ղեկավարները: Ստորագրման արարողությունը տեղի ունեցավ ուշացումով, ինչպես նաև ՀՀ և Թուրքիայի արտգործնախարարները չընթերցեցին նախապես իրենց պատրաստած ելույթները: Հետագայում, 2011 թ. հունվարին Դեսպանների հավաքում Ահմեդ Դավութօղլուն բացահայտեց, թե ինչ էր պատրաստվում հայտարարել Յյուրիխում. «Եկեք այդ տարիները արդար հիշողության (Adil Hafiza)²⁸⁶ հիման վրա կրկին ուսումնասիրենք: Արդար հիշողության և ոչ միակողմանի»: Միևնույն ժամանակ նա պատրաստվում էր հայտարարել, որ արձանագրությունների ուժի մեջ մտնելը կախված է լինելու Ղարաբաղյան հարցով բանակցություններում գործնական առաջընթացից²⁸⁷:

Այս ամենը մատնանշում էր գործընթացի միջազգային կարևորության և կողմերի միջև չհամաձայնեցված հարցերի առկայության մասին: Հակասությունների առկայությունն ամրապնդվեց արձանագրությունների կնքման հաջորդ օրը, երբ ի պատասխան աղրբեջանական կողմի մեղադրանքների, Թուրքիայի վարչապետ Էրդողանը հայտարարում է, որ «ՀՀ-ի հետ Թուրքիայի սահմանի բացումը կապված է Ղարաբաղյան հիմնահարցում առաջընթացի հետ»²⁸⁸:

Հանդես գալով Թուրքիայի խորհրդարանում ԱԳ նախարար Ահմեթ Դավութօղլուն կրկին հաստատեց այն դիրքորոշումը, համաձայն որի Թուրքիան չի բացի սահմանը առանց Աղրբեջանի համաձայնության: Միևնույն

²⁸⁶ «Արդար հիշողության» վերաբերյալ Դավութօղլուի տեսակետների մասին Ahmet Davutoğlu, Osmanlı'dan arınma ya da "tarihsizleşme" sürecinde Türk-Ermeni ilişkileri: "adil hafiza" mümkün mü?, <http://turkishpolicy.com/Files/ArticlePDF/turkish%E2%80%93armenian-relations-is-a-just-memory-possible-spring-2014-tr.pdf>

²⁸⁷ IV Büyükelçiler Konferansı Açılış Konuşmaları, 23.12.2011, http://www.mfa.gov.tr/dorduncu-buyukelciler-konferansi_acilis-konusmalari.tr.mfa

²⁸⁸ Ստորագրման արարողության մանրամասների, ինչպես նաև միջազգային արձագանքների համար տե՛ս Հայ-թուրքական հարաբերություններ, Անալիտիկոն, №.10, Ստեփանակերտ, հոկտեմբեր 2009: Թուրքական մամուլի արձագանքների մասին տե՛ս Aybars Görgülü, Alexander Iskandaryan, Sergey Minasyan, նշվ. աշխ., էջ 11:

Ժամանակ Դավութթոլուն նշեց, որ արձանագրություններում Թուրքիայի շահերին հակասող բան չկա, որ արձանագրությունների ստորագրումը նշանակում է ընդհանուր սահմանի երկկողմանի ճանաչում, որը «հսկայական նշանակություն» ունի Թուրքիայի համար: ԱԳ նախարարը ընդգծեց, որ Թուրքիան փորձելու է դիվանագիտական ճանապարհով ճնշում գործադրել Միսկի խմբի վրա՝ արագացնելու Ղարաբաղյան կարգավորման գործընթացը: Թուրքիան ոչ թե փոխում է իր քաղաքականությունը, ասաց նա, այլ գործում է «պարտադրված անհրաժեշտությամբ» տրամաբանությամբ: Այս նոր երանգը, որը հնչեց ԱԳ նախարարի խոսքում, կարող էր նշանակել, որ վերջնական որոշումներ կայացնելիս, Թուրքիան, այնուամենայնիվ, կդեկավարվի իր սեփական, այլ ոչ թե «եղբայրական Ադրբեջանի» շահով²⁸⁹:

ԹԱՄԺ-ում տեղի ունեցած քննարկումների վերաբերյալ թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը գրում է. «Թուրքիայի Ազգային մեծ ժողովում Հայոց Ցեղասպանության հարցը բավական ակտիվ քննարկվեց 2009 թ. հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումից հետո տեղի ունեցած խորհրդարանական լուսնների ժամանակ: Ինչպես և սպասելի էր, արտաքին գործերի նախարար Ահմեթ Դավութթոլուն փորձում էր ներկայացնել, թե իբր արձանագրություններով նախատեսվող պատմական հարթության հարցերով զբաղվող ենթահանձնաժողովը քննարկելու է Հայոց Ցեղասպանության խնդիրը: Սակայն հենց այդ նույն նիստի ժամանակ ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական և Ազգայնական շարժում կուսակցությունները քննադատեցին կառավարությանը՝ նշելով, որ հիշատակված ենթահանձնաժողովի գործառույթն այն չէ, ինչ ներկայացնում է Դավութթոլուն, և Հայոց Ցեղասպանության հարցն այնտեղ չի քննարկվելու:

2009 թ. հոկտեմբերի 21-ի ԹԱՄԺ-ի նիստում բավական հետաքրքիր էր ընդդիմադիր քրդական ժողովրդավարական հասարակություն կուսակցության պատգամավոր Մելահեթթին Դեմիրթաշի ելույթը, որում նա արտահայտում էր իր կուսակցության տեսակետները: Խորհրդարանի ամբիոնից նա կատարեց մի շարք ուշազբավ հայտարարություններ՝ արժանանալով իշխող ԱԶԿ-ի, ինչպես նաև ընդդիմադիր ԺՀԿ-ի, ԱԾԿ-ի կոշտ քննադատությանը: Այսպես, ըստ Դեմիրթաշի. «Հայ-թուրքական հարաբերություններում կա հարյուր տարվա վաղեմության մի պատմական խնդիր: 1915-16 թթ. երիտթուրք վարչախմբի կողմից Անատոլիան թուրքացնելու, իսլամացնելու նպատակով սխտեմատիկ ձևով կիրառվել է ոչ մուսուլմանների ոչնչացման

²⁸⁹ Ermeni Protokolü Meclis'te, Hürriyet, 21.10.2009.

քաղաքականություն»։ Անդրադառնալով հանրապետական Թուրքիայում ձևավորված ժխտողական քաղաքականությանը՝ քուրդ պատգամավորը շեշտել է. «Այդ ժամանակ հայ ժողովրդի հանդեպ կիրառվածները ընդհանրապես տեղ չեն գտել պատմության գրքերում, կրթության նախարարության հրատարակած դասագրքերում, ասես դրանք տեղի չեն ունեցել»²⁹⁰։

Ներկայացնելով արձանագրությունները Թուրքիայի խորհրդարանում, արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն նշեց, որ դրանք Լոզանի պայմանագիրը շարունակող պատմական փաստաթղթեր կարող են դառնալ։ Դավութօղլուի մեկնաբանմամբ, արձանագրությունները հիմնվում են Մոսկվայի և Կարսի պայմանագրերի վրա (թեև նշված պայմանագրերը ամենևին էլ հիշատակված չեն արձանագրությունների տեքստերում — Ա. Հ.) և այդպիսով՝ հաստատում են դե ֆակտո գոյություն ունեցող հայ-թուրքական սահմանի օրինականությունը։ Հետևաբար, ըստ նրա, «Հայաստանը հաստատում է տարածքային պահանջների ոչ լեգիտիմությունը», ինչը կբերի երկու ժողովուրդների միջև «1915-ի վերաբերյալ արդար հիշողության» ձևավորմանը։ Հակադարձելով ընդդիմադիր Հանրապետական-ժողովրդական կուսակցության պատգամավոր Շյուքրյու Էլբեդաղի քննադատությանն առ այն, որ արձանագրությունները ներկայացվում են նախքան Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը, Դավութօղլուն ասաց, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը Թուրքիայի համար ոչ պակաս կարևոր է, քան սեփական երկրինը²⁹¹։

Ցյուրիխյան հանդիպումից մի քանի օր հետո՝ հոկտեմբերի 14-ին, Բուրսայում տեղի ունեցավ Թուրքիա-Հայաստան ֆուտբոլային հանդիպումը, որին ներկա էին նաև ՀՀ և Թուրքիայի նախագահներ Սարգսյանը և Գյուլը²⁹²։

Հայկական կողմն արդեն իսկ հայտարարել էր, որ երկու արձանագրությունները խորհրդարանում կվավերացվեն միայն այն բանից հետո, երբ այն

²⁹⁰ Ռ. Մելքոնյան, Հայոց Ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում, http://www.noravank.am/articles/detail.php?ELEMENT_ID=6164

²⁹¹ Ermeni Protokolü Meclis'te, Hürriyet, 21.10.2009.

²⁹² Մինչ այդ Հայաստանի նախագահը փորձեց ճնշում գործադրել Թուրքիայի վրա, որպեսզի վեջինս հարզի ուղեցույցի շուրջ ձեռք բերված համաձայնության իր բաժինը, հայտարարելով, որ կայցելի Թուրքիա, միայն եթե սահմանը բաց լինի, կամ լինի բացման նախաշեմին։ Բուրսայում ֆուտբոլային հանդիպումը ուղեկցվեց թուրք-ադրբեջանական «դրոշների պատերազմով», որի մասին առավել մանրամասն կխոսվի առանձին։

նախ և առաջ վավերացնի Թուրքիայի խորհրդարանը: Թուրքիայի խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցությունը կառավարող «Արդարություն և զարգացում» կուսակցության օգտին էր, այսինքն՝ եթե թուրքական իշխանությունները քաղաքական որոշում էին կայացրել Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու և սահմանները բացելու մասին, ապա խորհրդարանը պետք է որ առանց դժվարության վավերացնէր երկու արձանագրությունները: Մինչդեռ թուրք բարձրաստիճան պետական գործիչները, այդ թվում երկրի նախագահն ու վարչապետը, հայտարարում էին, որ երկրի խորհրդարանը անկախ մարմին է, պատգամավորներից ամեն մեկն ինքն է որոշում, թե ինչպես քվեարկել: Հոկտեմբերի 15-ին Անկարայում Էգեմեն Բաղըչը, ով Թուրքիայի՝ Եվրամիության անդամակցության հարցերով գլխավոր բանագնացն էր, հայ լրագրողների հետ գրույցում բառացիորեն ասաց. «Շատ բարդ կլինի Թուրքիայի խորհրդարանից ակնկալել հայ-թուրքական երկու արձանագրությունների վավերացումը, քանի դեռ Ղարաբաղի հարցում չկա նկատելի առաջընթաց»: Մանավանդ, որ Թուրքիայի խորհրդարանի ընթացակարգը թույլ էր տալիս ամիսներով և նույնիսկ տարիներով ձգձգել վավերացման գործընթացը²⁹³:

Այսպիսով, պարզ դարձավ Թուրքիայի երկակի քաղաքականությունը. մի կողմից ամբողջ աշխարհին ցուցադրվում էր, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը մոտ է, իսկ մյուս կողմից պաշտոնական Անկարան շարունակում էր պնդել, որ հայ-թուրքական սահմանը միակողմանիորեն փակելու պատճառ հանդիսացող Արցախյան հիմնախնդիրը չի դադարել իրենց համար նախապայման մնալ:

ԹՈՒՐԹԻԱՅԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՆՈՒՈՒԹՅԱՆ» ՉԱԽՈՂՈՒՄ

Այս տարին նշանավորվեց մի շարք կարևոր իրադարձություններով, որոնք մեծ ազդեցություն թողեցին հայ-թուրքական հարաբերությունների վրա: Արդեն իսկ նախորդ շրջանում պաշտոնական Անկարայի պահվածքն ամբարայնում էր այն տպավորությունը, որ Թուրքիան շահագրգռված էր ոչ այնքան հայ-թուրքական հարաբերությունների լիարժեք կարգավորմամբ, որ-

²⁹³ Կ. Սասունյան, Ռ՛վ ավելի շուտ այքը կթարթի... Հայաստանը թե՛ Թուրքիան, https://www.facebook.com/sharer/sharer.php?u=http%3A%2F%2Fwww.noravank.am%2Farm%2Farticles%2Fdetail.php%3FELEMENT_ID%3D436&sphrase_id=24143

քան բուն բանակցությունների գործընթացն իր շահերին ծառայեցնելու նպատակով: Այսպես, օրինակ, փորձագետ Հակոբ Չաքրյանը գտնում է, որ Թուրքիան կատարեց իր կողմից նախանշված բոլոր 3 առաջադրանքները: Նախ, վարչապետ Էրդողանը հանդես եկավ Կովկասյան կայունության և համագործակցության պլատֆորմ ստեղծելու առաջարկով՝ հստակ իմանալով, որ դա ի սկզբանե դատապարտված է ձախողման, քանի որ այն երկրները, որոնք պետք է մասնակցեին պլատֆորմին՝ Հայաստանը, Ռուսաստանը, Թուրքիան, Վրաստանը, Ադրբեջանը հակամարտություններ ունեն իրար հետ: Պլատֆորմի նախաձեռնության միակ նպատակը թուրքական, դրա հետ մեկտեղ՝ նաև ամերիկյան գործոնը Հարավային Կովկասում ակտիվացնելն էր: Այնուհետև այդ ակտիվացումը ծառայեցվեց Թուրքիայի՝ ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ ընտրվելու նպատակին, քանի որ անդամների մեջ նախապատվությունը ՄԱԿ–ում տալիս են այն թեկնածուին, որը տարածաշրջանային կայունության, համագործակցության, խաղաղության ինչ–որ նախաձեռնություն է հանդես բերում: Եվ երրորդ՝ ապրիլի 23–ի Հայաստանի, Շվեյցարիայի և Թուրքիայի արտգործնախարարների համատեղ հայտարարությամբ «փաստի առաջ կանգնեցրին» ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային: Երբ այս 3 առաջադրանքները կատարվեցին, Հայաստան–Թուրքիա երկխոսությունը կանգնեց ձախողման եզրին²⁹⁴:

Կարգավորման գործընթացից դուրս գալու համար Թուրքիան փորձեց որպես պատրվակ օգտագործել 2010 թ. հունվարի 12–ին ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումն առ այն, որ Արձանագրությունները չեն կարող մեկնաբանվել իբրև հակասող ՀՀ Սահմանադրության տասնմեկերորդ գլխին, ուր խոսվում է Հայոց Ցեղասպանության դատապարտման մասին²⁹⁵:

Թուրքիայի ԱԳՆ–ը հաղորդագրություն տարածեց այդ կապակցությամբ, ուր նշվում էր, որ որոշումը հակասում է բանակցությունների տրամաբանությանն ու նպատակին²⁹⁶:

²⁹⁴ Թուրքագետի համոզմամբ՝ Թուրքիայի նախապայմանները թշնամանքի ակնհայտ արտահայտություն են Հայաստանի նկատմամբ, 19.08.2009. <http://old.hetq.am/am/politics/chaqryan/>

²⁹⁵ Տե՛ս Հայաստանի Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքը, 12.01.2010 թ. ՄԳՈ–850. <http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-850.pdf>.

²⁹⁶ Թուրքիայի ԱԳՆ–ի պաշտոնական կայքը, No: 14, 18 Ocak, 2010, Ermenistan Anayasa Mahkemesi' nin Türkiye–Ermenistan Protokollerine İlişkin Gerekçeli Kararı Hk.,

Իր հերթին, ԱՄՆ–ի պետքարտուղարի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով տեղակալ Ֆիլիպ Գորդոնը թուրք պաշտոնյաների հետ հանդիպումներում նշում էր, որ «Սահմանադրական դատարանի որոշումը դրական առաջքայլ է՝ հայ–թուրքական արձանագրությունները նախատեսված ժամկետներում վավերացնելու համար»²⁹⁷:

Ինչպես իրավացիորեն նշում էր «Կալիֆորնիա կուրիեր» թերթի իրատարակիչ և խմբագիր Հարութ Սատուկյանը, «Հայաստանը և գերտերությունները մերժեցին թուրքական պահանջները, որ Հայաստանի Սահմանադրական դատարանը «ուղղի» 2010 թվականի հունվարի 12–ի իր որոշումը, որը սահմանափակում էր Թուրքիայի՝ Արձանագրությունների ուժնացված մեկնաբանությունները: Դատարանը համառորեն պնդեց, որ Ցեղասպանության ճանաչմանը հետամուտ լինելը չի կարող դադարեցվել, իսկ Արցախի կարգավիճակի վերաբերյալ Թուրքիայի հետ բանակցություններ չեն կարող վարվել՝ Արձանագրությունների երկկողմանի բնույթի պատճառով: Բացի դրանից, թուրք ղեկավարները ոչ մի փաստարկ չունեն բողոքելու Հայաստանի Դատարանի՝ Հայոց Ցեղասպանության ճանաչմանը հետամուտ լինելու Սահմանադրության նախաբանին հղում կատարելու դեմ: Այս նախաբանը հիմնված է Հայաստանի Անկախության մասին հռչակագրի 11–րդ դրույթի վրա, որը գոյություն ուներ 1990 թվականից ի վեր, Թուրքիայի կողմից Հայաստանի հետ սահմանն առաջին անգամ բացելուց շատ առաջ: Անկասկած, թուրք ղեկավարները քաջատեղյակ էին այս դրույթի գոյությանը՝ մինչև 2009 թվականին Արձանագրությունները ստորագրելը»²⁹⁸:

Կարգավորման գործընթացը հնարավորինս արագացնելու նպատակով շարունակվում էր միջազգային ճնշումը երկու կողմերի՝ հատկապես Թուրքիայի վրա: ԱՄՆ–ը դիմեց ճնշում գործադրելու իր ավանդական զենքին՝ Կոնգրեսում շրջանառության մեջ դրվեցին Հայոց Ցեղասպանությունը դատապարտող երկու բանաձևեր (թիվ 252 և 306)²⁹⁹:

http://www.mfa.gov.tr/no_-14_-18-ocak-2010_-ermenistan-anayasa-mahkemesi_nin-turkiye-ermenistan-protokollerine-iliskin-gerekceli-karari-hk_.tr.mfa

²⁹⁷ David L. Phillips, *Diplomatic history: The Turkey–Armenia Protocols*, March 2012, Columbia University, NY, p. 69.

²⁹⁸ Հ. Սատուկյան, Տասը պատճառներ, թե ինչու թուրքերն իրենց ղեկավարներին թույլ չեն տա վավերացնել արձանագրությունները, <http://www.noravank.am/arm/index.php>

²⁹⁹ Frank Lin, *Obama, Romney, and the Future of Turkey–United States Relations*, Global Political Trends Center, GPoT, №34, October 2012, p. 3.

Թուրքական մամուլը գրում էր, որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հայ-թուրքական արձանագրությունների վավերացման առումով Էրդողանի համար որպես վերջնաժամկետ է սահմանել 2010 թվականի ապրիլի 24-ը: Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն արդեն հանդես էր եկել հայտարարությամբ, որ «հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացն արդեն մեկնարկել է Եվեյցարիայում, շարունակվում է մինչ օրս... Բայց եթե մարտի 4-ին կամ ապրիլի 24-ին սխալ քայլեր արվեն, գործընթացը կդադարեցվի: Հուսով եմ, որ կոնգրեսականները որոշում ընդունելիս հաշվի կառնեն այդ նրբերանգր»³⁰⁰:

Թուրքիայի խորհրդարանն էլ իր հերթին նամակով դիմել էր ԱՄՆ Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովին, որում փորձում էր համոզել ամերիկացի գործընկերներին, թե այդ բանաձևի ընդունումը կվնասի թուրք-ամերիկյան և հայ-թուրքական հարաբերություններին: Թուրքիայի դիվանագիտության ջանքերը, որ ուղղված են ԱՄՆ Կոնգրեսի կողմից Թուրքիայում Հայոց Ցեղասպանության բանաձևի ընդունումը կանխելուն, արդեն վաղուց ավանդույթ են դարձել: Ուշագրավ է, որ ԱՄՆ արդարադատության նախարարության տվյալներով՝ 2008 թվականին Թուրքիան, մյուս երկրների համեմատ, ամենաշատն է ԱՄՆ Կոնգրեսում լոբբինգի ենթարկել իր շահերը (2268 անգամ): Միևնույն ժամանակ, այդ գործունեության վրա ծախսած գումարի չափով օտար երկրների շարքում Թուրքիան զբաղեցրել է 4-րդ տեղը (4,2 միլիոն դոլար)՝ այդ ցուցանիշով զիջելով միայն ԱՄԷ-ին (11 միլիոն դոլար), Մեծ Բրիտանիային (6 միլիոն դոլար) ու Ճապոնիային (4,22 միլիոն դոլար): Թուրքական լոբբինգի գործունեության ակտիվության գագաթնակետը գրանցվել է 2007 թվականի վերջին, երբ Կոնգրեսը քննարկում էր Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության ճանաչման փաստը: Այդ ժամանակ թուրքական լոբբիի ներկայացուցիչները մեկ ամսվա ընթացքում 673 հանդիպում են ունեցել ամերիկյան կոնգրեսականների ու հրեական լոբբիի ներկայացուցիչների հետ³⁰¹: Հաշվի առնելով ստեղծված պայմանները և ապրիլի 24-ի մոտ լինելը, Թուրքիան սկսեց ջանքեր գործադրել՝ դուրս գալու իրավիճակից: Այս նպատակով ապրիլի 7-ին Երևան ժամանեց Թուրքիայի վարչապետ Էրդողանի հատուկ բանագնացը՝ Թուրքիայի փոխարտգործնախարար Ֆ. Մինիրլիօղլուն, ով նախագահ

³⁰⁰ http://www.armenianow.com/hy/commentary/analysis/21417/armenian_genocide_us_resolution

³⁰¹ Հ. Գաբրիելյան, Թուրքական սփյուռքի կազմակերպման պետական նոր ծրագիր, <http://www.noravank.am/arm/articles/index.php>

Ս. Սարգսյանին փոխանցեց Թուրքիայի վարչապետի նամակը: Դրանով վերջինս Վաշինգտոնում կայանալիք Միջուկային անվտանգության գագաթանժողովի շրջանակներում հանդիպում էր խնդրում ՀՀ նախագահից: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այդ հանդիպումն արդունավետ չեղավ բանակցություններում առկա խոչընդոտների հաղթահարման համար: Ստեղծված իրավիճակը հանգուցալուծում ստացավ ապրիլի 24-ի նախօրյակին: Ապրիլի 22-ին, նկատի ունենալով թուրքական կողմի հրաժարումն առանց նախապայմանների խելամիտ ժամկետներում արձանագրությունները վավերացնելու պարտավորություններից՝ կռալիցիոն մեծամասնությունը իմաստագրված համարեց այս փուլում դրանց վավերացման գործընթացի հետագա շարունակումը Հայաստանի Խորհրդարանում, անհրաժեշտ համարեց առկախել այդ գործընթացը՝ հանելով դրանք քառօրյա նիստերի օրակարգից, մինչև որ թուրքական կողմը պատրաստ կլինի առանց նախապայմանների գործընթացը շարունակելու³⁰²: Նույն օրը հրապարակվեց նախագահ Ս. Սարգսյանի ուղերձը, որով հայտարարվում էր ՀՀ կողմից արձանագրությունների վավերացման ընթացքի կասեցման մասին³⁰³: Այդ մասին ծանուցումն ուղարկվում է Թուրքիայի Հանրապետություն: Այսպիսով՝ ավարտվում է մոտ երկու տարի առաջ սկսված դիվանագիտական հարաբերությունների վերականգնման փորձի ևս մեկ փուլ:

Հայաստան-Թուրքիա երկխոսության տարբեր փուլերում ի հայտ եկան «կողմնակի» կամ «աժանցյալ» գործընթացներ և գործոններ, որոնք որոշակի ազդեցություն ունեցան կողմերի դիրքորոշումների և բանակցությունների արդյունքների վրա: Դրանց թվում կարևորագույններից մեկը Ադրբեջանի գործոնն է³⁰⁴: Հարկ է նշել, որ ադրբեջանական գործոնը թուրքական հասարակական կարծիքի վրա և հատկապես թուրքական վերնախավերի հայացքների ու տեսակետների ձևավորման գործում շատ մեծ է եղել: Դա պայմա-

³⁰² Կռալիցիայի հայտարարությունը արձանագրությունների վերաբերյալ, 22.04.2010, <http://www.aysor.am/am/news/2010/04/22/NA-protocols/>

³⁰³ Նախագահ Սերժ Սարգսյանի հեռուստաուղերձը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ, 22.04.2010, <http://president.am/events/statements/arm/?year=2010&pn=3&id=60>

³⁰⁴ Այս թեմայով առավել մանրամասն տե՛ս Ա. Հովհաննիսյան, Ադրբեջանի գործոնը Թուրքիայի «հայկական նախաձեռնության» ձախողման համատեքստում (2008–2010 թթ.), Ժամանակակից Եվրասիա (Թուրքիա. Արտաքին քաղաքականության հարցեր), հատոր V(2), Երևան, 2016, էջ 40–62:

նավորված է ոչ միայն Թուրքիայի՝ էներգակիրների հարցում Ադրբեջանից մեծապես կախված լինելու հանգամանքով կամ Ադրբեջանի՝ Թուրքիայի տնտեսության մեջ աճող ներդրումների պատճառով, ինչպես նաև երկու երկրների բիզնես-էլիտաների ստվերային կոռուպցիոն շահերի միահյուսվածությամբ: Բանն այն է, որ Ադրբեջանի անկախացումից հետո նրա և Թուրքիայի Հանրապետության բազմաբնույթ և բազմաշերտ հարաբերությունները նպաստեցին նրան, որ ահռելի թվով Ադրբեջանի քաղաքացիներ տեղափոխվեցին ժամանակավոր, իսկ ավելի ուշ նաև մշտական բնակության Թուրքիա: Այս մարդիկ, կապ պաշտպանելով Ադրբեջանի իրենց հարազատաների ու բարեկամների հետ, սկսեցին միահյուսվել թուրքական հասարակությանը՝ աստճանաբար դառնալով նրա մի մասը: Նրանք հանդիսացել և հանդիսանում են կարևոր գործոն Թուրքիայում ադրբեջանական իշխանությունների կողմից հակահայկական կրքերի բորբոքման համար: Նրանց գործնական ազդեցությունը թուրքական հասարակական կարծիքի վրա անընդհատ մեծացել է և հիմք է դարձել, որպեսզի թուրքական քաղաքական վերնախավերը հաշվի առնեն իրենց քաղաքացի կամ մշտական բնակիչ դարձած ադրբեջանցիների տրամադրությունների ճնշումը³⁰⁵:

ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո, մինչև 2008 թ. Թուրքիայի բոլոր համապատասխան ծրագրերի կենտրոնում թուրք-ադրբեջանական կապերն էին և այդ առումով Թուրքիայի քաղաքականությունը Ադրբեջանի նկատմամբ առանձնահատուկ փոփոխություն չկրեց³⁰⁶:

Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում կյանքի կոչվեցին ռազմավարական նշանակության նախագծեր (Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղ, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղ, 2007 թ. սկսված Բաքու-Թբիլիսի-Ախալքալաք երկաթգծի շինարարություն), որոնց նշանակությունը դրսևորվեց 2008-2010 թթ. երկկողմ հարաբերությունների ճգնաժամի ընթացքում: Նկատենք, որ բոլոր նախագծերում ներգրավված է նաև Վրաստանը: Արձանագրությունների ստորագրումն Ադրբեջանում ընդունվեց որ-

³⁰⁵ Mehmet Dikkaya & Jason E. Strakes, A paradigm shift in Turkish-Azerbaijani relations? Result for Turkish-Armenian reconciliation process between 2008 and 2010, in Review of Socio-Economic Perspectives, Vol. 2, № 1, June 2017, p. 84-102.

³⁰⁶ Թուրքիայի՝ Ադրբեջանի նկատմամբ քաղաքականության վերաբերյալ տե՛ս Գ. Արշակյան, Ա. Եղիազարյան, Թուրքիայի քաղաքականության առաջնահերթություններն Անդրկովկասում 2008-2011 թթ. և թուրք-ադրբեջանական հարաբերությունները, «21-րդ դար», թիվ 1(47), 2013, էջ 57-77:

պես մարտահրավեր³⁰⁷, առաջ բերելով երկրների միջև երբևէ տեղ գտած թերևս ամենալուրջ ճգնաժամը, որը ստացավ «դրոշների պատերազմ» անվանումը³⁰⁸:

Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամի (TESEV–Turkish Economic and Social Studies Foundation) փորձագետ Ալթարս Գյորգյուլուն Ադրբեջանի քայերը բնութագրում է որպես «շոու»: «Հետքի» հարցին, թե ինչու արձանագրությունները ստորագրելուց հետո Թուրքիան նախապայմաններ առաջ քաշեց, Ա. Գյորգյուլուն ասաց. «Այնքան ամեն քայի մասին տեղեկացվում էր Անկարայի կողմից, սակայն որևէ կարծիք չէր հայտնում հայ-թուրքական մերձեցման մասին, իսկ արձանագրությունների ստորագրությունից հետո ասաց, թե թուրքերը դավաճանել են իրենց: Ադրբեջանի խորհրդարանականներն էլ եկան Թուրքիա ու շոու սարքեցին»³⁰⁹:

³⁰⁷ «Нормализация как вызов», см. О. Абдуллаев, Азербайджан–2009: основные тенденции общественно-политического и социально-экономического развития, КАВКАЗ–2009. Ежегодник Института Кавказа, ред. А. Искандарян, Ереван, Институт Кавказа, 2011, с. 20–24.

³⁰⁸ Elif Kanca, The «Single Nation, Two States» Idea: Turkey–Azerbaijan Relations in the Post–Soviet Period, in History Lessons of the 20th Century: «Our Neighbours» and «Us» (Turkey and the South Caucasus), Tbilisi, 2011, p. 166–168. Յուրիկայան հանդիպումից մի քանի օր հետո՝ հոկտեմբերի 14–ին, Բուրսայում տեղի ունեցավ Թուրքիա–Հայաստան ֆուտբոլային հանդիպումը, որին ներկա էին նաև ՀՀ և Թուրքիայի նախագահներ Սարգսյանը և Գյուլը: Համաձայն ՖԻՖԱ–ի կայացրած որոշման՝ արգելվում էր մարզադաշտ բերել ադրբեջանական դրոշներ: Շուտով ադրբեջանական էլեկտրոնային պարբերականներով տարածվեց տեսանյութ, որտեղ երևում էր, թե ինչպես են թուրք ոստիկանները ադրբեջանական դրոշները նետում աղբամանը: Որպես պատասխան՝ հաջորդ օրը Բաքվում Շեհիդների ծառուղում գտնվող թուրք զոհվածներին նվիրված հուշարձանի մոտից հանվեցին թուրքական դրոշները, նույն բանը կատարվեց նաև Թուրքիայի հոգևոր գործերով կցորդության շենքի մոտ: Պաշտոնապես դա մեկնաբանվում էր Ադրբեջանի օրենսդրության այն կետով, թե Ադրբեջանում օտարերկրյա դրոշներն իրավունք ունեն բարձրացվելու միայն տվյալ երկրների դեսպանատներում: Այս ամենից հետո կողմերը մտան դիվանագիտական նախագոչաջցումների և բանակցությունների մի փուլ, որը տևեց մինչև հոկտեմբերի 29–ը, երբ մի շարք երկկողմ հանդիպումներից և պայմանավորվածություններից հետո կեսգիշերին թուրքական և ադրբեջանական դրոշները կրկին հայտնվեցին իրենց նախկին տեղերում:

³⁰⁹ «Երբ Էրդոդանը զգաց, որ իրեն բացառել են գործընթացից, փորձեց տապալել այն», <http://hetq.am/arm/news/765/erb-erdoxany-zgac-or-iren-bacarel-en-gortsyntacic-pordzec-tapalel-ayn.html>

Թուրքիայի վրա ճնշում գործադրելու նպատակով Ադրբեջանն ակնհայտորեն սկսեց շահարկել Ռուսաստանի հետ էներգետիկ մերձեցումը՝ ցուցադրելով, թե կարող է տապալել NABUCCO ծրագիրը, որի իրագործման հետ թե՛ Թուրքիան, թե՛ Արևմուտքը մեծ հույսեր են կապում: Հիշենք, որ երբ հոկտեմբերի 14-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը գտնվում էր Բուրսայում, Ալիևը ստորագրում էր ձգձգված համաձայնագիրը՝ ադրբեջանական գազը Ռուսաստանին վաճառելու վերաբերյալ: Բաքուն նաև «հիշեցրեց» Անկարային, որ Թուրքիան չափազանց էժան է գնում ադրբեջանական գազը, և Բաքուն կարող է վերանայել այդ գինը³¹⁰: Պաշտոնական Անկարան, իր հերթին, ի պատասխան Ադրբեջանի «էներգետիկ հավակնությունների», փորձում էր խաղարկել Իրանի հետ ձեռքբերած համաձայնությունը՝ «Հարավային Պարս» նախագծի վերաբերյալ³¹¹:

2008–2010 թթ. հայ–թուրքական կարգավորման գործընթացը առաջին լուրջ փորձությունը դարձավ Թուրքիայի՝ Ադրբեջանի հետ հարաբերություններում: Ադրբեջանցի վերլուծաբան Էլդար Մամեդովի խոսքերով «հայկական նախաձեռնությունից» հետո Թուրքիայի ու Ադրբեջանի միջև ավարտվեց «մեկ ազգ՝ երկու պետության ռոմանտիկ ժամանակաշրջանը»³¹²: Թուրքիայի «հայկական նախաձեռնությունն» ի ցույց դրեց Թուրքիայի ադրբեջանական քաղաքականության թույլ կողմերը, մասնավորապես այն, որ ընդհանուր էներգակիրների նախագծերից բացի չկային այլ՝ երկկողմ հարաբերությունների խորացմանը նպատակամղված նախագծեր: Հետագայում կողմերը ձեռնամուխ եղան այն լրացնելուն: 2010 թ. օգոստոսի 16-ին Բաքվում ստորագրված Ռազմավարական համագործակցության մասին պայմանագիրը նախատեսում էր, որ կողմերը բոլոր հնարավոր միջոցներով օգնելու են միմյանց հարձակման ենթարկվելու դեպքում, ինչպես նաև համագործակցելու են ռազմական ու ռազմատեխնիկական բնագավառում³¹³: Այդ պայմանագիրը նոր մակարդակի էր բարձրացնում Ադրբեջանի հետ Թուրքի-

³¹⁰ С. Манукян, Экономические и энерготранзитные проблемы Азербайджана с соседними странами, Регион и мир, Институт политических исследований, 2010, (1), с. 82.

³¹¹ Հարցազրույց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող, թուրքագետ Անուշ Հովհաննիսյանի հետ, <http://www.aysor.am/am/news/2009/11/23/anush-hovhannisyanyan/>

³¹² Eldar Mamedov, Turkish–Azerbaijani relations: reality check, 01.03.2011, <http://eurodialogue.org/Turkish-Azerbaijani-relations-reality-check>.

³¹³ Обнародован текст военного соглашения между Азербайджаном и Турцией, 21.12.2010, <http://regnum.su/news/1359151.html>

այի հարաբերությունները: Մյուս կողմից՝ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևի օգոստոսի 20-ին Երևան կատարած այցի ընթացքում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ ստորագրվեց Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսական ռազմակայանի մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու արձանագրությունը, որով երկարաձգվում էր ռուսական ռազմաբազայի տեղակայման ժամկետը ՀՀ-ում³¹⁴: 2010 թ. սեպտեմբերի 16-ին Բաքվում Ռեջեփ Թայիփ Էրդոհանի ու Իլհամ Ալիևի կողմից ստորագրվեց նաև Թուրքիայի ու Ադրբեջանի միջև Բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհորդ ստեղծելու մասին պայմանագիրը³¹⁵: Խորհրդի առաջին նիստը, որը տեղի ունեցավ Իզմիրում 2011 թ. հոկտեմբերին և որի ընթացքում ստորագրված երկու փաստաթղթով որոշվեցին 2017–2042 թթ. Շահ Դենիզ–2 հանքից Թուրքիա գազի ներմուծման և Թուրքիայի տարածքով գազի տարանցման պայմանները՝ նշանավորեց Թուրքիայի և Ադրբեջանի միջև գազի շուրջ տեղի ունեցած անհամաձայնության ավարտը:

Այսպիսով, հայ-թուրքական գործընթացի համատեքստում Թուրքիայի և Ադրբեջանի միջև քաղաքական զարգացումները երևան բերեցին մի շարք էական հակասություններ և տարակարծություններ և նշանավորեցին վերջինիս վերածվելը «արբանյակ» պետությունից ավելի կարևոր դերակատարի, որը լուրջ լծակներ ունի Թուրքիայի վրա: Իր հերթին Թուրքիան, ինչպես գտնում են որոշ փորձագետներ, կարող է օգտագործել Հայաստանի հետ սահմանների բացման սպառնալիքը որպես Ադրբեջանի վրա ճնշում բանեցնելու տարր՝ կասպյան գազը Թուրքիայի համար շահավետ պայմաններով փոխադրելու հարցում³¹⁶:

Թուրք վերլուծաբան Դիրա Նիզյար Գյոքսելը նկատում է, որ Անկարան հաշվարկում է, որ Հայաստանի հետ սահմաններ բացելը հակասում է իր տարածաշրջանային գեոստրատեգիական և տնտեսական շահերին: Այս առումով, 2009–ից ի վեր Անկարայի մոտեցումը չի փոփոխվել: Ընդ որում, Անկարան տարեցտարի Բաքվի հետ հարաբերությունները չփչացնելու է՛լ ավելի շատ պատճառներ ունի: Տրանսսևաստոլիական գազատարը (TANAP),

³¹⁴ Россия и Армения подписали договор о продлении срока аренды военной базы, 22.08.2010, <http://russian.eurasianet.org/node/31248>.

³¹⁵ Turkey, Azerbaijan establish Strategic Cooperation Council, 16.09.2010, <http://www.worldbulletin.net/?aType=haber&ArticleID=63950>.

³¹⁶ С. Минасян, Турецкий вектор внешней и внутренней политики Армении, http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=1984

Թուրքիայի տարբեր սեկտորներում ադրբեջանական ներդրումները, ինչպես նաև ընտրություններին Ադրբեջանի հետ համերաշխությունը կարևորող ազգայնական ընտրագանգվածի աճող նշանակությունը ավելի քան երբևէ մեծացնում են Բաքվի ազդեցությունն Անկարայի վրա³¹⁷:

ԻՆՉՈՐ՝ ՏԱՊԱԼՎԵՑԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
ԹՈՒՐԹԻԱՅԻ ՆՈՐ ԱՐՏԱԹԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՍՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝
ՀԱՅ-ԹՈՒՐԹԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԱՏԵԶՍՈՒՄ

2010 թ. դեկտեմբերի 25-ին Թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն CNN Türk-ին տված հարցազրույցի ժամանակ, ամփոփելով անցնող տարվա արտաքին քաղաքականության արդյունքները, ավստսանք հայտնեց առ այն, որ հայ-թուրքական արձանագրություններն այդպես էլ չվավերացվեցին³¹⁸: Նա անդրադարձ էր կատարել նաև Հայոց Ցեղասպանությանն³¹⁹ ու Հայկական սփյուռքին, ասելով, որ Թուրքիան ցանկանում է կարգավորել իր հարաբերությունները ոչ միայն Հայաստանի, այլև Հայկական սփյուռքի հետ: Թուրքիան ցանկանում է երկխոսության մեջ մտնել Հայկական սփյուռքի հետ, սակայն դա չպետք է միակողմանի քայլ լինի: Եթե մենք դա չանենք, ապա ստատուս-քվոն կպահպանվի, և հայ-թուրքական հարաբերությունները կշարունակեն մնալ չկարգավորված, նշել էր նա: Դեռևս 2010 թ. նոյեմբերի վերջին Վաշինգտոնում Դավութօղլուն հայտարարել էր, որ եթե նախկինում 20-րդ դարասկզբի իրադարձությունները հերքվել են, ապա այժմ իրենք չեն հերքում, որ Թուրքիայում հայերի հետ աղետալի իրադարձություններ են տեղի ունեցել: «1915 թ. կարևոր տարեթիվ է հայերի համար, սակայն պետք է հիշել, որ այդ նույն տարվա ընթացքում շուրջ 250000 թուրք է զոհվել ռազմաճակատներից միայն մեկում (Դարդանեղում), այդ թվում նաև իմ պապը», — ասել էր նա³²⁰: Այսպիսով, չփոխելով Ցեղասպա-

³¹⁷ Դ. Ն. Գյոքսել, Հայացք Թուրքիայից. Հայաստանի ու Թուրքիայի հարաբերությունները բնորոշվում են ներքին քաղաքականություններով, <https://repairfuture.net/index.php/hy/genocide-standpoint-of-turkey-ar/domestic-policies-of-armenia-and-turkey-state-the-agenda-of-relations-armenian>

³¹⁸ И. А. Свистунова, Обсуждение итогов внешней политики Турции в 2010 году, http://www.iimes.ru/rus/frame_stat.html

³¹⁹ Ахмед Давутоглу признал трагедию армян, <http://www.analitika.at.ua/news/>

³²⁰ Глава МИД Турции о Геноциде армян, своем дедушке и Карабахе, http://www.arm-today.info/default.asp?Lang=_Ru Առավել հանգամանալից Ա. Դավութօղլուի մո-

նության ժխտման քաղաքականությունը՝ թուրքերը մշակել են նոր մարտավարություն: Դա լողված, աղավաղված, Յեղասպանության բերած հետևանքները մերժող քաղաքականություն է: Թուրքական իշխանությունները ցանկություն ունեն կշեռքի նույն նժարի վրա դնելով հայերի ու թուրքերի տառապանքները՝ խնդիրը տեղափոխել զուտ երկկողմ հարաբերությունների ոլորտ³²¹: Այն, որ հենց դա է եղել Թուրքիայի «հայկական նախաձեռնության» հիմնական նպատակներից մեկը խոստովանում է նաև թուրք վերլուծաբան Նիգյար Գյոքսելը, համեմատելով Թուրքիայի՝ հայ-թուրքական հարաբերությունների բոլոր բարդ խնդիրները «մեկ զամբյուղի մեջ» տեղադրելով մեկընդմիջտ լուծելու ցանկությունը «մոլախաղության» հետ³²²: Կասկածի տակ չդնելով իր երկրի իշխանությունների «անկեղծ» ցանկությունը՝ կարգավորել երկկողմ հարաբերությունները Հայաստանի հետ, Յյուրիխյան արձանագրությունների ձախողումը նա բացատրում է Թուրքիայի ակնկալիքների չափազանցությամբ և հաշվարկների թերիությանը: Նա նշում է, որ գերագնահատվել էր Հայաստանի նախագահի՝ Սփյուռքի վրա ազդելու հնարավորությունը և բաց սահմանի դիմաց Ղարաբաղյան հարցում զիջումների գնալու պատրաստակամությունը, ինչպես նաև թերագնահատվել էր Ադրբեջանի հակազդեցությունը գործընթացին³²³: Արձանագրությունների հաջողության չափանիշը պետք էր պայմանավորել արդյունքով՝ բաց սահմաններ և դիվանագիտական հարաբերություններ, մինչդեռ հայ վերլուծաբանների մեծամասնության կարծիքով թուրքական կողմի համար կարևորն ինքնին գործընթացն էր: Իհարկե, հնարավոր չէ վստահորեն պնդել, թե Թուրքիան ի սկզբանե չէր էլ հետապնդում արդյունքի հասնելու նպատակ, սակայն հաշվի առնելով այն փաստը, որ արձանագրությունների՝ խորհրդարանում վավերացնելու պահանջը հենց թուրքական կողմի նախաձեռնությունն էր, կարելի է ենթադրել, որ Անկարան սկզբից և եթ իր համար գործընթացից հետքայլ կատարելու հնարավորություն էր նախատեսել:

տեղումներն այս հարցում արտահայտված են նրա հետևյալ հոդվածում՝ Ahmet Davutoğlu, “Turkish–Armenian Relations: Is a “Just Memory” Possible?,” *Turkish Policy Quarterly*, Vol. 13, № 1 (Spring 2014), <http://www.turkishpolicy.com/article/972/turkisharmenian-relations-is-a-just-memory-possible-spring-2014>

³²¹ Anush Hovhannisyán, Turkey is implementing a «blurred» policy, <http://www.armradio.am/news/?part=int>

³²² Diba Nigar Göksel, *The Rubik’s Cube of Turkey–Armenia Relations...*, էջ 202:

³²³ Նույն տեղում:

Քարնեզի հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ Թոմաս դե Վաալը նույնպես կասկածի տակ չի դնում Անկարայի մղումների «անկեղծությունը»³²⁴: Արձանագրությունների անհաջողության պատճառներից մեկը նա համարում է թուրքական էլիտայի ներքին անհամաձայնությունը՝ գործընթացի կարևորության վերաբերյալ: Նախագահ Աբդուլլահ Գյուլը, ըստ դե Վաալի, դիտարկում էր հաշտեցման գործընթացը որպես իր անձնական նախաձեռնություն, մինչդեռ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը վերապահումով ու կասկածանքով էր մոտենում դրան³²⁵:

Հարկ է նշել, որ Թուրքիայում արտաքին քաղաքականության որոշումների կայացման գործընթացը ուղղակիորեն առնչվում է անհատականությունների հետ և այդ գործոնը առաջնային նշանակություն է ձեռք բերում հատկապես ԱԶԿ-ի համատեքստում: Նախկինում վարչապետ, ներկայումս նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը չունի արտերկրում ապրելու և օտար լեզուներով հաղորդակցվելու փորձ, ինչպես նաև արտաքին քաղաքականության և միջազգային հարաբերությունների վերաբերյալ հիմնավոր գիտելիքներ: Էրդողանի՝ արտաքին քաղաքական հարցերով խորհրդական Իբրահիմ Քալընը հետևյալ բնութագրումն է տալիս վարչապետին. «Էրդողանը ոչ թե դիվանագետ է, այլ քաղաքական գործիչ... նրա քաղաքականությունը կարելի է վերլուծել սուբյեկտիվ միտումներից ելնելով»³²⁶: Այն փաստին, որ Էրդողանը դիտարկում է միջպետական հարաբերությունները անձնականի պրիզմայով և որ այդ հանգամանքը որոշակի ազդեցություն է ունեցել հայ-թուրքական գործընթացում, անդրադարձել են շատ վերլուծաբաններ: Մասնավորապես, «Ֆուլթոնային դիվանագիտության» ձախողման մասին Ստամբուլի մշակույթի համալսարանի GPOT կենտրոնի (Global Political Trends Center-Գլոբալ քաղաքական միտումների կենտրոն) տնօրեն Մենսուր Ակգյունն ասում է. «Դա երկու նախագահների շոու արշավ էր: Մենք չունենք այնպիսի նախագահական համակարգ, ինչպես Հայաստանը: Վարչապետի ազդեցությունն այստեղ շատ մեծ է: Երբ Էրդողանը զգաց, որ իրեն բացառել են գործընթացից, փորձեց տապալել այն: Հարյուր տոկոսով համոզված չեմ, բայց կարծում եմ, որ եթե արտգործնախարարների փոխարեն վարչապետները ստորագրեին արձանագրությունները, խնդիրներն ավելի քիչ կլինեին: Նրանք բացառեցին վարչապետին ու մտածեցին, որ նա կողմ է գոր-

³²⁴ Thomas de Waal, Turkey is Sincere About Normalization with Armenia, <http://carnegie.ru/publications/?fa=41801>

³²⁵ Նույն տեղում:

³²⁶ Ibrahim Kalin, The Complexities of the new Turkey, Today's Zaman, 23.07.2010.

ծընթացին, սակայն ներքին և արտաքին ճնշումների տակ Էրդողանը փոխեց միտքը»³²⁷։ Թուրքիայի Լիբերալ-դեմոկրատական կուսակցության նախագահ Ջեմ Թոքերը «Առավոտ»-ին տված հարցազրույցում նկատել էր. «Իհարկե, կա տարբերություն Գյուլի և Էրդողանի ինքնության, նրանց անձնական մոտեցումների, քաղաքական ազդեցության միջև։ Կարծում եմ, նախագահի և վարչապետի լավ հարաբերությունները վերջացան, և Գյուլը նշեց, որ ինքն ուզում է նախագահը լինել, ու Էրդողանը պիտի հետ գնար և մեկ ուրիշ թեկնածուի գտներ։ Այո, Գյուլն ունի իր անձնական աշխատակազմը արտաքին քաղաքականության մեջ, Էրդողանը՝ իրենը։ ԱԳ նախարարն ակնհայտորեն վարչապետի մարդն է, Գյուլն իր մարդն ունի, բայց քիչ ազդեցություն՝ արտաքին գործերի քաղաքականության վրա։ Նախորդ բանակցողը (Ալի Բաբաջանը — Ա. Հ.) ավելի շատ Գյուլին մոտ մարդ էր, այդ պատճառով էլ նրան հանեցին ԱԳ նախարարի պաշտոնից և տարան տնտեսության բնագավառ»³²⁸։

Գյուլ-Էրդողան անհատների բնութագրման տեսանկյունից առավել հիշարժան են ԱՄՆ-ի Կոլումբիայի համալսարանի մարդու իրավունքների պաշտպանության հարցերով հաստատության Խաղաղության կառուցման ու մարդու իրավունքների պաշտպանության բաժնի տնօրեն Դեյվիդ Ֆիլիպսի դիտարկումները։ 2012 թ. մարտ ամսին հրատարակված «Դիվանագիտական պատմություն. Հայ-թուրքական արձանագրությունները» վերաբերությամբ իր ծավալուն հետազոտության մեջ նա գրում է. «երկու քաղաքական գործիչներն էլ սերում են իսլամական «Բարօրություն» կուսակցությունից և չնայած նրանք արտաքուստ համերաշխ են իրենց քայլերում, ակնհայտ է այդ անհատականությունների տարբերությունը և նրանց միջև առկա տարաձայնությունը մի շարք հարցերում։ Նույնիսկ նրանց կանայք երբեք չեն շփվում իրար հետ։ Գյուլը հանգիստ վարքագծով և ինքնատիրապետման պաշարով օժտված քաղաքական գործիչ է։ Մինչդեռ Էրդողանը որպես քաղաքական գործիչ ձևավորվել է փողոցային ընդհարումների բիրտ մթնոլորտում, հավակնոտ է ու անզուսպ։ Եթե հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը Գյուլի տեսլականն էր, որի համար նա նույնիսկ

³²⁷ «Երբ Էրդողանը զգաց, որ իրեն բացառել են գործընթացից, փորձեց տապալել այն», <http://hetq.am/arm/news/765/erb-erodoxany-zgac-or-iren-bacarel-en-gortsynt-acic-pordzec-tapalel-ayn.html>

³²⁸ «Թուրքիան վարում է նարդու քաղաքականություն», http://araxmag.blogspot.com/2009/09/blog-post_7796.html

հավակնում էր Նոբելյան մրցանակ ստանալ³²⁹, ապա Էրդոդանն առավել կենտրոնացած էր ներքին խնդիրների և սեփական ծրագրերի վրա՝ իր հեղինակած «քրդական նախաձեռնության», 2009 թ. ՏԻՄ ընտրությունների, 2010 թ. Սահմանադրական հանրաքվեի, ինչպես նաև գալիք 2011 թ. խորհրդարանական ընտրությունների»³³⁰:

Իսկապես Էրդոդանի համար կարևոր էր բոլոր ընտրություններում ապահովել ԱԶԿ-ի մեծամասնությունը, ամրապնդել կուսակցության դիրքերը, ինչը նրան հնարավորություն կտար երրորդ ժամկետով վարչապետ վերընտրվել: Թուրքիայում ազգայնականության բաղադրիչը բավականին մեծ է: *Hürriyet Daily News*-ի տեղեկացմամբ, ըստ վերջին սոցիոլոգիական հարցումների, Թուրքիայի բնակչության շուրջ 70 տոկոսը խիստ բացասաբար է վերաբերվում հայերին: Անտեսել կամ շրջանցել ազգայնական ընտրագանգվածի շահերը անիրատեսական է ցանկացած քաղաքական ուժի համար, որը ցանկանում է ծանրակշիռ ներկայություն ունենալ Թուրքիայի քաղաքական համակարգում: Հաշվի առնելով նախընտրական թեժ պայքարի տրամաբանությունը, միանգամայն կանխատեսելի էր, որ ընդդիմությունը «Ցյուրիխյան արձանագրությունների խաղաքարտը» կփորձի օգտագործել՝ իշխող կուսակցությանը քննադատելու համար: Ներքին լսարանը գրավելու համար առավել արդյունավետ կարող էին լինել ազգայնական, հակահայկական կարգախոսները: Այս տրամաբանության մեջ կարելի է տեղավորել նախընտրական շրջանում (2011 թ. խորհրդարանական ընտրություններ — Ա. Հ.) Էրդոդանի հակահայկական քայլերը՝ Կարսում գտնվող հայտնի արձանի ապամոնտաժումը, սուր հայտարարությունները հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ, «Թուրքիայում անօրինական եղանակով ապրող հայերի» մասին, ինչպես նաև մասնավորապես ադրբեջանաբնակ վայրերում հնչեցված հակահայկական հայտարարությունները³³¹: Որոշ վերլուծաբաններ իրավացիորեն արձանագրում են, որ թուրքական քաղաքա-

³²⁹ 2010 թ. բրիտանական Chatham House-ը մրցանակ շնորհեց Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին և դեռ այդ քայլը հիմնավորեց մի ձևակերպմամբ, համաձայն որի մրցանակակիրը պարզևը ստանում էր Կիպրական հարցում, ինչպես նաև հայ-թուրքական գործընթացում կառուցողական մոտեցում ցուցաբերելու համար, տե՛ս <http://www.chathamhouse.org/events/chatham-house-prize/2010>

³³⁰ David L. Phillips, նշվ. աշխ., էջ 51:

³³¹ Ա. Հովհաննիսյան, «Հայկական գործոնի» շահարկումը Թուրքիայի 2011 թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում, Ժամանակակից Եվրասիա (Թուրքիա, Իրան), հատոր I, Երևան, 2012, էջ 40–54:

կան էլիտայի կարծիքով Հայաստանի և Կիպրոսի հետ պայմանավորվածությունների հասնելը ներքին գրավության սահմանափակումներ ունեցող նպատակներ են և պրագմատիկ առումով դրանք կարող են անարդյունավետ լինել ԱԶԿ–ի ընրագանգվածը հզորացնելու համար³³²: Պետք է նշել, որ հնչում են նաև այլ կարծիքներ, մասնավորապես, որ «թուրք–հայկական հաշտեցումը կարևոր է թուրքական հասարակության և երկրի քաղաքական համակարգի հետագա ժողովրդավարացման համար»³³³, սակայն դրանք սակավաթիվ են և չեն կարող էական ազդեցություն ունենալ երկրում առկա հիմնական քաղաքական միտումների վրա:

Խոսելով արձանագրությունների ձախողման և հայ–թուրքական սահմանի փակ լինելու մասին՝ թուրք փորձագետները հաճախ են վկայակոչում նաև տնտեսական գործոնը: Պետք է նկատել տնտեսական տարրի դերակատարման անը և համապատասխան ազդեցությունն ԱԶԿ–ի արտաքին քաղաքականության ուղղությունների ձևավորման վրա³³⁴: Կուսակցության և նրա համակիրների մեջ գերիշխող դիրք ձեռքբերող բիզնես իսլամամետ գործարարները կամ «նոր ազգային բուրժուազիան» սկսեց ճնշում գործադրել քաղաքական որոշում կայացնողների վրա, որպեսզի վերջիններս համապատասխանեցնեն արտաքին քաղաքականությունը նրանց տնտեսական շահերին: Դեռևս 2004 թ. Ահմեթ Դավութօղլուն գրում էր, որ գործարար աշխարհն արդեն արտաքին քաղաքականության շարժիչ ուժն է³³⁵:

Թուրք գործարարների մեծամասնության կարծիքով Հայաստանը Թուրքիայի համար տնտեսապես հետաքրքիր երկիր չէ: Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամի փորձագետները նշում են, որ Թուրքիայի արևելյան հատվածը նվազ զարգացած է, նմանապես և Հայաստանը, այնպես որ սահմանների բացվելու դեպքում առևտրի և բիզնեսի հեռանկարները սահմանափակ են: Արևելյան Թուրքիան տնտեսապես ավելի կշահի սահմանների բացվելու դեպքում: Թուրքիայի դեկա-

³³² Carol Migdalovitz, AKP's domestically-driven foreign policy, in Turkish Policy Quarterly 2010, Vol. 9, № 4, Winter, p. 43.

³³³ Burcu Gültekin-Punsmann, Paving the Way for Turkish-Armenian Reconciliation: A Personal Account (Turkey Analyses, May 2013), <https://library.fes.de/pdf-files/bueros/tuerkei/12252.pdf>

³³⁴ Kemal Kirişçi, Transformation of Turkish Foreign Policy: The Rise of the Trading State, New Perspectives on Turkey, Vol. 40, 2009.

³³⁵ Ahmet Davutoğlu, İş dünyası artık dış politikanın öncülerinden, The Turkish Times, Nisan-Mayıs 2004.

վարների աչքերում Հայաստանը փոքր բնակչությամբ, փոքր տնտեսությամբ երկիր է: Սահմանների բացվելու դեպքում սահմանամերձ շրջաններում ապրող մարդիկ ինչ-որ օգուտներ կունենան, բայց եթե դա համեմատենք Թուրքիայի ամբողջ տնտեսության հետ, ապա վերջինիս վրա սահմանների բացումը նվազագույն ազդեցություն կունենա: Էներգակիրների տարանցման առումով Հայաստանը կարող է այլընտրանք դառնալ Թուրքիայի համար, որովհետև Հայաստանին բացառելու նպատակով ամեն անգամ կողմերը կենտրոնանում են Վրաստանի վրա, բայց վերջինս կայուն երկիր չէ, ինչը տեսանք Ռուսաստանի հետ պատերազմից հետո: Ներկայումս, սակայն, մենք շատ հեռու ենք դրանից. Թուրքիան ու Հայաստանը պետք է կայուն դիվանագիտական հարաբերություններ ունենան մոտ 50 տարի, և միայն դրանից հետո Թուրքիան կարող է վստահել Հայաստանին տարանցել իր խողովակաշարերը³³⁶: Ի մի բերելով հայ-թուրքական սահմանի բացման վերաբերյալ Թուրքիայի բիզնես շրջանակների մոտեցումները, Ստամբուլի մշակույթի համալսարանի GPOT կենտրոնի (Global Political Trends Center-Գլոբալ քաղաքական միտումների կենտրոն) տնօրեն Մենսուր Ակգյունն ասում է. «Մենք միլիարդավոր դոլարների ներդրումներ ունենք Ադրբեջանում, իսկ Հայաստանում գուցե կարողանանք վաճառել մի քանի սառնարան ու Երևանում մի երեք հատ «Բեկո» խանութ բացել, բայց ոչ ավելին: Ձեր բնակչությունը քիչ է, դուք տնտեսապես զարգացած երկիր չեք: Մենք Հայաստանում որևէ տնտեսական հեռանկար չենք տեսնում: Ադրբեջանի հետ դուք անհամեմատելի եք: Բացի այդ՝ մենք ադրբեջանցիներին նաև եղբայրներ ենք համարում: Դա էլ այլ խնդիր է: Բայց եթե դուք նավթ ունենայիք, կարող եմ հավատացնել, որ դա հարաբերությունները կարգավորելու շատ լավ պատճառ կլիներ»³³⁷: Նշելով, որ տնտեսական գործոնը հայ-թուրքական հարբերությունների կարգավորման գլխավոր ազդակը չէ, Մ. Աբգյունը անթաքույց կերպով արձանագրում է, թե հատկապես ի՞նչն է կարևոր թուրքական իշխանությունների համար. «եթե մենք ... կարողանանք կարգավորել հարաբերությունները, ոչ ոք չի խոսի Ցեղասպանության մասին: Շատ ավելի հավանա-

³³⁶ Aybars Görgülü, Jonathan Levack and Gökçe Perçinoğlu, Turkey's Trade Policy towards Europe, the South Caucasus and Armenia, (TESEV), ICHD publications, Yerevan, 2012.

³³⁷ «Երբ Էրդողանը զգաց, որ իրեն բացառել են գործընթացից, փորձեց տապալել այն», <http://hetq.am/arm/news/765/erb-erdoxany-zgac-or-iren-bacarel-en-gortsyntacic-pordzec-tapalel-ayn.html>

կան է, որ հայերն ու թուրքերը միասին կհիշեն ապրիլի 24-ը: Բազմաթիվ մարդիկ հիշում են ապրիլի 24-ը որպես ողբերգական օր՝ պարտադիր չէ որպես Յեղասպանության օր: Անշուշտ, կլինեն որոշ հայեր և թուրքեր, որոնք գոհ չեն լինի, բայց դա օրակարգից դուրս կգա: Այնպես պետք է անենք, որ սա այլևս քաղաքական քննարկման հարց չլինի...»³³⁸:

Ինչպես նկատում է ամերիկյան Քարնեգի հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ Թոմաս դե Վաալը, ներգրավվելով հաշտեցման գործընթացի մեջ պաշտոնական Անկարան հույս ունեւր, որ հարաբերությունների կարգավորման դեպքում Թուրքիան ստիպված չէր լինի հսկայական ռեսուրսներ և ժամանակ վատնել տարբեր երկրների խորհրդարանների կողմից ցեղասպանության ճանաչումը կանխելու համար: «Սակայն ո՛չ Հայաստանի, ոչ էլ Թուրքիայի իշխանությունները արձանագրությունների հարցում ներքին աջակցություն չստացան, ինչը երկու կողմերին էլ դարձրեց քաղաքականապես խոցելի»,— գրում է դե Վաալը՝ նշելով, որ հայկական կողմից քննադատությունը մեծ էր հատկապես Սփյուռքից³³⁹: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա վերջինս հաջողեց մի բարդ գործընթացը (հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը) շաղկապել մեկ այլ ավելի բարդ գործընթացի (Ղարաբաղյան հարցի) հետ, որից երկուսն էլ տուժեցին³⁴⁰: Թուրքիայի և Ադրբեջանի ազրեսիվ պահվածքի ազդակները հանգեցրին նրան, որ հայկական կողմը որոշակիորեն կոշտացրեց դիրքորոշումը: Սա իր հստակ արտահայտումը գտավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ 2011 թ. հունիսին ԵՖԽՎ-ում հնչեցված ելույթում³⁴¹:

Հայոց Յեղասպանության միջազգային ճանաչման դեմ պայքարի համատեքստում Թուրքիայի քաղաքական օրակարգում դրվեց Հայաստան-Սփյուռք տարանջատման խնդիրը³⁴²: Մասնավորապես, Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեթ Դավութօղլու հանձնարարականներ է

³³⁸ Դույն տեղում:

³³⁹ Thomas de Waal, Armenia and Turkey: Bridging the Gap, <http://carnegie.ru/publications/?fa=40566>

³⁴⁰ Thomas de Waal, Turkey and Armenia: A Second Chance?, Turkish Policy Quarterly, March 2011, <http://carnegie.ru/experts/?fa=479>

³⁴¹ Սերժ Սարգսյանի ելույթը ԵՖԽՎ-ում. Մենք պատրաստ ենք խնդիրները հաջորդ սերունդներին չթողնել (ամբողջական տեքստ), <http://news.am/arm/news/64219.html>

³⁴² Մենք ցանկանում ենք նաև երկխոսություն սկսել Հայկական սփյուռքի հետ, Ա. Դավութօղլու, http://www.in.am/arm/a_a_15116.html

տվել տարբեր երկրների իրենց դեսպաններին առավել սերտ աշխատել Սփյուռքի հայկական կառույցների հետ, փորձել առաջ տանել թուրքական թեզերը և ամենակարևորը՝ ձգտել անջրպետներ ստեղծել Հայաստան–Սփյուռք հարաբերություններում³⁴³։ Թուրքիայի այդ նոր մարտավարության հրապարակային արտահայտումն էր 2011 թ. ԵՄԽԿՎ–ի գարնանային նստաշրջանում Էրդողանի հայտարարությունն առ այն, թե իբրև Հայաստանը վախենում է Սփյուռքից և դրա համար էլ Թուրքիայի հանդեպ նման կարծր քաղաքականություն է վարում։ Իսկ ավելի վաղ նա հայտարարել էր, թե Հայաստանը պատանդ է Սփյուռքի ձեռքին³⁴⁴։ Ինչպես իրավացիորեն նկատում է թուրքագետ Ռ. Մելքոնյանը, այսպիսով Թուրքիան փորձում է տարանջատել Հայաստանն ու Սփյուռքը և գործ ունենալ մասնատված հայության հետ³⁴⁵։

Հարկ է նշել ևս մի հանգամանք. հայ–թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացում մատնվելով փակուղային վիճակի, մեծ պետություններն իրենց հեղինակությունը փրկելու համար հուսահատորեն ուղիներ էին փնտրում ստեղծված երկընտրանքից դուրս գալու համար։ Ֆրանսիան, ինչ որ չափով Ռուսաստանը և հատկապես Միացյալ Նահանգները չափազանց շատ ժամանակ ու ջանքեր էին ներդրել և չէին ցանկանում հեռանալ բանակցված ու ստորագրված, սակայն չվավերացված «դարի գործարքից»։ Պատահական չէ, որ միջազգային հանրությունը, մասնավորապես ԱՄՆ–ը գործընթացի տապալման ողջ պատասխանատվությունը լիովին դնում էին թուրքական կողմի վրա և պարբերաբար հիշեցնելով պաշտոնական Անկարային, որ «զնդակը Թուրքիայի դաշտում է»՝ քայլեր ձեռնարկելու կոչ էին անում։ Այս ամենի վառ արտահայտությունն էին ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Բլինթոնի և փոխնախագահ Ջոզեֆ Բայդենի Թուրքիա կատարած այցերը, որոնց ընթացքում հնչեցվեցին նույն ուղերձները՝ չտապալել գործընթացը։ Բանն այն է, որ հայ–թուրքական հարաբերությունների կամ Արցախի հակամարտության կարգավորման բարելավման ամենափոքր նշանը հնարավորություն կտար նախագահ Օբամային քողարկել Հայոց Յե-

³⁴³ Թուրքիայի ԱԳՆ–ն ընդդեմ Հայոց Յեղասպանության 100–ամյակի «1915–ի դեպքերը» անունով զեկույց է պատրաստել, <http://news.am/arm/news/48632.html>

³⁴⁴ Ա. Հովհաննիսյան, Էրդողանի ելույթը ԵՄԽԿՎ նստաշրջանի ընթացքում կարելի է հեթանոսական սկանդալը համարել, <http://www.panarmenian.net/arm/politics/news/67185/>

³⁴⁵ «Չառուշոլի վարկաբեկում է ԵՄԽԿՎ–ն», <http://www.a1plus.am/46293.html>

դասպանության վերաբերյալ տված իր խախտած խոստումը, իսկ հայ-թուրքական բաց սահմանը՝ թուլացնել տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը: Կարելի է ենթադրել, որ հենց ԱՄՆ-ի շահագրգռվածությունը և համապատասխան հորդորները նպաստեցին, որ Հայաստանի նախագահը կասեցրեց արձանագրությունների վավերացման գործընթացը, թեև ստեղծված իրավիճակում միանգամայն ընկալելի կլիներ նման վիճահարույց փաստաթղթերի տակից իր երկրի ստորագրությունը հետ վերցնելը՝ մեղադրելով Թուրքիային նախապայմաններ առաջադրելու և Արցախն Ադրբեջանին հանձնելու պահանջի համար:

Այսպիսով, հայ-թուրքական կարգավորման գործընթացի տապալմամբ³⁴⁶ Անկարան զգալիորեն սահմանափակեց «Կովկասյան մեծ խաղում» որպես ազդեցիկ տարածաշրջանային խաղացող հանդես գալու իր լծակները և ստեղծելով ավելի շատ բաժանարար գծեր՝ նպաստեց տարածաշրջանում իր մրցակից Մոսկվայի գերակա դիրքերի ամրապնդմանը³⁴⁷: Բացի դրանից, եթե Թուրքիան նպատակ ուներ Հարավային Կովկասում սեփական ազդեցությունը տարածելով՝ հայ-թուրքական կարգավորման գործընթացին զուգահեռ միջնորդել նաև Ղարաբաղյան հարցում, ապա իր կողմնակալ կեցվածքով նա միայն խորացրեց հայկական կողմի արդեն իսկ առկա անվստահությունը³⁴⁸: Վերջապես, տարածաշրջանում փորձելով հանդես գալ որպես որոշում կայացնող և անվտանգություն ապահովող երկիր, Թուրքիան ապացուցեց, որ շատ հարցերում հենց ինքն է հանդես գալիս որպես ապակայունացնող և ավտանգության տեսանկյունից խնդիրներ հարուցող գործոն, դրանով իսկ նվազեցնելով սեփական անվտանգային միջավայրի բարելավման հնարավորությունը³⁴⁹: Անկարայի «հայկական նախաձեռնության» ձա-

³⁴⁶ Վերլուծաբան Մեհմեդ Սինան Բիրդալը պատկերավոր բնորոշում է տվել այդ գործընթացին, անվանելով այն ԱՉԿ-ի հայկական քաղաքականության «բացման» «փակումը», Mehmet Sinan Birdal, The Closing of the Opening: The AKP's Armenian Policy, <https://www.publicdiplomacymagazine.com/blog/adversarial-states/birdal>

³⁴⁷ Igor Torbakov, Russia and Turkish-Armenian Normalization: Competing Interests in the South Caucasus, *Insight Turkey*, Vol.12, № 2, 2010, p. 31-39.

³⁴⁸ Diba Nigar Göksel, Turkey's Nagorno-Karabakh Conundrum, *Caucasus Edition, Journal of Conflict Transformation*, Wednesday, 01.06.2011, <http://caucasusedition.net/author/goksel/>

³⁴⁹ Sergei Markedonov, A Nonlinear Reconciliation: Normalization of Armenian-Turkish Relations in the Past and in the Future, *Russia in Global Affairs*, №1, Jenuary/March 2011, <http://eng.globalaffairs.ru/number/A-Nonlinear-Reconciliation-15148>

խողումն ի ցույց դրեց ԱԶԿ–ի արտաքին քաղաքականության «ճարտարապետ» Ահմեթ Դավութօղլուի՝ «զրո խնդիր հարևանների հետ», «Թուրքիան՝ միջնորդ երկիր», «անվտանգություն բոլորի համար», «կարգավորող դերակատար» և մի շարք այլ մոտեցումների անիրատեսությունն ու անգործունակությունը, քանզի ակնհայտ էր, որ դրանք կյանքի կոչելու համար Թուրքիան պարզապես բավարար ռեսուրսներ և քաղաքական կամք չունի³⁵⁰:

³⁵⁰ “Arabuluculuk (Mediation)”, “Normalleşme (Normalization)”, “Herkes için Güvenlik (Security for All)”, “Kazan–kazan Stratejisi (Win–Win Strategy)”, “Düzen kurucu Aktör (Order Building Actor)”, “Barış Havzası (Peace Basin)”, “Komşularla Sıfır Problem (Zero–problem with Neighbours)”... տև՛ւ Murat Yeşiltaş, Ali Balcı, AK Parti Dönemi Türk Dış Politikası Sözlüğü: Kavramsal Bir Harita, Bilgi (23), 2011 Kış, s. 9–34.

ԱՍՓՈՓՈՒՄ

2010 թ. Թուրքիայի մեղքով փակուղի մտնելուց հետո, հաջորդող շրջանում Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացը որևէ նոր զարգացում չունեցավ³⁵¹: Ու թեև ժամանակ առ ժամանակ այն հայտնվում էր թուրքական քաղաքական օրակարգում, սակայն դա Թուրքիայի կողմից չի դիտարկվում որպես առաջնային հարց: Մասնավորապես, կարելի է մատնանշել 2011 թ. Թուրքիայում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում օրենսդիր մարմնի օրակարգից հայ-թուրքական արձանագրությունների դուրս գալու և մեկ ամիս անց կրկին օրակարգում ներառելու փաստը³⁵²: Որոշ քննարկումներ եղան նաև ԱԶԿ-ի 2012 թ. սեպտեմբերյան համագումարի նախօրեին: Թուրքագետ Վ. Տեր-Մաթևոսյանի դիտարկումների համաձայն՝ տեղի ունեցող որոշ զարգացումներ խոսում էին այն մասին, որ կուսակցության ներսում հայ-թուրքական հարաբերությունների հարցում երեք խմբավորում կար. ստատուս-քվոյի պահպանման կողմնակիցներ, ովքեր պնդում էին, որ չվավերացված վիճակում արձանագրությունները գործում են Թուրքիայի օգտին, երկրորդ խումբը կարծում էր, որ չվավերացված արձանագրությունները խարան են Թուրքիայի ճակատին ու պետք է բացվի հայ-թուրքական սահմանը, երրորդ խումբը հավաքված էր Ա. Դավութջյուրի կոնցեսյայի շուրջ՝ 2015 թ. ընդառաջ ծավալել հանրային դիսկուրս³⁵³: Սակայն, ինչպես արդեն նշել էինք, համագումարի ընթացքում ընդունված նոր՝ «Նշանակետ 2023» ծրագրում կուսակցությունն առանձնահատուկ դեր է վերապահում Ադրբեջանին, նշելով որ շարունակելու է իր ջանքերը՝ Լեռնային Ղարաբաղի «գրավմանը» վերջ դնելու ուղղությամբ: Հայաստանի հետ հարաբերու-

³⁵¹ Ömer Taşpınar, Turkish-Armenian Relations, What Next? mp 4, <http://youtu.be/VTO-3-C7vU>

³⁵² Armenian-Turkish protocols revived?, <http://vestikavkaza.net/analysis/politics/18352.html>

³⁵³ Արևելագետ. Թուրքիայի իշխող կուսակցությունում հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ երեք տեսակետ կա, <http://www.panorama.am/am/politics/2012/08/20/vahram-ter-matevosyan/>

թյունների կարգավորումը ԱԶԿ–ն հստակ կապում է Ղարաբաղի հարցը լուծելու և «Ցեղասպանության անհիմն պնդումներին» վերջ դնելու հետ³⁵⁴: Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականությունը ԱԶԿ–ի իշխանության շրջանում հիմնականում նախորդ գծի տրամաբանական շարունակությունն է, ինչը նախատեսում է ակտիվ ներգրավել բոլոր նախագծերում երկու տարածաշրջանային պետություններին և դուրս թողնել Հայաստանը: Հետևաբար կարելի է փաստել, որ ո՛չ ԱԶԿ–ն, ո՛չ էլ Թուրքիայի քաղաքական դաշտում գործող որևէ այլ ազդեցիկ ուժ ներկայումս Հայաստանի հետ առանց նախապայմանների հաշտեցման գնալու կամք դրսևորելու ունակություն չունի:

2011 թ. սկիզբ առած «Արաբական գարունը» և դրա տրամաբանական շարունակությունը հանդիսացող Սիրիական ճգնաժամը ամբողջովին տեղավորելուց ԱԶԿ–ի արտաքին քաղաքականության առաջնայնությունները դեպի Մերձավոր Արևելք³⁵⁵, որտեղ Թուրքիայի տարածաշրջանային առաջնորդ–երկիր և գլխավոր դերակատար լինելու հավակնությունները հիմնվում էին Ահմեթ Դավութթոլուի մշակած «Model–ülke (Model country)», «Medeniyetsel Jeopolitik (Civilizational Geopolitics)» և «Ortadoğulaşma (Middle Easternization)» սկզբունքների վրա³⁵⁶: Սակայն ԱԶԿ–ի կողմից հանախ շրջանառվող «օրինակելի պետության», «տարածաշրջանային կարգ հաստատողի», «հզոր և հոգատար Թուրքիայի» մասին դրույթները ոչ մի կապ չունենին Անկարայի իրական, ազդեցիկ քաղաքականության հետ, հատկապես Սիրիայի հարցում³⁵⁷: Դա ակնհայտ էր, մասնավորապես, սիրիահայ համայնքի պարագայում³⁵⁸:

Ամփոփելով Հայաստան–Թուրքիա հարաբերությունները՝ պետք է նշել, որ կարգավորման գործընթացում դիտարկվող ժամանակահատվածում

³⁵⁴ «Hedef 2023» siyasi vizyonu, www.akparti.org.tr/beyanname2011

³⁵⁵ Frida Ghitis, World Citizen: As 'Zero Problems' Fails, Turkey Seeks Alternative Approach, <http://www.worldpoliticsreview.com/articles/10807/world-citizen-as-zero-problems-fails-turkey-seeks-alternative-approach>; Ömer Taşpınar, Turkey's Strategic Vision and Syria, The Washington Quarterly, Summer 2012, <http://www.brookings.edu/research/articles/2012/08/turkey-taspınar>

³⁵⁶ Murat Yeşiltaş, Ali Balcı, նշվ. աշխ.:

³⁵⁷ А. Шерихов, Вирази внешней политики Турции, <http://www.fondsk.ru/authors/andrej-sherihov.html>

³⁵⁸ А. Оганесян, Сирийский кризис: Турция и армянская община, в кн. Состояние и тенденции развития ситуации на Ближнем Востоке: сборник докладов РИСИ и ИВ НАН РА (под ред. д-ра ист. наук К. А. Кокарева, чл-корр. НАН РА Р. А. Сафрастяна), Москва, Рос. ин-т стратег. исслед., 2013г., с. 57–68.

որևէ նշանակալի տեղաշարժ չի արձնագրվել: Եվ մինչև հայ փորձագետների մեծամասնությունն այն գնահատում էր որպես ԱԶԿ–ի «հայկական քաղաքականության» ձախողում, Թուրքիայի փորձագիտական շրջանակներում կարծիքները և հեռանկարների կանխատեսումները տարբեր էին՝ հոռետեսականից³⁵⁹ մինչև զգուշավոր լավատեսական³⁶⁰: Հայտնի թուրք վերլուծաբան Մեհմեդ Ալի Բիրանդը գրում էր, որ կես ճանապարհին մնալով Անկարան փայլուն հնարավորություն կորցրեց՝ կարգավորել հարաբերությունները հարևան երկրի հետ և մեկընդմիջտ ազատվել իր «հայկական գլխացավանքից»³⁶¹: Նշենք նաև, որ անցած ժամանակահատվածում թուրք պաշտոնյաները տարբեր առիթներով հայտարարում էին, որ չնայած «Հայաստանի մեղքով» արձանագրությունները սառեցվել են և գործընթացը դանդաղել, սակայն հայկական կողմի հետ «ընթանում են քննարկումներ, լուր դիվանագիտություն, գաղտնի բանակցություններ» և այլն: Նման խմիտացիոն քայլերը հնարավորություն էին տալիս Թուրքիային՝ թե՛ միջազգային ասպարեզում խուսանավելու և թե՛ հայկական դուռը կիսաբաց պահելու համար: Կարգավորման գործընթացում, ինչպես արդեն նշել էինք, Թուրքիայի համար չափման միավորը ո՛չ թե արդյունքն էր, այլ ընթացքն ինքը: Այս տեսանկյունից կարելի համաձայնվել փորձագետների այն կարծիքի հետ, որ Անկարան շահեց: Դեռ մի քանի տարի առաջ Թուրքիայի նախկին նախագահ Աբդուլլահ Գյուլը հայտարարում էր.«Թուրքիա–Հայաստան հարաբերությունների կարգավորումը մահացած չէ, սառած էլ չէ: Որոշ բաներ մի քիչ անձայն են ընթանում... Տարածաշրջանի խնդիրները չպետք է խրոնիկ վիճակում թողնել, քանի որ դրանք կարող են միանգամից պայթել, ինչպես դա եղավ Վրաստանի հետ կապված իրադարձություններում: Կովկասում ներկա պահին տիրող իրավիճակը չի բխում որևէ մեկի շահերից: Խնդիրների լուծման համար անհրաժեշտ է հող նախապատրաստել...»³⁶²:

³⁵⁹ Diba Nigar Göksel, Turkey and Armenia Post–Protocols: Back to Square One? <http://www.tesev.org.tr/turkey-and-armenia-post-protocols-back-to-square-one/Content/416.html> <http://www.tesev.org.tr/assets/publications/file/TurkeyArmenia.pdf>

³⁶⁰ Turkey–Armenia Relations (Prepared by: Assist. Prof. Fatih Özbay), Wise Men Center for Strategic Studies, Report №25, BILGESAM publications, Istanbul, 2011, www.bilgesam.org

³⁶¹ Mehmet Ali Birand, Davutoğlu ‘Bir yıldız mı’ yoksa ‘Bir felaket mi?’, Hürriyet, 10.10.2012, <http://www.hurriyet.com.tr/yazarlar/21662868.asp>

³⁶² Գյուլը հրաժարվել է պատասխանել հայ–թուրքական սահմանի բացման ժամանակացույցի վերաբերյալ հարցին, <http://news.am/arm/print/37491.html>

Այսպես, Թուրքիան «հող էր նախապատրաստում» Հայոց Յեղասպանության հիշատակման 100-րդ տարելիցին ընդառաջ՝ մշակելով «նոր նախահարձակ ռազմավարություն»³⁶³: Դատելով հրապարակայնացված նյութերից, այն հիմնվում էր Ա. Դավութօղլուի առաջ քաշած «1915 թ. դեպքերի վերաբերյալ արդար հիշողության», իսկ Հայաստան-Թուրքիա հարաբերություններում և Ղարաբաղյան հարցում՝ Ռուսաստանի հետ սերտ համագործակցության սկզբունքների վրա³⁶⁴: Ինչպես հայտարարել էր Թուրքիայի Արտգործնախարարության Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Միջին Ասիայի և միջազգային անվտանգության հարցերով բաժնի պատասխանատու, Ա. Դավութօղլուի օգնական Մեհմեդ Ֆաթիի Ջելյանը՝ Թուրքիան պատրաստվում էր ներկայացնել «երկրորդ հայկական նախաձեռնությունը»³⁶⁵:

Մենք բազմիցս կարծիք ենք արտահայտել առ այն, որ ճիշտ կլինի, որ անցած գործընթացից դասեր քաղած Հայաստանը չսպասի «ֆուտբոլային դիվանագիտության երկրորդ խաղակեսին», այլ հաշվի առնելով «խաղի առաջին փուլի» տապալումը և այնուհետ Թուրքիայից հնչող սպառնալիքներն ու շանտաժը՝ «տեխնիկական պարտություն» գրանցի Անկարայի հաշվին և իր հետագա քաղաքական քայլերը կառուցի շախմատի, այսինքն այն խոհեմ և կշռադատված խաղի կանոններով, որում հայերս ավելի հաջողակ ենք:

Հ. Գ. 2018 թ. մարտի 1-ին, ՀՀ նախկին նախագահ Ս. Սարգսյանը այդ կարգավիճակում իր պաշտոնավարման ժամկետի ավարտին հրամանագիր ստորագրեց հայ-թուրքական արձանագրությունների կնքման ընթացակարգը դադարեցնելու մասին³⁶⁶: Մերժ Սարգսյանի կողմից հայ-թուրքական

³⁶³ Զանի որ այս հետազոտության ժամանակագրական շրջանակը սահմանափակվում է 2011 թ.-ով, հետագա զարգացումներին մանրամասն անդրադառնալն այլ ուսումնասիրության առարկա է հանդիսանում: Հայ-թուրքական հարաբերությունների հետագա ընթացքի մասին տե՛ս օր.՝ Philip Gamaghelyan & Pinar Sayan, *The State of Armenia-Turkey Relations*, October 2018, <https://gc.boell.org/en/2018/10/01/state-armenia-turkey-relations>; Benyamin Poghosyan, *The Current State and Prospects of Armenia-Turkey Relations* <https://worldview.stratfor.com/article/current-state-and-prospects-armenia-turkey-relations>; Pavel Shlykov, *Prospects for Turkey's New "Armenia Opening" and Russia's Concerns* <https://carnegie.ru/commentary/58863>

³⁶⁴ Ahmet Davutoğlu, 2013 Yılına Girerken Dış Politikamız, Dışişleri Bakanlığı, http://www.mfa.gov.tr/site_media/html/butce_2013.pdf

³⁶⁵ Ahmet Turan Esen, İkinci Ermeni Açılımı, 21. Yüzyıl Türkiye Enstitüsü, Güney Kafkasya-İran-Pakistan Araştırmaları Merkezi, <http://www.21yyte.org/>

³⁶⁶ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հան-

դիվանագիտական հարաբերությունների կարգավորման արձանագրությունների չեղարկմանը Անկարայից պաշտոնական արձագանք չեղավ: Այդ լուրին արձագանքեցին որոշ թուրքական լրատվամիջոցներ³⁶⁷:

Մասնավորապես իշխանամետ համարվող «Milliyet» պարբերականի կայքը թեման լուսաբանել էր «Հրատապ. Հայաստանը չեղարկեց կարգավորումը» վերնագրով: Ավելի ուշ համալրված լուրում աղբյուրը ընդարձակ անդրադարձ էր կատարել 2009 թ. Ցյուրիխում ստորագրված արձանագրությունների նախապատմությանը: Թերթը հիշեցրել էր նաև, որ ավելի վաղ Հայաստանը պարբերաբար զգուշացրել էր արձանագրությունների հնարավոր չեղարկման մասին, իսկ Թուրքիայի ԱԳՆ-ն իր պաշտոնական կայքում խիստ արձագանք էր տվել հայկական կողմի այդ հայտարարությանը: Թուրքիայի ԱԳՆ-ն շեշտել էր, որ չնայած Հայաստանի բացասական դիրքորոշմանը, արձանագրությունները կշարունակեն մնալ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի օրակարգում՝ մինչև տարածաշրջանում նպատակահարմար մթնոլորտ ձևավորվի:

րապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունների կնքման ընթացակարգը դադարեցնելու մասին, <http://xn--y9aah2cva0b.xn--y9a3aq/hy/decrees/item/4359/>

³⁶⁷ Թուրքական լրատվամիջոցների արձագանքը՝ ցյուրիխյան արձանագրությունների չեղարկմանը, <https://www.ermenihaber.am/am/news/2018/03/02/124561>

«Հ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ.գ.դ. Վ. Տեր-Մաթևոսյանը 2012 թ. Թուրքիայում թեմայի շուրջ գիտահետազոտական աշխատանքի շրջանակներում հանդիպումներ է ունեցել Թուրքիայի մի շարք հասարակական և մտավորական գործիչների հետ³⁶⁸»:

ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ԶՐՈՒՅՑՆԵՐԻՑ

Բասրըն Օրան³⁶⁹

«...Շուտով լույս կտեսնի Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ երրորդ հատորը, որն ընգրկում է 2002–2012 թթ.: Այնտեղ հայթուրքական, թուրք-ադրբեջանական, Թուրքիա–Սփյուռք խնդիրները լայնորեն ներկայացված կլինեն:

Այնտեղ կլուսաբանվեն ԱԶԿ–ն, սոցիալական հիմքերը: Կան անշուշտ տարբերություններ մինչև ԱԶԿ–ն և ԱԶԿ–ի կառավարման ընթացքում, սակայն կան նաև մի քանի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են Բարօրություն կուսակցության հետ ունեցած տարբերությունը, Կանաչ կապիտալի ներկայացվածությունը, դրա դերը և այլն:

Ես ԱԶԿ–ին աջակցել եմ մինչև 2010 թ. վերջը, որից հետո դարձա ԱԶԿ–ի և նրա արտաքին քաղաքականության հիմնական քննադատներից մեկը: ԱԶԿ–ն ամենաառաջադիմական կուսակցություններից էր, սակայն Արաբական գարնան և Քրդական նախաձեռնությունից հետո ԱԶԿ–ն սկսեց անկում ապրել: Շատ լուրջ անկում ապրեց նաև կուսակցության առաջնորդը. որքան հասկանում եմ, նա այլևս իր նյարդային համակարգը չի կառավարում: Դա լրջագույն խնդիր է թե՛ իր, թե՛ կուսակցության, թե՛ երկրի, և՛

³⁶⁸ Զրույցների տվյալները, դրույթներն ու խոսույթը արտացոլում են 2012 թ. իրողությունները:

³⁶⁹ Անկարայի համալսարանի պրոֆեսոր, Անկարա, 26.11.2012 թ.

թե այն պետությունների համար, որոնց հետ Թուրքիան երկկողմանի հարաբերություններ ունի:

Ամեն ինչ շատ լավ սկսվեց, քանի որ Թուրքիան վերջապես խաղադրույք կատարեց «մեղմ ուժի» վրա: Ամենահաջողվածներից մեկն իհարկե Հայաստանի հետ արձանագրությունների շուրջ քանակցման և ստորագրման հանգամանքն էր: Անշուշտ, Հայաստանը մեղավոր չէ այն իրավիճակի համար, որում մենք հայտնվել ենք: Իհարկե, Հայաստանի Սահմանադրական Դատարանը կանաչ լույս վառեց, որպեսզի արձանագրությունները մտնեն խորհրդարան: Իրավական առումով ոչ մի արգելք չհարուցվեց: Սակայն թուրք ազգայնականները սկսեցին դա շահարկել:

Ադրբեջանի անհավատալի մեծ ազդեցությունը (ես չեմ ուզում մանրամասների մեջ մտնել) և Թուրքիայի հանրային կարծիքը հակված էին դեպի թուրք-իսլամական սինթեզը: Երկուսը միասին վերցրած արեցին այն, ինչ արեցին. սա լավ հնարավորություն էր երկու երկրների համար վերջացնել անիմաստ մրցակցությունը, որը փոքր տղաներին է բնորոշ:

Թուրքիան դեռևս կզղջա, որ այդ հոյակապ հնարավորությունը բաց թողեց: Ավելին, Թուրքիան գնում է վատից վատթարագույնը, ինչն առաջին հերթին վերաբերում է 2015 թ.: Ի հեճուկս Դավութօղլուի մեղմ քաղաքականության, Էրդողանը 2015 թ. պատրաստվելու համար համագործակցում է ադրբեջանական համայնքի հետ. սա Թուրքիայի համար ինքնասպանություն է: Բայց նրանք դա չեն հասկանում, քանի որ ազգայնականներ են:

Թուրքիան առաջ գնալու նպատակ ունի, իսկ որպեսզի գետի մյուս ափն անցնես, պետք է թըջվես: Մենք հիմա ամբողջությամբ թաց ենք: Անհրաժեշտ է, որ Թուրքիայում և ԱԶԿ, և այլ քաղաքական ուժեր հասկանան, որ մեր երկիրը ոչ միջին, ոչ էլ զլորալ տերություն է, այն ընդամենը տարածաշրջանային պետություն է, բայց ոչ գերիշխող: Դառնալու համար տարածաշրջանային հեգեմոն, պետք է օգտագործել մեղմ ուժ (soft power), այնպես, ինչպես դա անում էր Դավութօղլուն՝ մինչև 2011 թ. փետրվարը: Թուրքիան գրեթե տարածաշրջանային հեգեմոն էր, քանզի օգտագործում էր «մեղմ ուժի» տարրեր: Արաբական գարունից հետո Թուրքիան վերադարձավ Սառը պետարագմի ժամանակաշրջան:

Այժմ Եգիպտոսը կրկին վերածնվում է: Եգիպտոսն է մահմեդական Մերձավոր Արևելքի բնական առաջնորդը, ոչ թե Թուրքիան: ԱԶԿ-ն սա պետք է հասկանա, և դրա համար ժամանակ է անհրաժեշտ, որ Թուրքիան զիտակցի. նա չի կարող օգտագործել կոշտ ուժ, եթե ուզում է հարգված լինել Մերձավոր Արևելքում, Բալկաններում և Կովկասում: Դա սատանայի եռան-

կունին է. այնտեղ չեն կարող «կոշտ ուժ» (hard power) օգտագործել, Մերձավոր Արևելքում անգամ ԱՄՆ-ն չի կարող: Ի՞նչ տեղի ունեցավ Իրաքի հետ պատերազմում. ԱՄՆ-ն ամեն ինչ կորցրեց Մերձավոր Արևելքում: Դրա համար Թուրքիան շատ կարևոր է Արևմուտքի աչքերում:

Ներքաղաքական կյանքում Էրդողանն ուզում է առավել մեծ հսկողության հասնել՝ ձգտելով դառնալ նախագահ: Օգալը բռնապետ չէր, Էրդողանը բռնապետ է: Օգալն ասում էր, որ իր կուսակցության մեջ կան տարբեր շահեր, իսկ Էրդողանը նման պնդում չի անում: Իհարկե, երկուսն էլ նույն արմատներից են սերում: Նրանք գալիս են «Hürriyet ve ihtilaf» կուսակցությունից, ի հեճուկս «İttihat ve terakki» կուսակցության: Թուրքիայի ներքաղաքական երկու հակադիր գիծ կա, և այս երկու կուսակցությունները հենց այդ գծերն են ներկայացնում: Պատճառը, որ տնտեսությունը շատ լավ է, կա մի քանի բացատրություն: Նախ բոլոր երկրները, որոնք Թուրքիայի պես տարածաշրջանային տերություններ են, վերելք են ապրում՝ Մալայզիա, Ինդոնեզիա, Բրազիլիա և այլն: Օգալը կրկնապատկեց տնտեսությունը, նա հնարավորություն տվեց բարձի տակ կուտակած ոսկին ներդնել տնտեսության մեջ: Կանաչ կապիտալը արեց դա. հիմա այս Կանաչ կապիտալն արտահանվում է: Այժմ Կանաչ կապիտալը Սուդանում կամուրջներ է կառուցում. այն չի կարող գնալ Արևմտյան երկրներ, որտեղ տանող բոլոր ուղիները փակված են TUSIAD-ի կողմից: Թուրքիայում փողը երկու աղբյուրից է գոյանում՝ TUSIAD և MUSIAD: Վերջինս գոյություն չունեք Օգալից առաջ:

Երրորդ պատճառն այն է, որ ԱԶԿ-ն ունի լավ տնտեսագետներ, որոնք ազատականներ են: Սակայն ազատական տնտեսությունը չի նշանակում ազատական քաղաքականություն: Սա կարող է ոչնչացնել Թուրքիան, ԱԶԿ-ն, և՛ Էրդողանին և՛ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը: Թուրքիայի արտաքին քաղաքականությունը չի կարող հաջող լինել, եթե Թուրքիայում չլինի ժողովրդավարություն:

Այս պահին Թուրքիայում չի կարող նոր սահմանադրություն ընդունվել: Իհարկե, ինչ էլ գրեն, ավելի լավ կլինի, քան գործողը: Նրանք չեն կարող հիմա աշխատել ընդունելի սահմանադրության վրա: Սահմանադրությունները բաժանվում են երկու տարբերակի՝ խորհրդարանական և նախագահական: Ո՞րն է լինելու:

Այժմ Էրդողանն ավելի հզոր է, քան Աթաթյուրքը: Օրինակ, մինչև 1927 թ. Աթաթյուրքը իրական իշխանություն չունեք երկրում: Այդ պատճառով NUTUK-ը գրվեց, որը պատմության նրա մեկնաբանությունն էր: Նա մահացավ

10 տարի անց: Ընդամին, 20–ական թթ. կարևոր բարեփոխումներից հետո 30–ականներին նա ոչինչ չուներ անելու և ներգրավված էր մշակութային ֆանտազիաների մեջ՝ Թուրքական պատմության և լեզվի տեսությունների ստեղծում, Արևի տեսություն և այլն: Նա վերջացրեց այն, ինչ կարող էր անել. այլևս բան չկար անելու: Խաղալ այս տեսությունների հետ, սպասել մինչև երեկո ու գնալ խմելու և քնելու: Նա անհամբեր սպասում էր, որ երեկո գար ու նա սկսեր խմել:

Էրդողանն ու Դավութօղլուն արտաքին քաղաքականության վերաբերյալ ունեն առաջին ու վերջին խոսքի իրավունք: Նրանք բացարձակ իշխանություն են կազմում այդ առումներով: Մյուս կողմից մենք պետք է նկատի ունենանք, որ Էրդողանը չի թաքցրել իր հակաադրբեջանական որոշ դրսևորումներ: Սրա մասին գրքում նշվում է, օրինակ նա ասաց. «կան մարդիկ, ովքեր ցանկանում են խառնել ամեն ինչ, և ես դրա մասին ասել եմ Ալիևին»: Նա նկատի ուներ Փաշալևա ազգանունով կնոջը: Եվ բացահայտ կերպով խոսեց դրա մասին: Ալիևը Փաշալևային առնվազն երկու անգամ ուղարկել էր Թուրքիա, արձանագրությունները կասեցնելու համար: Այդ հանգամանքն Էրդողանին շատ զայրացրեց:

Էներգետիկ գործոնը ևս շատ կարևոր է: Թուրքիան ցանկանում է դառնալ Էներգետիկ «hub»: Ադրբեջանական Էներգետիկ ռեսուրսներն այդ առումով շատ կարևոր են: Աթաթյուրքի ժամանակ թուրքականությունը ընդգծվում էր ակնհայտ կերպով: Իհարկե, Աթաթյուրքը փորձում էր վերակենդանացնել թուրքական բաղադրիչը թուրքի մեջ:

ԱԶԿ–ն՝ ինքնակոչ իսլամականը, դարձավ ազգայնական: Այդ պատճառով շատ հեշտ է Ադրբեջանի հետ աշխատելը: Իմ ուսանողներից մեկը, որն այժմ դեսպան է, ինձ ասաց, որ այժմ Ադրբեջանը անհավատալի քանակությամբ ներդրումներ է կատարում Թուրքիայի տնտեսության մեջ: Էներգետիկ ոլորտներից բացի՝ Ադրբեջանը ներդրումներ է կատարում նաև այլ ոլորտներում ևս:

Թուրջու Գյուլթերին³⁷⁰

Թուրքիայի հանրապետական պատմության տեսանկյունից ԱԶԿ–ն արդեն այնքան երկար է կառավարել, որ արդեն դժվար է հիշել, թե նախկինում ինչպես էր: ԱԶԿ–ն, թեև մեծամասնության կառավարություն էր կազմել, սակայն զգում էր որպես փորքամասնություն՝ թե՛ երկրի ներսում, թե՛

³⁷⁰ TOBB համալսարանի դասախոս, Անկարա, 24.11.2012 թ.

համակարգի ներսում, թե՛ պետական կառավարման, թե՛ քաղաքական ու ռազմական բյուրոկրատական համակարգերի տեսանկյունից:

Հայաստանի առումով ԱԶԿ-ի վերաբերյալ ակնկալիքներ կային: Բաքու-Թբիլիսի-Ջեյհան ծրագիրը դարձավ Թուրքիայի կովկասյան քաղաքականության առանցքային դրվագներից մեկը, առնվազն 2000-ականների առաջին կեսին:

Արտաքին քաղաքականությունն առավել մոտեցվել է հասարակությանը: Դրանով հանդերձ՝ մենք չունենք հասարակական կարծիքի ուսումնասիրություններ, որոնք գիտականության հիմքերի վրա են կազմված, հետևաբար, դժվար է համընդհանուր կարծիք կազմել Հայաստանի ուղղությամբ Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ: Սա խնդիր է քաղաքական բոլոր առումներով: Թուրքիայի արտաքին քաղաքականությունը դառնում է յուրաքանչյուր ներքին քաղաքականություն, և հասարակությունն առավել ակտիվ է մասնակցում այդ գործընթացին, կամ առնվազն հասարակությանը թվում է, որ մեծ մասնակցություն ունի:

Մենք ունենք ուժեղ ղեկավարություն, խարիզմատիկ իշխանություն: Սակայն դա չի նշանակում՝ Հայաստանի պարագայում Թուրքիայի քաղաքական ղեկավարությունը նույնքան հետևողական էր ու ինքնիշխան: Անգամ տնտեսական զարգացմամբ ստեղծված ինքնավստահությունը չդարձավ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման իրական հիմք: Տնտեսական կայունության, մակրոտնտեսական ցուցանիշների ակնհայտ վերելքը բավարար հիմք չէին հասարակական տրամադրությունների հիման վրա Հայաստանի նկատմամբ ուժեղ արտաքին քաղաքականություն վարելու համար:

2007–2009 թթ. քրդական, ալևիական և հայկական նախաձեռնությունները լավ հնարավորություններ էին ԱԶԿ-ի համար ներքաղաքական և արտաքին օգուտներ քաղելու, ինչպես նաև միջազգային աջակցություն ստանալու համար. չէ՛ որ այդ պահին ԱԶԿ-ն նաև դատավարական գործընթացի մեջ էր գտնվում: Հետ նայելով, իհարկե, կարելի է պնդել՝ եթե այս երկու նախաձեռնությունները զուգահեռաբար չսկսվեին, դրանցից մեկը՝ առավելապես հայկականը, կհաջողվեր: Եվ հիմա էլ շատ փորձագետներ կարծում են, որ բազմավեկտոր նախաձեռնությունները չափազանց շատ էին զուգահեռ հաջողություններ ակնկալելու համար: Դա բացասական հետևանքներ ունեցավ, և նայեք՝ հիմա բռնությունները հասել են 90-ականների մակարդակին, թե՛ քրդական, թե՛ առավել նվազ չափով՝ ալևիների դեպքում:

Թեև ԼՂ-ի հետ հայ-թուրքական գործընթացի ունեցած կապը դարձավ հիմնական պատճառը, սակայն Թուրքիան ցանկանում է, որ Հայաստանը միջազգային ասպարեզում չբարձրաձայնի Ցեղասպանության ճանաչման հարցը: Ցեղասպանության խնդիրը և սահմանի հարցն իրական չէին: Թուրք դիվանագետները լավ տեսնում էին կապը, սակայն ցանկանում էին հաղթահարել այդ դժվարությունը:

Այս առումով, իրոք, շատ կարևոր է Դավութօղլուի այն ելույթը, որով նա արձանագրությունները ներկայացրեց Թուրքիայի խորհրդարանին, որտեղ հատկեցվեցին Թուրքիայի ակնկալիքներն այդ արձանագրություններից:

Այս ամբողջի մեջ մեղք ունեին նաև թուրք դիվանագետները, ովքեր հաղորդակցության ամբողջ զինանոցը չէին օգտագործել և մանրամասնորեն չէին տեղեկացրել Ադրբեջանի դիվանագետներին Հայաստանի հետ ունեցած պայմանավորվածությունների մասին: Իսկ եթե դրանք եղել են, ապա բանակցությունների էությունն ամբողջությամբ չի ներկայացվել:

Դրա համար նախ և առաջ կային հոգեբանական պատճառներ, քանի որ թուրք դիվանագետները նրանց կոլեգաներ չէին համարում և պարտավորված չէին զգում տեղեկացնել նրանց բանակցությունների մանրամասներին: Կային շահերի և ինքնությունների բախումներ և, ըստ դիվանագետների, ինչու՞ պետք է Թուրքիան Ադրբեջանին տեղեկացնե՞ր յուրաքանչյուր քայլի մասին:

Հիմնական ուղերձներն արվում էին կարևոր այցելություններից հետո: Միայլ էին կոմունիկացիոն ամբողջ մեթոդները: Մամուլն ամբողջությամբ վերահսկվում էր Բաքվի իշխանությունների կողմից:

Հիմնական խնդիրն այն է, որ ԱԶԿ-ն դարձավ առավել ազգայնական. և՛ երկխոսության, և՛ ներգրավման ուղուց շեղվեց՝ դառնալով առավել աջակողմյան քաղաքական ուժ:

Էթյեն Մահչուփյան³⁷¹

Գյուլենական շարժումը, թեև, բացահայտ կերպով կապված չէ արտաքին քաղաքականության հիմքերի ձևավորման և իրականացման հետ, սակայն, որոշ դեպքերում փոխկախվածության մթնոլորտը հնարավորություն է տալիս արտաքին քաղաքականությունը իրականացնել առավել բարեկամական մթնոլորտում, առավել «մեղմ ուժի» կիրառմամբ: Լինելով նրանց մեջ այսքան երկար ժամանակ՝ ես տեղյակ չեմ գյուլենականների և ԱԳՆ-ի միջև

³⁷¹ Մտավորական, Ստամբուլ, 29.11.2012 թ.

որևէ ֆորմալ բնույթի համագործակցության մասին: Իհարկե, նրանք ունեն անհամաձայնություններ արտաքին ու ներքին քաղաքականության հարցերի վերաբերյալ:

Գյուլենականների մոտեցումները Հայաստանի հետ հարաբերություններում և քրդական հարցերում առանձնահատուկ են. առավելապես սոցիալական, մշակութային բաղադրիչ ունեն: Այս առումով՝ նրանք հակված են, որպեսզի խնդիրները լուծվեն: Նրանք մեղմ են, ճկուն: Օրինակ, «Zaman»-ում յուրաքանչյուր ոք կարող է տպագրվել: Դա արվում է գյուլենականների իմացությամբ: Իսկ ինչ վերաբերում է քաղաքականությանը, նրանք առավելապես հանդես են գալիս թուրք ազգայնական և պետականամետ դիրքերից: Նրանք ունեն արտաքին քաղաքականության Օսմանյան ընկալում. այն է՝ գյուլենականներն ասում են, որ նրանք հոգ կտանեն հայերի մասին. հայերը ազգային փոքրամասնություն են:

Հասարակությունը երբեք էլ չի մասնակցել արտաքին քաղաքականության առաջնահերթությունների մշակման գործին, այն չի ունեցել «input»: Այժմ էլ չունի: Հասարակությունն այսօր շատ ավելի քաջատեղյակ է արտաքին քաղաքականության խնդիրների վերաբերյալ, լավ կողմնորոշված՝ այնքանով, որքանով ինֆորմացված է:

Այժմ քաղաքացիական հասարակություններն ու ՀԿ-ներն են քազմացել, ինչը նշանակում է, որ այժմ ավելի շատ գաղափարներ կան, որոնք ազդում են ԱԳՆ-ի, որոշ բյուրոկրատների կողմից որոշում կայացնելու վրա: ԱԳՆ-ն ևս փոխվել է: Օրինակ, Դավութօղլուն ունի խորհրդականների մի փոքր խումբ, և նա փորձում է ԱԳՆ-ում ներդնել արտաքին քաղաքականության վերաբերյալ նոր տեսլական ու գիտակցում՝ փոխելու համար հին քեմալական կոշտ քաղաքական կողմնորոշումները: Նա ձգտում է արտաքին քաղաքականությունը դարձնել առավել ճկուն, պրո-ակտիվ: Խմբի անդամներ են հիմնականում դիվանագետները, որոնք անպայմանորեն ղեկավար պաշտոններ չունեն ԱԳՆ-ում և չեն հետևում ԱԳՆ-ի դիվանագիտական աստիճանակարգմանը: Այդ խմբի շատ անդամներ ընտրված են որոշակի չափորոշիչներով: Բացի այս խմբից, նա խորհրդակցում է նաև ուրիշ բյուրոկրատների հետ, և հիմնական նպատակն այն է, որ փոխի ԱԳՆ-ի մտածելակերպն ու մոտեցումը:

Իհարկե, կան նաև որոշ մտավորականներ, գիտնականներ՝ հատկապես պահպանողական, իսլամական շրջանակներից, որոնք նույնպես իրենց ներդրումն են ունենում ԱԳՆ-ում նոր մշակույթի ու մտածելակերպի ներդրման գործում: Կան նաև նախկին դիվանագետներ, ովքեր մասնակցում են

ԱԳՆ-ի բարեփոխման ու արդյունավետության բարձրացման աշխատանքներին: Երբ կա հնարավորություն, կամ տրամադրվածություն, և իհարկե, կարիք՝ Դավութթոլուն նաև ինձ հետ է կապվում՝ լսելու համար իմ կարծիքը, տեսակետը: Իհարկե վստահ չեմ, թե հետագայում դրանք օգտագործվում են քաղաքականության մշակման գործընթացում: Նա շարունակում է շատ դեպքում մնալ գիտնական և փորձում է հասկանալ բոլոր հնարավոր տարբերակները, կշռել դրական և բացասական կողմերը, հասկանալ մոտեցումները: Սակայն նա ամեն դեպքում կառավարության անդամ է և պետք է իրականացնի կառավարության քաղաքականությունը: Վերջին հաշվով վարչապետը, նրա անձը, նրա էզոն է որոշում շատ հարցեր:

Աբդուլլահ Գյուլը նույնպես որոշակի ազդեցություն ունի արտաքին քաղաքական ուղղությունների մշակման ու իրականացման գործում, սակայն Էրդողան-Դավութթոլու զույգն արտաքին քաղաքականության վրա ունի բացառիկ ազդեցություն, և նրանց է պատկանում յուրաքանչյուր մոտեցում և քաղաքական ուղեգիծ: Շատ դժվար է նրանց հետ բանավիճել: Իհարկե, կառավարության մեջ կան այլ անդամներ, որոնք արտաքին քաղաքականության վերաբերյալ ունեն իրենց պատկերացումները, սակայն, նրանք իրենց գաղափարները բարձրաձայնում են այլ ուղիներով, օրինակ think-tank-երով: Վստահ եմ գաղափարական ու գաղափարախոսական առումներով նրանք քննարկում են այս խնդիրները: Սակայն գաղափարների կերպափոխումը դեպի պրակտիկ իրական դաշտ տեղի է ունենում բացառապես Դավութթոլուի ուղղորդմամբ: Դավութթոլուին նաև մեծապես օգնում է SETA-ն, որն իրոք մեծ օգնություն է ցույց տալիս: Վերջինս օգնում է Դավութթոլուին իր գաղափարների տեղայնացման և տարածման գործում:

Հայ-թուրքական մերձեցման գործընթացում Թուրքիայի կառավարությունը շատ քիչ դեպքերում է ներգրավել թուրքահայ մտավորականությանը: Հայկական հարցը մեծ խնդրի միայն մեկ մասն է: Ադրբեջանը, էներգետիկ խնդիրները ևս կազմում են այդ մեծ խնդրի մյուս բաղադրիչները: Լուծելով Հայկական հարցը՝ Թուրքիան մեծ առաջընթաց չի գրանցի, դրա լուծումից, կամ խնդրի այդպիսին մնալուց շատ բան չի փոխվելու Թուրքիայում: Մոտեցումը հետյալն է. ամեն ինչ պահել «մեղմ տիրոջթում», ամեն ինչ անել բարի կամքի տիրոջթում: Երբ ԱԶԿ-ն ունի որոշ գաղափարներ, նրանք գալիս ու խոսում են ինձ հետ: Բայց ամեն դեպքում իրենց գլխում գաղափարն արդեն կա, նրանք ինձ չեն հարցնում ի՞նչ անենք, ո՞րն է ելքը և այլն: Նրանք պարզապես լսում են իմ կարծիքը, պարզապես ստուգում են իրենց գաղափարներն իմ գաղափարների հետ: Նրանց հարցերը բազմազան են. օրինակ, ի՞նչ

խնդիրների կհանդիպեն այդ, այս կամ այն քայլը անելիս, արդյո՞ք հարցը կլուծվի, թե՞ ոչ: Մա նրանց մոտեցումն է, և պետք է ասել, որ կանոնավոր բնույթ չունի: Դա կախված է հանգամանքներից ու Դավութթոյուի մտքում առկա քայլերից: Այսինքն, խորհրդակցությունները ռազմավարության մաս չեն կազմում: Պարզապես նրանք ունեն հարցը լուծելու ցանկություն, մեղմ լուծելու մղում:

Թուրքիան, իհարկե, ընդհանրապես ուրախ չէ Ադրբեջանով. մի քանի բյուրոկրատների և դիվանագետների կողմից ինձ արված ոչ պաշտոնական բնույթի խոստովանություններն են: Այդ մոտեցումը նրանց մոտ առկա հոգեբանության արտացոլումն է: Մակայն նրանք Ադրբեջանի կարիքն ունեն, և իհարկե Թուրքիայում մեծաթիվ թուրք ազգայնականների ընտրազանգված կա, որոնք խնդրին նայում են սև–սպիտակ ակնոցներով, և ընդգծված ադրբեջանամետ են:

Մյուս խնդիրն այն է, որ «Derin devlet»–ի մեջ և ս կան մարդիկ, շրջանակներ, որոնք բավական լավ, օրգանական կապեր ունեն Ադրբեջանի հետ: Մա շատ հակասական խնդիր է, և միայն Հայաստանի սահմանի հետ կապ չունի: Ադրբեջանն ինքը շատ հակասական խնդիր է ԱԶԿ–ի պես կառավարության համար: ԱԶԿ–ի կառավարության համար Ադրբեջանը բարդ է. նրանք ունեն Ադրբեջանի կարիքը, սակայն չեն սիրում, նրանք մտավախություն ունեն, որ Ադրբեջանը կապեր ունի ներսում, և իհարկե ԱԶԿ–ն ձայների կարիք ունի: Այդ պատճառով Ադրբեջանը միշտ ազդեցություն ունի:

Թուրքիայի մտավորականները համաձայն չեն Հայաստանի և Ադրբեջանի ուղղությամբ Թուրքիայի վարած արտաքին քաղաքականության հարցում: Տարվա ընթացքում 3–4 անգամ Ադրբեջանը դառնում է կարևոր խնդիր: Մտավորականները բազմիցս իրենց անհամաձայնությունն են հայտնում կառավարության վարած միակողմանի, ոչ ճկուն քաղաքականության նկատմամբ: Ադրբեջանը ժողովրդավարական չէ. շատ արսուրդ բաներ են տեղի ունենում, Ադրբեջանը գենք է գնում, խթանում սպառազինությունների մրցակազրը: Մտավորականները սրա մասին բարձրաձայնում են: Իսկ իսլամական համայնքի մտավորականները առավելապես ադրբեջանամետ են, քանի որ Ադրբեջանը մահմեդական պետություն է: Ամեն անգամ, երբ նրանք խոսում են Ադրբեջանի մասին, առաջինը քննարկում են Հայաստանը: Ես չեի ասի, որ նրանք ազդեցիկ են կառավարության նկատմամբ. վերջինս ունի իր պատճառները և քաղաքականության մշակման սեփական առաջնահերթությունները: Կառավարության համար Ադրբեջանը կարևոր է այլ պատճառներով:

Ռուսաստանը, իհարկե, դրական մոդել չէ, այն ժողովրդավարական չէ: Մենք պետք է լավ կապեր պահենք ՌԴ-ի հետ: Էրդողանը միշտ էլ ասել է, որ Կովկասում խնդիրների լուծման բանալին ՌԴ-ի ձեռքում է, և միայն նրա հետ կարող ենք խնդիրները լուծել: Մենք չենք կարող պարզապես գնալ ու խոսել հայերի և ադրբեջանցիների հետ, իսկ ՌԴ-ն կարևոր կապեր ունի Հայաստանի և Ադրբեջանի հետ:

Ամեն ինչ սխալ սկսվեց, երբ ճանապարհային քարտեզի հրապարակումից մեկ շաբաթ անց Էրդողանը մեկնեց Ադրբեջան ու հայտարարեց, որ առանց Ադրբեջանի համաձայնության առաջընթաց չի լինի: Նա ցույց տվեց, որ առաջընթաց չի լինելու: Նա լուծումը կապեց պայմանի հետ: Նրանք անկեղծ են այս հարցում. ցանկանում են լուծում տեսնել, սակայն, եթե իրենց պայմանն ընդունվի, և այդ պայմանը ԼԴ-ի հարցի լուծումն է: Սակայն նրանք Հայաստանի կառավարության հետ ունեն հակասություններ՝ Ադրբեջանի նկատմամբ Հայաստանի ունեցած առնակատման պատճառով:

